

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 3(49)

2010 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրական խորհուրդ

*Խմբագրության հասցեն՝*  
ՀՀ, 0025 Երևան,  
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ  
իրավաբանական ֆակուլտետ:  
Հեռ. 55-77-92

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

*Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համաձայն  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:  
10 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:*

Դասիչ՝ 77771  
Տպագրական 7 մամուլ  
Գրանցման թիվը՝ 798  
Տպաքանակը՝ 500  
Գինը՝ պայմանագրային  
Հանձնված է շարվածքի  
1.10.2010  
Հանձնված է տպագրության  
27.11.2010

СОЮЗ ЮРИСТОВ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО  
И  
ПРАВО**

Номер 3 (49)  
2010 г.

---

---

Главный редактор:  
Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА

**Редакционный совет**

Самвел Дилбандян -  
зам. главного редактора  
Давид Мелконян -  
ответственный секретарь  
Геворг Даниелян  
Гагик Амбарцумян  
Артур Вагаршян  
Сергей Аракелян  
Виген Кочарян

**Адрес редакции:**  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 55-77-92

7 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 1.10.2010  
Подписано к печати 27.11.2010

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿՈՆՅԵՐԱՆՍ**

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 4

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Տարիել Բարսեղյան**

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՄԵԽԱՆԻՋՄՈՒՄ .....7

**Տաթևիկ Դավթյան**

ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ .....17

**Լիպարիտ Դրժեյան**

ՖՐԱՆՀԱՅՁԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ  
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....29

**Արսեն Թավադյան**

ՄԵՆԱՇՆՈՐՐԱՅԻՆ ԵՎ ԳԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ «ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ.....40

**Քրեական Իրավունք**

**Արմեն Նիկողոսյան**

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ .....48

**Միսակ Մարկոսյան**

ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ԴԻՄՊՈԶԻՑԻԱՆԵՐՈՎ ՆԿԱՐԱԳՐՎՈՂ ԱՐԱՐՔՆԵՐԻ  
ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ .....54

**Տիգրան Ներսիսյան**

«ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ .....62

**Կարո Բրուտյան**

ՋՈՐԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԹՈՂՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....70

**Քրեական Դատավորութուն**

**Արսեն Մարտիրոսյան**

ՄԵՂԱԴՐՅԱԼԻ՝ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՄ ԴԱՏԻՑ ԹԱՔՆՎԵԼՈՒ ԿԱՄ ԱՅԼ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՆՐԱ  
ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ՊԱՐԶՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔ.....79

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**Արման Սարգսյան**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....88

**Գոռ Թորոսյան**

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՐՉԵՑՈՒՄԸ (ՄՈՏԱՐԿՈՒՄԸ) ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՋԱՐԳԱՑՄԱՆ ՉԵՎ.....98

**Աննա Հակոբյան**

ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՄԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....110

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ



Սույն թվականի սեպտեմբերի 23 – 27-ը Դիլիջանում և Երևանում Իրավաբանների միջազգային միության, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի, ՀՀ իրավաբանների միության, Գերմանիայի դաշնային գերագույն դատարանի դատավորների ընկերակցության նախաձեռնությամբ և Կոնրադ Ադենաուերի հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ կազմակերպվեց «Արդարադատության արդի հիմնախնդիրները ժամանակակից սահմանադրականության համատեքստում» վերտառությամբ միջազգային գիտագործնական կոնֆերանս, որը նվիրված էր ՀՀ Սահմանադրության ընդունման 15-ամյակին: Կոնֆերանսին մասնակցեցին մի շարք ճանաչված իրավաբան գիտնականներ ու իրավապահ և դատական մարմինների ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից, Ուկրաինայից և Բելառուսից:

Միջոցառմանը ակտիվ մասնակցություն ունեցան ՀՀ իրավաբանների միության Արմավիրի (ղեկավար՝ Հ. Սարգսյան), Արարատի (ղեկավար՝ Գ. Սարգսյան), Գեղարքունիքի (ղեկավար՝ Ա. Պետրոսյան), Լոռու (ղեկավար՝ Գ. Իսախրյան), Կոտայքի (ղեկավար՝ Վ. Ստեփանյան) և Շիրակի (ղեկավար՝ Դ. Սարգսյան) մարզային կառույցների ղեկավարները և անդամները, ինչպես նաև Օմսկի և Օրենբուրգի իրավաբանների միության, Ուկրաինայի իրավաբանների միության Խարկովի տարածքային ստորաբաժանման, Բելառուսի Հանրապետության իրավաբանների միության Վիտեբսկի շրջանային ստորաբաժանման ղեկավարների գլխավորած պատվիրակությունները:

Սեմինարին բացման խոսքով հանդես եկան ՀՀ իրավաբանների միության նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանը, Իրավաբանների միջազգային միության նախագահ Ա.Ա.Տրեբկովը, Գերմանիայի դաշնային գերագույն

դատարանի դատավորների ընկերակցության պատվիրակության նախագահ դր. Գ. Կրեֆտը, ինչպես նաև ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան պարոն Հ-Յ. Շմիդտը: Բոլոր բանախոսները հատուկ ընդգծեցին այսօրինակ գիտական հավաքների կարևորությունը ինչպես իրավաբանական գիտության զարգացման և կատարելագործման, այնպես էլ մասնագիտական կապերի ու հաղորդակցության ամրապնդման առումով: Իրավաբանների միջազգային միության նախագահ Ա. Տրեբկովը հատուկ շեշտեց ՀՀ իրավաբանների միության ղեկավարության նախաձեռնությամբ գործելակերպը՝ նշելով, որ այս կոնֆերանսը Հայաստանում կազմակերպվող յոթերորդ նմանօրինակ միջոցառումն է, որը, ինչպես և նախորդները, աչքի է ընկնում թե՛ իր գիտական մակարդակով ու ներկայացուցչական կազմով և թե՛ կազմակերպման բարձր որակով:

Ձեկուցումով առաջինը հանդես եկավ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Հարությունյանը, որը հանգամանորեն ներկայացրեց անցումային հասարակություններում Սահմանադրության՝ որպես պետության հիմնական օրենքի, գերակայության ապահովման կառուցակարգի առանձնահատկությունները և բարդությունները: Ձեկուցողը հատուկ ընդգծեց նման հասարակություններում սահմանադրական արդարադատության ամբողջականության, համակարգայնության, անկախության ու գործունակության ապահովման կարևորությունը՝ մատնացույց անելով այս խնդրի լուծման հնարավոր եղանակները:

ՌԴ կառավարությանն առընթեր Օրենսդրության և համեմատական իրավագիտության ինստիտուտի փոխտնօրեն, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Լաֆիտսկու ելույթը նվիրված էր ՌԴ-ում իրականացվող դատական բա-

րեփորմանների ընթացքին, առկա խնդիրների վերհանմանն ու դրանց վերլուծությանը:

Իշխանությունների տարանջատման համակարգում դատական իշխանության տեղի, դերի ու նշանակությանն էր նվիրված ԳԴՀ դաշնային գերագույն դատարանի նախկին դատավոր, իրավագիտության դոկտոր Գ. Կրեֆտի զեկուցումը, որը առավելապես հիմնված էր գերմանական փորձի ուսումնասիրության վրա:

Որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Մելիքյանի ելույթը, որտեղ անդրադարձ էր կատարվում ՀՀ բարձրագույն դատական ատյանների սահմանադրական կարգավիճակների ներդաշնակեցման խնդիրներին՝ առաջատար միջազգային փորձի համեմատական և պատմական վերլուծության լույսի ներքո:

Դատական բարեփոխումների ուկրաինական փորձին էր նվիրված Ուկրաինայի իրավաբանների միության Խարկովի տարածքային ստորաբաժանման ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Կրիվոբոկի ելույթը:

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ս. Դիլբանդյանի զեկույցը նվիրված էր մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հիմնահարցերին: Ելույթի ընթացքում հնչեցին մի շարք առաջարկություններ այդ առանցքային ինստիտուտի կատարելագործման վերաբերյալ:

Դատավորների անկախության և նրանց գործունեության օրինականության երաշխիքների համակողմանի վերլուծությանն էին նվիրված ԳԴՀ դաշնային գերագույն դատարանի նախկին դատավոր, իրավագիտության դոկտոր Դ. Բայերի և ԳԴՀ դաշ-

նային գերագույն դատարանի դատավոր, իրավագիտության դոկտոր Ու. Յերմանի զեկույցները, որտեղ մանրակրկիտ ներկայացված էր գերմանական օրենսդրության վերլուծությունը:

Գերմանիայի դաշնային գերագույն դատարանի դատավորների ընկերակցության պատվիրակության մեկ այլ անդամ՝ դաշնային դատախազ Բ. Շտոյդլը, հանգամանորեն անդրադարձավ դատախազի կարգավիճակին Գերմանիայի քրեական դատավարությունում:

Որոշ զեկույցներ ունեին առավելապես գործնական ուղղվածություն և բացահայտում էին իրավակիրառ պրակտիկայի թերությունները հասարակական հարաբերությունների ամենատարբեր բնագավառներում՝ առաջարկելով այդ կարգի խոչընդոտները հաղթահարելու հետաքրքիր «դեղատոմսեր»: Այս առումով ուշագրավ էին ԳԴՅ դաշնային գերագույն դատարանի դատավոր, իրավագիտության դոկտոր Ս. Կասսել-Վուլֆի «Ազգային դատական համակարգերը և մարդու իրավունքների

պաշտպանությունը», Վիտեբսկի մարզի տնտեսական դատարանի նախագահ Ե. Նիկոլանայի «Նորամուծությունները Բելառուսի Յանրապետության տնտեսական դատարանների գործունեության մեջ» և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Ռ. Վարդազարյանի «ՀՀ Սահմանադրության նորմերի կիրառման որոշ հիմնահարցեր քաղաքացիական դատավարությունում» թեմաներով զեկույցումները:

Բազմակողմանի, ծավալուն և հետաքրքիր մասնագիտական քննարկումներից ու բանավեճերից զատ՝ կոնֆերանսի ծրագիրը ներառում էր նաև մշակութային հարուստ միջոցառումներ, որոնց շրջանակներում մասնակիցներն այցելեցին Յայաստանի տեսարժան վայրեր և պատմամշակութային հուշարձաններ: Այս առումով հիշարժան էր այցելությունը Մայր աթոռ Սբ. Էջմիածին և ընդունելությունը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:



**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐՎԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԵՆԱՆԻՋՍՈՒՄ**

**Տարիել ԲԱՐՍԵՂՅԱՆ**

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պայմանագիրը՝ որպես փոխհարաբերության սուբյեկտների վարքագիծը կանոնակարգող ունիվերսալ իրավական ձև, հազարամյակներ կիրառվելով տարբեր հասարակարգերում և տնտեսավարման պայմաններում, աներկբայորեն ապացուցել է տարաբնույթ հարաբերություններ կարգավորելու և ցանկացած տնտեսական պայմաններում իր կանոնակարգիչ դերակատարությունն իրականացնելու կարողությունը: Էությունը միմյանցից տարբերվող հասարակական հարաբերություններ կարգավորող այդ ձևում իրավական ձևը՝ դրսևորել է ոչ միայն իր կենսունակությունը, այլև կարգավորող հարաբերություններին իր բնույթով և դերակատարությամբ հարմարվելու ունակությունը:

Թերևս այդ առանձնահարկությունն էր հենքը, որ վարչահարամայական տնտեսական համակարգից շուկայականի անցման ընթացքում ապահովեց պայմանագրի դերի արմատական փոփոխությունը: Այդ փոփոխության շնորհիվ, շուկայական տնտեսությանը համահունչ, ընդլայնվեց պայմանագրի կիրառման բնագավառը, առաջացան մի շարք նոր տիպի պայմանագրեր, պայմանագիրը շատ դեպքերում դարձավ հարաբերությունների միակ կարգավորիչը<sup>2</sup>: Շուկայական տնտեսության պայմաններում պայմանագիրը առավել կարևոր նշանակություն ձեռք բերեց գործարարական հարաբերություններում: Գործարարական գործունեության ոլորտում կնքվող պայմանագրերը դարձան իրավահարաբե-

րության սուբյեկտների միջև ծագած խնդիրների լուծման առավել արդյունավետ միջոցը, սուբյեկտների վարքագծի հիմնական կարգավորիչը, գործարարների՝ նրանց և այլ սուբյեկտների միջև տնտեսական հարաբերությունները միջնորդավորող և կանոնակարգող իրավական կարևորագույն լծակը:

Պայմանագիրը կոնկրետ տնտեսական կապերի բնույթի, իրավահարաբերության մասնակիցների կարգավիճակի, գործուկերների իրավունքների ու պարտականությունների, իրավախախտման համար պատասխանատվության սահմանման իրավակարգավորիչ դերակատարությամբ ձեռք բերեց նորմատիվ բնույթ: Այդ փաստաթուղթը նորմատիվ ակտից տարբերվում է նրանով, որ կարգավորում է միայն կոնկրետ իրավահարաբերության կողմերի վարքագիծը. կողմեր չհանդիսացող անձանց համար այն կարող է ստեղծել միայն իրավունքներ, բայց ոչ պարտականություններ<sup>3</sup>: Մասնավորապես, գործարարական հարաբերություններում, կողմերի կոնկրետ փոխհարաբերությունների հաշվառմամբ, պայմանագրերը սահմանում են պարտավորությունների կատարման կարգը և պայմանները, կողմերի փոխհարաբերությունների ձևերը, պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության եղանակները<sup>4</sup>: Պայմանագրով են լուծվում մասնակիցների միջև առաջացող օրենսդրությամբ լուծում չստացած բազմաբնույթ տարաձայնությունները և հակասությունները: Այսինքն՝ շուկայական հարաբերությունների պարագայում գործարարության ոլորտում կնքվող պայմանագրերը, որոնց մենք անվանում ենք **«գործարարական պայմանագրեր»**, ավանդական գործա-

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ռույթներից բացի, իրականացնում են նաև գործարարների վարքագիծը համապարփակ կանոնակարգող և կարգավորող կանոնների համակցություն պարունակող լուրջ իրավական ակտի գործառույթ:

Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Քաղ. օր.) գործարարական հարաբերությունները կարգավորող նորմերը «գործարարական (ձեռնարկատիրական)<sup>5</sup> պայմանագիր» եզրույթը չեն օգտագործում: Օրենսգրքի գործարարական պայմանագրի այս կամ այն առանձնահատկություններն արտացոլող հոդվածներում, ինչպես նաև քաղաքացիաիրավական գրականության մեջ<sup>6</sup> օգտագործվում է «պայմանագիրը գործարարական գործունեության ոլորտում» եզրույթը կամ խոսվում է գործարարության ոլորտի հետ կապված պայմանագրի կամ պարտավորության մասին: Մասնավորապես, նման ձևով է հարցը լուծվում Քաղ. օր. 320 հոդվածի 1-ին մասում առևտրային ներկայացուցչությունը բնութագրելիս, 417 հոդվածի 3-րդ մասում գործարարների պատասխանատվության հիմքերը նախատեսելիս: Գործարարական գործունեության իրականացման կամ գործարարական գործունեության ոլորտում կնքվող պայմանագրերի կամ ձևավորվող պարտավորությունների մասին նշվում է նաև Քաղ. օր.-ի գործարարական պայմանագրի առանձնահատկություններն ընդգծող մի շարք հոդվածներում (26, 348, 353, 361 և այլն): Բացի դրանից, շատ դեպքերում Քաղ. օր.-ը դիֆերենցացիա է անցկացնում գործարարների միջև կամ նրանց մասնակցությամբ կնքվող պայմանագրերի և քաղաքացիների մասնակցությամբ կնքվող «կենցաղային» գործարքների միջև<sup>7</sup> կամ նախատեսում է մի շարք պայմանագրեր, որոնք օգտագործվում են միայն գործարարական հարաբերությունների միջնորդավորման համար: Օրինակ՝ մատակարարման, ֆինանսա-

կան վարձակալության, կապիտալ շինարարության կապալի, առևտրային կոնցեսիայի և այլն:

«Գործարարական պայմանագիր» եզրույթը որպես կանոն օգտագործում են գործարարական իրավունքի մասնագետները<sup>8</sup>: Ընդ որում, վերջիններն էլ «Գործարարական պայմանագիր» եզրույթը սկսեցին օգտագործել շուկայական տնտեսության անցման ժամանակաշրջանում «տնտեսական պայմանագիր» եզրույթի փոխարեն<sup>9</sup>: Իրողությունն այն է, որ, անկախ օգտագործվող եզրույթի տեսակից, բոլոր իրավագետներն էլ նկատի ունեն գործարարական հարաբերությունների ոլորտում կիրառվող պայմանագրերի նույն համակարգը, և գործարարական հարաբերությունները միջնորդավորող պայմանագրերի մասին խոսելիս ճշող մեծամասնությամբ հիմք են ընդունում պայմանագիրը որպես առևտրային գործարք<sup>10</sup>, փոխանակման կազմակերպման ընդհանուր ճանաչում գտած ունիվերսալ ձև<sup>11</sup>, որով գործարարները ձեռք են բերում ապրանք, իրացնում են արտադրանք, մատուցում կամ ստանում ծառայություն և այլն:

Մեր կարծիքով, նման մոտեցմամբ նսեմացվում է ոչ միայն գործարարական, այլև քաղաքացիաիրավական պայմանագրի նշանակությունն ու դերակատարությունը: Հանրահայտ է, որ գործարարության ոլորտում կնքվող պայմանագրերը կարգավորվում են քաղաքացիաիրավական ընդհանուր սկզբունքներով: Այդ պայմանագրերը, որոնք մենք անվանում ենք «գործարարական», քաղաքացիաիրավական պայմանագրերի տարատեսակ են<sup>12</sup>: Բայց հանրահայտ է նաև, որ կարգավորվող հարաբերությունները հակադարձ ազդեցություն ունեն պայմանագրի բնույթի ու բովանդակության վրա, և պայմանագիրը՝ որպես հարաբերությունները կարգավորող իրավական միջոց, ենթարկվելով այդ հարաբերությունների ազդեցությունը, ձեռք է բերում համապատասխան յուրահատկություններ: Այդ առումով բացառություն չեն



նաև գործարարության ոլորտում կիրառվող պայմանագրերը: Դրանք գործարարական հարաբերությունների կարգավորման մեխանիզմում, պայմանավորված որոշակի գործունեություն, վերախմաստավորվում և ձեռք են բերում առանձնահատուկ բնույթ: Դրանք այլ պայմանագրերից տարբերվում են գործարարական գործունեության հետ ունեցած կապով, սուբյեկտների կազմով և կարգավիճակով, կնքման նպատակով և առանձնահատկություններով, պայմանագրերի կատարմանը ներկայացվող ավելի խիստ պահանջներով և այլ առանձնահատկություններով: Ամենակարևորը, գործարարական գործունեության ոլորտում կիրառվող պայմանագրերին օրենսդրությամբ ներկայացվում են հատուկ պահանջներ, որն էլ հիմք է տալիս գործարարների միջև կամ նրանց մասնակցությամբ կնքված պայմանագրերը քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից տարբերակելու համար անվանել գործարարական: Ընդ որում, ի տարբերություն այլ հեղինակների, մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է տարբերել երկու տիպի գործարարական պայմանագրեր:

Առաջին՝ պայմանագրեր, որոնք սահմանում և կանոնակարգում են իրավունքի սուբյեկտի ստեղծման և գործունեության հիմնադրույթները, նրա կարգավիճակը, իրավաբանական անձ հիմնադրող սուբյեկտների փոխհարաբերությունները՝ **հիմնադրման համաձայնագրեր**:

Երկրորդ՝ պայմանագրեր, որոնք միջնորդավորում են գործարարների, նրանց և այլ սուբյեկտների տնտեսական գործունեության իրականացման ընթացքում արտադրանքի (աշխատանքի, ծառայության) իրացման կամ ձեռքբերման հարաբերությունները:

1. Գործարարական գործունեության իրավական հիմքերն ամրագրող, այդ գործունեության կազմակերպման գործառույթ իրականացնող՝ օրենսդրությամբ և իրավագետների կողմից «հիմնադրման պայմանագրեր» անվանվող փաստաթուղթը<sup>19</sup>

մինչև օրս իրավագետների պատշաճ ուշադրության չի արժանացել: Բավարար է նշել միայն, որ ցիվիլիստների ճնշող մեծամասնությունը սահմանափակվում է այնքանով, որ հիմնադրման «պայմանագրերը» համարում է իրավաբանական անձի ստեղծման և գործունեության պրոցեսում հիմնադիրների հարաբերությունները կարգավորող կոնսենսուալ քաղաքացիաիրավական պայմանագիր, որը, ըստ այդ հեղինակների, կարելի է դիտարկել որպես համատեղ գործունեության պայմանագրի տարատեսակ<sup>14</sup>:

Հիմնադրման պայմանագրի նման մակերեսային բնութագրման հետ համաձայնվելը դժվար է, քանի որ այն իր գործառույթներով և դերակատարությամբ տարբերվում է կոնսենսուալ քաղաքացիաիրավական պայմանագրերից: Քաղաքացիաիրավական պայմանագիր, ինչպես նկատում է ուսումնասիրողների մեծամասնությունը, իրականացնում է երեք տիպի դերակատարություն՝ պայմանագիրը որպես իրավաիրաբերություն, որպես պարտավորություն առաջացնող իրավաբանական փաստ և որպես «մասնակիցների կամահայտնության հիման վրա» պարտավորության ծագումը ամրագրող փաստաթուղթ<sup>15</sup>: Հիմնադրման պայմանագրին օրենսդրորեն վերապահված գործառույթները ցույց են տալիս, որ այն այդ դերակատարությունների իրականացման համար չի կնքվում. այն իրավաբանական անձի գործունեության կազմակերպումը կամ կազմակերպումն ու գործունեության իրականացումն ապահովող լոկալ իրավական ակտ, *իրավաստեղծ, իրավակարգավորիչ և իրավական կարգավիճակ ամրագրող դերակատարություն իրականացնելու համար է*: Ընդ որում, գործնականում կիրառվում են հիմնադրման երկու տիպի «պայմանագրեր»: Կանոնադրության հետ զուգահեռ գործող, այսինքն՝ կանոնադրության մշակման համար հիմնադրույթներ սահմանող «պայմանագրեր», որոնց հիման վրա հիմնադիրները մշակում են ստեղծվող իրավաբանա-

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

կան անձի կանոնադրությունը (ՀՀ քաղ. օր. 53 հոդվ.)<sup>16</sup> և կանոնադրությանը փոխարինող հիմնադրման միակ փաստաթուղթ հանդիսացող «պայմանագրեր» (Մոդելային քաղ. օր. 65 հոդվ., ՌԴ Քաղ. օր. 52 հոդվ.)<sup>17</sup>:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53 հոդվածի՝ այդ պայմանագիրը օգտագործվում է միայն իրավաբանական անձ ստեղծելու պարագայում: Այն կնքվում է իրավաբանական անձի հիմնադրման համար հիմնադիրների համատեղ գործունեության կարգը որոշելու, իրավաբանական անձին գույք հանձնելու և նրա կառավարման հիմնադիրների մասնակցության պայմանները սահմանելու համար: Այդ պայմանագրի հիման վրա հիմնադիրները մշակում են ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը: Այսինքն՝ այդ պայմանագիրը ըստ էության իրենից ներկայացնում է կանոնադրության տեսլականը (կոնցեպցիան): Այն իր գործառույթներով էապես տարբերվում է քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից և «պայմանագիր»՝ այդ եզրույթի իրական իմաստով, համարվել չի կարող:

Ի տարբերություն Հայաստանի Հանրապետության՝ այլ երկրներում հիմնադրման «պայմանագիրը» միայն նշված դերակատարությունը չի իրականացնում: Հիմնադրման պայմանագիրը կնքվում է նաև որպես տնտեսական ընկերակցությունների հիմնադրման միակ փաստաթուղթ և գործում է ոչ թե կանոնադրությանը զուգահեռ, այլ նրա փոխարեն: Այսինքն՝ այդ փաստաթուղթն իրականացնում է ոչ թե պայմանագրի, այլ կանոնադրության գործառույթներ: Հետևաբար այդ փաստաթղթին պայմանագիր անվանելը չի համապատասխանում ոչ դրա բնույթին, ոչ էությանը, ոչ էլ նշանակությանը:

Օրենսդրությունից ուղղակի բխում է, և իրավագետներն էլ արդարացիորեն ընդգ-

ծում են, որ հիմնադրման պայմանագիրը կանոնադրությունից ըստ էության չի տարբերվում: Միակ ոչ սկզբունքային տարբերությունն այն է, որ կանոնադրությունը հիմնադիրները հաստատում են, իսկ պայմանագիրը՝ կնքում<sup>18</sup>: Հետևաբար, եթե կանոնադրությունը համարում ենք կազմակերպության իրավական կարգավիճակը սահմանող կարևորագույն փաստաթուղթ<sup>19</sup>, լուրջ իրավական ակտ և «կանոնադրություն» անվանմամբ ընդգծում ենք նրա առանձնահատուկ դերակատարությունը, ապա կանոնադրության մշակման հիմք հանդիսացող կանոնադրությանը փոխարինող փաստաթղթի նկատմամբ այլ վերաբերմունք ցուցաբերելը արդարացի համարվել չի կարող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 53 հոդվածի ձևակերպումից<sup>20</sup> հետևում է, որ այդ «պայմանագիրն» իրավաբանական անձի ստեղծման, նրա կառավարմանը մասնակցելու պայմաններն ամրագրելու համար կնքվող համալիր փաստաթուղթ է: Ծիշտ է՝ ՀՀ քաղ. օրը չի անդրադառնում այդ պայմանագրի բովանդակությանը ներկայացվող պահանջներին, չի լուծում «պայմանագիր» անվանվող փաստաթղթի և կանոնադրության փոխպայմանավորվածության ու փոխներգործության հարցերը, բայց պայմանագրին վերապահված գործառույթները, ինչպես նաև Մայրցամաքային երկրների օրենսդրությամբ (օրինակ՝ ՌԴ քաղ. օր. 52 հոդված) հիմնադրման պայմանագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները վկայում են, որ մենք գործ ունենք ոչ թե «կոնսենսուալ, բազմակողմ քաղաքացիաիրավական» սովորական պայմանագրի, այլ իրավաբանական անձի ծնունդն ու գործունեությունը կանոնակարգող, կազմակերպակառավարչական հարաբերությունները կարգավորող, ստեղծողների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներն ու պարտականությունները սահմանող հատուկ համաձայնության հետ, որը զուտ մասնավոր հարաբերություններ կարգավորող պայմանա-

գիր համարել չի կարելի:

Այն ներդաշնակ փոխկապակցում է մասնավոր և հանրային շահերը, լուծում է սուբյեկտների բնականոն փոխհարաբերության, կազմակերպության կորպորատիվ կառավարման հարցերը, ապահովում է շուկայական հարաբերություններում գործարարական հարաբերությունների սուբյեկտի մասնակցության համար անհրաժեշտ պայմաններ: Այդ փաստաթղթով են անրագրվում գործարարական իրավունքի սուբյեկտի ստեղծման և գործարարական գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերը: Դրանով են որոշվում իրավաբանական անձի կազմակերպարարական ձևը, անվանումը, գտնվելու վայրը, նպատակն ու խնդիրները, ունեցվածքն ու ֆոնդերը, դրանք ձևավորելու և օգտագործելու կարգը, կազմակերպության կառավարման կարգը, շահույթի և վնասների բաշխման կարգը և պայմանները, կազմակերպության լուծարման և վերակառուցման կարգը և այլ հարցեր: Իսկ այն դեպքում, երբ պայմանագիրը կազմակերպության հիմնադրման միակ փաստաթուղթն է<sup>21</sup>, ապա այն, բացի վերոհիշյալից, ստանձնում է նաև գործունեության կազմակերպման դերակատարություն<sup>22</sup>: Դրանով է որոշվում կազմակերպության կառավարման, մասնակիցների՝ կազմակերպությունից դուրս գալու կարգը: Բացի դրանից, լիակատար ընկերակցության հիմնադրման «պայմանագիրը» պարունակում է տվյալներ ընկերակցության բաժնեհավաք կապիտալի կազմի և չափի, ընկերակցության յուրաքանչյուր մասնակցի բաժնեմասի և դրա փոփոխման կարգի, ավանդների ներդրման ժամկետների և կարգի, ավանդների վճարման պարտականությունը խախտելու համար մասնակիցների պատասխանատվության մասին<sup>23</sup>:

Դժվար չէ նկատել, որ կորպորացիայի իրավաստեղծ գործունեության արդյունք հանդիսացող, կորպորատիվ իրավունքի նորմեր պարունակող այդ պայմանագրերը

տարբերվում են ինչպես պետական իշխանության մարմինների կողմից կնքվող պայմանագրերից, այնպես էլ սովորական քաղաքացիաիրավական պայմանագրերից<sup>24</sup>: Այն սոսկ իրավահարաբերություն կամ պարտավորություն առաջացնող իրավաբանական փաստ չէ, այլ իրավաբանական անձի ստեղծումը կանխորոշող, կազմակերպության կարգավիճակը սահմանող և նրա անդամների իրավասությունները նախատեսող լոկալ (կազմակերպության շրջանակներում կիրառվող) իրավական ակտ է: Հիմնադրման «պայմանագրի» կարգավորիչ դերակատարությունը նրան մերժեցնում է նորմատիվ ակտի հետ<sup>25</sup>: Եվ միանգամայն արդարացի են այն իրավագետները, որոնք գտնում են, որ այդ փաստաթուղթը (պայմանագիրը) ստեղծվող կազմակերպությունում կիրառվող կորպորատիվ իրավունքի աղբյուր է, որի նորմերը պետության սանկցիայով սահմանում են մասնավոր սուբյեկտները<sup>26</sup>: Հետևաբար, միանգամայն արդարացի է այդ փաստաթղթի առանձնահատուկ նշանակությունն ընդգծելու համար այն անվանել **հիմնադրման համաձայնագիր**: Իհարկե, հարկ է արձանագրել, որ «համաձայնագիր» բառը նույնպես ունի մի քանի նշանակություն. այն օգտագործվում է ավելի լայն իմաստով, քան «պայմանագիրը»: Այն վերաբերում է երկու և ավելի անձանց արտահայտած ցանկացած համաձայնությանը՝ անկախ հնարավոր իրավական հետևանքներից<sup>27</sup>: Բայց քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը այդ եզրույթը որևէ իմաստով չի օգտագործում, ապա դրա կիրառումը վեր նշված իմաստով, ի տարբերություն «պայմանագրի», թյուրըմբռնում կամ տարակարծություն չի առաջացնի: Մեր կարծիքով, հասարակության զարգացման պահանջները բավարարող ժամանակակից հայ իրավական մշակույթի և իրավամտածողության զարգացման համար կարևոր է նաև եզրութաբանության դերակատարությունը: Յուրաքանչյուր եզրույթի որոշակի նշանակությամբ օգտագործելը

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ոչ միայն կապահովի իրավական եզրութաբանության անադարտությունը, այլև կօժանդակի իրավական հասկացությունների հետագա կատարելագործմանը<sup>28</sup>: Կասկած չի հարուցում, որ նույն եզրույթի տարընթերցումը չի կարող չառաջացնել տեսական և գործնական տարաբնույթ թյուրիմացություններ և բարդություններ<sup>29</sup>:

Բացի դրանից, առավել կարևոր է իրավավաբանական անձի ստեղծման գործում հիմնադրման համաձայնագրի տեղի և նշանակության օրենսդրական ամրագրումը: ՀՀ քաղ. օր.-ը, սահմանելով, որ պայմանագրի հիման վրա հիմնադիրները մշակում են ստեղծվող իրավաբանական անձի կանոնադրությունը, հնարավորություն է ընձեռում դատողություններ անել այդ փաստաթղթի՝ որպես կանոնադրության հիմնադրույթները կամ տեսլականը ձևակերպող համաձայնության մասին: Բայց չի լուծում այդ համաձայնագրի կնքման իրավական անհրաժեշտության և նշանակության հարցերը: Բանն այն է, որ ըստ Քաղ. օր. 55 հոդվածի՝ իրավաբանական անձի հիմնադիր փաստաթուղթը հիմնադիրների հաստատած կանոնադրությունն է, իսկ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» օրենքով<sup>30</sup> իրավաբանական անձի գրանցման համար հիմնադրման պայմանագիրը ներկայացնել չի պահանջվում: Օրենքը չի նախատեսում նաև հիմնադրման պայմանագրի և կանոնադրության համապատասխանության ստուգում: Նման պարագայում հարց է առաջանում՝ որն է այդ «պայմանագրի» կնքման նպատակը: Միևնույն է՝ այն, ինչի շուրջ հիմնադիրները համաձայնություն են կայացնելու հիմնադրման համաձայնագրում, տեղ է գտնելու նաև կանոնադրությունում: Ընդ որում, չի բացառվում, որ կանոնադրությունը շեղվի հիմնադրման համաձայնագրի դրույթներից, քանի որ օրենսդիրը այդ փաստաթղթերի նույնականության

կամ համապատասխանության պահանջ չի ներկայացնում: Նման պարագայում, մեր խորին համոզմամբ, հիմնադրման համաձայնագրի կնքումը դառնում է անիմաստ: Հետևաբար՝ անհրաժեշտ է կամ ապահովել այդ համաձայնագրի (պայմանագրի) լիարժեք կիրառությունը, կամ ՀՀ քաղ. օր. 52 հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Բացի վերոհիշյալից, մեր կարծիքով, անհրաժեշտ է այլ երկրների նման տնտեսական ընկերակցության հիմնադրման միակ փաստաթուղթ ճանաչել ոչ թե կանոնադրությունը, այլ այդ ընկերակցության հիմնադիրների կողմից կնքվող հիմնադրման համաձայնագիրը:

2. Գործարարների, նրանց և այլ սուբյեկտների միջև ապրանքափոխանակության և այլ բնույթի տնտեսական հարաբերությունները միջնորդավորող գործարարական պայմանագրերը իրենց բնույթով քաղաքացիաիրավական պայմանագրի հատուկ տարատեսակ են: Այդ պայմանագրերն առանձնահատուկ իրավական միջոցներն են, որոնց օգնությամբ գործարարական հարաբերությունների մասնակիցները մյուս կողմի շահերը բավարարելու միջոցով կարողանում են բավարարել սեփական պահանջմունքները: Այդ պայմանագրերի առանձնահատկություններն օրենսդիրն ընդգծում է սուսկ այն պատճառով, որ դրանցից բխող պարտավորությունների նկատմամբ նախ և առաջ կիրառվում են գործարարական գործունեությունից բխող պարտավորությունների համար նախատեսված հատուկ նորմերը և միայն դրանց բացակայության դեպքում՝ քաղաքացիաիրավական պարտավորությունները կարգավորող ընդհանուր նորմերը: Օրինակ, Քաղ. օր. 348 հոդվածը, որպես ընդհանուր կանոն, պարտավորությունը կատարելուց միակողմ հրաժարվել և դրա պայմանները միակողմ փոփոխել չի թույլատրում՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Մինչդեռ այդ նույն հոդվածը նշված ընդհանուր կանոնից բացառություն է նախատեսում գործարարների համար՝ նրանց

իրավունք վերապահելով պայմանագրում նախատեսել դրանից հրաժարվելու և պայմանները փոփոխելու հնարավորություն: Կամ՝ եթե սովորական քաղաքացիաիրավական պայմանագրով պարտապանին իրավունք է վերապահվում պարտավորությունը կատարել ժամկետից շուտ (եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ պարտավորության պայմաններով), ապա գործարարին թույլատրվում է պարտավորությունը ժամկետից շուտ կատարել միայն այն դեպքում, եթե այդպիսի հնարավորություն նախատեսված է օրենքով, այլ իրավական ակտերով, պարտավորության պայմաններով կամ բխում է գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից (Քաղ. օր. 353 հոդվ.): Այսինքն՝ գործարարական հարաբերություններում պարտապանին պարտավորությունը ժամկետից շուտ կատարելը, որպես կանոն, արգելվում է:

Գործարարական պայմանագրերը այլ քաղաքացիաիրավական պայմանագրերից տարանջատելու համար հիմք են ծառայում մի քանի չափանիշներ.

ա/ Գործարարական պայմանագրերը կնքվում են **գործարարական գործունեությունը իրականացնելու՝** գործարարական շահերի և պահանջմունքների բավարարման նպատակով: Այդպիսի պայմանագրի կողմերը պարտավորական հարաբերությունների մեջ են մտնում ոչ թե անհատական, սպառողական պահանջմունքների բավարարման, այլ շահույթ ստանալուն ուղղված մասնագիտական գործունեություն իրականացնելու կամ գործունեության իրականացման գործընթացում առաջացող տնտեսական պահանջմունքները բավարարելու համար: Գործարարական գործունեության իրականացման համար կնքվող պայմանագրերի նկատմամբ կիրառվում են գործարարների պարտավորությունների նկատմամբ կիրառվող կանոնները:

բ/ Տարանջատման հաջորդ չափանիշը **մասնակիցների կազմն է:** Գործարարական

պայմանագիր կնքող սուբյեկտը կամ սուբյեկտները իրենց կարգավիճակով տարբերվում են քաղաքացիական իրավունքի այլ սուբյեկտներից: Այդպիսի պայմանագրեր կարող են կնքել միայն անհատ գործարարները, առևտրային իրավաբանական անձինք և ոչ առևտրային այն իրավաբանական անձինք, որոնց օրենքով կամ կանոնադրությամբ թույլատրված է իրականացնել շահույթ ստանալու հետ կապված գործունեություն: Առանձին դեպքերում օրենքն ուղղակի նշում է, որ տվյալ տեսակի պայմանագիր կարող են կնքել միայն գործարարները: Օրինակ՝ մատակարարման (Քաղ.օր. 521 հոդված), համալիր ձեռնարկատիրական գործունեության (ֆրանչայզինգ) (Քաղ.օր. 969 հոդվ.), համատեղ գործունեության (Քաղ.օր. հոդվ. 1026, կետ 2.) և այլ պայմանագրերը<sup>31</sup>:

գ/ Գործարարական պայմանագիրը գործարարական **հարաբերությունների կարգավորիչն է:** Գործարարական պայմանագրով են լուծվում օրենսդրության դիսպոզիտիվ նորմերով կարգավորված և օրենսդրությամբ չկարգավորված հարցերը, ինչպես նաև իրենց կարգավորումն են ստանում իրավահարաբերության մասնակիցների համար հետաքրքրություն ներկայացնող խնդիրները:

դ/ Գործարարների համար սահմանված են **պայմանագրի կնքման և կատարման ավելի «խիստ» պահանջներ:** Գործարարական գործունեության իրականացման համար կնքվող պայմանագրերի հանդեպ կիրառվում են գործարարների պարտավորությունների հանդեպ կիրառվող կանոնները, այդ թվում՝ պայմանագիրը խախտելու համար բարձրացված պատասխանատվություն (Քաղ. օր. 417): Բացի դրանից, մի շարք դեպքերում կամքի սահմանափակում, որի հետևանքով պայմանագրի կողմերը զրկվում են քաղաքացիաիրավական հիմնական իրավագործությունների մի մասից՝ իրավական հավասարություն, վարքագծի դիսպոզիտիվություն<sup>32</sup>:

Գործարարական պայմանագրերն այլ

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

պայմանագրերից տարբերվում են նաև **կնքման առանձնահատկություններով**: Թեպետ գործող քաղաքացիական օրենսդրությունը (ի տարբերություն այլ երկրների) գործարարական պայմանագրի կնքման հատուկ կարգ սահմանող ընդհանուր դրույթներ չի նախատեսում, սակայն քաղաքացիաիրավական պայմանագրերի տարբեր տեսակները կարգավորելիս օրենսգիրքն այնուհանդերձ ընդգծում է գործարարության ոլորտում կիրառվող պայմանագրերի կնքմանը վերաբերող հարցերի յուրահատուկ շրջանակ (օրինակ՝ մատակարարման պայմանագրի)<sup>33</sup>: Դա նշանակում է, որ գործարարական պայմանագիրը, լինելով քաղաքացիաիրավական պայմանագրի տարատեսակ, կնքվում է պայմանագրերի կնքման վերաբերյալ ընդհանուր նորմերում սահմանված կանոններով՝ հաշվի առնելով դրանց բնույթից բխող առանձնահատկությունները:

Ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին և 2-րդ հոդվածների բովանդակությունից և հիմք ընդունելով վերոհիշյալ չափանիշները՝ կարող ենք ասել, որ *գործարարական են համարվում բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվում են գործարարությամբ զբաղվող սուբյեկտների կողմից գույքի օգտագործման, ապրանքների վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու համար*:

Ըստ մասնակիցների կազմի՝ կարելի է

գործարարական պայմանագրերի նշված տեսակների մեջ առանձնացնել երկու խումբ՝ պայմանագրեր, որոնց կողմերը գործարարներ են, պայմանագրեր, որոնց մի կողմն է գործարար:

Գործարարների միջև կնքվող պայմանագրեր են գործարարական մատակարարող ապրանքների մատակարարման, առևտրային կոնցեսիայի, ֆինանսական վարձակալության (լիզինգի), գործարարական ռիսկերի ապահովագրության, հասարակ ընկերակցության ստեղծման, ինչպես նաև բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվում են գործարարների միջև:

Գործարարական ընդունված է համարել նաև այն պայմանագրերը, որոնց մի կողմն է գործարարական իրավունքի սուբյեկտ: Այդպիսիք են մանրածախ առուծախի, վարձույթի, բանկային ավանդի, բանկային հաշվի, փոխառության, էլեկտրամատակարարման, բեռների փոխադրման, առաքման, շինարարական կապալի և այլ պայմանագրերը:

Գործարարական պայմանագրերի ոչ լրիվ թվարկումն իսկ ցույց է տալիս, որ քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող պայմանագրերի մեծ մասը, պայմանավորված մասնակիցների կազմով, կարող է կիրառվել և՛ գործարարների, և՛ գործարար չհամարվող սուբյեկտների փոխհարաբերություններում: Դրա հետ միասին քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվում են պայմանագրեր, որոնք կիրառելի են միայն գործարարության ոլորտում:

<sup>1</sup> Ст'и Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право: Общие положения.-М.: Издательство "Статут", 1997, էջ 9:

<sup>2</sup> Ст'и Тихомиров Ю.А. Договоры в экономике. М., 1993, էջ 10:

<sup>3</sup> Ст'и Брагинский М.И. Витрянский В.В. Договорное право, книга первая. М.: 2005, էջ 13:

<sup>4</sup> Ст'и Предпринимательское (хозяйственное) право. Том 1, Под ред. О.М. Олейник. М.,

Юристы, 1999, էջ 418:

<sup>5</sup> Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը «գործարարականի» փոխարեն օգտագործում է երևույթը ճիշտ չբնութագրող «ձեռնարկատիրական» եզրույթը:

<sup>6</sup> Ст'и Брагинский М. Договор поручения и стороны в нем // Вестник ВАСРФ. 2001, N 4, Завидов Договор коммерческого представительства // Российская юстиция. 1998. N 1:

- <sup>7</sup> Տե՛ս Մենդելևիչ Կ. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>8</sup> Տե՛ս Մենդելևիչ Կ. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>9</sup> Տե՛ս Մենդելևիչ Կ. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>10</sup> Տե՛ս Կոմերցիոն իրավունքի դոկտոր Կ. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>11</sup> Տե՛ս Ջիլինսկի Ս. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>12</sup> Տե՛ս Բոգդանով Ե. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>13</sup> ՀՀ քաղ. օրը այդ պայմանագրի անվանումը չի նշում։ Այդ պայմանագիրը հիմնադրման է անվանվում Մոդելևիչի և ՌԴ քաղաքացիական օրենսգրքերում (համապատասխանորեն 65 և 52 հոդվածներ)։
- <sup>14</sup> Տե՛ս Գրաքննարկային Կոմիտեի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>15</sup> Տե՛ս Իոսիպով Օ. Ս. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>16</sup> Այդ փաստաթուղթը ԳԴՀ քաղ. օրենսգրքին անվանում է հիմնադրման գործարք։ Տե՛ս Գրաքննարկային Կոմիտեի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>17</sup> Մոդելևիչի քաղաքացիական օրենսգրքը, որը հիմք է ծառայել նախկին Խորհրդային Միության զրեթե բոլոր հանրապետությունների քաղաքացիական օրենսգրքերի ընդունման համար, ընդունվել է ԱՊՀ Միջպատվամետական Ասամբլեայի հիմնադրող զագաթաժողովի կողմից 1994թ. հոկտեմբերի 24 –ին։ Տե՛ս Մեջպարլամենտական Ասամբլեա Կոմիտեի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>18</sup> Տե՛ս Մոսկովսկի Ս. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>19</sup> Տե՛ս Երշովա Ի. Վ. Իվանովա Տ. Մ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>20</sup> Անհրաժեշտ ենք համարում նկատել, որ Քաղ. օր.-ը, ի տարբերություն այլ երկրների, անհարկի նվազեցրել է հիմնադրման պայմանագրի դերն ու նշանակությունը։
- <sup>21</sup> ՌԴ-ում, ԳԴՀ-ում տնտեսական ընկերակցությունների հիմնադրման համար կնքվում է միայն հիմնադրման կայմանագիր, կանոնադրություն չի հաստատվում։
- <sup>22</sup> Տե՛ս Մարտիկյան Գ. Ս. Պայմանագիրը գործարարական հարաբերությունների կարգավորման մեխանիզմում։ Ի. Գ. Ք. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2010, էջ 13:
- <sup>23</sup> Տե՛ս Երշովա Ի. Վ. Իվանովա Տ. Մ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>24</sup> Տե՛ս Մոսկովսկի Ս. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>25</sup> Տե՛ս Բրադինսկի Մ. Ի., Վերյանսկի Վ. Վ. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>26</sup> Տե՛ս Կորպորատիվ իրավունքի դոկտոր Ի. Ա. Երեմիչևա, Ե. Ա. Պավլովա.- 3-րդ հատված, 2010, էջ 312:
- <sup>27</sup> Տե՛ս Ֆերենսֆորտ Ե. Ա. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>28</sup> Տե՛ս Պոգոլկին Ա. Ս. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>29</sup> Տե՛ս Կրասավչիկով Օ. Ա. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>30</sup> Տե՛ս ՀՀԴՏ, 2001, N 14(146), 18.05.01:
- <sup>31</sup> Տե՛ս Մարտիկյան Գ. Ս. Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>32</sup> Տե՛ս Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:
- <sup>33</sup> Տե՛ս **Բելիխ Վ. Ս.** Մենդելևիչի «Մենդելևիչի ընդհանուր իրավունքի» (1903) ժողովածուի 1-ին հատվածի 1-րդ գլուխը։ Մ.: Վերնաբնակարան, 1999, էջ 414:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**THE ROLE OF THE CONTRACT IN THE REGULATIVE MECHANISM OF THE COMMERCIAL RELATIONS**

Tariel Barsegyan

*The head of the department of civil law, YSU,  
doctor of law, professor*

---

This article is dedicated to the role of contract, as a main regulator in commercial relations. The author mentions, that Armenian legislation doesn't use the definition "commercial contract". This state of things humiliates not only the role of civil contracts, but also the role of commercial contracts. The author comes to conclusion, that

"commercial contracts" are the one of the types of civil contract.

As a consequence of the analysis the author distinguishes two types of commercial contracts: establishing contracts and the contracts regulating business relations between the participants of commercial relations.

As a conclusion, the author mentions, that most of the contracts regulated by the Civil code, stipulated by the composition of participants, can be used in the relations between both entrepreneurs and others.

---



## ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԳԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

### Տաթևիկ ԴՎԱԹՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի  
ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու

Վերջին շրջանում ՀՀ դատական և իրավակիրառ պրակտիկայում լայն քննարկումների առարկա է դարձել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217-րդ հոդվածը, որը վերաբերում է ըստ օրենքի ժառանգման երկրորդ հերթի ժառանգների կազմին: Դրանում ներառված են ժառանգատուի միայն **հարազատ** քույրերն ու եղբայրները, իսկ **ոչ հարազատ (համահայր և համամայր)** քույրերն ու եղբայրները դուրս են թողնված տվյալ հերթից, ինչն էլ ոլորտի մասնագետների միջև առաջացրել է քննարկվող հոդվածի սահմանափակող բնույթի վերաբերյալ տարածայնություններ:

ՀՀ Ազգային ժողովում նախաձեռնվում է օրենսդրական փոփոխությունների միջոցով նշված հոդվածից հանել «հարազատ» բառը: Համարվում է, որ դա միանշանակ սահմանափակում է: ՀՀ Սահմանադրական դատարանում միաժամանակ վիճարկվում է նշված հոդվածի սահմանադրականությունը, և Սահմանադրական դատարանը պետք է իր վերաբերմունքն արտահայտի այն հարցադրման կապակցությամբ, թե ժառանգման իրավահարաբերությունների առումով որքանով է իրավաչափ համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին դուրս թողնելը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի կարգավորման շրջանակներից:

ՀՀ Սահմանադրական դատարանի հարցադրումն ավելի լայն է և վերաբերում է ոչ միայն կոնկրետ 1217 հոդվածից, այլև ոչ հարազատ քույրերին ու եղբայրներին ըստ օրենքի ժառանգների շրջանակից դուրս ընդհանրապես թողնելուն:

Առաջին հայացքից պարզ թվացող այդ հարցադրումն այնքան էլ միանշանակ չէ:

Իրականում խնդիրն ավելի խորն է և վերաբերում է ոչ միայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217 հոդվածին, այլև ժառանգման իրավունքի ողջ ինստիտուտի, դրա իրավական կարգավորման՝ պետության որդեգրած քաղաքականության սկզբունքների և ժառանգման իրավունքի դոկտրինայում ընդունված մոտեցումների, ինչպես նաև ժառանգման ոլորտում հայ ազգային ավանդույթների ու սովորույթների հաշվառմանը:

Ժառանգման իրավունքի դոկտրինայում ընդունված է, որ ժառանգման հարաբերությունների իրավական կարգավորումն ավանդաբար հիմնվում է երկու հիմնարար սկզբունքների վրա, այն է՝ **կտակի ազատությունը և ժառանգատուի ընտանիքի շահերի պաշտպանությունը**: Այսինքն՝ մահվան դեպքում իր գույքը տնօրինելու սեփականատիրոջ՝ ժառանգատուի ազատությունը սահմանափակվում է՝ ի շահ ժառանգատուի ընտանիքի: Ըստ օրենքի՝ ժառանգման կանոններ սահմանելիս ազգային իրավական համակարգերն ավանդաբար դեկավարվում են **ժառանգատուի ենթադրյալ կամքով**՝ ժառանգներ համարելով այն անձանց, որոնց ժառանգատուն կթողներ իր գույքը, եթե կտակ կազմեր: Բայց քանի որ հնարավոր են դեպքեր, երբ ժառանգատուի գույքը, երբ կտակ չի կազմվում, կարող է անցնել բոլորովին օտար, երբեմն նրան ոչ հայտնի հեռավոր ազգականների, ըստ օրենքի ժառանգունը, որպես կանոն, ապահովվում է ավանդական ընտանիքի շահերը՝ հիմնվելով տվյալ հասարակության համար առավել բնութագրական և տարածված ընտանեկան հարաբերությունների ներքին կազմակերպման վրա:

Միևնույն ժամանակ, ժառանգման հարաբերություններին մասնակցելու շահագրգռվածություն ունի նաև պետությունը, որը, ելնելով իր տնտեսական, քաղա-

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

քական, ֆիսկալ և այլ շահերից, ձգտում է ձեռք բերել ժառանգվող գույքի որոշակի մասը՝ կամ որպես անժառանգ մնացած գույք (մասնավորապես ընդլայնելով գույքը անժառանգ մնալու դեպքերը՝ ի հաշիվ ըստ օրենքի ժառանգների շրջանակի նեղացման), կամ որպես ժառանգվող գույքից զանձվող հարկ<sup>3</sup>:

Այստեղից հետևում է, որ անձի մահից հետո նրան պատկանող գույքի հետագա ճակատագրի հարցն ունի ոչ միայն անձնական, այլև հասարակական կարևոր նշանակություն<sup>4</sup>: Ուստի, ժառանգման իրավունքը ցիվիլիստիկայի այն ինստիտուտն է, որտեղ առավելապես հակադրվում են **հանրային և մասնավոր շահերը**:

Բացի այդ, ժառանգման իրավունքին բնորոշ է նաև այն կարևոր առանձնահատկությունը, որ այն անմիջականորեն հիմնված է տվյալ հասարակության ընտանեկան կազմակերպման՝ դարերով ձևավորված **ազգային և բարոյական ավանդույթների** վրա: Այդ է պատճառը նաև, որ ժառանգման հարցերում հանրային և մասնավոր սկզբունքները տարբեր երկրների ազգային իրավական համակարգերում տարբեր կերպ են հարաբերակցվում, ավելին՝ այդ հարաբերակցությունը ժամանակ առ ժամանակ փոփոխվում է՝ կախված քաղաքական, իրավական, գաղափարական, արժեքային և այլ գործոններից<sup>5</sup>:

Իրավունքի դոկտրինայում ընդունված այս մոտեցումներն իրենց արտահայտությունն են գտնում պոզիտիվ օրենսդրության մեջ, ինչը հնարավորություն է տալիս անմիջական պատկերացում կազմելու տվյալ երկրի օրենսդրությամբ ընթացող ներկա և ապագա գործընթացների մասին:

Ահա այս պրիզմայով է պետք հարցին մոտենալ և վերլուծել ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրության ըստ օրենքի ժառանգման կանոնները, այսինքն՝ պարզել, թե ՀՀ օրենսդիրը ինչ սկզբունքներ է դրել

այդ հարաբերությունների իրավական կարգավորման հիմքում, ինչպես են դրանցում հարաբերակցվում հանրային և մասնավոր հիմունքները, ինչ խնդիրներ է լուծում դրանով պետությունը, և, վերջապես, ներկայիս օրենսդրական կարգավորումը որքանով է հաշվի առնում հայ ժառանգման իրավունքի պատմական զարգացումները, ձևավորված ավանդույթներն ու սովորույթները:

Հայաստանում ժառանգման իրավունքի հարցերը մասնավոր-իրավական շրջանառության մեջ զբաղեցրել են առաջնային դիրք, քանի որ դրանք պայմանավորված են եղել ոչ միայն կոնկրետ անձի, այլև կարևոր պետական շահերով, ինչի ուժով հայ սովորույթային իրավունքը և հայ իրավունքի հուշարձանները դրանք մանրամասն կարգավորել են: Ժառանգման հարցերն անմիջականորեն պայմանավորված են եղել երկրի տնտեսական և քաղաքական անվտանգությամբ և այդ պատճառով չէին կարող դիտարկվել բացառապես ժառանգի և ժառանգատուի շահերից: Բավական է հիշել հռոմեական կայսր Հուստինիանոսի իրավական ռեֆորմները Հայաստանի ժառանգման իրավունքի բնագավառում, որոնց միջոցով հռոմեական կայսրը փորձում էր տարածաշրջանում լուծել կարևոր քաղաքական հարցեր<sup>6</sup>:

Հին Հայաստանում ժառանգման հարաբերությունների կարգավորումն ուղղակիորեն պայմանավորված է եղել հիշյալ ժամանակաշրջանում հայ նահապետական ընտանիքի բնույթով: Վերջինս համարվում էր ժխային և տոհմական գույքի կուլեկտիվ սեփականատերը: Միայն ընտանիքի գլուխն էր համարվում այդ գույքի լիիրավ տնօրինողը: Գույքը համարվում էր անբաժան և փոխանցվում էր սերնդից սերունդ ընտանիքի բոլոր ժառանգներին: Հետևաբար, հայ սովորույթային իրավունքին օտար էր ժառանգման հասկացությունը՝ դրա լիարժեք իմաստով, ուստիև գոյություն ունեցող նահապետական ընտանիքի պայմաններում ժառանգման իրավունքը

դանդաղ էր զարգանում: Սակայն աստիճանաբար ամրապնդվում էին անհատական ընտանիքները, և ընտանիքի ընդհանուր սեփականությունը սկսում էին բաժանել ժառանգների միջև:

Վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանի հայ իրավունքի հուշարձաններում ժառանգման հարցերը գերթե չէին շոշափվում. դրանք հիմնականում կարգավորվել են հայ սովորությանի իրավունքով:

Նշենք, որ մինչև հայերի քրիստոնեություն ընդունումը, երբ Հայաստանում ընդունված էին մերձավոր ազգականների միջև ամուսնությունները, կանայք<sup>7</sup> ժառանգել են տղամարդկանց հավասար իրավունքով և ամուսնանալով որպես օժիտ ստացել են նաև անշարժ գույք: Դա չէր խախտում նախարարական հողատիրության ամբողջականությունը: Սակայն երբ IV դ. հայ առաքելական եկեղեցին Աշտիշատի ժողովի կանոններով արգելեց մերձավոր ազգականների ամուսնությունը, կանայք այլևս չէին համարվում տղամարդկանց հավասար ժառանգներ և ամուսնանալով այլևս որպես օժիտ չէին ստանում անշարժ գույք<sup>8</sup>: Նպատակը նախարարական հողատիրության ամբողջականության պահպանումն էր տրոհումից: Ամուսնացնելով իրենց աղջիկներին՝ նախարարները նրանց «փոխհատուցում» էին՝ որպես օժիտ տալով այլ գույք<sup>9</sup>:

Հայ սովորությանի իրավունքի համաձայն՝ առանց կտակի ժառանգումն իրականացվում էր **ազնատական սկզբունքով**, մասնավորապես, գույքն անցնում էր մահացածի երեխաներին, դրանց բացակայության դեպքում՝ տղամարդու գծով այլ մոտիկ ազգականներին: Ազնատներ էին համարվում տան (ընտանիքի) գլխավորի իշխանության տակ գտնվող և անմիջականորեն նրա տոհմը շարունակող անձինք: Ազնատների միջև կապը չէր հիմնվում զուտ արյունակցական ազգակցության վրա: Ազնատական ազգակցությունը առաջանում էր հոր իշխանությամբ և վերանում էր դրա դադարումով: Այդ պատճառով ազ-

նատական ընտանիքի կազմում կարող էին մտնել կողմակի անձինք՝ որդեգրման միջոցով, և ընդհակառակը՝ հոր իշխանությունից առանձնացած անձինք, իսկ ամուսնացած աղջիկները զրկվում էին ազնատական ազգակցության իրավունքներից: Կանանց ժառանգման իրավունքները պահպանվում էին միայն այն դեպքում, երբ նրանք մնում էին որպես ազնատներ, գտնվում էին հոր և եղբայրների իշխանության ներքո<sup>10</sup>: Սակայն հետագայում՝ 8-9 դարերում, հայ ժառանգման իրավունքում նկատվում է նաև **կոզնատական** սկզբունքի ձևավորումը, որի համաձայն՝ ժառանգներ էին համարվում նաև հայրական ընտանիքից առանձնացած զավակները:

Հատկանշական է, որ ողջ միջնադարում նկատվում է պայքար ժառանգման ազնատական և կոզնատական սկզբունքների միջև, ինչը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ժառանգման իրավունքում մասնավոր-իրավական մեխանիզմների ներդրման գործընթաց<sup>11</sup>: Կոզնատները (հատկապես կանայք) ձգտում էին հավասարվել ազնատներին (առաջին հերթին՝ տղամարդկանց), սակայն ազնատական սկզբունքը գերակշռող մնաց ոչ միայն վաղ ֆեոդալական շրջանում, այլև ավելի ուշ:

Ըստ օրենքի՝ առաջին հերթին ժառանգներ էին համարվում մահացածի երեխաները, ապա՝ թոռները և ծոռները՝ որդիների գծով: Աղջկա գծով թոռները և ծոռները ժառանգներ չէին համարվում: Երեխաների առկայությունը ժառանգությունից հեռացնում էր այլ ազգականներին, այդ թվում՝ թոռներին և ծոռներին: Հոր գույքի բաժանման ժամանակ մյուս որդիների հանդեպ առավելություն ունեին ավագ և կրտսեր որդիները՝ մայրատի և մինորատի սկզբունքների ուժով<sup>12</sup>:

Հայ սովորությանի իրավունքի համաձայն՝ որդիները և չամուսնացած աղջիկները ծնողներին ժառանգելու հարցում ունեցել են հավասար իրավունքներ: Ժառանգման իրավունք են ունեցել նաև ամուսնացած աղջիկները, թեև նվազ չափով, քան իրենց եղբայր-

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ները և չամուսնացած քույրերը<sup>13</sup>:

Այդպիսով, տեսնում ենք, որ կոգնատական սկզբունքը թեև դժվարությամբ, այնուամենայնիվ ներխուժում էր ժառանգման իրավունքի բնագավառ: Սակայն այստեղ նույնպես նկատվում է անհետևողականություն: Օրինակ, ամուսնացած աղջիկը թեև ժառանգում էր, սակայն նրա որդին չէր կարող ժառանգել պապի ունեցվածքը (մոր հորը), քանի որ ծնվելով այլ ընտանիքում, համարվում էր իր ծնողների ժառանգը, կրում էր այլ ազգանուն, շարունակում էր այլ տոհմ:

Մահացածի երեխաներից հետո ժառանգներ էին համարվում նրա եղբայրները, եթե նրանք ունեին երեխաներ, այսինքն՝ ի վիճակի էին շարունակելու մահացածի տոհմը արական գծով: Եթե եղբայրները երեխաներ չուներին, ապա այդ դեպքում ժառանգությունը անցնում էր մահացածի ամուսնացած աղջկան, որն ուներ երեխաներ, իսկ մահացածի եղբայրները ստանում էին միայն գույքի որոշակի մասը<sup>14</sup>: Եթե մահացածը եղբայրներ չուներ, ապա ժառանգում էր նրա հայրը, իսկ նրա մահվան դեպքում՝ հորեղբայրները: Եթե կենդանի չեն հայրը, հորեղբայրը, ապա գույքն անցնում էր հայրական գծով այլ ազգականներին՝ մինչև չորրորդ սերունդը: Մայրը, քույրը և կինը ժառանգներ չէին համարվում, նրանք ստանում էին մասհանում:

Կին ժառանգատուի գույքը անցնում էր նրա ժառանգներին նույն կարգով, ինչպես անցնում էր տղամարդ ժառանգատուի գույքը, այսինքն՝ ժառանգում էին նրա երեխաները, ապա՝ եղբայրները և այլք հայրական գծով: Սովորույթը ժառանգների կազմից բացառում էր մահացածի մորեղբորը և վերջինիս սերնդին, քրոջ որդուն, հորաքույրերին, մորաքույրերին և նրանց սերնդին:

Հատկանշական է, որ ամուսինները միմյանցից հետո չէին ժառանգում: Եթե ա-

մուսինը մահանում էր առանց երեխաների, ապա կինը ստանում էր իր սեփականությունը ընդհանուր գույքից, իսկ ամուսնու գույքն անցնում էր նրա ազգականներին: Կնոջ մահվան դեպքում, եթե նա ուներ երեխաներ, նրանք էլ ժառանգում էին մորը: Եթե կինը մահանում էր առանց զավակներ ունենալու, ապա նրա գույքը անցնում էր հորը, իսկ ամուսինը ստանում էր այդ գույքի մասը միայն այն դեպքում, եթե նրանք ունեցել են ամուսնական կյանք, հակառակ դեպքում կնոջ ողջ գույքն անցնում էր հայրական գծով իր ազգականներին<sup>15</sup>:

Առանձին չանդրադառնալով Մխիթար Գոշի Դատաստանագրքի դրույթներին խնդրո առարկա հարցերի վերաբերյալ, քանի որ այն ըստ էության արտացոլել է հայ սովորության իրավունքը<sup>16</sup>, նշենք, որ 15-18-րդ դարերի հայ իրավունքի կարևորագույն հուշարձաններից էր Աստրախանի Հայոց Դատաստանագիրքը<sup>17</sup>, որը սահմանում էր ըստ օրենքի ժառանգների հետևյալ հերթերը՝ 1) որդիներ, դուստրեր, որդիների վայրընթացները մինչև հինգերորդ աստիճան, 2) հայր, մայր, եղբայրներ, քույրեր, եղբայրներից ծնվածներ՝ մինչև չորրորդ աստիճան, 3) պապ, տատ: Կինն առաջին անգամ ժառանգում է ամուսնուց հետո<sup>18</sup>:

Հայ ժառանգման իրավունքի հետագա զարգացումը պայմանավորված է 19-րդ դարում Արևելյան Հայաստանում կիրառվող՝ Ռուսական կայսրության օրենսդրությամբ՝ «Հավաք օրինաց»-ով, որով կարգավորվում էին նաև ժառանգման հարաբերությունները: Ըստ այդմ, կինը և տղամարդը լիովին հավասարեցվում էին ժառանգման իրավունքներում, ամուսինները նույնպես ժառանգում էին մինչև անցից հետո: Ըստ օրենքի՝ առաջին հերթի ժառանգներ էին մահացածի վայրընթաց ազգականները՝ զավակները, նրանց ժառանգները՝ ներկայացման իրավունքով, եթե այդպիսիք չկային, ապա կողային ազգականները, եթե սրանք էլ չկային՝ ժառանգատուի վերընթաց ազգականները<sup>19</sup>:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոշա-

րադրյալը, եզրահանգում ենք, որ Հայաստանում ժառանգման իրավահարաբերությունները պայմանավորված են եղել **ընտանիքի անդամների նկատմամբ հոր մեծ իրավունքներով, տոհմական հարստության պահպանման և ծխի (ընտանիքի) հարատևության շահերով**: Այստեղից էլ այդ ժամանակաշրջանների ժառանգման իրավունքին առանձնահատուկ է եղել՝ 1) ժառանգման ազնատական և կոզնատական սկզբունքների միջև պայքարը՝ առաջինի առավելությանը, 2) կնոջ և տղամարդու ժառանգական իրավունքների անհավասարությունը, 3) ըստ օրենքի ժառանգների սահմանափակ շրջանակի նախատեսումը ոչ միայն վայրընթաց, այլև կողային ազգականների և նրանց սերունդների շրջանում, ամուսինների բացառումը ժառանգների շրջանակից և այլն: Միաժամանակ, ինչպես տեսնում ենք, ժառանգման իրավունքում աստիճանաբար նկատվում է մասնավոր-իրավական մեխանիզմների արմատավորում, ըստ օրենքի ժառանգների շրջանակի ընդլայնում:

Խորհրդային համակարգում ժառանգման իրավունքի պատմությունը սկզբնավորվեց ժառանգման ինստիտուտի վերացմամբ: Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն 1918 թվականի ապրիլի 27-ին ընդունեց դեկրետ «ժառանգման վերացման մասին»: Այդ ակտի համաձայն՝ մահացածի ողջ գույքը գրեթե ամբողջությամբ անցնում էր պետությանը<sup>20</sup>: Դա պայմանավորված էր ժառանգական իրավահաջորդությունը, որպես մասնավոր սեփականության առաջացման հիմք, վերացնելու՝ խորհրդային իշխանության ցանկությանը, սեփականության ձև, որը համատեղելի չէր խորհրդային իշխանության քաղաքական կուրսին<sup>21</sup>: Միայն 1922թ. մայիսի 22-ին ընդունված դեկրետով վերականգնվեց քաղաքացիների ժառանգման իրավունքը, թույլատրվեց և ըստ օրենքի, և ըստ կտակի ժառանգումը:

1922թ. հուլիսի 22-ին Հայկական ԽՍՀ-ում ընդունվեց «Հիմնական մասնավոր

գույքային իրավունքների մասին» օրենքը<sup>22</sup>: 1923թ. ընդունվեց Հայկական ԽՍՀ քաղաքացիական օրենսգիրքը, որով ըստ օրենքի ժառանգների շրջանակը սահմանվեց հետևյալ կազմով՝ 1) մահացածի վայրընթացները, 2) ժառանգատուի կողմից որդեգրվածները և նրանց վայրընթացները, 3) կենդանի մնացած ամուսինը, 4) անաշխատունակ և չունևոր անձինք, որոնք նախքան նրա մահը փաստացի գտնվել են մահացածի լրիվ խնամքի տակ ոչ պակաս, քան մեկ տարի:

Հայկական ԽՍՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1945թ. մայիսի 22-ի ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգման մասին հրամանագրի հիման վրա, համաձայն որի՝ նախատեսվեցին ըստ օրենքի ժառանգների նոր կատեգորիաներ՝ մահացածի ծնողները, եղբայրները և քույրերը: Որդեգրվածները հավասարեցվեցին հարազատ զավակներին:

1964թ. Հայկական ԽՍՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանեց ըստ օրենքի ժառանգների երկու հերթեր: Առաջին հերթում ներառվում էին մահացածի զավակները (այդ թվում՝ որդեգրվածները, ինչպես նաև մահացածից հետո ծնվածները), ամուսինը և ծնողները: Երկրորդ հերթում ներառվում էին մահացածի եղբայրներն ու քույրերը, մայրական և հայրական կողմի պապը, տատը: Ժառանգներ էին նաև անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի տակ:

Այսպիսով, վերը շարադրվածից հետևում է, որ հայ ժառանգման իրավունքին նույնպես բնորոշ է եղել մշտական **պայքարը անձնական և հասարակական (հանրային և մասնավոր) շահերի միջև**:

Նկատենք, սակայն, որ այդ խնդիրը ոչ միայն պատմական է, այլ այդ պայքարը շարունակվում է նաև այսօր: Ընդ որում՝ ժառանգման ոլորտում անձնական և հասարակական շահերի բախումը դրսևոր-

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

վում է նախևառաջ այն հարցի շուրջ, թե ըստ օրենքի ժառանգման դեպքում ինչ շրջանակով է սահմանափակվում ժառանգների կազմը: Հատկանշական է, որ որքան շատ են օրենքով սահմանված ժառանգման հերթերը և դրանցում սահմանված պոտենցիալ ժառանգները, այնքան պետությունն ավելի շատ է մասնավոր անձանց հնարավորություն տալիս ժառանգելու իրենց հարազատների գույքը: Նման մոտեցումը վկայում է ժառանգման իրավունքի ուղրոտում պետության կողմից մասնավոր-իրավական կարգավորման քաղաքականությանը (ի համեմատ հանրային-իրավականի) առավելություն տալու մասին, ինչն առավելապես բնութագրական է եվրոպական երկրներին (Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա, Գերմանիա, Շվեյցարիա, Անգլիա և այլն<sup>23</sup>), ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությանը և Վրաստանին:

Այսինքն՝ առկա են երկու ելակետային սկզբունքներ, որոնցով առաջնորդվում են պետությունները. կամ ստեղծում են հնարավոր բոլոր մեխանիզմները, որոնց դեպքում անհամեմատ բարձր է հավանականությունը, որ քաղաքացու գույքը ժառանգման կարգով կանցնի նրա մերձավոր կամ այլ ազգականներին<sup>24</sup>, կամ ստեղծում են մեխանիզմներ ժառանգվող գույքը կամ դրա որոշակի, հաճախ նշանակալի մասը մասնավոր անձանցից ձեռք բերելու, այսինքն՝ մասնավորը հանրայնացնելու համար: Այս սկզբունքների ընտրությունը պետության խնդիրն է, նրա իրավասությունը, նրա որդեգրած քաղաքականությունը տվյալ հարաբերությունների կարգավորման գործում, որով պետությունը լուծում է մի շարք խնդիրներ: Իսկ պոզիտիվ օրենսդրությունն ընդամենը արտացոլում է պետության որդեգրած այդ քաղաքականությունը՝ սահմանելով դրան համահունչ իրավական նորմեր:

Ինչպես կհամոզվենք ստորև, մեր պե-

տությունն առաջնորդվել է երկրորդ սկզբունքով, այսինքն՝ ըստ օրենքի ժառանգման հարցում ավելի շատ շրջվել է սուվերենի կողմը, քան անհատի, որի նկատմամբ նա պատրաստ չէ ամբողջությամբ զիջումների գնալու և թույլ տալու, որ քաղաքացու գույքը նրա մահից հետո ժառանգման կարգով անցնի նրա մերձավոր կամ այլ ազգականներին: Այլ հարց է, սակայն, թե որքանով է նա մինչև վերջ հավատարիմ մնացել իր որդեգրած այդ սկզբունքին, բացի այդ, համապատասխանում է այն, արդյոք, հայ ազգային ավանդույթներին ու սովորույթներին, շուկայական հարաբերություններից բխող սոցիալ-տնտեսական և քաղաքական մոր պայմաններին, կամ որքանով է մեր պոզիտիվ օրենսդրությունն այդ սկզբունքն արտացոլող ամբերի նորմեր սահմանել:

Անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսդրության ըստ օրենքի ժառանգների հերթերին՝ նշենք, որ դրանք չորսն են, ինչն առաջընթաց է նախորդ օրենսդրության համեմատ, սակայն դա միայն արտաքուստ: Դրանցում որպես ժառանգներ ներառված են՝

1. Ժառանգատուի երեխաները<sup>25</sup>, ամուսինը եւ ծնողները: Ժառանգատուի թոռները ժառանգում են ներկայացման իրավունքով:

2. Ժառանգատուի հարազատ եղբայրները եւ քույրերը: Ժառանգատուի եղբայրների եւ քույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

3. Ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը եւ տատը:

4. Ժառանգատուի ծնողների եղբայրները եւ քույրերը (հորեղբայրները, հորաքույրերը, քեռիները, մորաքույրերը): Ժառանգատուի հորեղբայրների եւ հորաքույրերի ու քեռիների եւ մորաքույրերի երեխաները ժառանգում են ներկայացման իրավունքով:

Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում նաև անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահը

առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի ներքո:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ օրենսդրությունը ժառանգների շրջանակը որոշելու հիմքում դրել է ժառանգատուի հետ որոշակի աստիճանի ազգակցության<sup>26</sup> մեջ լինելու, որդեգրման, ամուսնության մեջ գտնվելու, ժառանգատուի խնամքի տակ գտնվելու հանգամանքները, ինչպես նաև օրենքով նախատեսված հատկանիշների առկայությունը ժառանգատուի և ժառանգի միջև: Ընդհանրապես, ըստ օրենքի ժառանգման դեպքում օրենքը պիտի առաջնորդվի հստակ որոշված չափանիշներով, որպեսզի չտուժեն ոչ ավանդույթները, ոչ սոցիալ-բարոյական համակարգը և ոչ էլ տնտեսությունը: Այս տեսակետից, կարծես, ՀՀ օրենսդրության մեջ խնդիրներ չկան, սակայն սահմանված չորս հերթերը, ըստ էության, կարող էին ներառել անձանց ավելի լայն շրջանակ, ինչպես այդ նախատեսված է ԱՊՀ պետությունների մեծ մասի ու նաև եվրոպական շատ երկրների օրենսդրությամբ: Իրավաճանաչողության համար նշենք որոշ օրինաչափություններ.

1. Վերը թվարկված պոտենցիալ ժառանգները ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ըստ էության ժառանգատուի «ընտանիքի անդամներն»<sup>27</sup> են և/կամ «մերձավոր ազգականները»<sup>28</sup>: Մինչդեռ այլ երկրներում ըստ օրենքի ժառանգների շրջանակը դուրս է գալիս ավանդական ընտանիքի և մերձավոր ազգականների շրջանակից (օրինակ՝ Գերմանիայում, Ռուսաստանում և այլն): Դա ևս մեկ անգամ վկայում է ըստ օրենքի ժառանգման հարցում առաջատար դիրք զբաղեցնելու մեր պետության մոտեցման մասին:

2. ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանափակվում է ուղիղ վայրընթացների ներկայացման իրավունքով ժառանգման հնարավորությունը՝ ժառանգ համարելով մինչև երկրորդ աստիճանի ազգականներին: Դա հետևում է ՀՀ քաղ. օր. 1216 հոդվածից, որն առաջին հերթի ժառանգների շրջանակը վայրընթաց ազ-

գականների մասով սահմանափակում է մինչև ժառանգատուի թոռները, այսինքն՝ երկրորդ աստիճանը: Մինչդեռ, այլ երկրների օրենսդրությամբ ուղիղ վայրընթաց ազգականների (ժառանգատուի զավակներ և նրանց սերունդը՝ թոռներ, ծոռներ և շարունակ) ներկայացման իրավունքը, որպես կանոն, չի սահմանափակվում՝ անկախ ժառանգատուի հետ ունեցած նրանց ազգակցության աստիճանից: Այդպես է, մասնավորապես, Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի, ինչպես նաև ՌԴ, Ուկրաինայի, Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Ճապոնիայի, Բուլղարիայի օրենսդրությամբ<sup>29</sup>: ժառանգման իրավունքի դոկտրինայի համաձայն՝ նման մոտեցումը բխում է բնական իրավունքից<sup>30</sup>: Նման սահմանափակում չի եղել նաև հայ ժառանգման իրավունքի պատմության մեջ. զոնե մինչև մահացածի ծոռները ներառյալ (թեև արական գծով) համարվել են ժառանգներ:

Ուստի սահմանափակելով վայրընթաց ազգականների ներկայացման իրավունքը երկրորդ աստիճանով (քաղ. օր. 1216 հոդվ.), միաժամանակ, ինչպես կտեսնենք ստորև, լայն հնարավորություն տալով երրորդ կամ չորրորդ աստիճանի ինչպես հարազատ, այնպես էլ ոչ հարազատ ազգականներին (Քաղ. օր. 1219 հոդվ.)՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրության հիշյալ դրույթը, մեղմ ասած, չի բխում ժառանգման իրավունքի էությունից և դոկտրինայում ընդունված մոտեցումներից, ինչպես նաև հաշվի չի առնում սոցիալական արդարության սկզբունքը և հայ ժառանգման իրավունքի պատմությունը:

1. ժառանգման իրավունքի դոկտրինայում, որպես կանոն, սահմանափակվում է ժառանգատուի վերընթաց կամ կողային ազգականների ներկայացման իրավունքը՝ մինչև ազգակցության որոշակի աստիճանը: Մեր օրենսդրությամբ վերընթացների իրավունքը սահմանափակվում է երկրորդ աստիճանով (տատ, պապ), իսկ կողայինների՝ չորրորդ աստիճանով (Քաղ. օր.

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

1219 հոդվ.): Ֆրանսիայում, օրինակ, ժառանգներ են համարվում ժառանգատուի կողային ազգականները՝ մինչև վեցերորդ աստիճանը ներառյալ (Ֆրանսիայի քաղ. օր. 734, 745 հոդվ.)<sup>31</sup>, իսկ Գերմանիայում որևէ սահմանափակում չկա նաև կողային և վերընթաց ազգականների համար<sup>32</sup>: Անգլիայում վերընթացները սահմանափակվում են երկրորդ աստիճանով (պապ, տատ), իսկ կողայինների ներկայացման իրավունքը չի սահմանափակվում<sup>33</sup>: Ռուսաստանում վերընթացները սահմանափակվում են մինչև երրորդ աստիճանը, կողայինները՝ մինչև հինգերորդ աստիճանը:

2. Արտասահմանյան երկրների օրենսդրությամբ, որպես կանոն, տարբերակում չի դրվում մահացածի հարազատ և ոչ հարազատ (համամայր, համահայր) քույրերի և եղբայրների միջև: Այլ է պատկերը մեր օրենսդրությամբ՝ հարազատ և ոչ հարազատ ազգակցության տարբերակման առումով:

ՀՀ ընտանեկան և քաղաքացիական օրենսդրությունն այս հարցում տարբերակված մոտեցում են ցուցաբերում: ՀՀ ընտանեկան օրենսդրությունը, թեև անձնական հարաբերություններում, սակայն իրավականորեն արժեքավորում է ինչպես հարազատ, այնպես էլ ոչ հարազատ (համամայր և/կամ համահայր) ազգակցությունը: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 11-րդ հոդվածում արգելվում է ինչպես հարազատ, այնպես էլ համահայր և համամայր քույրերի ու եղբայրների, ինչպես նաև նրանց երեխաների միջև ամուսնությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1217 հոդվածը որպես ժառանգ համարում է ժառանգատուի միայն հարազատ քույրերին ու եղբայրներին, իսկ 1219 հոդվածը, չօգտագործելով «հարազատ» բառը, իրավականորեն արժեքավորում է թե հարազատ, թե ոչ հարազատ ազգակցությունը՝ այդպիսով չորրորդ հերթի ժառանգներ համարելով ժառանգատուի ծնողների քույրերին ու եղբայրներին, որի

տակ հասկանում ենք ինչպես հարազատ, այնպես էլ համամայր և համահայր քույրերին ու եղբայրներին:

Ստացվում է, որ մի դեպքում ՀՀ օրենսդրությունը, ժառանգատուին մոտիկ չհամարելով նրա ոչ հարազատ երկրորդ աստիճանի կողային ազգականներին (համամայր, համահայր քույրերին ու եղբայրներին), նրանց դուրս է թողել ոչ միայն երկրորդ հերթի, այլև ըստ օրենքի ժառանգների շրջանակից ընդհանրապես, մյուս կողմից՝ ժառանգ է համարել ժառանգատուի ոչ հարազատ երրորդ, չորրորդ աստիճանի կողային ազգականներին (ժառանգատուի ծնողների համահայր, համամայր քույրերին և եղբայրներին, իսկ նրանց զավակներին՝ ներկայացման իրավունքով):

Այս կապակցությամբ նշենք, որ պատմականորեն ժառանգման ազնատական սկզբունքից ելնելով՝ տարբերակում չի դրվել մահացածի **համահայր** և հարազատ եղբայրների ժառանգման իրավունքների առումով, նրանք համարվել են հավասար ժառանգներ (բնականաբար ժառանգման իրենց հերթի դեպքում): Նույնը չի կարելի ասել մահացածի **համամայր** եղբայրների մասին, որոնք, ի տարբերություն մահացածի համահայր և հարազատ եղբայրների, նրանից հետո ժառանգներ չեն համարվել, քանի որ կրել են այլ հայրանուն և համարվել են այլ տոհմի շարունակողը<sup>34</sup>: Ինչ վերաբերում է մահացածի քույրերին, ապա քույրերն իրենց եղբայրներից կամ քույրերից հետո, ընդհանրապես, ժառանգներ չեն համարվել, ուստի մահացածի հետ համամայր են, համահայր են թե հարազատ, նշանակություն չի ունեցել:

Նշենք, որ որոշ երկրների օրենսդրությամբ որպես ժառանգներ ուղղակիորեն նշվում են ժառանգատուի «հարազատ և համամայր (համահայր)» եղբայրները և քույրերը (Ռուսաստանի<sup>35</sup> քաղ. օր. 1143 հոդվ., Բելառուսի քաղ. օր. 1058 հոդվ.; Ղազախստանի քաղ. օր. 1062 հոդվ.): Այլ երկրների օրենսդրությամբ ուղղակի չի հիշատակվում «հարազատ» բառը՝ դրանով իսկ տարբերակում չդնելով հարազատների և ոչ հարազատների միջև (Ֆրանսիա,



Գերմանիա, Շվեյցարիա, Վրաստան, Լիտվա և այլն): Մի քանի երկրների օրենսդրությամբ էլ տարբերակված մոտեցում է ցուցաբերվում, և տարբեր հերթերում են ժառանգման հրավիրվում ժառանգատուի հարազատ և ոչ հարազատ քույրերն ու եղբայրները (օրինակ՝ Անգլիայում երրորդ հերթում հարազատ, իսկ չորրորդ հերթում՝ համահայր և համամայր քույրերը և եղբայրներն են<sup>36</sup>: Լատվիայի օրենսդրությամբ երկրորդ հերթում հարազատներն են, երրորդում՝ ոչ հարազատ քույրերը և եղբայրները, իսկ չորրորդ հերթից սկսած՝ տարբերակում չի դրվում հարազատ և ոչ հարազատ կողային ազգականների միջև<sup>37</sup>):

Միայն Ուկրաինայի օրենսդրությամբ է նշվում, որ երկրորդ հերթի ժառանգներ են **ժառանգատուի հարազատ եղբայրները և քույրերը**, տատը, պապը հայրական և մայրական կողմից (Քաղ. օր. 1262 հոդվ.), իսկ երրորդ հերթում են ժառանգատուի **ծնողների հարազատ քույրերն ու եղբայրները** (Քաղ. օր. 1263 հոդվ.): Այսինքն՝ արժևորվել է միայն հարազատ ազգակցությունը: Նկատենք, սակայն, որ Ուկրաինայի օրենսդրությունից ընդհանրապես դուրս են մնացել ժառանգատուի ոչ միայն ոչ հարազատ (համահայր, համամայր) քույրերը և եղբայրները, այլև նրա ծնողների ոչ հարազատ քույրերը և եղբայրները, ինչպես նաև նրանց վայրընթացները: Այսինքն՝ տեսնում ենք, որ միատեսակ մոտեցում է ցուցաբերված: Մինչդեռ, մեր օրենսդրությամբ, ըստ էության, ոչ հարազատ երկրորդ աստիճանի կողայինները դուրս են թողնված, իսկ ոչ հարազատ երրորդ, չորրորդ աստիճանների կողայինները՝ համարվում են ժառանգներ:

*Այսպիսով, վերոշարադրյալից եզրակացնում ենք, որ մեր պետությունն ըստ օրենքի ժառանգման հարցում ավելի շատ կողմնորոշվել է դեպի հանրայինը, քան մասնավորը, մեխանիզմներ է ստեղծել գույքն անժառանգ մնալու, հետևաբար պետության և ոչ թե մասնավոր անձանց սեփականությանն անցնելու համար: Բացի այդ, ըստ օրենքի ժառանգները սահմանափակվել են ժառանգատուի ընտանիքի ան-*

*դամների և մերձավոր ազգականների շրջանակով, ընդ որում՝ մերձավոր ազգականների մասով էլ լրացուցիչ սահմանափակում է նախատեսվել: Ահա սա է վիճելի հարցի նկատմամբ մեր պետության որդեգրած սկզբունքը, թեև թվում էր, թե ժառանգման հրավումների բարեփոխումները, որոնք մասն են կազմում երկրի հրավումների համակարգում կատարվող բարեփոխումների, պետք է հիմնվեին առավելապես մասնավոր-հրավական կողմնորոշման վրա:*

ՀՀ օրենսդրության այս ոգուն համապատասխան էլ երկրորդ հերթից դուրս են մնացել ժառանգատուի համահայր և համամայր քույրերն ու եղբայրները, ինչը որևէ խնդիր չէր առաջացնի, եթե ՀՀ օրենսդիրը այդ սկզբունքը պահեր նաև չորրորդ հերթի ժառանգների դեպքում, ինչպես դա արված է, օրինակ, Ուկրաինայի օրենսդրությամբ: Ուստի, այժմ գոյություն ունի ոչ թե հրավաչափության հարց, այլ միայն պետության որդեգրած սահմանափակող սկզբունքի և օրենսդրության ոչ միատեսակ կարգավորման խնդիր: Այդ կարգավորման միասնականացումը հանրայինի թե մասնավորի օգտին լուծվելու դեպքում կփոփոխի նաև պետության որդեգրած սահմանափակող սկզբունքը: Այսինքն, եթե քաղ. օր. 1219 հոդվածը համապատասխանեցվի քաղ. օր. 1217 հոդվածին, դրանով ավելի կխստանա հանրային ասպեկտը, եթե քաղ. օր. 1217 հոդվածը համապատասխանեցվի քաղ. օր. 1219-ին, դրանով իսկ ՀՀ օրենսդրությունն ավելի կշրջվի դեպի մասնավոր-հրավականը:

Կարծում ենք՝ առկա տարբերությունը պետք է լուծվի ժառանգատուի համամայր և համահայր եղբայրներին ու քույրերին ըստ օրենքի ժառանգների կազմում ներառելու օգտին: Ընդ որում՝ խոսքը նրանց ընդհանրապես ժառանգ ճանաչելու, այլ ոչ թե հարազատների հետ անպայման նույն հերթում ժառանգելու հնարավորություն տալու մասին է: Այսինքն՝ գործող օրենսդրությամբ նրանք կարող են ընդգրկվել ինչպես երկրորդ հերթի, այնպես էլ հետագա հերթերի ժառանգների կազմում:

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- <sup>1</sup> Տե՛ս Покровский И.А. Основные проблемы гражданского права. Изд. 4-е, испр. М. «Статут», 2003, (Классика российской цивилистики), էջ 298-299:
- <sup>2</sup> Տե՛ս Шершеневич Г.Ф. Учебник русского гражданского права. Том 2, Статут, 2005 (Классика российской цивилистики), էջ 382-383:
- <sup>3</sup> Ժառանգությունից զանձվող հարկերի չափը որոշ երկրներում կախված է ժառանգատուի հետ ունեցած ժառանգի ազգակցության աստիճանից և մեծանում է այդ աստիճանի մեծացմանը զուգահեռ, ինչը հանգեցնում է պետության կողմից ժառանգության նշանակալից մասի ձեռքբերմանը:
- <sup>4</sup> Տե՛ս Покровский И.А. նշված աշխատ., էջ 294:
- <sup>5</sup> Տե՛ս Айкянц А.М. Актуальные проблемы совершенствования частного права в Армении: Диссертация на соискание ученой степени доктора юридических наук: Ереван, 2007, էջ 177:
- <sup>6</sup> Տե՛ս Адонц А. Армения в эпоху Юстиниана. Ер., 1971, էջ 179-181:
- <sup>7</sup> Հայ իրավագետներից դոկտոր Ա. Ղևոնդյանը համարում է, որ Հին Հայաստանում կանայք ունեցել են տղամարդկանց հավասար ժառանգման իրավունքներ, որ հայ ընտանիքը չի ունեցել խիստ նահապետական բնույթ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Տե՛ս Ղևոնդյան Ա. Հայոց հին իրավունքը: Ընտանեկան իրավունք: Ընտանեկան կազմակերպության հիմունքները, ամուսնական իրավունք: Ալեքսանդրապոլ, տպ. Հով. Գ. Սանյանց, 1913:
- <sup>8</sup> Տե՛ս Մելիք-Թամզյան Ն. Հայոց եկեղեցական իրավունքը: Ներածություն և աղբյուրներ: Գիրք Ա, Շուշի, 1903, էջ 313:
- <sup>9</sup> Տե՛ս Ղևոնդյան Ա. Հայոց հին իրավունքը, էջ 246:
- <sup>10</sup> Տե՛ս Сукиасян А. Г. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III-IX вв. н.э.), Ереван, 1963, էջ 476-477:
- <sup>11</sup> Տե՛ս Айкянц А.М. История развития частного права в Армении. Ереван, Изд. «Асогик», 2006, էջ 106:
- <sup>12</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ս.Հ. Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV- IX դդ.), Երևան, ՀԱՍՏ, ԳԱ 1976, էջ 477-478: Դոկտոր Ա. Ղևոնդյանը գտնում է, որ հայ ժառանգման իրավունքում ընդհանրապես գոյություն չեն ունեցել մայրատի, մինորատի սկզբունքները: Տե՛ս Ղևոնդյան Ա. Հայոց հին իրավունքը, էջ 63-66:
- <sup>13</sup> Տե՛ս Сукиасян А. Г. նշված աշխատ., էջ 478:
- <sup>14</sup> Սովորութային իրավունքը տվյալ դեպքում նկատի է ունեցել, որ փեսան դառնում է մահացածի տան ազնատը և այդպիսով շարունակում է նրա տոհմը:
- <sup>15</sup> Տե՛ս Սամուելյան Խ. Հին Հայաստանի կուլտուրան: Հ. 1, Երևան, Պետ.հրատ., 1931, էջ 266-267:
- <sup>16</sup> Տե՛ս Сукиасян А. Г. նշված աշխատ. էջ 474:
- <sup>17</sup> Տե՛ս Ավագյան Ռ. Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX-րդ դ. – մ.թ. XIX դդ.): Երևան «ՄՆԻ ԵՄ-XXI ՂԱՐ», 2002, Հ. 2, էջ 229-480:
- <sup>18</sup> Айк'нц А.М. История развития частного права в Армении. Ереван, Изд. «Асогик», 2006, էջ 150:
- <sup>19</sup> Տե՛ս Кодификация Российского гражданского права: Свод законов гражданских Российской Империи, Проект Гражданского уложения Российской Империи, Гражданский кодекс РСФСР 1922г., Гражданский кодекс РСФСР 1964г. Екатеринбург, 2003:
- <sup>20</sup> Բացառություն էին կազմում միայն որոշակի գումարը չգերազանցող գույքի մասը կամ դեկրետով սահմանված առարկաները, որոնք էլ տրվում էին մահացածի սահմանափակ թվով մերձավորներին, տե՛ս История государства и права СССР (Сборник документов). Ч.2, էջ 97-98:
- <sup>21</sup> Տե՛ս Гойхбарг А.Г. Основы частного имущественного права. М., 1924, էջ 124; Новицкая Т. Отмена наследования в первый год Советской власти // Советская юстиция. 1989. N 5. Маркс К., Энгельс Ф. Сочинения. Т. XIII. Ч. 1. էջ 336:
- <sup>22</sup> Տե՛ս ՀԽՍՀ դեկրետների և որոշումների ժողովածու, 1922, թիվ 15, հոդ.97, էջ 167-168:
- <sup>23</sup> Սայրցամաքային և անգլոսանդիական իրա-

վական համակարգերում ժառանգման իրավունքի առանձնահատկությունների մասին մանրամասն տես Цвайгерт К., Кетц Х. Введение в сравнительное правоведение в сфере частного права: В 2 т. М., 2000. Т. 1. էջ 272 - 307, 446 — 459:

- <sup>24</sup> Օրինակ՝ ՌԴ-ում ըստ օրենքի ժառանգներ են նույնիսկ խորթ զավակներն ու խորթ ծնողները, իհարկե ամենավերջին՝ ութերորդ հերթում:
- <sup>25</sup> Պետք է լինի «զավակներ», քանի որ երեխա է համարվում տասնութ տարին չլրացած անձը:
- <sup>26</sup> Ազգակցության տեսակների և դրա աստիճանի որոշման մասին տե՛ս Տե՛ս Ղարախանյան Գ.Յ. Հայաստանի Հանրապետության ընտանեկան իրավունք: Երևան, ԵՊՀ, 2008, էջեր 94-96:
- <sup>27</sup> ՀՀ ընտանեկան օրենսգրքի 2-րդ հոդվածի դիսպոզիցիայից հետևում է, որ օրենսդրությունը ընտանիքի անդամներ է համարում ամուսիններին, երեխաներին և ծնողներին:
- <sup>28</sup> «Մերձավոր ազգականների» շրջանակը կարելի է բխեցնել ՀՀ ընտանեկան օրենսդրության 11 հոդվածի դիսպոզիցիայից, որը որպես այդպիսիք համարում է ծնողներ, զավակներ, պապ, տատ, թոռներ, ինչպես նաև հարազատ և համամայր կամ համահայր եղբայրներ ու քույրեր, նորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր և նորեղբոր զավակներ: Այսինքն՝ մինչև երկրորդ աստիճանի ուղղակի ազգականները և մինչև չորրորդ աստիճան կողային ազգականները:
- <sup>29</sup> Տե՛ս Блинков О.Е. Круг наследников по закону в странах СНГ и Балтии (сравнительно-правовой анализ) “Международное публичное и частное право”, 2006, N 5:
- <sup>30</sup> Տե՛ս Владимирский-Буданов М.Ф. Обзор истории русского права. Ростов-на-Дону: Феникс, 1995. էջ 460 - 461; Гражданское и торговое право капиталистических стран / Под ред. Н.М. Генкина. М.: Госиздат юрид. литературы, 1949. էջ 517-521; Ростовцева
- Н.В. Тенденции развития норм о наследовании в Гражданских кодексах Франции и России // Законодательство. 2005. N 7. էջ 18 - 27.
- <sup>31</sup> Տե՛ս Французский гражданский кодекс / Науч. ред. и предисл. Д.Г. Лаврова; Пер. с фр. А.А. Жуковой, Г.А. Пашковской. СПб., 2004. էջ 509:
- <sup>32</sup> Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքով ժառանգների կատեգորիաները և նրանց ժառանգման իրավիշի հերթականությունը սահմանվում է ըստ պարանտելաների: Պարանտելան արյունակցական ազգականների խումբ է, որոնք սերվել են ընդհանուր նախնից և նրա վայրընթացներից: Գերմանական օրենսդրությամբ պարանտելաների քանակի սահմանափակում չկա, այդ պատճառով էլ ժառանգման կարող են իրավիշի վրեժանցած ազգական՝ ըստ սահմանված հերթականության, որոնք նույնիսկ չեն ենթադրում իրենց ազգակցության մասին: Մանրամասն տես Гражданское и торговое право зарубежных государств. Т. 2, 4-е изд. М., 2008, էջ 589-590:
- <sup>33</sup> Տե՛ս Гражданское уложение Германии. Вводный закон к Гражданскому уложению. 2-е изд., доп./науч.ред. А.Л. Маковский и др., М. 2006. Германское гражданское уложение 1896 г. // <http://www.gesetze-im-internet.de/bundesrecht/bfgrg/gesamt.pdf>.
- <sup>34</sup> Տե՛ս Ղլտճեան Ա. Ամուսնություն, ամուսնալուծության և քաղաքացիական պսակ: Ալեքսանդրապոլ, 1904, էջ 64-65:
- <sup>35</sup> ԱՊՀ պետությունների քաղաքացիական օրենսգրքերի տեքստերը տե՛ս իրավա-տեղեկատվական բազայում «ԱՊՀ երկրների օրենսդրությունը. on-line»// [www.adviser.kg/base\\_sng](http://www.adviser.kg/base_sng):
- <sup>36</sup> Տե՛ս Нарышкина Р.П. Гражданское и торговое право капиталистических государств. М.: БЕК, 1995. էջ 269:
- <sup>37</sup> Լատվիայի քաղաքացիական օրենք, 404 հոդվ. 2-րդ, 3-րդ մասեր:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****SOME QUESTIONS CONCERNING INHERITANCE UNDER LAW  
IN ACCORDANCE WITH ARMENIAN LEGISLATION****Tatevik DAVTYAN**

*Associate Professor of the Chair  
of Civil Law YSU, Phd*

---

The article refers to the problems concerning inheritance under law in accordance with RA legislation.

Recently article 1217 of Civil Code of RA is being widely discussed by judicial and law proceeding bodies. The mentioned article of Civil Code of RA refers to circle of the second turn of successors under the law. The restrictive number of subjects is being widely discussed among the experts as well.

The Parliament is planning to carry out legislative changes, in this direction; the

Constitutional court is discussing the question of conformity of the mentioned article to the Constitution of the RA.

In this concern, in accordance with the decision of the Constitutional court professional examination was nominated and expert's report was presented.

The presented research also refers to the process of historical development of the Armenian hereditary right. With the help of analysis of inheritance relations regulation in France, Germany, England, Switzerland, USA, Russia, Ukraine etc., loopholes of Armenian legislation was also mentioned in the article.

---

## ՖՐԱՆԶԱՅՁԻՆԳԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### Լիպարիտ ԴՐՍԵՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ

Հ 1998 թվականի քաղաքացիական օրենսգրքի փոփոխության ընթացքում առաջին անգամ ամրագրեց պայմանագրային հարաբերություններ կարգավորող դրույթների ամբողջություն, որոնք ուղղված են համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվության՝ ֆրանչայզինգի (այսուհետ՝ ֆրանչայզինգ) հարաբերությունների կարգավորմանը: Ինչպես հուշում է պայմանագրի անվանումը, ֆրանչայզինգային հարաբերությունները բացառապես ձեռնարկատիրական գործունեության ոլորտում առաջացող հարաբերություններ են: Եթե փորձենք ֆրանչայզինգի պայմանագիր հասկացությունը ձևակերպել բոլոր էական հատկանիշներով հանդերձ, ապա այն կլինի այսպիսին. իրավատերը (կամ միջազգային բիզնեսի տերմինաբանությամբ՝ ֆրանչայզերը) ֆրանչայզինգի պայմանագրով պարտավորվում է վարձատրությամբ, ժամկետի նշումով օգտագործողին (ֆրանչայզիին) իրավունք վերապահել իր ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքների համալիրը, ներառյալ՝ իրավատիրոջ ֆիրմային անվանման, օրենքով պահպանվող առևտրային տեղեկատվության, ինչպես նաև պայմանագրով նախատեսված բացառիկ իրավունքների այլ օբյեկտների՝ ապրանքային նշանի, սպասարկման նշանի և այլնի նկատմամբ իրավունքները, տրամադրել մշտական խորհրդատվություն պայմանագրի գործողության ողջ ընթացքում (բոլորը միասին կոչվում են ֆրանչիզա), իսկ օգտագործողը պարտավորվում է ֆրանչիզան օգտագործել պայմանագրով նախատեսված պայմաններին

և կարգին համապատասխան:

Ֆրանչայզինգը որպես հարաբերություն, իսկ ֆրանչայզինգի պայմանագիրը որպես այդ հարաբերության բաղկացուցիչ մաս իրենցից ներկայացնում են բիզնեսի արագ տարածման գործընթաց և դրա իրականացման արդյունավետ մեխանիզմ: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ ներկայիս շուկայական հարաբերություններում բիզնեսի ընդլայնումը կամ, այլ կերպ ասած, ապրանքների և ծառայությունների սպառման դաշտի ընդլայնումը տեղի չի ունենում միայն ֆրանչայզինգի միջոցով: Քիչ չեն քաղաքացիաիրավական (գործարարական) այն միջոցները, որոնք հնարավորություն են ընձեռում ապահովելու ապրանքների և ծառայությունների սպառման դաշտի ընդլայնումը:

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք համեմատել ֆրանչայզինգը որպես առավել արդյունավետ ձև, բիզնեսի տարածման մյուս միջոցների համեմատ և վերհանել դրանց նմանություններն ու ընդգծել տարբերությունները: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ միջոցներից մի քանիսը որպես առանձին պայմանագրեր կանոնակարգված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Մյուսները, թեև առանձին (ինքնուրույն) չեն կարգավորվել օրենսգրքում, այնուամենայնիվ չի կարելի ասել, թե այդ պայմանագրերը չունեն ինստիտուտային կարգավորում, քանի որ դրանք կարող են ձևավորվել քաղաքացիական իրավունքի սկզբունքների և առանձին գործարքները կանոնակարգող հոդվածների հիման վրա և չհակասել դրանց:

Իրավաբանական գրականությունում ֆրանչայզինգի պայմանագիրը համեմատվում է ձեռնարկատիրական ոլորտում կնքվող այն պայմանագրերի հետ, որոնց միջոցով ապահովվում է ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ցանցի ընդլայնումը: Այստեղ մեր քննարկման առարկան են այն պայմանագրերը, որոնք իրենց հատկանիշներով և իրավական բնույթով առավել ակնառու նմանություններ ունեն ֆրանչայզինգի պայմանագրին: Քանի որ հետազոտության նպատակն է վեր հանել այն հատկանիշները, որոնցով պայմանավորված է ինստիտուտների միջև առկա տարբերությունը կամ նմանությունը, շեշտը դրվել է միայն առավել էական և ակնառու հատկանիշների վրա: Նման մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ համեմատական վերլուծությունը հասցված է այնպիսի ծայրահեղության, որ քննարկվում են անգամ պայմանագրերի անվանումները:

**Դիստրիբյուցիայի պայմանագիր:** Դիստրիբյուցիոն հարաբերությունները առանձին (ինքնուրույն) կարգավորում չեն ստացել ԶԶ քաղաքացիական օրենսգրքում, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիստրիբյուցիոն համաձայնությունը ներառում է ապրանքների մատակարարման, մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքի փոխանցման և այլ հարաբերություններ<sup>1</sup>, ուստի կարծում ենք, որ այդ համաձայնության (պայմանագրի) նկատմամբ կարող են կիրառելի լինել ԶԶ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կանոնները, մասնավորապես՝ մատակարարման պայմանագրին վերաբերող հոդվածները: Դիստրիբյուցիայի պայմանագիրը կարելի է բնորոշել որպես ապրանքների երկարաժամկետ մատակարարման պայմանագիր: Իսկ նման բնորոշումը պայմանավորված է նրանով, որ դիստրիբյուցիոն հարաբերության ժամանակ գրանտորը դիստրիբյուտորին վաճառում (մատակարարում) է ապրանքներ, իսկ վերջինս էլ պարտավոր է այդ ապրանքները օգտագործել բացառապես ձեռնարկատիրական գործունեություն իրակա-

նացնելու նպատակով: Բացի այդ, «Առևտրի և ծառայությունների մասին» ԶԶ օրենքում ամրագրված դրույթից ևս կարելի է եզրակացնել, որ դիստրիբյուցիոն պայմանագրի նկատմամբ կարող են կիրառվել մատակարարման պայմանագրի դրույթները: Այսպես, ըստ վերոնշյալ օրենքի 2-րդ հոդվածի՝ դիստրիբյուտորը արտադրական կազմակերպություններին շուկայում ներկայացնող վաճառողն է, որն արտադրական կազմակերպությունների հետ կնքված մատակարարման պայմանագրով մեծածախ ձեռքբերումների հիման վրա իրականացնում է իրացման գործունեություն<sup>2</sup>:

Այդուհանդերձ պետք է նշել, որ դիստրիբյուցիոն հարաբերությունը, ինչպես վերը նշվեց, չի ենթադրում բացառապես մատակարարման պայմանագրի հիման վրա ձևավորված հարաբերություն:

Դիստրիբյուցիայի պայմանագրով մի կողմը (գրանտորը) մյուս կողմին (դիստրիբյուտորին) է տրամադրում վաճառված ապրանքների վերավաճառքի իրավունքը որոշակի տարածքում կամ սպառողների որոշակի խմբի<sup>3</sup>:

Դիստրիբյուցիան ներառում է մատակարարման, միջնորդական, մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների փոխանցման քաղաքացիական կազմակերպություններ<sup>4</sup>: Եվ հաշվի առնելով այն, որ նշված հարաբերությունները ըստ էության մեկտեղվում են մեկ հարաբերության մեջ, պետք է նշել, որ դրանով իսկ դիստրիբյուցիայի պայմանագիրը դառնում է շուկայում ապրանքների իրացումը լավագույնս կանոնակարգող իրավական միջոց: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ դիստրիբյուցիան հաճախ նմանեցվում է նաև դիլերային գործունեությանը, երբեմն էլ՝ ապրանքների վերավաճառքին<sup>5</sup>: Նշված հարաբերությունները կարգավորող պայմանագրերի միջև առկա նմանությունների և տարբերությունների վերլուծությունը չհամարելով սույն հոդվածի քննարկման առարկա՝ այդուհանդերձ

անհրաժեշտ է նշել, որ դիլերային գործունեությունը, ինչպես նաև ապրանքների վերավաճառքը դիստրիբյուցիայի հետ միասին միևնույն հարաբերության առանձին դրսևորումներ են, և շատ հազվադեպ է հնարավոր տարանջատել այդ հարաբերությունները: Ընդ որում, ըստ որոշ հեղինակաների՝ վերոնշյալ հարաբերությունները, ինչպես նաև ֆրանչայզինգը միջնորդական գործունեության տեսակներ են և հետապնդում են միևնույն նպատակը՝ նպաստել շուկայում ապրանքների և ծառայությունների սպառման ծավալների ավելացմանը:

Ե՛վ դիստրիբյուցիոն, և՛ ֆրանչայզինգի պայմանագրում որպես պայմանագրի կողմ հանդես են գալիս բացառապես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտները՝ անհատ ձեռնարկատերերը և առևտրային իրավաբանական անձինք, քանի որ պայմանագրերը կնքվում են բացառապես ձեռնարկատիրական գործունեության ընթացքում: Եթե դիստրիբյուցիոն պայմանագրով գրանտորը դիստրիբյուտորին ապրանքներ է մատակարարում միայն վերավաճառելու նպատակով, ապա ֆրանչայզինգի պայմանագիրը կնքվում է ինչպես ապրանքներ վաճառելու, այնպես էլ արտադրություն կազմակերպելու և ծառայություններ մատուցելու նպատակով:

Դիստրիբյուցիայի պայմանագրով գրանտորը, ինչպես և ֆրանչայզինգի պարագայում իրավատերը դիստրիբյուտորին և օգտագործողին փոխանցված ապրանքների և ծառայությունների դիմաց ստանում են հատուցում: Այդուհանդերձ, թե ապրանքների և ծառայությունների փոխանցման և թե դրանց դիմաց տրվող հատուցումների առումով երկու հարաբերություններում էլ առկա են տարբերություններ: Այսպես, ֆրանչայզինգի պարագայում դրանք փոխանցվում են (տրամադրվում են) օգտագործողին՝ հետագայում դրանց վաճառքից ստացվող մասհանումների տեսքով հատուցում տրամադրելու պայ-

մանով (հատուցման նման տարբերակը գերակշռող է մյուս տեսակների համեմատ): Մինչդեռ դիստրիբյուցիայի պարագայում ապրանքները վաճառվում են դիստրիբյուտորին, և վերիջինս իր շիսկով և իր միջոցների հաշվին է իրականացնում ապրանքների վաճառքը: Այսինքն՝ այս դեպքում գրանտորը դիստրիբյուտորին վաճառվող ապրանքների դիմաց կատարված վճարումից է հատուցում ստանում:

Համեմատելով դիստրիբյուցիան և ֆրանչայզինգը՝ անհրաժեշտ է նշել նաև, որ այդ երկու հարաբերությունները նմանություն ունեն նաև որոշակի տարածքում բացառիկ իրավունքների տրամադրման առումով: Դիստրիբյուցիոն պայմանագրով կարող է նախատեսվել գրանտորի ապրանքային նշանի, չբացահայտվող տեղեկատվության կամ մտավոր սեփականության այլ օբյեկտի նկատմամբ օգտագործման իրավունքի տրամադրում: Սակայն, եթե դիստրիբյուցիոն պայմանագիր կնքելու համար նշված օբյեկտների օգտագործման իրավունքի տրամադրումը պարտադիր չէ ներառել պայմանագրի առարկայում, ապա ֆրանչայզինգի դեպքում վերոնշյալ օբյեկտների նկատմամբ օգտագործման իրավունքի տրամադրումը ընդգրկվում է պայմանագրի առարկայում: Վերոնշյալ առանձնահատկությամբ էլ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ օգտագործման իրավունքի տրամադրումը դիստրիբյուցիոն պայմանագրում ունի երկրորդային նշանակություն, քան ապրանքների մատակարարումը և դրանց վերավաճառքը:

Նշվում է, որ ֆրանչայզինգի դեպքում պայմանագիր կնքելու իրավատերը նպատակ ունի օգուտ ստանալու բացառիկ իրավունքների օգտագործումից, իսկ դիստրիբյուցիոն պայմանագրով գրանտորը նպատակ է հետապնդում ընդլայնելու ապրանքների վաճառքի ծավալը: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ թեև ֆրանչայզինգի պայմանագրով առաջնային նպատակը բացառիկ իրավունքների

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

օգտագործում տրամադրելուց օգուտ ստանալն է, սակայն ֆրանչայզինգը այդ կերպ նպատակ է հետապնդում ընդլայնելու սպառման շուկան, և բացառիկ իրավունքների տրամադրումը այս դեպքում միջանկյալ նպատակ կամ միջոց է: Հետևաբար գտնում ենք, որ և ֆրանչայզինգի, և դիստրիբյուցիայի դեպքում հիմնական նպատակը սպառման շուկայի ընդլայնումն է, որը մի դեպքում արվում է ֆրանչիզայի վաճառքի միջոցով, այլ կերպ ասած՝ վաճառվում է պատրաստի բիզնես մոդել<sup>9</sup>, իսկ մյուս դեպքում դիստրիբյուտորի հետ մատակարարման կամ առուժախի գործարք կնքելով: Գրականության մեջ դիստրիբյուցիոն պայմանագիրն այլ կերպ հաճախ անվանում են ֆրանչայզինգ: Անշուշտ սխալ է նման մոտեցումը, քանի որ վերոնշյալից ակնհայտ է, որ դրանք սպառման շուկայի ընդլայնման նպատակով ձեռնարկատիրական գործունեության ոլորտում կիրառվող տարբեր միջոցներ են:

**Համատեղ գործունեության (հասարակ ընկերակցություն) պայմանագիր:** Ի տարբերություն դիստրիբյուցիոն պայմանագրի՝ համատեղ գործունեության պայմանագրի իրավական կարգավորումն իր ամրագրումն է ստացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Այսպես, համաձայն օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին կետի՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

Համատեղ գործունեության պայմանագիրը անհամեմատ առավել հին իրավական ինստիտուտ է, քան ֆրանչայզինգի պայմանագիրը: Այս ինստիտուտի մասին խոսվում է դեռևս հռոմեական իրավունքի աղբյուրներում<sup>10</sup>: Կապիտալիզմի զարգաց-

մանը զուգընթաց՝ այն ստացավ առավել լայն կիրառում և ներկայումս համատեղ գործունեության պայմանագրի կնքման հնարավորություն նախատեսված է մայրցամաքային Եվրոպայի և ընդհանուր իրավունքի բազմաթիվ երկրներում<sup>11</sup>:

Որոշ հեղինակներ նույնացնում են ֆրանչայզինգի և համատեղ գործունեության պայմանագրերը՝ հիմք ընդունելով հարաբերությունների առանձնահատուկ բնույթը, համաձայնեցված կառավարումը, հաշվարկների հատուկ կարգը<sup>12</sup>: Այդուհանդերձ, երկու ինստիտուտների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված պայմանագրերը թեև ունեն մի շարք նմանություններ, այնուամենայնիվ դրանցում առկա տարբերությունները այնքան էական են, որ դրանք որպես առանձին պայմանագրեր ստացել են օրենսդրական հատուկ կարգավորում:

Որպես պայմանագրերի համար ընդհանուր հատկանիշ կարելի է նշել այն, որ երկու դեպքում էլ հարաբերություններ կարող են ձևավորվել ոչ նյութական բարիքների շուրջ: Այսինքն՝ մի դեպքում այդ բարիքները ներդրվում են որպես ավանդ (համատեղ գործունեություն), մյուս դեպքում այդ բարիքների նկատմամբ իրավունքը տրամադրվում է օգտագործողին (ֆրանչայզինգ):

Նշված պայմանագրերը կարող են կնքվել ինչպես որոշակի ժամկետով, այնպես էլ առանց ժամկետ նշելու: Երկու դեպքում էլ պայմանագրային հարաբերությունները կրում են երկարաժամկետ բնույթ:

Եվ համատեղ գործունեության և ֆրանչայզինգի դեպքում կողմերի միջև հարաբերությունները այնպիսին են, որ պայմանագրի երկու կողմերի միջև ձևավորվում է համագործակցություն՝ ուղղված պայմանագրային նպատակների իրականացմանը, և բոլոր դեպքերում նման համագործակցության բացակայությունը ուղղակի ազդեցություն է ունենում պայմանագրային հարաբերության վրա՝ հանգեցնելով պայմանագրի լուծման կամ նման հարաբերության ձախողման<sup>13</sup>: Այսպես, համատեղ



գործունեության դեպքում վճռական նշանակություն ունի կողմերի փոխադարձ պարտավորվածությունը՝ հասնելու պայմանագրով նախատեսված նպատակին համատեղ գործունեության միջոցով<sup>14</sup>: Երկու կողմերի համար էլ օգուտը ձևավորվում է փոխադարձ գործունեության արդյունքում: Գրականության մեջ հաճախ նշվում է, որ համատեղ գործունեության պայմանագիրն իր տեսակի մեջ միակն է, որի դեպքում պայմանագրի մասնակիցների շահերը ոչ թե հակընդդեմ են, այլ համընկնում են, և դրանք ուղղված են բոլորի համար մեկ ընդհանուր նպատակին հասնելուն<sup>15</sup>: Ինչ վերաբերում է ֆրանչայզինգի պայմանագրին, ապա կողմերը փոխադարձաբար շահագրգռված են համագործակցության պահպանության համար, քանի որ առանց համագործակցելու անհնար է դառնում պայմանագրային պարտավորությունների կատարումը և շուկայում ունեցած դիրքը պահպանելը, քանի որ իրավատեր կազմակերպությունը բոլոր նորարարությունների, շուկայի փոփոխություններին դիմագրավելու համար ընկերության իրականացրած բոլոր քայլերի մասին տեղակացնում է ֆրանչայզինգային ցանցի բոլոր մասնակիցներին, և հակառակը:

Պայմանագրերի նմանությունը նաև այն է, որ ինչպես համատեղ գործունեության, այնպես էլ ֆրանչայզինգի պայմանագրերը հատուցելի գործարքներ են, եթե, իհարկե, համատեղ գործունեության դեպքում կողմերը ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտներ են<sup>16</sup>: Սի դեպքում մասնակիցը, ներդնելով որոշակի նյութական և մտավոր միջոցներ, հատուցում է ստանում այդ ներդրման դիմաց՝ մյուս մասնակիցների համաներդրումների հիման վրա ընդհանուր նպատակին հասնելու միջոցով նյութական օգուտ ստանալով<sup>17</sup>: Իսկ ֆրանչայզինգի պարագայում իրավատերը ստանում է հատուցում դրամի տեսքով՝ վաճառված ֆրանչիզայի դիմաց: Ընդ որում, հատուցման վերաբերյալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը նախատե-

սում է մի քանի տարբերակ՝ միանվագ կամ պարբերական վճարներ, հասույթից մասհանումներ, իրավատիրոջ կողմից վաճառքի համար փոխանցված գույքի մեծածախ գնի և հավելագնի տարբերություն կամ պայմանագրով նախատեսված այլ ձև<sup>18</sup>: Պրակտիկայում ընդունված է հատուցումը տրամադրել ֆրանչիզայի ձեռքբերման համար կատարվող միանվագ վճարի և գործունեության ընթացքում ստացվող եկամտից կատարված մասհանումների (ռոյալթի) միջոցով:

Ի վերջո պայմանագրային երկու հարաբերությունների դեպքում կողմերը պատասխանատվություն են կրում անկախ մեղքից, այսինքն՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածով սահմանված կանոններով:

Պայմանագրերի միջև առկա տարբերությունները հանգում են հետևյալին.

Ինչպես վերը նշվեց, համատեղ գործունեության պայմանագիրը անհամեմատ հին իրավական ինստիտուտ է: Ի տարբերություն սրա՝ ֆրանչայզինգի պայմանագիրը սկսեց լայնորեն կիրառվել միայն 20-րդ դարի երկրորդ կեսից: Չնայած գրականության մեջ հաճախ է արտահայտվում կարծիք, որ ֆրանչայզինգի արմատները խորանում են մինչև միջնադար<sup>19</sup>, երբեմն մինչև անտիկ ժամանակաշրջան<sup>20</sup>, այդուհանդերձ պետք է նշել, որ պատմական այդ ժամանակահատվածներում ֆրանչայզինգը չի ընկալվել որպես առևտրի (բիզնեսի) ընդլայնման միջոց և ժամանակակից ընկալմամբ ձևավորվել է միայն 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին<sup>21</sup>:

Եթե համատեղ գործունեության դեպքում մասնակիցների իրավունքները և պարտականությունները փոխադարձաբար համընկնում են, ինչը պայմանավորված է գործունեության մեկ ընդհանուր նպատակակետ ունենալով, ապա ֆրանչայզինգի պարագայում նման փոխհարաբերությունը հարաբերության հատկանիշներից մեկն է միայն և չունի հարաբերության առնաձեռն հատկությունը կանխորոշող նշանակությամբ:

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

յուն: Այս հանգամանքը պայմանավորված է այն բանով, որ ֆրանչայզինգի դեպքում օգտագործողը իրավատիրոջ հետ գտնվում է առավելապես ենթակայության, քան ընկերային հարաբերության մեջ:

Եթե համատեղ գործունեությամբ կարող է ստեղծվել մասնակիցներին ընդհանուր սեփականությամբ պատկանող գույք, ապա ֆրանչայզինգի պարագայում այդպիսի գույք՝ որպես գործունեության արդյունք, չի ստեղծվում:

Ի տարբերություն համատեղ գործունեության, որի մասնակիցներ կարող են հանդես գալ քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները, ֆրանչայզինգի դեպքում սուբյեկտային կազմը սահմանափակված է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտներով միայն: Նման տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ համատեղ գործունեության պայմանագիրը կիրառելի է **նաև** ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում, իսկ ֆրանչայզինգը՝ **բացառապես** ձեռնարկատիրական գործունեության ոլորտում:

Այն դեպքում, երբ համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա մասնակիցների ներդրած ավանդները դառնում են վերջիններիս ընդհանուր բաժնային սեփականությունը, եթե այլ բան նախատեսված չէ վերջիններիս միջև կնքված համաձայնությամբ<sup>22</sup>, ապա ֆրանչայզինգի դեպքում իրավատիրոջ կողմից օգտագործողին փոխանցվող գույքը շարունակում է մնալ իրավատիրոջ սեփականությունը:

Համատեղ գործունեության և ֆրանչայզինգի պայմանագրերը տարբերվում են նաև հատուցման կարգով<sup>23</sup>:

Հաջորդ էական տարբերությունը, որն առկա է քննարկվող պայմանագրերի միջև, այն է, որ համատեղ գործունեության դեպքում ներդրվող ավանդների արժեքը հնարավոր է զնահատել փոխադարձ համաձայնությամբ, մինչդեռ ֆրանչայզինգի պարագայում ֆրանչիզայի, այդ թվում փո-

խանցվող գույքի արժեքը որոշվում է միակողմանիորեն՝ իրավատիրոջ կողմից:

Համատեղ գործունեության դեպքում առկա է մասնակիցների կողմից ընդհանուր գործեր վարելու առավել ճկուն համակարգ: Այսպես, գործերը մի դեպքում կարող են մարել բոլոր մասնակիցները, մեկ այլ դեպքում՝ մասնակիցներից յուրաքանչյուրը կամ նրանցից միայն մեկը: Ֆրանչայզինգի դեպքում բացակայում է գործերի վարման նման կարգ այն պատճառով, որ պայմանագրի կողմերը շարունակում են մնալ որպես ինքնուրույն տնտեսվարողներ, և թե իրավատերը, և թե օգտագործողը իրավասու չեն միջամտելու մեկը մյուսի գործերին, ինչպես նաև սահմանափակելու ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում կնքվող գործարքների քանակը:

Եական տարբերություններից մեկն էլ այն է, որ եթե օրենսդրորեն նախատեսվում է համատեղ գործունեությունը չբացահայտելու մասնակիցների իրավունքը, ապա ֆրանչայզինգի պայմանագիր կնքելու դեպքում օգտագործողը չպետք է շփոթեցնի սպառողներին<sup>24</sup> և պարտավոր է նրանց համար առավել ակնառու եղանակով տեղեկացնել, որ ինքն իրավատիրոջ անհատականացման միջոցներն օգտագործում է ֆրանչայզինգի պայմանագրի հիման վրա: Սա երաշխիք է սպառողների իրավունքների պաշտպանության համար, ովքեր ՀՀ քաղաքացիական օրենսգիրք 976-րդ հոդվածով սահմանված կարգով անհրաժեշտության դեպքում կարող են պահանջներ կերկայացնել հենց իրավատիրոջը:

Վերջում ընդհանրացնելով համատեղ գործունեության և ֆրանչայզինգի պայմանագրերի միջև առկա նմանությունների և տարբերությունների վերաբերյալ վերոշարադրյալը՝ անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ ֆրանչայզինգի միջոցով սպառման ցանցը ընդլայնող ընկերությունները դիմում են նաև համատեղ գործունեության պայմանագրի «օգնությանը»: Որպես օրինակ կարելի է նշել «McDonald's» ընկերությունը, որը հետխորհրդային մի

շարք պետություններում, մասնավորապես Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան, ի սկզբանե գործել է համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա<sup>26</sup>:

**Լիցենզային պայմանագիր:** Շատ հաճախ թե՛ պրակտիկայում, թե՛ գրականության մեջ հենց լիցենզային պայմանագրերի հետ է նույնացվում ֆրանչայզինգի պայմանագիրը: Ուստի անհրաժեշտ ենք համարում ներկայացնել, թե ինչպիսի նմանություններ ու տարբերություններ ունեն այս պայմանագրերը, և արդյոք դրանք նույնական են, թե ոչ: Լիցենզային պայմանագրով մտավոր գործունեության արդյունքի կամ անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կողմը (լիցենզատուն) մյուս կողմին (լիցենզառուին) թույլատրում է օգտագործել մտավոր սեփականության օբյեկտը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1106-րդ հոդված): Պայմանագրով լիցենզատուի ցուցումները առավելագույնը կարող են վերաբերել ապրանքների և ծառայությունների որակին, որոնց համար թույլատրվել է մտավոր սեփականության օբյեկտների օգտագործումը<sup>28</sup>: Լիցենզային պայմանագրերի վերաբերյալ դրույթներ առկա են թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, թե՛ առանձին օրենքներում: Մասնավորապես՝ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ 2008 թվականի օրենքի<sup>27</sup> 42-րդ հոդվածն ամրագրում է, որ արտոնագրատերը կամ արդյունաբերական նմուշի իրավատերը (լիցենզատուն) լիցենզային պայմանագրով թույլատրում է մեկ այլ անձի (լիցենզառուին) արտոնագրով պահպանված օբյեկտը կամ գրանցված արդյունաբերական նմուշը պայմանագրով նախատեսված ծավալով օգտագործել, իսկ լիցենզառուն պարտավորվում է լիցենզատուին վճարել պայմանագրով սահմանված վճարները և իրականացնել պայմանագրով նախատեսված այլ գործողություններ: Ընդ որում, ֆրանչայզինգի պայմանագրով ընդամենը տրամադրվում է թույլտվություն օգտագործելու բացառիկ իրավունքների համալիրը, և խոսք չկա այդ իրավունքների զիջման մասին: Մինչդեռ վե-

րոնշյալ օրենքը հնարավորություն է տալիս նաև կնքելու իրավունքի զիջման պայմանագիր: Նման դրույթ ամրագրված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1153-րդ և 1154-րդ հոդվածներում:

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ 2010 թվականի օրենքի<sup>28</sup> 27-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային նշանի իրավատերը (լիցենզատու) կարող է լիցենզային պայմանագրով այլ անձի (լիցենզառու) թույլատրել օգտագործել ապրանքային նշանը բոլոր ապրանքների և (կամ) ծառայությունների կամ դրանց մի մասի նկատմամբ, որոնց համար գրանցված է ապրանքային նշանը: Այսինքն՝ լիցենզառուին իրավունք է վերապահվում որոշակի ժամանակամիջոցի ընթացքում ապրանքային նշանն օգտագործել իր ապրանքների վրա գետեղելու համար<sup>29</sup>: Լիցենզային պայմանագրով կողմերը ազատ են սահմանելու ապրանքային նշանը լիցենզառուի կողմից օգտագործելու կարգն ու պայմանները: Սակայն բացառված չէ նաև պայմանագրում այնպիսի դրույթի ամրագրում, որով սահմանվի, որ լիցենզառուի ապրանքը որակապես չպետք է զիջի լիցենզատուի ապրանքին, և վերջինս վերահսկողություն պետք է իրականացնի այդ պահանջի կատարման նկատմամբ: Նման դրույթը հատկապես նախատեսվում է այն պայմանագրերում, որոնցով ապրանքային նշանի օգտագործման իրավունքը տրամադրվում է իրավատիրոջ կողմից արտադրվող ապրանքների արտադրման կամ ծառայությունների մատուցման նպատակով: Օրինակ՝ այսպիսի դրույթ է պարունակվում «Coca Cola» ապրանքային նշանի օգտագործման պայմանագրում, ըստ որի՝ լիցենզառուի արտադրանքը որակապես պետք է համապատասխանի լիցենզատուի արտադրանքին:

Մինչդեռ ֆրանչայզինգի պայմանագրով օգտագործողի պարտականությունն է անշեղորեն պահպանել արտադրվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների որակը: Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օգտագործողի նման պարտականությունը սահմանված է իմպերատիվ

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

ծնով:

Լիցենզային պայմանագրերի համար ընդհանուր համարվող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1106-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագիրը ենթադրվում է հատուցելի: Պայմանագրում պետք է սահմանվեն նաև վարձատրության չափը և այն որոշելու կարգն ու դրա վճարման ժամկետները: Սակայն պրակտիկայում միշտ չէ, որ պայմանագիրը հատուցելի է: Մասնավորապես, «Cascade» ապրանքային նշանի զիջման պայմանագրով վերջինիս օգտագործման իրավունքը տրամադրվել է անհատույց:

Սինչդեռ, ինչպես վերը նշվել է, ֆրանչայզինգի պայմանագիրը միշտ հատուցելի գործարք է: Ըստ արևմտյան որոշ հեղինակների՝ պայմանագրի գինը դրա անբաժանելի մասն է, և գնի վերաբերյալ դրույթները անրագրվում են բոլոր պայմանագրերում<sup>30</sup>:

Պայմանագրերի նմանությունը այն է, որ ինչպես լիցենզառուն, այնպես էլ օգտագործողը պարտավորվում են պատշաճ միջոցներ ձեռնարկել պայմանագրով ստացած տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու համար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Նման պարտականությունը շարունակվում է նաև պայմանագրերի դադարումից հետո, եթե այդ տեղեկությունները շարունակվում են լինել չբացահայտված:

Օրենսդրությամբ նախատեսվում է լիցենզիայի երեք տեսակ՝ բացառիկ, եզակի և հասարակ (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1106-րդ հոդված): Բացառիկ լիցենզիայի դեպքում լիցենզառուին է փոխանցվում օբյեկտի օգտագործման բացառիկ իրավունքը պայմանագրով որոշված սահմաններում: Ընդ որում, լիցենզատուն այս դեպքում զրկվում է նաև օբյեկտի օգտագործման իրավունքից: Այլ կերպ ասած՝ այս դեպքում լիցենզատուն ժամանակա-

վորապես օտարում է մտավոր սեփականության օբյեկտը:

Եզակի լիցենզայի դեպքում լիցենզատուն պահպանում է օգտագործման իրավունքը:

Հասարակ լիցենզիայի դեպքում լիցենզատուն պահպանում է օբյեկտը օգտագործելու և այլ անձանց թույլտվություն տալու իր իրավունքը:

Անհրաժեշտ է նշել, որ ֆրանչայզինգի իրավատերը բոլոր դեպքերում պահպանում է իրավունքների համալիրի նկատմամբ իրավունքները այլ անձանց փոխանցելու հնարավորությունը: Եվ, հետևաբար, ֆրանչայզինգը նույնանում է միայն հասարակ լիցենզայի հետ: Իսկ նման առանձնահատկությունը պայմանավորված է նրանով, որ բիզնեսի ընդլայնման այս ձևի ընտրության դեպքում իրավատերը չի կարող դադարել մտավոր սեփականության օբյեկտները օգտագործել, քանի որ իրավատերը ֆրանչայզինգային ցանցում կատարում է համակարգման գործառույթ: Իհարկե, կողմերը զրկված չեն նախատեսելու իրավատիրոջ պարտականությունը՝ չտրամադրել նույնանման համալիր (ֆրանչիզա) այլ անձանց՝ օգտագործողին անրացված տարածքում գործունեություն իրկանացնելու նպատակով կամ ձեռնպահ մնալ այդ տարածքում սեփական գործունեության իրականացումից:

Ինչ վերաբերում է անհատականացման այնպիսի միջոցի, ինչպիսին ֆիրմային անվանումն է, ապա պետք է նշել, որ «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ 2008 թվականի օրենքի<sup>31</sup> 13-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը կարող է փոխանցվել միայն տվյալ իրավաբանական անձի հետ մեկտեղ դրա վերականգնակերպման դեպքում: Նույնաբովանդակ հոդված անրագրված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (հոդված 1170): Սրանից հետևում է, որ ֆիրմային անվանումը օգտագործելու իրավունքը լիցենզային պայմանագրով փոխանցվել չի

կարող: Ֆրանչայզինգի պայմանագիրը այն միակ բացառությունն է, որով հնարավոր է դառնում իրականացնել նման փոխանցում: Այդ բացառությունն էլ նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Քննարկվող երկու պայմանագրերն էլ ենթակա են գրանցման ՀՀ մտավոր սեփականության գործակալությունում:

Գտնում ենք, որ ճիշտ չէ իրավաբանական գրականության մեջ արտահայտվող այն մոտեցումը, ըստ որի՝ լիցենզային պայմանագիրը ֆրանչայզինգի պայմանագրի մաս է: Այն համաձայնքը, որ ֆրանչայզինգի պայմանագրով իրավատերը պարտավորվում է օգտագործողին հանձնել պայմանագրով նախատեսված լիցենզիաները, չի նշանակում, որ ֆրանչայզինգի պայմանագրի հետ մեկտեղ կնքվում է նաև լիցենզային պայմանագիր: Ֆրանչայզինգի պայմանագրի կնքումը և համապատասխան կարգով գրանցումը ինքնին ենթադրում են, որ լիցենզիաները փոխանցվելու են, և դրա համար նոր պայմանագիր կնքելու անհրաժեշտություն չկա<sup>32</sup>:

Երկու պայմանագրերի միջև տարբերությունն ընդգծելու համար նշենք նաև այն, որ ֆրանչայզինգի պայմանագրով իրավատիրոջը պատկանող բացառիկ իրավունքները օգտագործվում են ձեռնարկատիրական գործունեության մեջ: Մինչդեռ ոչ մի օրենսդրական ակտ լիցենզային պայմանագրերի վերաբերյալ նման սահմանափակում չի նախատեսում: Բացի այդ, ֆրանչայզինգի պայմանագրով օգտագործման է տրամադրվում բացառիկ իրավունքների համալիրը՝ որպես մեկ օբյեկտ,

մինչդեռ լիցենզային պայմանագրով որպես կանոն օգտագործման են տրամադրվում այդ համալիրը կազմող առանձին իրավունքներ (համալիրի տարրեր):

Այնուամենայնիվ, որոշ հեղինակներ կարծում են, որ նման տարբերությունը երկու պայմանագրերի միջև էական չէ, և դա հիմք է տալիս ենթադրելու, որ ֆրանչայզինգի պայմանագիրը լիցենզիոն պայմանագրի տեսակ է<sup>33</sup>: Գտնում ենք, որ նման մոտեցման հետ չպետք է համաձայնել, քանզի ամենաէական հատկանիշը, որով ֆրանչայզինգի պայմանագիրը տարբերվում է լիցենզային պայմանագրից, նպատակն է: Իսկ նպատակը հետևյալն է՝ օժանդակել կոնկրետ տեսակի ապրանքների (ծառայությունների, աշխատանքների, արտադրության) շրջանառության աճին և սպառման շուկայի ընդլայնմանը: Լիցենզային պայմանագիրը նման նպատակ չի հետապնդում: Այն ունի այլ նպատակ՝ ապահովել որոշակի բացառիկ իրավունքի փոխանցումը: Մինչդեռ, ինչպես քիչ առաջ նշվեց, ֆրանչայզինգի առարկա է այդպիսի իրավունքների համալիրը, որն էլ նպաստում է ապրանքների շրջանառության մեծացմանը<sup>34</sup>:

Ամփոփելով պայմանագրերի վերաբերյալ վերլուծությունը՝ պետք է արձանագրել, որ քննարկվող պայմանագրերից յուրաքանչյուրը՝ որպես ինքնուրույն իրավական միջոց, կարող է նպաստել սպառման շուկայի ընդլայնմանը: Սակայն անհրաժեշտ է նաև ընդգծել, որ այդ միջոցների շարքում հատկապես ֆրանչայզինգի պայմանագիրն է առավելագույնս միտված շուկայի ընդլայնման նպատակի իրագործմանը և դրա իրագործման լավագույն միջոցն է:

<sup>1</sup> Տե՛ս Дашян М.С. Дистрибуторский договор в международном коммерческом обороте //Право и политика” 2004, N 10:

<sup>2</sup> Տե՛ս «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ, 2004.12.28/72(371):

<sup>3</sup> Տե՛ս Дашян М.С., նշված հոդվածը:

<sup>4</sup> Տե՛ս Дашян М.С., նշված հոդվածը:

<sup>5</sup> Տե՛ս Белов А.П. Посредничество во внешней торговле. Право и практика //”Бизнес-адвокат”, 1997, N 1:

<sup>6</sup> Տե՛ս Белов А.П., նշված հոդվածը:

<sup>7</sup> Տե՛ս Дашян М.С., նշված հոդվածը:

<sup>8</sup> Տե՛ս Руденко А.В. О дистрибуторском договоре// “Бизнес-адвокат” 2004, N 11:

<sup>9</sup> Տե՛ս Рыкова И. Особенности национального франчайзинга// “Бизнес-адвокат” 2002, N11:

<sup>10</sup> Տե՛ս Дождев Д.В. Римское частное право. Учебник. Под. общ. ред. В.С.Нерсисянца. 3-е издание, М.:Норма, 2008, էջեր 600-603:

- <sup>11</sup> Տե՛ս *Гражданское право: В 4 т. Том 4: Обязательственное право: Учебник*, էջ 268:
- <sup>12</sup> Տե՛ս Орлова О.А. Франчайзи партнеру не товарищ// “Бизнес-адвокат”, 2003, N 21:
- <sup>13</sup> Տե՛ս թրջոյնէն Ստ. Բարսեղյան. Զրոյց ՉՏՏՈՒ. ԿՑԶ. Ռադ. ԾՏՁՏուով Թ.Կ., Մ. Юрист. 2004, էջ 528:
- <sup>14</sup> Տե՛ս *Гражданское право. Учебник. 2-е издание, переработанное и дополненное.* Под общ. ред. С.С.Алексеева. М. Проспект, 2009, էջ 355:
- <sup>15</sup> Տե՛ս *Гражданское право: В 4 т. Том 4: Обязательственное право: Учебник. 3-е издание, переработанное и дополненное.* Под ред. Е.А.Суханова. М. Болтерс Клувер, 2008, էջ 270, *Гражданское право. Учебник. Том 2.* Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. Проспект. М. 2005, էջ 763, *ՀՀ քաղաքացիական իրավունք, դասագիրք*, 3-րդ մաս, Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ, Երևան, 2003, էջ 551:
- <sup>16</sup> Գրականության մեջ համատեղ գործունեության պայմանագրի հատուցանելիության վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ. այսպէս՝ հեղինակների մի մասը կարծում է, որ գործարքը հատուցելի չէ, քանի որ կոնսուրազենտները փոխադարձաբար մեկը մյուսից հատուցում չեն ստանում, մյուս մասը կարծում է, որ համաներդրումների արդյունքում որոշակի օգուտ ստանալը ենթադրում է գործարքի հատուցանելիությունը (տե՛ս *ՀՀ քաղաքացիական իրավունք, դասագիրք*, 3-րդ մաս, Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ, Երևան, 2003, էջ 552,), իսկ հեղինակների երրորդ խումբը կարծում է, որ նման խնդիր ընդհանրապէս չի ծագում, քանի որ մասանկիցների պարտավորությունը փոխադարձ բնույթ չի կրում (տե՛ս *Гражданское право: В 4 т. Том 4: Обязательственное право: Учебник. 3-е издание, переработанное и дополненное.* Под ред. Е.А.Суханова. М. Болтерс Клувер, 2008, էջ 270):
- <sup>17</sup> Տե՛ս *Гражданское право: В 4 т. Том 4: Обязательственное право: Учебник. 3-е издание, переработанное и дополненное.* Под ред. Е.А.Суханова. М. Болтерс Клувер, 2008, էջ 271:
- <sup>18</sup> Տե՛ս *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք*, ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50), 972-րդ հոդված:
- <sup>19</sup> Տե՛ս В.М.Черниловский. Всеобщая история государства и права. Учебник. М. 2002, էջեր 123-125:
- <sup>20</sup> Տե՛ս <http://www.whichfranchise.org/article.cfmarticleID=255>:
- <sup>21</sup> Տե՛ս О. Новоселцев. Франчайзинг: История развития, правовое регулирование, оценка. Финансовая газета. N 18,1998, С.В. Поворин. Тенденции развития франчайзинга в мировой экономике. Маркетинг в России и зарубежом. N3, 1998:
- <sup>22</sup> Տե՛ս *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք*, ՀՀ ՊՏ 1998.08.10/17(50), 1028-րդ հոդված:
- <sup>23</sup> Այդ մասին նշվել է վերը:
- <sup>24</sup> Տե՛ս *Комментарий к ГК РФ. Части второй. Постатейный.* Под ред. О.Н. Садикова. М. 1998, էջ 629:
- <sup>25</sup> Տե՛ս Ирина Смольская. Франчайзинг на рынке ресторанных услуг. Журнал «Экономика России: XXI век» N3(8) июль 2002 г.
- <sup>26</sup> Տե՛ս *Руководство по франшизе.* ВОИС. Женева. 1995, էջ 11:
- <sup>27</sup> Տե՛ս «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ 2008 թվականի օրենք, ՀՀ ՊՏ, 2008.07.09/42(632):
- <sup>28</sup> Տե՛ս «Ապրանքային նշանների մասին» ՀՀ 2010 թվականի օրենք, ՀՀ ՊՏ, 2010.06.02/24(758):
- <sup>29</sup> Տե՛ս *ՀՀ քաղաքացիական իրավունք, դասագիրք*, 3-րդ մաս, Գ.Հ. Ղարախանյանի խմբագրությամբ, Երևան, 2003, էջ 180:
- <sup>30</sup> Տե՛ս Стивен Спинелли-мл., М. Розенберг Роберт, Берли Сью. Франчайзинг: путь к богатству. М. Вильямс. 2007, էջեր 131-134:
- <sup>31</sup> Տե՛ս «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2008.07.09/42(632):
- <sup>32</sup> Արևմտյան որոշ հեղինակներ պայմանագիրը անվանում են լիցենզային պայմանագիր և դա դիտում ամբողջ ֆրանչայզինգային հարաբերության տարրերից մեկը (տե՛ս Стивен Спинелли-мл., М. Розенберг Роберт, Берли Сью. Франчайзинг: путь к богатству. М. Вильямс. 2007, էջ 131): Այդուհանդերձ, ուսումնասիրելով այս հեղինակների մոտեցումը՝ հանգում ենք այն հետևության, որ այս դեպքում խոսքը, ՀՀ օրենսդրության իմաստով, ֆրանչայզինգի պայմանագրի մասին է:
- <sup>33</sup> Տե՛ս *Гражданское право России.* Курс лекции. Часть вторая. Под ред. О.Н. Садикова. М. 1997, էջ 587:
- <sup>34</sup> Տե՛ս *Гражданское право. Учебник. Том 2.* Под ред. А.П. Сергеева, Ю. К. Толстого. Проспект. М. 2005, էջ 743:

---

## FRANCHISING AGREEMENT IN THE FRAMEWORK OF CIVIL LEGAL DOCUMENTS

**Liparit DRMEYAN**

*Post-graduate student of the Chair of  
the Civil Law department of the  
Yerevan State University*

Given article is devoted to the study of the role of the franchising agreement in the system of civil legal documents and its distinction from the latter, which is highly relevant issue both for the civil practice and the-

ory. In particular, a comparative analysis of franchising and distribution, as well as of joint interaction and license contract is done within the framework of the article. The existing similarities and differences of the mentioned institutions are highlighted. The research results in a conclusion that among all other options franchising agreement is the most universal and secure tool for rapid development of business.

---

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԵՎ ԵՐԻՇԽՈՂ ԴԻՐՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԸՍՏ  
«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ**

**Արսեն ԹԱՎԱԴՅԱՆ**

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
2-րդ կուրսի ուսանող*

Մենաշնորհը (մոնոպոլիա՝ հունարեն monos՝ մեկ, poleo՝ վաճառել) մեկ սուբյեկտին՝ պետությանը, կազմակերպությանը, վաճառողին, պատկանող բացառիկ իրավունք է որևէ տնտեսական գործունեություն իրականացնելու համար<sup>1</sup>: Մենաշնորհը մրցակցային շուկայի ուղղակի հակադիր իրադրությունն է: Մասնագետների մեծամասնության կարծիքով, մենաշնորհը այն ուժն է, որը կազմալուծում է ազատ շուկան և մրցակցությունը: Այդ պատճառով շատ կարևոր է դիտվում պայքարը մենաշնորհի և շուկայական կոնցետրացիաների դեմ: Մրցակցային միջավայրի ապահովումը և մենաշնորհների չարաշահումների դեմ պայքարը գործարարական գործունեության կանոնակարգման ոլորտում պետության հիմնական խնդիրներից են<sup>2</sup>:

Սակայն գրականության մեջ գոյություն ունի նաև հակառակ տեսակետը, որը պաշտպանում են մի շարք իրավաբաններ և հատկապես տնտեսագետներ: Նրանք գտնում են, որ շուկան ինքնակարգավորող համակարգ է, և պետության ցանկացած միջամտություն դրա բնականոն գործունեությանը վնասում է շուկային, ուրեմն և պետությանը: Նրանք քննադատում են հակամենաշնորհային օրենսդրությունը, քանի որ այն իրավական առումով խախտում է սեփականության իրավունքը և ենթադրում է խտրականություն՝ խոշոր ձեռնարկատերերի իրավունքների խախտման տեսքով<sup>3</sup>: Այդ պատճառով Ռուսաստանի

Դաշնության դաշնային հակամենաշնորհային ծառայության ղեկավարներ Ի. Արտեմևը և Ա. Սուշկևիչը իրենց հոդվածներից մեկում նշում էին, որ «պետության հակամրցակցային օրենսդրությունը մասնավոր գործերին պետության միջամտության ոչ մի այլ ձևից շատ չի գտնվում տնտեսական գիտության մշտական քննադատության քիրախում»<sup>4</sup>:

ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի 6-րդ հոդվածի առաջին կետը նշում է. «Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող) չունի մրցակից»<sup>5</sup>:

Հասկանալի է, որ ինչպես կատարյալ մրցակցությունը, մաքուր մենաշնորհը նույնպես գիտական որոշակի արստրակցիա է: Քանի որ շուկայում գրեթե գոյություն չունեն ապրանքներ, որոնք ընդհանրապես փոխարինիչներ չունեն, հազվադեպ է պատահում, որ շուկայում գործում է մեկ մատակարար:

Այդ պատճառով պետությունը ուշադրություն է դարձնում ոչ միայն մենաշնորհ դիրք գրավող սուբյեկտների չարաշահումներից շուկան պաշտպանելուն, այլև վերահսկում է գերիշխող դիրք գրավող սուբյեկտների գործողությունները:

Ըստ նույն հոդվածի երկրորդ կետի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռք բերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը:

Փաստորեն, մեր օրենսդիրը գերիշխող դիրք ունենալը որոշելու համար կիրառում



է միայն քանակական չափանիշ՝ տվյալ ապրանքային շուկայում որոշակի բաժնեմասից ավելի տիրապետելու հանգամանքը: Սակայն տեսական գրականության և արտասահմանյան երկրների պրակտիկայում տարածված է գերիշխող դիրքը որոշելու ոչ միայն քանակական, այլև որակական չափանիշի կիրառումը: Քանակական չափանիշ ասելով հասկանում ենք, երբ տնտեսվարող սուբյեկտը գրավում է ապրանքային շուկայի որոշակի հատված, այն համարվում է գերիշխող դիրք գրավող՝ անկախ այն հանգամանքից՝ ինքն իրական հնարավորություն ունի ազդելու շուկայական իրադրության վրա: Գերիշխող դիրքի որակական չափանիշի կիրառման դեպքում ուշադրությունը կենտրոնանում է տնտեսվարող սուբյեկտի՝ շուկային ազդելու, քաղաքացիների և այլ տնտեսվարող սուբյեկտների իրավունքները խախտելու իրական հնարավորության առկայության վրա<sup>6</sup>: Օրինակ՝ ԵՄ դատարանը Continental Can գործով գերիշխող դիրք հասկացությունը սահմանում է հետևյալ կերպ. «Կազմակերպությունները գրավում են գերիշխող դիրք այն դեպքերում, երբ նրանք ունեն իրենց անկախ պահելու իշխանություն, ինչը նրանց հնարավորություն է տալիս գործելու՝ հաշվի չառնելով մրցակիցներին, գնորդներին և վաճառողներին: Դա այնպիսի դրություն է, որի դեպքում նրանք շուկայական բաժնեմասի կամ շուկայական բաժնեմասի և տեխնիկական գիտելիքների, հունքային բազայի կամ կապիտալի տիրապետման շնորհիվ իշխանություն ունեն սահմանելու գներ կամ վերահսկելու արտադրությունը կամ սեփական արտադրանքի զգալի մասի իրացումը»<sup>7</sup>: Սակայն ԵՄ-ում որակական չափանիշի կիրառման համար անհրաժեշտ է քանական չափանիշի առկայություն. տնտեսվարող սուբյեկտի բաժնեմասը պետք 40%-ից ավելին լինի<sup>8</sup>: Հատկանշական է Ռուսաստանի Դաշնության օրինակը: Այստեղ, ըստ տնտեսական մրցակցության պաշտպանության դաշնային օրենքի, եթե տնտեսվարող սուբյեկտը գրավում է ապրանքային շուկայի 50%-ը, ապա վերջինս համարվում

է գերիշխող դիրք գրավող: Սակայն ապրանքային շուկայի 35%-ին տիրապետելու հանգամանքը հիմք է որակական չափանիշ կիրառելու համար<sup>9</sup>: Տվյալ բաժնեմասից քիչ տիրապետող տնտեսվարող սուբյեկտը չի կարող գերիշխող դիրք գրավող ճանաչվել՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, այսինքն՝ եթե վերջինս հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու ապրանքային շուկայում ապրանքի շրջանառության ընդհանուր պայմանների վրա<sup>10</sup>:

Այդպիսի սուբյեկտի գերիշխող դիրքը հականենաշնորհային մարմինը կարող է որոշել մրցակցության վերլուծության արդյունքներով: Այստեղ պետք է հաստատվեն հետևյալ հանգամանքները.

1. Տնտեսվարող սուբյեկտը հնարավորություն ունի միակողմանիորեն որոշելու ապրանքի գները կամ ուղղակի ազդելու ապրանքների իրացվելիության ընդհանուր պայմանների վրա տվյալ ապրանքային շուկայում,

2. Նոր մրցակիցների մուտքը տվյալ ապրանքային շուկա դժվարացված է, այդ թվում՝ տնտեսական, տեխնոլոգիական, վարչական և այլ սահմանափակումների միջոցով,

3. Տնտեսվարող սուբյեկտի արտադրվող կամ իրացվող ապրանքը սպառման ժամանակ չի կարելի փոխարինել այլ ապրանքով (այդ թվում՝ արտադրական նպատակներով օգտագործելու դեպքում),

4. Ապրանքի գնի փոփոխությունը չի պայմանավորում այդ փոփոխությանը համարժեք ապրանքի նկատմամբ պահանջարկի փոփոխություն<sup>11</sup>:

Գերիշխող դիրքը որոշելու այսպիսի չափանիշների կիրառումը դրական է գնահատվում ռուսական գիտնականների շրջանում<sup>12</sup>:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հաստատած տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհի կամ գերիշխող դիրքի որոշման կարգի<sup>13</sup> համաձայն՝ նախատեսվում է ապրանքային շուկայում գերիշխող դիրքի հաշվարկման կարգը: Նշվում է, որ ապրան-

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

քային շուկայում տնտեսվարող սուբյեկտի մենաշնորհ կամ գերիշխող դիրքը որոշվում է ապրանքային շուկայում տվյալ տնտեսվարող սուբյեկտի բաժնի հաշվարկման միջոցով՝ տվյալ ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների և (կամ) պետական մարմինների կողմից Յանձնաժողով ներկայացված և (կամ) Յանձնաժողովի կողմից իրականացված ստուգումների արդյունքում ձեռք բերված տեղեկատվության վերլուծության հիման վրա:

Տեսագիտական գրականության մեջ առաջարկվում է գերիշխող դիրքի հաշվարկման հետևյալ բանաձևը՝

$$D_i = V_i / V_m$$

որտեղ  $D_i$ -ը տնտեսվարող սուբյեկտի՝ ապրանքային շուկայում բաժնեմասն է,  $V_i$ -ը՝ տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի ապրանքային շուկայում որոշակի ժամանակահատվածում իրացրած ապրանքի ծավալը,  $V_m$ -ը՝ տվյալ շուկայում իրացված ապրանքի ընդհանուր ծավալը<sup>14</sup>:

Նույն կարգում նաև նշվում է, որ տնտեսվարող սուբյեկտը մենաշնորհ դիրք ունեցող կարող է համարվել նաև այդ դիրքի առկայության մասին վկայող բացառիկ կամ փաստացի միակ լիցենզիայի կամ այլ տվյալների հիման վրա՝ առանց նշված կարգում ուսումնասիրության իրականացման կամ տեղեկատվության վերլուծության:

Որոշ երկրների օրենսդրություններ, այդ թվում՝ և Հայաստանի, նախատեսում են, այսպես կոչված, կոլլեկտիվ գերիշխող դիրք ինստիտուտը: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերը սահմանում են կոլլեկտիվ գերիշխող դիրքի հասկացությունը. «Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես

իրացնող (ձեռք բերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը: Ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք որպես իրացնող (ձեռք բերող) իրացման (ձեռքբերման) ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը»:

Չնայած կոլլեկտիվ գերիշխող դիրքը միջազգային պրակտիկայում բավականին տարածում ստացած ինստիտուտ է, դրա կիրառումը բավականին վիճելի է և քննադատության է արժանանում տեսական գրականության մեջ: Հեղինակների մի խումբ նշում է. «Տեսականորեն համատեղ գերիշխող դիրքի պայմաններում չարաշահումը որպես հակամենաշնորհային օրենսդրության խախտում կարող է ներկայացվել և որպես հակամրցակային համաձայնություն, և որպես գերիշխող դիրքի չարաշահում»<sup>15</sup>, և «կոլլեկտիվ գերիշխող դիրքի ներդրման պատճառը այն է, որ հակամենաշնորհային մարմինը այդպես էլ չի տվորել ապացուցել այնպիսի խախտում, ինչպիսիք են տնտեսվարող սուբյեկտների համաձայնեցված գործողությունները և փորձում է ստանալ ազդեցության նոր միջոցներ, ինչը դժվար թե արդար է»<sup>16</sup>: Տեսական գրականության մեջ տրվում է կոլլեկտիվ գերիշխող դիրքի հետևյալ սահմանումը. «Կոլլեկտիվ գերիշխող դիրքը շուկայի դրություն է, որի դեպքում մի քանի խոշորագույն կազմակերպություններ գիտակցված հրաժարվում են միմյանց միջև մրցակցությունից և շուկայական իշխանության ուժով համախմբված իրենց գործողություններով ձևավորում են ապրանքների շրջանառության իրենց ձեռնտու պայմաններ, շուկայից հեռացնում են ընդհանուր մրցակիցներին կամ չեն թույլատրում մրցակիցների մուտքը շուկա»<sup>17</sup>: Իսկ ահա տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը տալիս է հակամրցակցային համաձայնու-

յան հետևյալ ընթացումը. «Հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների կողմից ընդունված որոշումները (այսուհետ՝ համաձայնություններ), որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել որևէ ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը»: Ինչպես տեսնում ենք, կուլեկտիվ գերիշխող դիրքին տրվող դոկտրինալ սահմանումը հնարավորություն չի տալիս այն տարանջատել հակամրցակցային համաձայնություններից:

Սահմանելով կուլեկտիվ գերիշխող դիրքը որոշելու չափանիշը՝ օրենսդիրը չի սահմանել նաև այն նվազագույն շեմը, որից ցածր շուկայական բաժնեմաս գրավելու դեպքում տնտեսվարող սուբյեկտը չի կարող ճանաչվել գերիշխող դիրք գրավող:

Օրենքի դրույթները ուսումնասիրելիս հարց է ծագում՝ արդյոք կուլեկտիվ գերիշխող դիրքի դեպքում տնտեսվարող սուբյեկտները պետք է գործեն համատեղ: Եթե այո՞, ո՞րն է այս տիպի չարաշահումների տարբերությունը հակամրցակցային համաձայնություններից, եթե ոչ, ի՞նչ իմաստ ունի սահմանել նույն հոդվածի մի կետով գերիշխող դիրքի որոշման մեկ պայման՝ ապրանքային շուկայի մեկ երրորդը գրավելը, մյուս կետով՝ այլ պայման:

Կարող է նաև կարծիք լինել, որ կուլեկտիվ գերիշխող դիրքի ինստիտուտը կիրառելի է այն դեպքում, երբ մեկ տնտեսվարող սուբյեկտ հնարավորություն ունի կանխորոշելու մյուսի (մյուսների) կողմից ընդունվող որոշումները: Այս դեպքում էլ տվյալ ինստիտուտը կիրառելի չէ, քանի որ ՏՆտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը օգտագործում է տնտեսվարող սուբյեկտ հասկացությունը: Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է տնտեսվարող սուբյեկտին որպես ֆիզիկական անձ (այդ թվում՝

անհատ ձեռնարկատեր), իրավաբանական անձ, այլ կազմակերպություն, դրա ներկայացուցիչ, ներկայացուցչություն կամ մասնաճյուղ, անձանց խումբ: Իսկ անձանց խումբ հասկացությունը օրենքով սահմանվում է որպես իրավաբանական և (կամ) ֆիզիկական այնպիսի անձանց խումբ, որոնց համար բավարարում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

- անձը կամ մի քանի անձինք պայմանագրի հիման վրա կամ այլ ձևով հնարավորություն են ստանում կանխորոշելու այլ անձի կամ անձանց կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) կամ իրականացնելու կազմակերպության գործադիր մարմնի իրավասությունները:

Այսինքն՝ այն դեպքում, երբ գոյություն ունի մեկ տնտեսվարող սուբյեկտ, որը հնարավորություն ունի կանխորոշելու մյուսի (մյուսների) կողմից ընդունվող որոշումները, տվյալ դեպքում գերիշխող դիրքի որոշման համար պետք է կիրառվի օրենքի 6-րդ հոդվածի 2 կետը:

Հիմնվելով վերոշարադրյալի վրա՝ առաջարկում ենք օրենքի 6-րդ հոդվածի 2-4 կետերը փոփոխել: Կարծում ենք, որ մեր պայմաններում նույնպես պետք է կիրառվեն գերիշխող դիրքը որոշելու քանակական և որակական չափանիշների համակցված տարբերակներ: Կարելի է առաջարկել հետևյալ տարբերակը.

1. Սահմանվի այն նվազագույն շեմը, որից ցածր տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել գերիշխող դիրք գրավող: Այս շեմը կարող է բավականին ցածր լինել, քանի որ դա միայն հիմք է տնտեսվարող սուբյեկտի գործունեությունը որակական չափանիշներով ստուգելու համար:

2. Սահմանվի նաև այն շեմը, որը անցնելուց հետո տնտեսվարող սուբյեկտը կհամարվի գերիշխող դիրք գրավող: Սակայն պետք է նաև նախատեսվի, որ այդ շեմը անցած տնտեսվարող սուբյեկտը կարող է չճանաչվել գերիշխող դիրք գրավող, եթե հետագա ուսումնասիրության ընթացքում պարզվում է տվյալ տնտեսվարող սուբյեկտ

### **ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

տի անկարողությունը շուկայի վրա ազդելու՝ անկախ շուկայի տվյալ բաժնեմասը զբաղեցնելուց:

Այսինքն՝ շուկայի որոշակի հատվածը զբաղեցնելը պետք է դիտվի զուտ որպես գերիշխող դիրք գրավելու կանխավարկած, քանի որ տնտեսվարող սուբյեկտին գերիշխող դիրք գրավող ճանաչելը միայն շուկայի որոշակի հատվածը գրավելու հիմքով թույլ չի տալիս «հաշվի առնելու այլ հանգամանքներ, քանի որ տարբեր շուկաներում այսպիսի չափը կարող է խիստ տատանվել: Այսպիսի չափանիշի սահմանումը հեշտացնում է հակամենաշնորհային մարմնի աշխատանքը, բայց հնարավորություն է տալիս հաշվի չառնելու շուկաների ճյուղային առանձնահատկությունները»<sup>18</sup>:

Այսպիսով, եթե սահմանվի գերիշխող դիրքը որոշելու այսպիսի չափանիշ, կոլետիվ գերիշխող դիրքի ինստիտուտի օրենսդրական սահմանումը ինքնին անիմաստ կլինի, ինչը հնարավորություն կտա խուսափելու կոնկրետ արարքը որպես հակամրցակցային համաձայնություն կամ գերիշխող դիրքի չարաշահում որակելու մասին վեճերից:

Տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվում, իսկ այդ դիրքը կորցնելու դեպքում՝ գրանցումից հանվում է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշմամբ:

Ըստ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ գերիշխող դիրքի չարաշահումը արգելվում է: Գերիշխող դիրքի չարաշահում է համարվում.

ա) իրացման կամ ձեռքբերման չիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղա-

կի պարտադրումը,

բ) այլ տնտեսվարող սուբյեկտի՝ առևտրի կամ արտադրության արդիակա-նացման կամ ներդրումների սահմանափակումը,

գ) ի վնաս սպառողի շահերի ապրանքների ներկրման կամ արտադրության չիմնավորված կրճատումը կամ ապրանքները պահելու, փչացնելու, ոչնչացնելու միջոցով ապրանքային շուկայում պակասորդի ստեղծումը կամ պահպանումը,

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառումը,

ե) պայմանագրի կողմին, ներառյալ առևտրի օբյեկտներին, լրացուցիչ պարտավորությունների պարտադրումը, որոնք իրենց բնույթով կամ իրականացման տեսանկյունից չեն առնչվում պայմանագրի բուն առարկայի հետ,

զ) տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպման կամ տնտեսական կապերի խզման պարտադրումը,

է) այլ տնտեսվարող սուբյեկտի՝ շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (շուկա մուտք գործելը սահմանափակելու) կամ շուկայից նրան դուրս մղելու գործողությունը կամ վարքագիծը, որի հետևանքով այլ տնտեսվարող սուբյեկտը մուտք չի գործել շուկա կամ դուրս է մղվել շուկայից կամ կատարել է լրացուցիչ ծախսեր՝ շուկայից դուրս չմղվելու համար,

ը) այնպիսի պայմանների առաջարկը կամ կիրառումը, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել մրցակցային անհավասար պայմաններ այն դեպքում, երբ համանման պայմաններ չեն առաջարկվել տվյալ ապրանքային շուկայում գործող մյուս տնտեսվարող սուբյեկտներին,

թ) իրացման կամ ձեռքբերման գների գեղչերի կամ արտոնությունների սահմանումը, փոփոխումը կամ պահպանումը, եթե դրանք նպատակաուղղված են մրցակցության սահմանափակմանը:

Այս աշխատանքի շրջանակներում կու-զենայինք քննարկել գերիշխող դիրքի այնպիսի չարաշահում, ինչպիսին է իրացման

կան ձեռքբերման չհիմնավորված, խտրական և (կամ) տարբերակված գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը: ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքի 5-րդ հոդվածը տալիս է գների չհիմնավորված փոփոխությունների հասկացության սահմանումը՝ նշելով, սակայն, որ այն կիրառվում է միայն հակամրցակային համաձայնությունների նկատմամբ: Փաստորեն, օրենքը չի տալիս գերիշխող դիրք գրավող տնտեսվարող սուբյեկտների՝ չհիմնավորված, խտրական, տարբերակված գների հասկացության սահմանումը: Ըստ մեզ՝ չհիմնավորված, խտրական, տարբերակված գին ասելով պետք է հասկանալ երկու իմաստով՝ իջեցում և բարձրացում:

Գների չհիմնավորված, խտրական, տարբերակված բարձրացումը կարելի է սահմանել որպես՝

- այնպիսի գնի սահմանում, որը բարձր է տվյալ ապրանքային շուկային գնորդների և վաճառողների կազմով, որոշակի ժամկետում վաճառվող ապրանքի քանակով և մուտքի նախապայմաններով նույնական մրցակցային պայմաններում գործող ապրանքային շուկայում առկա գնից,

- գերազանցում է արդյունավետ վերարտադրության համար անհրաժեշտ գինը:

Գների չհիմնավորված, խտրական, տարբերակված իջեցումը կարելի է սահմանել որպես՝

- այնպիսի գնի սահմանում, որը ցածր է տվյալ ապրանքային շուկային գնորդների և վաճառողների կազմով, որոշակի ժամկետում վաճառվող ապրանքի քանակով և մուտքի նախապայմաններով նույնական մրցակցային պայմաններում գործող ապրանքային շուկայում առկա գնից,

- այդ գինը նվազ է արդյունավետ վերարտադրության համար անհրաժեշտ գնից:

Արդյունավետ վերարտադրության համար անհրաժեշտ գին կարելի է սահմանել

այնպիսին, որը համապատասխանում է ապրանքների արտադրության և իրացման ընթացքում տնտեսապես հիմնավորված ծախսերի և նրանց համապատասխան բաճական շահույթի արդյունքում առաջացող գնին:

Առաջին հայացքից ավելի վտանգավոր են թվում մենաշնորհային բարձր գները, որոնք ուղղակիորեն շահույթ են բերում իրականացնողներին: Գործնականում ավելի մեծ վտանգ է ներկայացնում շուկայական հարաբերություններով չպայմանավորված գների իջեցումը: Հայտնի է դրանց երկու տարատեսակ:

Առաջինի դեպքում ցածր գինը սահմանվում է շուկայում մենաշնորհային կամ գերիշխող դիրք գրավող գնորդի կողմից, որը նպատակ ունի վաճառողների հաշվին խուսափելու ծախսերից: Այսպիսի գները պարտադրվում են շուկայական հարաբերությունների ավելի թույլ մասնակիցներին, որոնք սովորաբար գործում են միանձնյա և իրենցից արտադրանք գնելու դեպքում առանց արտաքին միջամտության հնարավորություն չունեն պաշտպանելու իրենց իրավունքները: Տնտեսվարող սուբյեկտները իրական գնից ավելի ցածր գին կարող են ստանալ տարբեր եղանակներով: Օրինակ՝ գնվելիք արտադրանքի ավելցուկի շրջանի արհեստական ստեղծման միջոցով<sup>19</sup>:

Երկրորդ դեպքում գերիշխող դիրք գրավող վաճառողը դիտավորությամբ սահմանում է տվյալ արտադրանքի այնպիսի գին, որը դրա վաճառքից վնաս է բերում (դեմփինգ՝ գնագցում): Այդպիսի գնի սահմանման հետևանք կարող է համարվել մրցակցության սահմանափակումը՝ շուկայից մրցակիցներին դուրս մղելու միջոցով: Համեմատաբար երկար ժամանակահատված վնասով աշխատել կարող են միայն ուժեղ տնտեսվարող սուբյեկտները, որի հետևանքով իրենց մրցակիցները, չդիմանալով «գնային փորձությանը», տապալվում են և ստիպված լքում տվյալ ապրանքային շուկան:

Գների մենաշնորհային փոփոխությունները պետք է տարբերակել շուկայում տե-

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

դի ունեցող գնագոյացման բնական գործընթացներից: Պայմանագրի ազատությունը ենթադրում է նաև գին սահմանելու ազատություն առանց պետության, տեղական ինքնակառավարման մարմինների կամ այլ սուբյեկտների միջամտության: Դրա հետ մեկտեղ՝ մեծաշնորհային գործողությունների դրսևորումների շարքին

պետք է դասել նրանք, որոնք հետապնդում են զոյություն ունեցող հակամրցակցային օրենսդրությանը հակասող նպատակներ:

Այսպիսով, առաջարկում ենք տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքում ներառել գների չհիմնավորված փոփոխությունների սահմանումը, որը կիրառելի կլիներ ոչ միայն հակամրցակցային համաձայնությունների, այլև հակամրցակային ցանկացած դրսևորումների համար:

1 Տե՛ս ԸՊՊԹԿՅՈՒՆ հ.ը. Ռ ՊՐ. ԽՏՎՍԵՐԱԿՓՈՒՐ ՌՆԻՍՏՐԱՍՏԱՏԱՖՅԱԿՐԱՅՍՈՐՈՒՄՆԵՐԿԱՎԱՅՈՒՄ, 1999, էջ 49:

2 Տե՛ս Բարսեղյան Ս.Կ. Գործարարական իրավունք: Ղասազիրք – Եր.: ԵՊՅ հրատ., 2009, էջ 206:

3 Տե՛ս ԽՆՋՈՒՏՐԹ.Թ. ԾՏՉՈՒՏՐԹ.Թ. ԽՉՏՈՒՄԵՐԿ ՍՎԵՏՈՒՄՆԵՐԻ ՏՅՎԱԿԵ ՌՆԻՍՏՐԱՍՏԱՏԱՖՅՆ ՃՆԱՅՄՈՒՑԱՓԻՅՈՒՄ // ԻՐԱՏՎ N 2, ՂԱՐՄԱՖ 2008, էջ 1:

4 Տե՛ս ԸՄՔԱԿՆԱՐ Լ., ԽՁԱԿՐՈՒԿ Ը. ԿՐՎՏՉՈՒՎՐՆԻՐ ՌՆԻՍՏՐԱՍՏԱՏԱՖՅՈՒՄ ՄՆՈՒՄՆԻ ՃՐԳՈՒՄՆԵՐԿ // ՆՏՎՅՎՈՒԿԱՐՍՈՒՄ ՄՆՈՒՄՆԻ. 2007 N 4., էջ 200:

5 Տե՛ս ԳՂՊՏ 2000.12.15/30(128):

6 Տե՛ս ԳՂՊՈՒՆՏԱԿ ՄՐԱՄՈՒՄՎՈՒՑԱՓԻՅԱԿ ՄՐՄՆ: ցխր. / ժ.թ. ԸՎԻԿԱՐՈՒ, Խ.Թ. ԸՄՐԱԿՐՈՒ, Թ. Խ ԸՄՐԱԿՐ (Ռ ՊՐ.): ՏՅԱՖ. ՂՄՈ. Լ.Թ. ԺՐԵՏՉՈՒ, Թ.Ժ. ԿՏՎՍՏՉՈՒ – Ծ.: ԿՐԹՄԱՅ: 2009, էջ 498:

7 Տե՛ս ԿՐՄՆ ԺՐՄՈՒՄՆԵՐԿ ԽՏՉՈՒ: ՄՐՄՆՏԱԿ ՐԱՅՍՈՐՈՒՄՆԵՐԿ ՏՐՅՉՏՅՆ ՏՐՄՆՈՒ. ՃԻՄԱՅԱԿ ՄՐՄՈՒՄ. ԿՏՈ. ՂՄՈ. ՄՐՄՆ. Թ.Թ. ըՎՅՈՒՄՈՒ Ռ ՊՐ. Ծ. ԼՁՈ. ԻԺՅԸԸԽԿ, 1999, էջ 121:

8 Տե՛ս ԽՎՅԱՐՈՒ Լ. Թ. ԸՎՍՏՐԱՍՏԱՏԱՖՎՐ ՄՆՈՒՄՆԻ Չ ԳՂՊՈՒ, 3-Կ ՈՂՈՒՄ., Ծ., ԼՁՈ. «ԿԿԱՅՈՒ-Խ», 2008, էջ 218:

9 Տե՛ս ՂԱՄԱՐՄԱՖՅՈՒՄ ՃՆԱՎ «Կ ՃՐՈՒՑԱԿ ՆՎՅՐԱԿՓՈՒՄ» No 135-ՂԻ:

10 Տե՛ս ՂԱՄԱՐՄԱՖՅՈՒՄ ՃՆԱՎ «Կ ՉՎԱԿՐՈՒ ՈՂՎԱԿՐՈՒ Չ ՂԱՄԱՐՄԱՖՅՈՒՄ ՃՆԱՎ «Կ ՃՐՈՒՑԱԿ ՆՎՅՐԱԿՓՈՒՄ» ՌՏՈՒՄՆԵՐԿ ՃՆԱՅՄՈՒՑԱՓԻՅԱԿ ՈՒՅՈ ԳՂՊՈՒՄՆԵՐԿ ՂԱՄԱՐՄՈՒՄ» No 164 – ՂԻ:

11 Տե՛ս ԿՁՅՈՒՄՆԵՐԿ Խ. ԳՂՅՈՒՄԱԿ ԸՎՍՏՐԱՍՏԱՏԱՖՅՆ ՃՆԱՅՄՈՒՑԱՓԻՅՈՒՄ //

ղՅՉՆՐՅՉՏ ՌՄՐՄՆ // 2009, N 11, էջ 15:

12 Տե՛ս ԽՏՐԱԿՎՍ Ծ. Թ. ԿՐՏՈՒՄՎՈ ՄՐՈՒՄՎԱԿՐՎՐՎՅՉՏ ՌՆԻՍՏՐԱՍՏԱՏԱՖՅՆ ՃՆԱՅՄՈՒՑԱՓԻՅՈՒՄ ՄՐՄՆ ՄՐՄՆԱԿՐՈՒ ՌՄՈՒՎՐՄՈՒՄՆԵՐԿ ՐԱՄՏՐՎՈ // ԽՂՐՎՈՒՄ ԳՂՊՈՒՄՆԵՐԿ ՄՐՄՆ N4, 2008, էջ 125:

13 Տե՛ս Գայաստանի Գանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 1 օգոստոսի 2007 թվականի թիվ 65-Ն որոշում:

14 Տե՛ս ըՎԱՎՅՈՒ Կ.Ը. ԿՐԱՄՈՒՄՎՈՒՑԱՓԻՅԱԿ ՄՐՄՆ: ՃԻՄԱՅԱԿ ՄՐՄՈՒՄ/ ՄՐՈ. ՂՄՈ. ՄՐՄՆ. ԽՎՐԱԿՐՈՒ Թ.Ը. – Ծ., ԾՐՈՒՄՎԱԿՐՈՒ ԻՐՎՈՒՄ «ԽՏՐՄՆ»:«ԸՎՐՈՒ-Ծ», 2006, էջ 211:

15 Տե՛ս ՄՐՄՈՒՄՆ Ը. Ժ. ԿՐՈՒՄՎՈՒՑԱՓԻՅԱԿ ՄՆՈՒՄՆ Չ ՏՅՎԱԿՐՈՒ ՐՆՅՈՒՑԱԿՐՈՒ ՌՐՅԱՐՈՒՄՆԵՐԿ ՂԱՐՄՈՒՄ, ՏՐՈՒՄՎՈՒՄՆԵՐԿ ՆՎՅՐԱԿՓՈՒ. Ծ.: ՁԺԼԽ, 2004, էջ 37:

16 Տե՛ս ԹՐՈՒՄՆ Ը. Ծ. ՆՎՅՐԱԿՎՅԱԿ ՄՐՄՆ ԳՂՊՈՒ – Ծ.: ԼԽԺ «ԽԱՐՈՒՄ-Ծ», 2008, էջ 294:

17 Տե՛ս ԽՁԱԿՐՈՒ Ը. ԽՏԱՎՅՈՒՑԱԿ ՄՐՈՒՄՆՈՒՄ: ԽՐՎՅՈՒՄՎՈՒՄ ՈՒՄՆԵՐԿ // ՂՅՉՆՐՅՉՏ ՌՄՐՄՆ // 2009, N7, էջ 91:

18 Տե՛ս ԹՐՈՒՄՆ Ը. Ծ. ՆՎՅՐԱԿՎՅԱԿ ՄՐՄՆ ԳՂՊՈՒ – Ծ.: ԼԽԺ «ԽԱՐՈՒՄ-Ծ», 2008, էջ 290:

19 Տե՛ս ԿՐԱՄՈՒՄՎՈՒՑԱՓԻՅԱԿ ՄՐՄՆ (ՄՐՄՆՉՈՒ ՏՐՎՅՈՒ ՄՐԱՄՈՒՄՎՈՒՑԱՓԻՅԱԿ ՂԱՎԱՑՎՅՈՒՄ): ցխր. ՊՍ՝ ՉՁՏՉ / Խ.Ն. ԻՐՈՒՄՆՈՒՄ. – 8-Կ ՈՂՈ., ՄԱՐԱԿՏՐ. Ռ ՊՆ. – Ծ.: ԾՐՎՈՒ, 2007, էջ 589:

---

## THE REGULATION OF MONOPOLY AND DOMINANT POSITION BY THE LAW ON PROTECTION OF ECONOMICAL COMPETITION OF RA

**Arsen TAVADYAN**

*YSU, Law faculty,  
Magistry, 2nd year student*

---

The article analyzes the concept of dominant position and monopoly. It describes the quantitative and qualitative criteria for determining the dominant position. In the Republic of Armenia only quantitative criteria of determining the dominant position is applied. If these criteria are applied the managing is considered to be in dominant position, if it possesses a certain market share. It is proposed to use as a qualitative criterion in determining the dominant position, which takes into account the real possibility of a managing subject to affect mar-

ket situation.

The institute of collective dominant position is analyzed. It is noted that, although this institution has sufficient spread in the international practice, it is criticized in the scientific literature.

The autor proposes to use such options for the definition of dominant position, in which qualitative and quantitative criteria are combined. In the case of applying such options the consolidation in the legislative level of the institute Collective dominance would be impractical.

It is also proposed to make additions in the Law on Protection of Competition of RA in order to determine the concept of unjustified price changes, which may be applicable for all types of anti-competitive actions.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ**

**Արժեն ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

*ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ*

Հարկային հանցագործությունների բացահայտման, դրանց քննության արդյունավետության բարձրացման համար շատ կարևոր է հստակ պատկերացում ունենալ այս հանցագործությունների եղանակների մասին: Բացի այդ, հարկային հանցագործության եղանակը՝ որպես հանցագործության օբյեկտիվ կողմի հատկանիշ, կարևոր նշանակություն ունի արարքը որակելու համար: Շատ կարևոր նշանակություն ունի հարկային հանցագործությունների օրենսդրական հստակ բնորոշման հիմնախնդիրը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 205-ում հարկեր վճարելուց խուսափելու հանցակազմը բնութագրելիս բավարարվում են ընդամենը դրա եղանակների սպառնիչ ցանկը թվարկելով: Ընդ որում, հարց է առաջանում, թե արդյոք ճիշտ է նման մոտեցումը, արդյո՞ք այդ դեպքում հարկային հանցագործության որոշ տեսակներ դուրս չեն մնում քրեականացման ոլորտից: Ուստի, հարկային հանցագործությունների առավել տարածված եղանակների վերլուծությունը տեսական ու գործնական կարևոր նշանակություն ունի:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ վերջին ժամանակներս այդ եղանակներն ավելի ու ավելի բազմազան են դարձել: Ընդ որում, առանձնացվում են երկու տասնյակից ավելի եղանակներ<sup>1</sup>:

Պետք է նշել, որ առավել տարածված են ավելացված արժեքի հարկից, շահութահարկից, եկամտահարկից, գույքահարկից խուսափելու դեպքերը:

Շահութահարկից կամ եկամտահարկից

խուսափելու առավել տարածված եղանակներն են.

1. հաշվետվություններում, հաշվառման փաստաթղթերում եկամուտների (շահույթի) մասին տեղեկություն չտալը,

2. մատակարարած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների իրական գները փաստաթղթերում նվազեցված ցույց տալը,

3. մատակարարած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների ինքնարժեքի մեծացումը՝ հաշվառման փաստաթղթերում դրանց վրա կատարած փաստացի ծախսերը սխալ արտացոլելու միջոցով,

4. ֆինանսատնտեսական գործունեությունը հաշվապահական և հարկային հաշվետվություններում լրիվ կամ մասնակի չարտացոլելը և այլն:

Ավելացված արժեքի հարկից խուսափելու առավել տարածված եղանակներն են.

1. մատակարարած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների ծավալների և գնի նվազեցումը,

2. ապրանքների ձեռքբերման վերաբերյալ կեղծ հաշիվ ապրանքագրերով ԱԱՀ-ի հաշվանցումը և այլն:

Գույքահարկից խուսափելու առավել տարածված եղանակ է կազմակերպության նյութական ակտիվները հաշվեկշռում չարտացոլելը կամ նվազեցված ներառելը:

Իրավաբանական գրականության մեջ հարկային հանցագործությունների եղանակները դասակարգվում են նաև կրիմինալիստիկական տեսանկյունից: Մասնավորապես առանձնացվում են հետևյալ տեսակները.

1. *եկամուտները (շահույթը) թաքցնելու հետ կապված եղանակներ* (արտադրութ-



յան ծավալների և արտադրանքի իրացումից ստացված հասույթը թաքցնելը փաստաթղթերը կեղծելու միջոցով, հսկիչ դրամարկային մեքենաներով արձանագրվող հասույթը թաքցնելը կտրոններ չտրամադրելու միջոցով և այլն),

2. վճարային հաշիվների օգտագործման հետ կապված եղանակներ (ֆինանսական գործարքները այլ կազմակերպության հաշիվներն օգտագործելու միջոցով կատարելը, առանց հարկային մարմիններին տեղեկացնելու դրամական շրջանառությունը թաքցնելու նպատակով տարբեր բանկերում մի քանի վճարային հաշիվներ բացելը և այլն),

3. *Նյութական ծախսերի ավելացման և հասույթի, եկամուտի (շահույթի) նվազեցման հետ կապված եղանակներ* (ձեռք բերած ապրանքների ծավալներն ու գները մեծացնելը, ծախսերի մեջ պատվիրատուի նյութերն ընդգրկելը, ենթադրյալ ծախսերը ընթացիկ ծախսերի մեջ ընդգրկելը, մատակարարած ապրանքների, կատարած աշխատանքների և մատուցած ծառայությունների ծավալներն ու գները պակասեցնելը և այլն),

4. ձեռնարկատիրական գործունեությունը թաքցնելու հետ կապված *եղանակներ* (առանց պետական գրանցման կամ լիցենզիայի ձեռնարկատիրական գործունեության իրականացումը, ձեռնարկատիրական գործունեությունը կեղծ ֆիրմաների կամ անձանց միջոցով իրականացնելը, մի տեսակի գործունեությունը այլ տեսակի գործունեության անվան տակ իրականացնելը (օրինակ՝ առուվաճառքի պայմանագիրը նվիրատվության պայմանագիր ձևակերպելը, կեղծ ներմուծումը, առևտրային գործունեության անվան տակ միջնորդական գործունեություն իրականացնելը և այլն),

Ի հարկե, վերոգրյալը արտացոլում է հարկային հանցագործությունների եղանակների միայն մոտավոր, առավել տարածված և ընդհանրական ցանկը: Սակայն, կարծում ենք, որ դա բավարար է հարկային

հանցագործությունների հիմնական եղանակների էությունն ու բովանդակությունը հասկանալու համար: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ հարկային հանցագործությունների եղանակների բազմազանությունն առաջացնում է դրանք ընդհանրացնելու և համակարգելու անհրաժեշտություն: Իրավաբանական գրականության մեջ այդպիսի փորձեր արվել են: Այսպես, Կ. Ն. Իվենինն առաջարկում է հարկային հանցագործությունների բոլոր եղանակները դասակարգել ըստ այն տնտեսական ցուցանիշների, որոնք քողարկվում են հանցավոր նպատակներով: Ըստ այդմ էլ նա առանձնացնում է հարկային հանցագործությունների եղանակների երեք խումբ.

1) ծախսերի ավելացում դրանք առանց փաստաթղթային ձևակերպման հաշվառման մեջ ներառելու և կեղծ փաստաթղթեր կազմելու միջոցով (հնարանք),

2) եկամուտների (շահույթի) նվազեցում ֆինանստնտեսական գործունեությունը փաստաթղթերում չարտացոլելու միջոցով (թաքցնում),

3) շահույթի նվազեցում գործարքների իրական արժեքները վերլուծական հաշվառման ոչ պատշաճ հաշիվներում գրանցելու միջոցով (սուտ)<sup>2</sup>:

Դ. Մակարովը առաջարկում է հարկային հանցագործությունների եղանակները դասակարգել չորս խմբի.

1) հարկման օբյեկտները թաքցնելը,

2) հարկաման օբյեկտները նվազեցնելը,

3) միջոցները թաքցնելը,

4) հարկային արտոնություններն անօրինական օգտագործելը<sup>3</sup>:

Իրավաբանական գրականության մեջ առկա է նաև այլ համակարգում, որում, բացի եկամուտները թաքցնելու հիմնական եղանակներից, հաշվի են առնվել նաև այն փաստաթղթերի տեսակները, որոնցում խեղաթյուրված տվյալներ են մտցվում: Ըստ այդմ հարկային հանցագործությունների եղանակները դասակարգում են հետևյալ կերպ.

**Քրեական իրավունք**

1) առաջնային փաստաթղթերում նյութական ծախսերի վերաբերյալ տվյալների ավելացում,

2) հաշվառման փաստաթղթերում նյութական ծախսերի վերաբերյալ տվյալների ավելացում,

3) ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվություններում նյութական ծախսերի վերաբերյալ տվյալների ավելացում,

4) առաջնային փաստաթղթերում եկամուտների (շահույթի) վերաբերյալ տվյալների պակասեցում,

5) հաշվառման փաստաթղթերում եկամուտների (շահույթի) վերաբերյալ տվյալների պակասեցում,

6) հաշվետվություններում եկամուտների (շահույթի) վերաբերյալ տվյալների պակասեցում,

7) հարկման ենթակա եկամուտների (շահույթի) պակասեցում հարկային արտոնություններ ունեցող այլ կազմակերպությունների հետ համաձայնության գալու միջոցով<sup>4</sup>:

Բացի վերը նշվածից, իրավաբանական գրականության մեջ առաջարկություններ են արվել նաև հարկային հանցագործությունների եղանակները ըստ հարկման մեխանիզմի այն տարրերի դասակարգելու, որոնք հարկային հանցանքը կատարելու նպատակով ներգործության են ենթարկվում<sup>5</sup>: Ըստ այդմ կարելի է առանձնացնել հարկային հանցագործությունների հետևյալ եղանակները.

1) հարկային պարտավորությունները բացահայտ արհամարհելը (համապատասխան փաստաթղթերը հարկային մարմիններ չներկայացնելու միջոցով),

2) հարկման սուբյեկտին հարկային վերահսկողությունից դուրս բերելը (հարկային հաշվառման չկանգնելու, կազմակերպության կեղծ լուծարման միջոցով),

3) ֆինանսատնտեսական գործունեությամբ

յունը հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում չարտացոլելը (առանց փաստաթղթային ձևակերպման գործարքներ կատարելու, հաշվետվություններում ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները չարտացոլելու, դրամական միջոցները գանձարկղ չնուտքագրելու միջոցով),

4) հարկման օբյեկտը քողարկելը (կեղծ բարտերի, կեղծ արտահանման, հիմնական միջոցները որպես կեղծ վարկ տրամադրելու, արհեստական դեբիտորական պարտք ստեղծելու, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները ոչ պատճառ հաշիվների վրա արտացոլելու միջոցով),

5) հարկման օբյեկտը խեղաթյուրելը (եկամուտների չափը, իրացված արտադրանքի, մատուցված ծառայությունների ծավալը նվազեցնելու միջոցով),

6) տնտեսական ցուցանիշները խեղաթյուրելը (ծեռք բերված հումքի, վառելիքի, ստացած ծառայությունների գինը, արտադրության ծախսերի ծավալները անհիմն բարձրացնելու միջոցով),

7) չարդարացված ծախսերի և զեղչերի օգտագործումը (օրենսդրությամբ չնախատեսված ծախսերն արտադրության ծախսերի մեջ ընդգրկելու, հարկային արտոնություններից ապօրինի օգտվելու միջոցով):

Կարծում ենք, որ հարկային հանցագործությունների եղանակների բովանդակության ու էության բացահայտումը հետագա գիտական խոր հետազոտությունների կարիք ունի հատկապես կրիմինալիստիկայի և կրիմինոլոգիայի մասնագետների կողմից, քանի որ էական նշանակություն ունի հանցագործությունների ու հանցանք կատարած անձանց բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու և հանցագործությունների կանխման առումով: Միևնույն ժամանակ, հարկային հանցագործությունների տարածված եղանակների պարզ թվարկումն իսկ թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ քրեական օրենսգրքի

205-րդ հոդվածը թույլ չի տալիս արդյունավետ պայքար իրականացնելու հարկեր վճարելուց խուսափելու դեմ, որովհետև, ինչպես արդեն նշել ենք, հոդվածում նշվում է ընդամենը հարկեր վճարելուց խուսափելու եղանակների սպառիչ ցանկը: Ընդ որում, քրեական օրենսգրքում նախատեսված են միայն այն եղանակները, որոնք վերաբերում են որոշակի փաստաթղթեր ներկայացնելուն կամ դրանք կեղծելուն: Մինչդեռ հարկեր վճարելուց խուսափելը հնարավոր է նաև այլ եղանակներով: ՀՀ քրեական օրենսգրքում մնան մոտեցման դեպքում հարկեր վճարելուց խուսափելու շատ եղանակներ մնում են ապաքրեականացված, ինչը նվազեցնում է այս հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը: Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 205-ում նախատեսել հարկեր վճարելուց խուսափելու եղանակների ոչ սպառիչ ցանկ՝ առկա եղանակները թվարկելուց հետո ավելացնելով «... կամ այլ եղանակով» արտահայտությունը: Պետք է նշել, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 199 հոդվածի նախկին խմբագրության մեջ նախատեսված էր «այլ եղանակով» արտահայտությունը, ինչը վեճերի տեղիք է տվել և հիմք հանդիսացել դիմելու ՌԴ Սահմանադրական դատարան՝ հոդված 199-ով նախատեսված նորմի իրավական անորոշության հարցը քննարկելու համար: Բայց ՌԴ Սահմանադրական դատարանը, մեր կարծիքով արդարացիորեն, հանգեց այն եզրակացության, որ հոդվածում առկա «այլ եղանակով» արտահայտությունը և հարկեր վճարելուց խուսափելու կոնկրետ եղանակների սպառիչ ցանկի բացակայությունը իրավակիրառողին հիմք չեն տալիս կամայականորեն և սեփական հայեցողությամբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարկեր վճարելուց խուսափելու համար: Հոդված 199-ով նախատեսված հանցակազմի կառուցվածքային տարր են հարկեր վճարելուց խուսափելը և դրան ուղղված

դիտավորությունը: Ընդ որում, հարկ վճարելուց խուսափելու դիտավորությունը ենթադրում է անձի կողմից իր արարքի հակաօրինականության գիտակցում: Ուստի, քրեական պատասխանատվության հարցը լուծելիս իրավակիրառողը պարտավոր է ապացուցել ոչ միայն հարկ չվճարելու բուն փաստը, այլև անձի՝ հարկ վճարելուց խուսափելու դիտավորությունն ու նրա արարքների հակաօրինականությունը:

Պետք է նշել, որ մի շարք պետությունների օրենսդրություններում նույնպես հարկեր վճարելուց խուսափելու եղանակների սպառիչ ցանկ չի տրվում: Այսպես, Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 1741-րդ հոդվածի առաջին կետով պատասխանատվություն է նախատեսված այն անձի համար, ով մտադրվել է խաբեության միջոցով լրիվ կամ մասնակիորեն խուսափել հարկեր վճարելուց, որոնք նա օրենքի համաձայն պարտավոր էր վճարել, կամ մտադրվել է խուսափել իր վճարումների չափերը հայտարարագրելուց, կամ ով մտադրվել է թաքցնել հարկման ենթակա գումարի որոշակի մասը, կամ ով կազմակերպել է հարկ վճարելուց խուսափելը կամ այլ եղանակով խոչընդոտել է հարկի վճարմանը: Իսպանիայի քրեական օրենսգրքի հոդված 305-ի առաջին կետը պատասխանատվություն է նախատեսում այն գործողության կամ անգործության համար, որը հարկ չվճարելու միջոցով վնաս է պատճառել պետական զանձարանին, ինքնավարություններին և տեղական ինքնակառավարման մարմիններին: ԱՄՆ-ում հարկեր վճարելուց խուսափելու համար քրեական պատասխանատվության հարցերը կարգավորված են «Ներքին եկամտի մասին» օրենքով, որի 7201 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այն անձի համար, ով մտադրվել է որևէ եղանակով խուսափել այդ օրենքի նորմերով նախատեսված հարկ վճարելուց: Ինչպես տեսնում ենք, թե Իսպանիայի քրեական օրենսգրքը, թե ԱՄՆ օրենսդրությունը ընդհանրապես ոչ մի եղանակի մասին նշում չեն

**Քրեական իրավունք**

պարունակում (Իսպանիայի քրեական օրենսգիրքը խոսում է միայն գործողության կամ անգործության մասին, որը դրսևորվում է հարկ չվճարելով, իսկ ԱՄՆ օրենսդրությունը օգտագործում է «... ինչ-որ եղանակով» բառակապակցությունը: Նման մոտեցումը ճիշտ է, որովհետև, մեր կարծիքով, թույլ է տալիս ժամանակակից պայմաններում ավելի ճկուն ձևով արձագանքելու հարկային հանցագործությունների անընդհատ կատարելագործվող ձևերին:

- <sup>1</sup> St'u Козлов В.А. Криминалистическая характеристика налоговых преступлений. // "Черные дыры" в Российском законодательстве. N 1, 2002, էջ 248-259, Кучеров И.И. Проблемы уголовно-правовой защиты налоговой системы.// "Черные дыры" в Российском законодательстве. N1, 2002, էջ 24-27:
- <sup>2</sup> St'u Ивенин К.Н. Способы сокрытия доходов от налогообложения и методы их обнаружения // Актуальные проблемы правоохранительной деятельности на современном этапе. Нижний Новгород. 1992, էջ 59:
- <sup>3</sup> St'u Макаров Д. Экономические и правовые аспекты теневой экономики в России //

- Вопросы экономики. 1998, N 3, էջ 41:
- <sup>4</sup> St'u Криминалистика: Расследование преступлений в сфере экономики. Под ред. В.Д. Грабовского, А.Ф. Лубина. Нижний Новгород. 1996, էջ 225-227:
- <sup>5</sup> St'u Кучеров И.И. Проблемы уголовно-правовой защиты налоговой системы.// "Черные дыры" в Российском законодательстве. N1, 2002, էջ 26:
- <sup>6</sup> St'u Уголовный кодекс Франции. М., 2002, էջ 482:
- <sup>7</sup> St'u Уголовный кодекс Испании. М., 1998, էջ 187:
- <sup>8</sup> St'u Толстопятенко Г.П., Федотова И.Г. Налоговое право США. М., 1996, էջ 61:

---

## METHODS OF COMMITTING TAX CRIMES

### **Armen NIKOGHOSYAN**

*Head of the Department for the  
Protection of State Interests at the General  
Prosecutor's Office of the RA*

---

The main subject of the article is the methods of committing tax crimes and the related issues and problems. Distinct picture of the method of committing a tax crime is of great importance for increasing efficiency of solution and investigation of tax crimes, as well as for their correct qualification and incrimination. It is also important to have correct legislative concept of a tax crime. According to the Article 205 of the Criminal Code of the RA objective side of *corpus delicti* of tax evasion is constructed on the basis of the complete list of the methods of

committing this crime. Analyzing the court practice and the widespread methods of tax evasion the author comes to the conclusion that in the reality some methods of tax evasion do exist that are not foreseen in the mentioned article of the Criminal Code of the RA. It influences the efficiency of the fight against this type of crime since a lot of methods of tax evasion are not criminalized yet.

Hence the author suggests to review the Article 205 of the Criminal Code of the RA as follows: to add at the end of the list of methods of tax evasion the following words "... or in any other way". It will help to react flexibly to the permanently developing and improving methods of committing tax crimes.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ԲԼԱՆԿԵՏԱՅԻՆ ԴԻՍՊՈԶԻՑԻԱՆԵՐՈՎ ՆԿԱՐԱԳՐՎՈՂ ԱՐԱՐՔՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՉԱՐՑԵՐ****Միսակ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

*ՀՀ ռստիկանության ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ախիտենտ, ռստիկանության ավագ լեյտենանտ*

**Բ**լանկետային են կոչվում այն իրավական նորմերը, դրանց դիսպոզիցիաները կամ դրանցում ամրագրված հատկանիշները, որոնց կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է իրավունքի այլ ճյուղին վերաբերող օրենքներում և (կամ) այլ նորմատիվ իրավական ակտերում<sup>1</sup>: Բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման իրավական հիմքը «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 43-ի 1-ին մասում ամրագրված դրույթն է. «Իրավական ակտի հոդվածներում, կետերում իրավական այլ ակտի հոդվածներին, կետերին, ինչպես նաև իրավական այլ ակտերին կամ դրանց առանձին դրույթներին հղումները կիրառվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է ընդգծել այդ դրույթների փոխադարձ կապը կամ խուսափել կրկնություններից»:

Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր.օր.) Հատուկ մասում բլանկետային դիսպոզիցիաները հիմնականում կիրառվում են այն դեպքում, երբ հանցագործությունը վերաբերում է հասարակական կյանքի տարբեր ոլորտներում գործող անվտանգության կամ այլ կանոնների խախտմանը<sup>2</sup>: Սովորաբար քրեաիրավական նորմերի դիսպոզիցիաների բլանկետային լինելու մասին վկայող հանգամանքը դրանցում «ապօրինի», «սահմանված կանոնները խախտելը» և նման այլ ձևակերպումների առկայությունն է:

Քր.օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների գոյությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Նախ, բլանկետային դիսպոզիցիաների օգտագործումը նպատակահարմար է այն իմաստով, որ դրանք թույլ են տալիս խուսափելու այլ իրավական ակտերի դրույթները քր.օր.-ում կրկին ամրագրելուց: Բացի այդ, որոշ դեպքերում քր.օր.-ում ոչ թե աննպատակահարմար է, այլ ուղղակի հնարավոր չէ ամրագրել հանցակազմի առանձին հատկանիշները բնութագրող այն բոլոր դրույթները, որոնք բովանդակվում են տարաբնույթ հասարակական հարաբերություններ կարգավորող բազմաթիվ իրավական ակտերում: Եվ վերջապես, բլանկետային դիսպոզիցիաների օգտագործումը թույլ է տալիս ապահովել քր.օր.-ի կայունությունը, քանի որ համապատասխան իրավական ակտերի փոփոխմամբ քր.օր.-ում բովանդակվող հանցակազմի հատկանիշները մնում են անփոփոխ:

Սակայն քրեականացվող արարքն օրենքում նկարագրելիս բլանկետային դիսպոզիցիաների օգտագործումն ունի նաև «մեղալի հակառակ կողմը»: Քրեական օրենսգրքում բլանկետային նորմերի գոյությունը և դրանց կիրառումը առաջացնում են իրավաստեղծ, իրավակիրառ և կազմակերպչական բնույթի մի շարք խնդիրներ: Իսկ դրանց առկայությունը բացասաբար է ազդում նշված նորմերի կիրառման վրա<sup>3</sup>:

Մասնավորապես, համապատասխան իրավական ակտերի՝ հանցակազմի բլանկետային հատկանիշները բացահայտող դրույթները կարող են փոփոխվել: Իսկ նման պարագայում հանցանքը նախատեսող քրեաիրավական նորմը, պահպանելով

իր ձևը, փոխում է փաստացի բովանդակությունը. ընդլայնվում կամ նեղացվում է հանցավոր համարվող արարքների շրջանակը: Ինչպես նշում է Ա.Վ.Նաումովը, բլանկետային դիսպոզիցիաների կառուցման դեպքում ոչ քրեաիրավական նորմերը դառնում են քրեաիրավական մատերիայի բջիջներ<sup>4</sup>:

Քր.օր.-ի հոդված 3-ը սահմանում է, որ քրեական պատասխանատվության միակ հիմքը *քր.օր.-ով* նախատեսված հանցակազմի հատկանիշները պարունակող արարքի կատարումն է, իսկ հոդված 5-ը հռչակում է, որ արարքի հանցավորությունը սահմանվում է միայն քրեական օրենքով: Մինչդեռ բլանկետային դիսպոզիցիաների օգտագործման պարագայում քրեաիրավական արգելքի փաստացի սահմանները վերջին հաշվով որոշվում են ոչ թե քր.օր.-ով, այլ այն օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնց հղում են կատարում բլանկետային դիսպոզիցիաները: Քրեաիրավական նորմերում ենթաօրենսդրական ակտերին հղում կատարելը գործադիր իշխանությանը հնարավորություն է տալիս անմիջականորեն ազդել քրեական պատասխանատվության կիրառման ոլորտի ընդլայնման կամ նեղացման վրա, այն դեպքում, երբ դա օրենսդիր իշխանության բացառիկ իրավունքն է:

Բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրված արարքների որակման մասին խոսելիս պետք է նշել, որ հանցագործությունների լեգալ որակումը իրավակիրառ գործունեության տեսակ է<sup>5</sup>: Իրավունքի կիրառումը իշխանական, անհատական-իրավական գործունեություն է, որն ուղղված է իրավաբանական գործերի լուծմանը<sup>6</sup>: Իրավակիրառման կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ իրավական նորմերը կարող են կիրառել միայն հատուկ (իրավասու) մարմինները և պաշտոնատար անձինք<sup>7</sup>: Հանցագործությունների որակումը հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի լիազորությունն է: Եվ պետք է ընդունել այն հանգամանքը, որ

բլանկետային դիսպոզիցիաներով նախատեսված հանցագործությունները որակելիս նշված սուբյեկտները կիրառում են ոչ միայն քրեական օրենքը, այլև դրանով նախատեսված հանցագործության հատկանիշները բացահայտող համապատասխան նորմատիվ իրավական ակտերը:

Նախ, նորմատիվ իրավական այն ակտերով ղեկավարվելը, որոնց վրա հղում են կատարում բլանկետային քրեաիրավական նորմերը, դատաքննչական մարմինների պարտականությունն է: Ճիշտ չի լինի ասել, թե կիրառվում է միայն քրեական օրենքը, իսկ այլ իրավական ակտերին պարզապես դիմում են հանցագործության հատկանիշները բացահայտելու համար: Իրավակիրառողը դիմում է, օրինակ, քրեական իրավունքի տեսության դրույթներին, որոնք օժտված չեն իրավաբանական ուժով: Իսկ իրավական ակտերին ոչ թե դիմում են ըստ հայեցողության, այլ կիրառում են դրանք: Իրավունքի տեսության մեջ որպես իրավակիրառման փուլեր առանձնացվում են գործի փաստական և իրավական հիմքերի հաստատումն ու գործով որոշում ընդունելու: Իրավունքի կիրառման ընթացքում գործի իրավական հիմքերի հաստատումը ենթադրում է այն հարցի լուծումը, թե որ իրավանորմի գործողությունն է տարածվում տվյալ դեպքի վրա, իսկ գործի լուծման ընթացքում հաստատվում է իրավանորմի և լուծման ենթակա փաստի միջև կապը<sup>8</sup>: Ինչպես գրում է Ս.Ս.Ալեքսեևը, իրավակիրառման ընթացքում իրավակիրառ մարմինը «...պարզապես որոշում չի կայացնում որոշակի տեղեկատվության հիման վրա: Ընդունվող որոշման հիմնական աղբյուրը իրավաբանական նորմերն են, որոնցում արտահայտվում են ընդհանուր նշանակության որոշումները»<sup>9</sup>: Եթե արարքը որակելիս իրավակիրառողը չկիրառի այն օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի նորմը, որին իրականում հղում է կատարում բլանկետային դիսպոզիցիան և ղեկավարվի այլ իրավական նորմով, ապա ակնհայտորեն առկա կլինի արարքի սխալ

### **Քրեական իրավունք**

որակման փաստը: Իր ծայրահեղ դրսևորմամբ նման սխալ որակումը կարող է հանգեցնել անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելուն: Բլանկետային նորմով նախատեսված հանցագործության վերաբերյալ դատավճռի նկարագրապատճառաբանական մասում դատարանը պետք է նշի այն իրավական ակտերը (դրանց հոդվածը, մասը, կետը), որոնք կիրառվել են հանցանքը որակելիս:

Երկրորդ, իրավակիրառ գործունեությունը արտահայտվում է իրավակիրառ ակտերում, այսինքն՝ իրավակիրառ մարմնի միջանկյալ կամ վերջնական իրավաբանական գործողություններում, որոնք իրավունքի կիրառման գործընթացում ծնուն են այս կամ այն հետևանքները<sup>10</sup>: Հանցագործության հատկանիշները բացահայտող կոնկրետ օրենքի կամ ենթօրենսդրական ակտի կիրառումը նախ և առաջ հանգեցնում է այն բանին, որ արարքը որակվում է քր.օր.-ի կոնկրետ հոդվածով, ինչը թույլ է տալիս որոշելու հանցագործության տեսակը, լուծելու քրեական հետապնդումը մասնավոր կամ հանրային մեղադրանքի կարգով իրականացնելու, անձին քրեական պատասխանատվությունից ազատելու, նրա նկատմամբ խափանման միջոցներ կիրառելու և այլ հարցեր:

Բացի դրանից, հանցագործության բլանկետային հատկանիշները բացահայտող նորմատիվ իրավական ակտերը կարող են ունենալ քրեաիրավական նշանակության մեկ այլ կիրառման ոլորտ: Ենթադրենք՝ կատարված արարքը որակվել է բլանկետային քրեաիրավական նորմ նախատեսող հոդվածով, քանի որ որակումը կատարելու պահին դրա հատկանիշները համապատասխանել են կոնկրետ նորմատիվ իրավական ակտի դրույթներին: Այնուհետև քրեական գործի քննության ընթացքում տեղի է ունենում այդ նորմատիվ իրավական ակտի համապատասխան դրույթի

այնպիսի փոփոխություն, որի արդյունքում տվյալ արարքը դադարում է պարունակել այն բլանկետային հատկանիշը, որի պատճառով ընդգրկվում էր համապատասխան հանցակազմի շրջանակներում: Բերենք տեսական մի օրինակ: Անձը, խախտելով հղիության արհեստական ընդհատման սահմանված թույլատրելի ժամկետը, կատարում է ապօրինի աբորտ: Արարքը հայտնաբերվում է, և փաստի առթիվ հարուցվում է քրեական գործ: Գործի քննության ընթացքում հղիության արհեստական ընդհատման կարգը և պայմանները սահմանող իրավական ակտում կատարվում է այնպիսի փոփոխություն, որով սահմանվում է հղիության արհեստական ընդհատման ավելի երկար թույլատրելի ժամկետ, և աբորտը, որը նախկին ժամկետի պայմաններում ապօրինի էր, «դառնում է» օրինական: Ստացվում է, որ նորմատիվ իրավական ակտի փոփոխության արդյունքում կատարված կոնկրետ արարքի հանցավորությունը վերացվում է: ՀՀ Սահմանադրության հոդված 22-ի 6-րդ մասը սահմանում է. «Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը հետադարձ ուժ ունի»: Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 78-ի 2-րդ մասի՝ «Իրավախախտման համար սահմանված պատասխանատվությունը վերացնող կամ մեղմացնող կամ իրավախախտում կատարած իրավաբանական և ֆիզիկական անձանց դրությունն այլ կերպ բարելավող իրավական ակտը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ, եթե օրենքով կամ այդ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»: Հետևաբար, հանցագործության բլանկետային հատկանիշը բացահայտող այն իրավական ակտը, որը բարելավում է հանցանք կատարած անձի դրությունը, պետք է տարածվի մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա: Ամբողջ խնդիրն այն է, որ այս դեպքում անձի դրությունը բարելավվում է ոչ թե



քրեական օրենքով (դրա բլանկետային նորմը մնացել է անփոփոխ), այլ բլանկետային հատկանիշը բացահայտող իրավական ակտի փոփոխությունը նախատեսող նորմով: Տվյալ անձի կատարած արարքի նկատմամբ այդ նորմին հետադարձ ուժ տալը քրեաիրավական ոլորտում այլ իրավական ակտերի կիրառման վառ օրինակ է: Ինչպես նշվում է իրավունքի տեսության մեջ, իրավունքի կիրառումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ անհատական իրավունքների և պարտականությունների ծագման համար բավարար չէ ընդհանուր իրավունքները և պարտականությունները նախատեսող իրավական նորմի առկայությունը: Այդ դեպքում անհրաժեշտ է իրավասու մարմնի անհատական ակտը<sup>1</sup>: Քննարկվող իրավիճակում որպես այդպիսի անհատական իշխանական ակտ պետք է հանդիսանա քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը: Իսկ նման որոշում կայացնելու նյութական իրավական հիմքը, փաստորեն, քրեական օրենքը չէ:

Եվ այսպես, բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող հանցագործությունների որակման ընթացքում քր.օր.-ից բացի կիրառվում են նաև այլ համապատասխան իրավական ակտերը: Քր.օր.-ի հոդված 1-ի 1-ին մասը, սահմանելով հասարակական հարաբերությունների քրեաիրավական կարգավորման իրավական հիմքը, ամրագրում է, որ ՀՀ քրեական օրենսդրությունը բաղկացած է քրեական օրենսգրքից: Իսկ քր.օր.-ի բլանկետային նորմերով նախատեսված հանցագործությունների հատկանիշները բացահայտող նորմատիվ իրավական ակտերը քր.օր.-ի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառելու հնարավորության մասին հոդվածում ոչինչ չի նշվում: Համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 5-ի՝ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: Ուստի քր.օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների գոյությունը «օ-

րինականացնելու», կոնկրետ արարքների հանցավորությունը փաստացի վերացնող նորմատիվ իրավական ակտերին հետադարձ ուժ տալու քրեիրավական հիմք ստեղծելու նպատակով առաջարկում ենք՝

1. քր.օր.-ի հոդված 1-ի 1-ին մասը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Հանցանքը որակելիս քրեական օրենսգրքի հետ համատեղ և դրա հիման վրա կիրառվում են քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության հատկանիշները բացահայտող նորմատիվ իրավական ակտերը»,

2. քր.օր.-ի հոդված 13-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով՝ «Քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործության հատկանիշները բացահայտող նորմատիվ իրավական ակտերը, որոնք բարելավում են հանցանք կատարած անձի վիճակը, քրեական օրենսդրության ոլորտում ունեն հետադարձ ուժ»:

Ամեն դեպքում այլ նորմատիվ իրավական ակտերը ոչ մի դեպքում չեն կարող ինքնուրույն սահմանել քր.օր.-ում նախատեսված որևէ հանցակազմով չընդգրկվող արարքների հանցավորությունը կամ ամբողջությամբ վերացնել որևէ հանցակազմով ընդգրկվող արարքի հանցավորությունը: Նորմատիվ իրավական ակտերի դրույթները կարող են սահմանել կամ վերացնել քր.օր.-ով նախատեսված արարքների միայն մասնավոր, կոնկրետ դրսևորումների հանցավորությունը:

Ինչևէ, որոշ արարքներ քրեականացնելիս բլանկետային դիսպոզիցիաների օգտագործումն անխուսափելի է: Այս առումով քննարկման է արժանի այն հարցը, թե ինչպես պետք է շարադրվեն այդ դիսպոզիցիաները, և արարքը որակելիս ինչպես կարելի է խուսափել դրանց կիրառման դժվարություններից:

Բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման ընդհանուր կանոնը նախատեսված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 37-ի 7-րդ մասում. «Իրավական ակտը պետք է լինի լիակատար, ա-

### **Քրեական իրավունք**

վարտված և լիովին կարգավորի ակտով նախատեսված հարաբերությունների բուրյոր առանձնահատկությունները: Եթե հնարավոր կամ նպատակահարմար չէ այդ հարաբերությունների բուրյոր առանձնահատկությունները կարգավորել տվյալ իրավական ակտով, ապա դրանում հղումների ձևով կամ առանձին մասերով պետք է սահմանվեն այն իրավական ակտերի տեսակները, որոնցով կարգավորվելու են չկարգավորված հարաբերությունները, կամ նշվեն այն իրավաստեղծ մարմինները, որոնք պետք է կարգավորեն դրանք»: Այսպես, քր.օր.-ի հոդված 311.1 հոդվածը, քրեական պատասխանատվություն նախատեսելով պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից ապօրինի վարձատրություն ստանալու համար, 5-րդ մասում հղում է կատարում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 1-ին, որի հիման վրա իրավակիրառողը պետք է լուծի կոնկրետ սուբյեկտի՝ հանրային ծառայող հանդիսանալու հարցը: Պետք է նշել, սակայն, որ քր.օր.-ի այլ բլանկետային դիսպոզիցիաներում կոնկրետ իրավական ակտերին հղումներ չեն կատարվում. օրենսդիրը բավարարվում է «ապօրինի», «կանոնները խախտելով» ձևակերպումներով, ինչը արարքը որակելիս կարող է բարդություններ առաջացնել իրավակիրառողի համար: Հետևաբար, բլանկետային քրեաիրավական նորմերում հնարավորության դեպքում պետք է նշվեն այն կոնկրետ իրավական ակտերը, որոնք կիրառվելու են արարքը որակելիս: Կարծում ենք, որ քր.օր.-ում բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման ներկայիս մոտեցման պարագայում իրավակիրառողի աշխատանքը հեշտացնելու արդյունավետ միջոց կարող է լինել բլանկետային քրեաիրավական նորմերով վկայակոչվող նորմատիվ իրավական ակտերի համակարգումն ու այդ ակ-

տերի կամ դրանց համապատասխան քաղվածքների ժողովածուներ կազմելը:

Խոսելով բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման մասին՝ Ե.Իլյուկը գրում է, որ դիսպոզիցիաներում բլանկետային հատկանիշների առկայությունը պետք է հավասարակշռվի հանցակազմի մյուս հատկանիշների կոնկրետացմամբ, ինչը կբացառի հանցագործության հատկանիշների համընկնումը այլ իրավախախտման հատկանիշների հետ<sup>12</sup>:

Ա.Ի.Կորոբեևը առաջ է քաշում բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպման հետևյալ կանոնը՝ արարքը բլանկետային հատկանիշով նախատեսելու դեպքում նկարագրել կոնկրետ հանրորեն վտանգավոր հետևանքները, իսկ ձևական հանցակազմ կառուցելիս՝ նշել մեղքի ձևը<sup>13</sup>: Կարծում ենք, որ բացի հետևանքներից և մեղքի ձևից, բլանկետային դիսպոզիցիաներում, պայմանավորված նրանով, թե որ հատկանիշն է բլանկետային, կարող են կոնկրետացվել նաև հանցագործության եղանակը (օրինակ՝ բռնության գործադրումը), հանցագործության շարժառիթն ու նպատակը:

Լ.Գ.Գաուխմանն առաջարկում է քր.օր.-ում սահմանել դրույթ, համաձայն որի՝ Հատուկ մասի բլանկետային դիսպոզիցիաներում թույլատրվում է հղումներ կատարել միայն օրենքներին, ինչը կբացառի այլ նորմատիվ իրավական ակտերին ման հղումների հնարավորությունը: Դրա շնորհիվ քրեական պատասխանատվության ոլորտը կսահմանվի և կփոփոխվի բացառապես օրենսդրի և ոչ մի դեպքում՝ գործադիր իշխանության մարմինների կողմից<sup>14</sup>: Հեղինակի առաջարկած գաղափարի իրագործումը տեսականորեն թույլ կտա ապահովել օրենսդրի՝ արարքների քրեականացման և ապաքրեականացման իրավունքի բացառիկությունը: Սակայն ելենելով քր.օր.-ում առկա մի շարք բլանկետային դիսպոզիցիաների ձևակերպումից՝ կարելի է ասել, որ գործնականում այդ գաղափարի ամբողջական իրագործումը հնարավոր չէ: Նշենք միայն պաշտոնական լիազորութ-

յունները չարաշահելու և անցնելու հանցակազմերը նախատեսող նորմերը, երբ արարքը որակելիս դրանց համատեղ անհրաժեշտություն է առաջանում կիրառել պաշտոնատար անձանց կոնկրետ իրավունքներն ու պարտականությունները սահմանող բազմաթիվ ենթաօրենսդրական ակտերը: Նման դեպքերում արարքը որակելիս ենթաօրենսդրական ակտերի կիրառումը թույլ է տալիս հաշվի առնել պաշտոնատար անձանց լիազորությունների այն առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են տվյալ պետական մարմնի կամ գերատեսչության խնդիրներով և գործառույթներով:

Այդ հարցում առաջընթաց քայլ պետք է համարել քր.օր.-ը թմրամիջոցների և հոգեմետ նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող հավելվածով լրացնելը, քանի որ մինչ այդ նշված չափերը սահմանվում էին փոփոխվող ենթաօրենսդրական ակտերով: «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 26.05.2008թ. ՀՀ օրենքի նախագծին կցված տեղեկանք-հիմնավորման մեջ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը քրեական օրենսգրքով սահմանելը հիմնավորվել էր հետևյալ կերպ՝ «Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության «Հայաստանի Հանրապետության նախարարների և Երևանի քաղաքապետին օրենքներով և իրավական այլ ակտերով չեն կարող տրվել սույն հոդվածի 6-րդ մասում նշված լիազորությունները: Նման լիազորություն վերապահող ներմերը անվավեր են»: Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության նախարարների հրամաններով ... չեն կարող սահմանվել իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքները, ազատությունները ու արտոնությունները սահմանափակող, դրանց իրականացման

կարգը փոփոխող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խտացնող ... , ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմեր: Նշված օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քրեական, վարչական, տնտեսական, կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները միայն օրենքով պետք է սահմանվեն: Հաշվի առնելով, որ թմրամիջոցների և հոգեմետ գործուն (հոգեմետ) նյութերի, ինչպես նաև խիստ ներգործող կամ թունավոր նյութերի չափերը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի կողմից սահմանելը հակասում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին, կոնկրետ դեպքում իրավաչափ է հիշյալ չափերը սահմանել համապատասխան օրենսգրքերով»:

Նշենք, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ի 4-րդ մասը սահմանում է այն հարաբերությունների ուղորտները, որոնք պետք է կարգավորվեն բացառապես օրենքներով: Այս առումով մեծ նշանակություն կարող է ունենալ քր.օր.-ի բլանկետային դիսպոզիցիաներով վկայակոչվող ենթաօրենսդրական ակտերի շրջանակի վերանայումն այն տեսակետից, թե այդ ենթաօրենսդրական ակտերով կարգավորվող որ հասարակական հարաբերությունները պետք է կարգավորվեն օրենքներով: Դա թույլ կտա հնարավորության սահմաններում ապահովել օրենսդրական մակարդակով քրեաիրավական արգելքի փաստացի սահմանների կարգավորումը:

Կարծում ենք, որ սույն հոդվածում արված օրենսդրական առաջարկությունները կարող են քրեական իրավունքի ձևական աղբյուրների մասին տեսության մեջ ձևավորված ավանդական պատկերացումների վերանայման մեկնակետ հանդիսանալ: Իսկ հոդվածում ներկայացված՝ բլանկետային դիսպոզիցիաներով նկարագրվող արարքների քրեականացման և ապաք-

**Քրեական իրավունք**

րեականացման կանոնների պահպանումը կնպաստի քննչական և դատական պրակտիկայում բլանկետային դիսպոզիցիանե-

րով նորմերի կիրառման արդյունավետության բարձրացմանը և կապահովի համապատասխան հանցագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու օրինականությունն ու հիմնավորվածությունը:

- <sup>1</sup> Տե՛ս Гаухман Л.Д. Квалификация преступлений: закон, теория, практика. М., 2003, էջ 235:
- <sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Երևանի պետ. համալս., Երևան, 2007, էջ 45:
- <sup>3</sup> Տե՛ս Гаухман Л.Д. Նշվ. աշխ., էջ 241:
- <sup>4</sup> Տե՛ս Наумов А.В. Российское уголовное право: Общая часть. Курс лекций. 2-е изд. М., 2000, էջ 84:
- <sup>5</sup> Տե՛ս Куринов Б.А. Научные основы квалификации преступлений. М, 1976, էջ 21:
- <sup>6</sup> Տե՛ս Алексеев С.С. Общая теория права. Том 1, М., 1981, էջ 321:
- <sup>7</sup> Տե՛ս Алексеев С.С. Նշվ. աշխ., էջ 324, Теория государства и права. Учебник. Под ред. Б.С. Крылова М. 1980, էջ 255:
- <sup>8</sup> Տե՛ս Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права., М., 1997, էջեր 417-418:
- <sup>9</sup> Տե՛ս Алексеев С.С. Общая теория права. Том 2, М., 1982, էջ 329:
- <sup>10</sup> Տե՛ս Алексеев С.С. Общая теория права. Том 1, М., 1981, էջ 337:
- <sup>11</sup> Տե՛ս Теория государства и права. Под ред. К.А. Мокичева, М. 1971, էջ 525:
- <sup>12</sup> Տե՛ս Илюк Е.В. Законодательная техника построения диспозиции статьи уголовного закона. Автореф. дис. канд. юр. наук, 1989, էջ 16:
- <sup>13</sup> Տե՛ս Коробеев А.И. Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации. Владивосток, 1987, էջ 116:
- <sup>14</sup> Տե՛ս Гаухман Л.Д. Нужна правовая экспертиза по уголовным делам// Законность, 2000, N 4, էջեր 21-22:

---

## SOME QUESTIONS ON CRIMINALIZATION AND DECRIMINALIZATION OF THE ACTS DESCRIBED IN BLANKET DISPOSITION

**Misak MARKOSYAN**

*Assistant Teacher, Chair of Criminal Law and  
Criminology, RA Police Academy, Senior-  
Lieutenant of the Police*

---

The article is devoted to the points concerning the criminal norm blanket disposition formation while criminalization and decriminalization of the acts.

The author distinguishes the meaning of blanket disposition in the Criminal Code, represents the factors by which the expediency and necessity of blanket disposition usage while forming Criminal-law norms. Meanwhile, the forming of Criminal-law norms with blanket dispositions while criminalizing the acts has also "the back side of the case" as far as the existence of blanket dispositions in Criminal Code brings to some problems of Law-creation and Law enforcement character. In particular with change of Normative-Law acts on which the blanket norms of Special part of the Criminal

Code of RA make reference, the sphere of concrete criminal-law restriction can change, though the criminal-law form stays formally unchangeable.

By coordinating concrete arguments the author grounds the statement concerning the qualification of the criminals provided with blanket criminal-law norms not only the Criminal law will be applied but also the normative-law acts on which the blanket criminal-law norms make references. Taking into account this the author brings concrete suggestion on the RA Criminal Constitution supplement insertion concerning the criminal found of criminal-law regulation of public relations and also concerning the back forces of other normative-law acts in the sphere of Criminal Code.

In the concluding part of the article some rules of forming blanket criminal-law norms are brought, the observance of which will let improve the efficiency of the application of these norms in practice.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԶԱՅԱՍԱՆԻ  
ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ  
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ****Տիգրան ՆԵՐՍԻՍՅԱՆ**

*ՀՀ ոստիկանության ակադեմիայի  
ՕՀԳ ամբիոնի ավագ դասախոս*

Ավագակության համար քրեական պատասխանատվություն է սահմանված ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև աշխարհի գրեթե բոլոր պետություններում: Սակայն ինքնուրույն հանցակազմով այն նախատեսված է ոչ բոլոր երկրներում:

Այդպիսի երկրների շարքն են դասվում նախկին ԽՍՀՄ բոլոր պետությունները: Դրանց մեծ մասի քրեական օրենսգրքերում ավագակության համար պատասխանատվություն սահմանող հոդվածներն ունեն համանման բովանդակություն: Սասնավորապես, ինչպես Հայաստանի Հանրապետության (հոդված 175), այնպես էլ Ռուսաստանի Դաշնության (հոդված 162), Ուկրաինայի (հոդված 187), Բելառուսի (հոդված 207), Ղազախստանի (հոդված 179), Վրաստանի (հոդված 179), Ադրբեջանի (հոդված 181), Ղրղզստանի (հոդված 168), Մոլդովայի (հոդված 188), Տաջիկստանի (հոդված 249), Ուզբեկստանի (հոդված 164), Թուրքմենստանի (հոդված 231) և Էստոնիայի (հոդված 141) քրեական օրենսգրքերում ավագակությունը սահմանված է որպես ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակում, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով: Ընդ որում, նշված երկրների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցում հիմնականում համանման են նաև ավագակության ծանրաց-

նող և առավել ծանրացնող հանգամանքները, թեև դրանք երբեմն նախատեսված են հոդվածների տարբեր մասերով: Դա հավանաբար պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված քրեական օրենքների հիմքում, որպես կանոն, ընկած է ԱՊՀ երկրների մոդելային քրեական օրենսգիրքը:

Նախկին ԽՍՀՄ պետություններից միայն Լատվիայի (հոդված 176) և Լիտվայի (հոդված 180) քրեական օրենսգրքերում է, որ ավագակությունը նախատեսված է նյութական հանցակազմով, այսինքն՝ որպես համապատասխան եղանակով ուրիշի գույքի հափշտակություն, այլ ոչ թե այն կատարելու նպատակով հարձակում: Ընդ որում, նշված երկու երկրների օրենքներով էլ ավագակության հանցակազմն առկա է ֆիզիկական կամ հոգեկան բռնություն գործադրելու ցանկացած դեպքում՝ անկախ կյանքի կամ առողջության համար դրանց վտանգավոր լինել-չլինելուց: Սասնավորապես, Լատվիայի քրեական օրենսգրքի հոդված 176-ի համաձայն՝ ավագակություն է համարվում ուրիշի գույքի հափշտակությունը, որը զուգորդվել է բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով: Իսկ Լիտվայի քրեական օրենսգրքի հոդված 180-ը պատասխանատվություն է սահմանում ուրիշի գույքի հափշտակության համար, որը կատարվել է ֆիզիկական բռնություն գործադրելով կամ դա անհապաղ գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ցանկացած այլ եղանակով տուժողին դիմադրություն ցույց տալու հնարավորությունից զրկելով:

Եվրոպական զարգացած երկրների շարքում, որոնց քրեական օրենսգրքերով

ավագակությունը նախատեսված է ինքնուրույն հանցակազմերով, առանձնանուն են Գերմանիան և Շվեյցարիան:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 249-ի համաձայն՝ ավագակություն է համարվում ուրիշի շարժական գույքին ապօրինի տիրանալը՝ այն հանցավորինը կամ մեկ ուրիշինը դարձնելու նպատակով, որը կատարվել է բռնություն կամ անձի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ներկայացնող բռնության սպառնալիք գործադրելով: Այսպիսով, կարելի է առանձնացնել քննարկվող հանցագործության հետևյալ հատկանիշները՝ 1) ուրիշի գույքին տիրանալը, 2) այդ գույքը հանցավորինը կամ մեկ ուրիշինը դարձնելու նպատակը, 3) բռնության կամ կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ներկայացնող բռնության սպառնալիքի գործադրումը:

Բացի դրանից, Գերմանիայի քրեական օրենսգրքի տվյալ հոդվածը ավագակության պարտադիր հատկանիշների շարքում նշում է հանցագործության առարկան՝ ուրիշի շարժական գույքը: Այս առումով կարծում ենք, որ դժվար է պատկերացնել ուրիշի անշարժ գույքի հափշտակությունը ավագակության եղանակով: Ուստի օրենսդրական մասն կոնկրետացումը, մեր կարծիքով, ավելորդ է, և ինչպես ՀՀ, այնպես էլ նախկին ԽՍՀՄ այլ երկրների քրեական օրենսգրքերն այս առումով առավել օպտիմալ ձևակերպում են պարունակում:

Գերմանիայի քրեական օրենքը որոշակիորեն տարբերվում է նշված պետությունների քրեական օրենսգրքերից (բացառությամբ Լատվիայի և Լիտվայի) նաև նրանով, որ այստեղ ավագակության հանցակազմ են առաջացնում ֆիզիկական բռնություն գործադրելու բոլոր դեպքերը՝ անկախ բնույթից: Այս առումով, փաստորեն, ավագակության և կողոպուտի հանցակազմերը միավորված են մեկ հոդվածում: Սակայն, եթե Լատվիայի և Լիտվայի քրեական օրենսգրքերի համաձայն՝ նույն կերպ է գնա-

հատվում նաև բռնության սպառնալիքը, ապա Գերմանիայի քրեական օրենքն այլ մոտեցում է պարունակում: Մասնավորապես, վերջինիս հոդված 249-ին համապատասխան՝ բռնության սպառնալիքը կարող է հանդիսանալ ավագակության հատկանիշ միայն այն դեպքում, եթե իրական վտանգ է ստեղծում ուրիշի կյանքի կամ առողջության համար:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ Գերմանիայի քրեական օրենսգրքում ինքնուրույն հանցակազմ է նախատեսված ավագակության համար, որն առաջացրել է տուժողի մահ (հոդված 251): Ընդ որում, տվյալ արարքի համար պատասխանատվություն է առաջանում նույնիսկ այն դեպքում, երբ նշված հետևանքն առաջացել է անզգուշությամբ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը և նախկին ԽՍՀՄ այլ երկրներին, ապա վերջիններիս քրեական օրենքներին համապատասխան մասն դեպքերում այլ մոտեցում է դրսևորվում: Մասնավորապես, ավագակության ընթացքում դիտավորյալներ մահ պատժառելու դեպքում արարքը գնահատվում է հանցագործությունների համակցությամբ՝ որպես ավագակություն և ծանրացուցիչ հանգամանքներում սպանություն, իսկ անզգուշությամբ մահ պատժառելու դեպքում՝ որպես ծանրացուցիչ հանգամանքներում ավագակություն: Ընդ որում, համամասն որակում են ենթադրում նաև Լատվիայի և Լիտվայի քրեական օրենսգրքերը:

Գերմանիայի քրեական օրենսգրքի համաձայն ավագակություն է համարվում նաև ինքնուրույն այնպիսի հանցագործությունը, ինչպիսին գողությունն է, որը «ծանրաբեռնված է բռնությամբ» (հոդված 252): Այլ կերպ ասած՝ խոսքն այն դեպքերի մասին է, երբ գողության ընթացքում հայտնաբերված անձը դիմում է բռնության կամ դրա սպառնալիքի՝ հափշտակվածն իր մոտ պահելու նպատակով: Իսկ ՀՀ և նախկին ԽՍՀՄ այլ երկրների քրեական օրենսգրքերով մասն դեպքերը, ինչպես հայտնի է, որակվում են ավագակության հանցակազմը

### **Քրեական իրավունք**

նախատեսող հոդվածով՝:

Նշենք, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության քրեական օրենսգիրքն ինքնուրույն հանցակազմով առանձնացնում է նաև ավտոմեքենայի վարորդի վրա կատարվող ավազակային հարձակումը (հոդված 316.ա), որը նախատեսված է ոչ թե սեփականության, այլ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքում: Մասնավորապես, քրեաիրավական տվյալ նորմը պատասխանատվություն է սահմանում այն դեպքերի համար, երբ հանցավորը ավազակություն, գողություն կամ շորթում կատարելու նպատակով հարձակվում է ավտոմեքենայի վարորդի կամ ուղեվորի վրա՝ սպառնալով նրա կյանքին կամ առողջությանը կամ այլ կերպ ներազդելով նրա կողմից որոշում կայացնելու ազատության վրա:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի հոդված 140-ի համաձայն՝ ավազակություն է համարվում հափշտակությունը, որն ուղեկցվել է բռնությամբ կամ տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ ներկայացնող բռնության սպառնալիքով, ինչպես նաև գողության ընթացքում հայտնաբերված անձի կողմից նման գործողությունների կատարումը՝ հափշտակվածն իր մոտ պահելու նպատակով: Օրենսդրական նշված ձևակերպումից կարելի է հետևություն անել, որ Շվեյցարիայի քրեական օրենսգրքում, ինչպես և Գերմանիայի, Լատվիայի և Լիտվայի քրեական օրենքներում, ավազակությունը նախատեսված է նյութական հանցակազմով: Հետևաբար հափշտակություն կատարելու նպատակով բռնությամբ զուգորդված հարձակումը, որը խափանվում է հանցավորի կամքից անկախ հանգամանքներով, նշված երկրներում պետք է որակվի որպես ավազակության փորձ: Միևնույն ժամանակ, ավազակության վերածվող գողությունը, ի տարբերություն Գերմանիայի,

Շվեյցարիայի քրեական օրենսգրքով ուղղակիորեն նախատեսված է ավազակության հանցակազմի շրջանակներում:

Ինչ վերաբերում է բռնության բնույթին, ապա պետք է նշել, որ ինչպես Լատվիայի, Լիտվայի և Գերմանիայի, այնպես էլ Շվեյցարիայի քրեական օրենսգրքերը, ի տարբերություն ՀՀ և նախկին ԽՍՀՄ այլ երկրների համապատասխան օրենքների, ավազակության հատկանիշ են համարում կյանքի կամ առողջության համար ինչպես վտանգավոր, այնպես էլ ոչ վտանգավոր բռնության գործադրումը: Այսինքն՝ տվյալ դեպքում ևս ուրիշի սեփականության դեմ ուղղված բռնությամբ զուգորդված ոտնձգությունները, կախված ոտնձգության բնույթից, չեն դասակարգվում ավազակության և կողոպուտի:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ եվրոպական բազմաթիվ այլ երկրների քրեական օրենսգրքերում ավազակությունը չի առանձնացվում ինքնուրույն հանցակազմով: Նշված դեպքերում խոսքը բռնություն կիրառելով կատարվող գողությունների կամ կողոպուտների մասին է:

Այսպես, Դանիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ կողոպուտ են համարվում բռնության կամ դրա անհապաղ կիրառման սպառնալիքի գործադրմամբ, իր կամ այլ անձի համար ապօրինի օգուտ ստանալու նպատակով կատարված այն գործողությունները, որոնց միջոցով հանցավորը՝

- 1) վերցնում կամ շորթում է ուրիշին պատկանող գույքը,
- 2) իր մոտ է պահում ուրիշից գողացած գույքը,
- 3) հարկադրում է այլ անձի կատարել որևէ գործողություն կամ ձեռնպահ մնալ դրա կատարումից:

Ֆրանսիայի քրեական օրենսգրքում սեփականության դեմ ուղղված ոտնձգություններն անվանվում են հափշտակություններ: Այստեղ առանձնացված են հափշտակության մի քանի տեսակներ, որոնք ուղեկցվում են բռնությամբ:

Մասնավորապես, Ֆրանսիայի քրեա-



կան օրենսգրքի 311-5 հոդվածը պատասխանատվություն է սահմանում հափշտակության համար, որին նախորդել, ուղեկցել կամ հաջորդել են այլ անձի դեմ ուղղված բռնի գործողություններ, որոնք առաջացրել են վերջինիս աշխատունակության լրիվ կորուստ ութ օրը չգերազանցող ժամկետով: Տուժողի աշխատունակության՝ նշված ժամկետը գերազանցող լրիվ կորուստի դեպքում նախատեսված է ավելի խիստ պատասխանատվություն:

Իսպանիայի քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում կողոպուտի համար, որը զուգորդվել է բռնությամբ կամ տուժողներին ահաբեկելով: Ընդ որում, մարմնական վնասվածքներ պատճառելը տվյալ հանցակազմով չի ընդգրկվում և որակվում է ինքնուրույն՝ որպես մարդու առողջության դեմ ուղղված հանցագործություն:

Նիդերլանդների Թագավորության քրեական օրենսգրքի հոդված 312-ը քրեական պատասխանատվություն է նախատեսում գողության համար, որին նախորդել, ուղեկցել կամ հաջորդել է բռնության կամ դրա սպառնալիքի գործադրումը, այդ թվում՝ գողությունը նախապատրաստելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Նիդերլանդների քրեական օրենսգրքում, ի տարբերություն ՀՀ և բազմաթիվ այլ երկրների քրեական օրենքների, միանշանակ լուծված է բազմաթիվ վեճերի տեղիք տվող այն հարցը, թե արդյոք բռնություն է համարվում թմրեցնող և խիստ ներգործող նյութերի ներարկումը տուժողի օրգանիզմ: Մասնավորապես, դրա 81 հոդվածի համաձայն, որևէ եղանակով անձին անօգնական (անգիտակից, դիմադրություն ցույց տալու հնարավորությունից զրկված) վիճակի մեջ դնելը հավասարեցված է բռնություն գործադրելուն: Այս առումով կարծում ենք, որ մեր քրեական օրենսգրքի ընդհանուր մասում նման նորմի նախատեսումը նույնպես անհրաժեշտություն է:

Շվեդիայի քրեական օրենսգրքում ևս ուրիշի գույքին բռնությամբ ապօրինի տիրանալու դեպքերի կապակցությամբ օգտագործված է «կողոպուտ» եզրույթը: Ընդ որում, կողոպուտին են հավասարեցված հանցավորի նաև այն գործողությունները, որոնք կատարվում են գողությունից հետո և այն անձի նկատմամբ, ով ձգտում է խափանել այն կամ վերադարձնել գողացված գույքը: Տվյալ երկրի քրեական օրենքը նույնպես բռնությանն է հավասարեցնում անձին որևէ եղանակով անօգնական վիճակի մեջ դնելը:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև ավազակության Չինաստանի, ԱՄՆ-ի և մուսուլմանական որոշ երկրների քրեական օրենքներով նախատեսված առանձնահատկությունները: Ընդ որում, նշված երկրների քրեական օրենսգրքերը նույնպես չեն պարունակում ավազակության ինքնուրույն հանցակազմ:

Այսպես, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 263-ը պատասխանատվություն է սահմանում մասնավոր կամ պետական սեփականության կողոպուտի համար, որը կատարվել է բռնություն կամ դրա սպառնալիք կամ այլ եղանակներ կիրառելով: Փաստորեն, տվյալ հոդվածի իմաստով նկատի են ունեցվում և հավասարեցված են գույքի բացահայտ հափշտակության հնարավոր բոլոր դեպքերը:

Նույն հոդվածի համաձայն՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված է համարվում կողոպուտը, որն իրականացվել է՝

- 1) բնակարան ներխուժելով,
- 2) հասարակական տրանսպորտում,
- 3) բանկից կամ այլ ֆինանսական կառույցից,
- 4) կրկին կամ խոշոր չափերով,
- 5) մարմնական վնասվածքներ կամ մահ պատճառելով,
- 6) միլիցիայի կամ ոստիկանության աշխատակից ձևանալով,
- 7) զենքի գործադրմամբ,
- 8) երկրի զինված ուժերին, ինչպես նաև

### **Քրեական իրավունք**

օպերատիվ արձագանքման, հրշեջ և փրկարար այլ ծառայություններին պատկանող գույքը հափշտակելով:

Ամերիկայի Միացյալ Նահանգների քրեական օրենսդրությունը նույնպես պատասխանատվություն է սահմանում կողոպուտի համար, որը նախատեսված է ինչպես դաշնային, այնպես էլ նահանգային օրենքներով:

Այսպես, Նյու Յորք նահանգի քրեական օրենքի համաձայն՝ կողոպուտը ուրիշի գույքը բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով հափշտակելն է, որը նպատակ է հետապնդում՝

1. կանխել կամ հաղթահարել տուժողի դիմադրությունը,
2. գույքին տիրանալուց անմիջապես հետո այն իր մոտ պահել,
3. հարկադրել գույքի օրինական տիրապետողին այն հանձնել հանցավորին կամ այլ կերպ նպաստել հափշտակության իրականացմանը:

Տվյալ հանցագործությունը ծանրացնող հանգամանքների շարքում օրենքը նախատեսում է նույն արարքի կատարումը՝

- 1) դեպքի վայրում ներկա այլ անձի օգնությամբ (ՀՀ քր. օր.-ի իմաստով՝ խմբի կողմից),
- 2) հանցագործության մասնակից չհանդիսացող ցանկացած այլ անձի մարմնական վնասվածքներ պատճառելով,
- 3) ատրճանակ կամ այլ հրազեն ցուցադրելով:

Կողոպուտի նշված դեպքերը համարվում են «երկրորդ աստիճանի» հանցագործություն: Միևնույն ժամանակ, նույն օրենքի համաձայն, կողոպուտը առավել վտանգավոր (ծանր)՝ «առաջին աստիճանի» հանցագործություն է համարվում, եթե՝

- 1) ոտնձգության ընթացքում կամ դրանից անմիջապես հետո փախուստի դիմելիս հանցավորը կամ հանցագործության այլ մասնակից ծանր մարմնական վնաս-

վածք է հասցնում հանցագործության մասնակից չհանդիսացող անձին,

2) հանցավորը կամ հանցագործության այլ մասնակից զինված է մահաբեր զենքով և գործադրում է այն կամ սպառնում անմիջապես գործադրել:

Համանման դրույթներ են պարունակում նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենքների ժողովածուն և ԱՄՆ-ի այլ նահանգների քրեական օրենքները<sup>2</sup>:

Ավազակության համար քրեական պատասխանատվություն է նախատեսված նաև մուսուլմանական քրեական իրավունքի նորմերով: Ընդ որում, այդ նորմերին համապատասխան, այն համարվում է առավել վտանգավոր հանցագործություններից մեկը: Մասնավորապես, մուսուլմանական իրավունքում ավազակություն է համարվում ճանփորդների վրա զինված հարձակումը, որը կատարվել է նրանց ունեցվածքին տիրանալու նպատակով: Ի դեպ, ավազակության համար պատասխանատվության կարող է ենթարկվել միայն արական սեռի, լիովին մեղսունակ և չափահասության տարիքի հասած մուսուլմանը և միայն այն դեպքում, եթե տուժողը նույնպես եղել է մուսուլման, իսկ գույքը, որին տիրացել են, հանդիսացել է նրա սեփականությունը կամ գտնվել է նրա օրինական տիրապետման տակ: Բացի դրանից, ավազակության հանցակազմի համար պարտադիր է, որ հանցավորի և տուժողի միջև բացակայեն ազգակցական հարաբերություններ<sup>3</sup>:

Այսպիսով, մուսուլմանական քրեական իրավունքի նորմերի համաձայն, ավազակության պարտադիր հատկանիշ են համարում՝

1. ճանփորդի վրա զինված հարձակումը,
2. ուրիշի ունեցվածքին տիրանալու նպատակը,
3. հանցավորի՝ արական սեռի, լիովին մեղսունակ և չափահասության տարիքի հասած մուսուլման լինելը,
4. տուժողի՝ մուսուլման, ինչպես նաև

գույքի սեփականատեր կամ օրինական տիրապետող լինելը,

5. հանցավորի և տուժողի միջև ազգակցական կապերի բացակայությունը:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մի շարք երկրների (օրինակ՝ Շվեդիայի, Շվեյցարիայի, ԱՄՆ-ի և այլն) քրեական օրենսդրությամբ ինքնուրույն հանցակազմով պատասխանատվություն է նախատեսվում, այսպես կոչված, «հարձակում» անվանվող հանցագործության համար: Բանն այն է, որ ՀՀ և նախկին Խորհրդային ու մի շարք այլ երկրների քրեական օրենսդրությամբ, ինչպես հայտնի է, հարձակումը գնահատվում է որպես ավազակության հիմնական հատկանիշներից մեկը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու տվյալ հասկացության առանձնահատկություններն ըստ տարբեր երկրներում գործող քրեաիրավական նորմերի:

Այսպես, նախկին ԽՍՀՄ երկրների քրեական օրենսդրության համապատասխան, հարձակումը մեկնաբանվում է որպես տուժողի համար հանկարծակի, ագրեսիվ վարքագիծ, որը զուգորդվում է բռնությամբ կամ դրա սպառնալիքով: Այսինքն, զույքը կարող է հափշտակվել նաև կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն կամ դրա սպառնալիք գործադրելով, բայց առանց հարձակման: Օրինակ՝ երբ հանցավորը տուժողին թունավորում է<sup>4</sup>:

Շվեդիայի քրեական օրենսգրքի 3-րդ գլխի 5-րդ հոդվածի համաձայն՝ անձը մեղավոր է ճանաչվում հարձակման մեջ, եթե մեկ ուրիշին ֆիզիկական ցավ է պատճառում, հասցնում է մարմնական վնասվածք, առաջացնում է նրա հիվանդացում կամ հասցնում վերջինիս անգործունակության կամ դրան նմանվող անօգնական վիճակի: Նույն արարքը որակվում է որպես ծանր հարձակում, եթե այն՝

1) հանգեցրել է տուժողի մահվան կամ դրել նրան կյանքի համար վտանգավոր վիճակի մեջ,

2) զուգորդվել է ծանր մարմնական

վնասվածք պատճառելով,

3) կատարվել է առանձին դաժանությամբ կամ անխղճությամբ:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 134 հոդվածով նույնպես պատասխանատվություն է սահմանվում տվյալ հանցագործության համար, որը բնութագրվում է որպես մեկ կամ մի քանի անձանց վրա կատարված հարձակում, որը հանգեցրել է հարձակման ենթարկվող կամ մեկ այլ անձի (անձանց) մահվան կամ նրանց մարմնական վնասվածք պատճառելուն:

ԱՄՆ քրեական օրենսդրությունը առանձնացնում է նման ոտնձգությունների մի քանի տեսակներ: Մասնավորապես, անձը մեղավոր է ճանաչվում «երրորդ աստիճանի» հարձակման մեջ, եթե՝

1) կանխանտածված մարմնական վնասվածք է հասցնում մեկ այլ անձի,

2) մարմնական վնասվածք է հասցնում մեկ այլ անձի անզգուշությամբ,

3) հանցավոր անփութությամբ մարմնական վնասվածք է հասցնում մեկ այլ անձի մահաբեր զենքով կամ այլ վտանգավոր գործիքով<sup>5</sup>:

Այսպիսով, արտասահմանյան երկրների քրեական իրավունքում հարձակում ասելով՝ հասկացվում է այն արարքը, որը ծանրության տարբեր աստիճանի ֆիզիկական վնաս է պատճառում տուժողին: Այսինքն՝ ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքը նշված երկրներում «հարձակման» ինքնուրույն հանցակազմ չի պարունակում: Իսկ ԱՄՆ-ի քրեական օրենսդրության համաձայն՝ հարձակումը քրեորեն պատժելի ծանր հանցագործություն է անգամ անզգուշությամբ որոշակի հետևանքների առաջացնելու պարագայում:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանյան երկրներում բռնությամբ զուգորդված հափշտակությունները բավականին տարածված են: Ընդ որում, ինչպես արդարացիորեն նշում է Վ.Վ. Լուկենը, այդ երկրներում առկա քրեաիրավական, վիճակագրական և մի շարք այլ ա-

**Քրեական իրավունք**

ռանձնահատկությունների և տարբերությունների պայմաններում պետք է արձանագրել մեկ ընդհանուր հետևություն. բռնությամբ ուրիշի գույքի հափշտակության դեպքերն անընդհատ աճում են ամբողջ աշխարհում, այդ թվում՝ տնտեսապես զարգացած ժողովրդավարական երկրներում<sup>1</sup>:

Անփոփելիով ասվածը՝ կարելի է անել մի շարք հետևություններ: Մասնավորապես, արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ, բացառությամբ նախկին ԽՍՀՄ երկրների, ինչպես նաև Գերմանիա-

յի Դաշնային Հանրապետության և Շվեյցարիայի, ավագակությունն ինքնուրույն հանցակազմով սահմանազատված չէ կողոպուտից:

Բացի դրանից, արտասահմանյան շատ երկրներում, այդ թվում՝ Գերմանիայում և Շվեյցարիայում, արարքը գնահատվում է որպես ավագակություն՝ անկախ բռնության բնույթից, կյանքի կամ առողջության համար դրա վտանգավոր լինել-չլինելուց:

Եվ վերջապես, արտասահմանյան շատ երկրների քրեական օրենսդրությամբ բռնությամբ ուրիշի գույքը հափշտակելու հանցակազմն ընդգրկում է նաև այն դեպքերը, երբ հանցավորը, բռնություն գործադրելով, ձգտում է իր մոտ պահել հափշտակվածը կամ դիմել փախուստի:

1 Տե՛ս նաև ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս: Եր.: Երևանի համալս. իրատ., 2006, էջ 382:

2 Տե՛ս ձգճահարկության տրոհումը հարկապարհի ՍՅՈՅՏԶ ԸԿԿՐՈՍՈ. ԻՆՏԵՆՍԻՎ ՎՏՐՎՈՅՈՒՄԻ ՈՍՏՏԶ. Ծ., 1990:

3 Տե՛ս ԻՍՈՒՂԿԱՎ Խ.Հ. Ծրցահարկության տրոհումը. Ծ., 1986, էջեր 188-189:

4 Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, էջ 379:

5 Տե՛ս ձգճահարկության տրոհումը հարկապարհի ՍՅՈՅՏԶ ԸԿԿՐՈՍՈ. Ծ., 1986, էջ 130:

6 Տե՛ս Խցվապար թեթ. կրպոցակապարհի ող ՉԿՍՈ. ԾՈՐՏՏՏՏՏ ՍՐՈՒՄԿԱՍՏՏՏՏՏՏՏՏՏՏՏ ՈՎՈՒՈՂ. Ծ., 1999, էջ 245:

---

## THE CONCEPT OF ROBBERY BY THE CRIMINAL LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA AND FOREIGN COUNTRIES

**Tigran NERSISYAN**

*Senior Lecturer of the Department of OIA  
of the Academy of Police of the  
Republic of Armenia*

---

The results of comparative research of the concept of robbery are submitted in this article. Regarding to this, legislative peculiarities of the Robbery by the Criminal Codes of the countries of former Soviet Union, as well as the USA, China and many European countries (Germany, France, Spain, Netherlands, Switzerland, Sweden, Denmark) are discussed. Corresponding norms of Muslim criminal law are also analyzed.

On the basis of comparative research in this article is mentioned, that in the number of developed European countries the robbery is provided for by a law separately only in Criminal Codes of Germany and Switzerland. In other European countries robbery is provided for by the norms which

regulate responsibility for theft and pillage, committed with violence.

Robbery is not provided for by a law separately in the Criminal Codes of the USA, China and many Muslim countries as well.

In the concluding part of this article are submitted following conclusions of author:

- robbery is not provided for by a law separately in the Criminal Codes of foreign countries, except other countries of former Soviet Union, Germany, Switzerland, and it is provided for by the norms which regulate responsibility for theft and pillage, committed with violence;

- in many foreign countries the classification of the criminal act as a robbery is not connected with character of violence;

- Criminal Codes of many countries are provided for as a robbery the situations when criminal commits violence for keeping of others abducted property or running away.

---

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ՋՈՐԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՍ ԹՈՂՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ****ՀԱՆՑԱԿԱԶՄԵՐԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ****Կարո ԲՐՈՒՏՅԱՆ**

*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության սպա, ավագ լեյտենանտ*

Զինվորական ծառայության բնույթից և առանձնահատկություններից ելնելով՝ զինծառայողների համար սահմանված են վարքագծի առավել խիստ նորմեր և դրանք խախտելու համար պատասխանատվության համապատասխան միջոցներ: Այդ իսկ պատճառով զինծառայողների ծառայողական պարտականություններն ու իրավունքները հնարավորինս համակողմանի և հստակ օրենսդրական կարգավորում են ստանում: Կարելի է նշել, որ որոշակի առումով սահմանափակված է կամայականորեն և սեփական նախաձեռնությամբ առանձին գործողություններ կատարելու զինծառայողների ազատությունը<sup>1</sup>: Այդպիսի սահմանափակումներն անհրաժեշտ են զինվորական կարգուկանոնի հաստատման ու ամրապնդման համար: Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ զինծառայողների տեղաշարժի հետ կապված որոշակի առանձնահատկություններին: Ջորամասի տեղակայման վայրից զինծառայողների արձակման կարգը սահմանվում է ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով<sup>2</sup>: Ջորակոչի հիման վրա զինվորական ծառայություն անցնող զինծառայողներին արգելվում է թողնել տեղի կայազորի սահմանները (բացառությամբ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվելու դեպքերի): Ջորակոչի հիման վրա ծառայություն անցնող ժամկետային ծառայության զինծառայողը, եթե

նրա վրա դրված չէ «հերթական արձակումից զրկում» կարգապահական տույժը, շաբաթական մեկ արձակման իրավունք ունի: Ժամկետային ծառայության զինվորներին ու սերժանտներին վաշտի հրամանատարը արձակում է գնդի տեղակայման վայրից գնդի հրամանատարի նշանակած օրը և ժամին՝ վերջինիս սահմանած կարգով: Արձակումը կատարվում է ըստ հերթականության, որը կարգավորում են դասակների հրամանատարների տեղակալները:

Հանգստյան և տոնական օրերին մարտական հերթապահություն և օրվա վերակարգում ծառայություն կատարելու համար զինծառայողներն ու սերժանտները չեն արձակվում: Արձակման թույլտվություն ստանալու համար զինծառայողները դիմում են իրենց անմիջական պետին:

Ժամկետային ծառայության զինվորների և սերժանտների արձակման ցուցակները դասակների հրամանատարների տեղակալները ներկայացնում են վաշտի ավագին՝ վաշտի հրամանատարին զեկուցելու համար:

Արձակումից վերադառնալուց պես զինծառայողները ներկայանում են գնդի հերթապահին և զեկուցում են իրենց վերադարձի մասին: Գնդի հերթապահը արձակման գրության մեջ նշում է վերադարձի ժամը: Այնուհետև նրանք գնում են ստորաբաժանում, ներկայանում վաշտի հերթապահին, վերջինիս հանձնում արձակման գրությունները և զեկուցում իրենց անմիջական պետին: Եթե զինծառայողը ստորաբաժանում է գալիս քնի ազդարարումից հետո, ապա անմիջականորեն պետին զեկուցում է հաջորդ օրը՝ առավոտյան ստու-

գումից առաջ:

Վաշտի հերթապահը արձակվողների գրքում նշում է արձակումից վերադարձածների ներկայանալու ժամը և արձակման գրությունները հանձնում վաշտի ավագին: Ռազմատեսուհու նախկին հաստատության տարածքից առաջին կուրսի ուսանողների արձակումը կատարվում է նույն կարգով, ինչ ժամկետային ծառայության զինվորներին ու սերժանտներին:

Բնակավայրերից հեռու գտնվող զորամասերում (առանձին ստորաբաժանումներում) և այլ դեպքերում, երբ նշված կարգով արձակումներն աննպատակահարմար են, զորամասի (առանձին ստորաբաժանման) հրամանատարի որոշմամբ հանգստյան օրերին կազմակերպվում են խմբային ուղևորություններ դեպի մերձակա խոշոր բնակավայրերը (քաղաքները):

Վերոնշյալ նորմերով սահմանված կարգի խախտմամբ զորամասից բացակայելը կարող է հանգեցնել զինծառայողի կարգապահական կամ քրեական պատասխանատվության: Այդ կարգի խախտման համար ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են «Ձորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը» և «Դասալքություն» հանցակազմները:

Ձորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնել ասելով պետք է հասկանալ ծառայության վայրը կամ զորամասն առանց համապատասխան հրամանատարի թույլտվության թողնելը: Ըստ որում, պետք է հաշվի առնել, որ տվյալ հանցակազմն առկա է այն դեպքում, երբ զինծառայողն առանց համապատասխան թույլտվության դուրս է գալիս զորամասի տեղակայման վայրի սահմաններից: Այդ պատճառով զորամասից դուրս գալու և ժամանակին չներկայանալու թույլտվությունը, որը զինծառայողին տրվել է նույնիսկ այդպիսի թույլտվություն տալու իրավունք չունեցող հրամանատարի կողմից, բացառում է զինծառայողին ՀՀ քրեական օրենսգրքի 361 հոդվածով քրեական պատասխանատ-

վության ենթարկելու հնարավորությունը: Տվյալ դեպքում կարգապահական պատասխանատվության է ենթարկվում այն հրամանատարը, որը նման թույլտվություն է տվել: Ընդ որում, նշանակություն չունի, թե այդ թույլտվությունը գրանցվել է, թե տրվել է բանավոր: Հանցակազմի առկայության դեպքում հրամանատարը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար:

Ծառայությանը ժամանակին չներկայանալու բովանդակությունը՝ որպես դիտարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի ձև, դրսևորվում է հետևյալ կերպ. «Ձորակոչի հիման վրա ծառայության մեջ գտնվող զինծառայողների՝ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը պետք է դիտել նշված անձանց զորամասից արձակումից, արձակուրդից, տեղափոխումից, գործուղումից կամ բուժհաստատությունից ծառայությանը ներկայանալ համապատասխան փաստաթղթերում (օրինակ՝ արձակման թերթիկում) նշված ժամանակից ուշ»<sup>3</sup>: Ծառայությանը ժամանակին չներկայանալու նման ձևի օբյեկտիվ կողմի վերաբերյալ օրենսդիրը ավելացնում է ևս մեկ հատկանիշ՝ հարգելի պատճառների բացակայություն:

Օրենսդիրը չի նախատեսում հարգելի պատճառների հստակ թվարկում, որոնց առկայությունը կվկայեր հանցակազմի բացակայությունը: Սակայն դրա անհրաժեշտությունը պայմանավորվում է յուրաքանչյուր դեպքում իրավասու պետական մարմնի կողմից փաստերի ճիշտ գնահատման և կանայական մոտեցման հնարավորինս բացառման կարևորությամբ: Մեր կարծիքով, այս խնդրի լուծման արդյունավետ մոտեցում կհամարվի օրենսդրության մեջ հարգելի պատճառների շրջանակի ամրագրումը, որոնք կարող են լինել.

զինծառայողի հիվանդությունը կամ հաշմանդամությունը՝ պայմանավորված աշխատունակության կորստով,

մերձավոր ազգականների (հայր, մայր

### **ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

(այդ թվում՝ նաև որդեգրողներ), երեխա, քույր, եղբայր, տատ, պապ) առողջական ծանր վիճակը կամ նշված անձանց թաղման արարողությանը մասնակցելը,

արգելք, որն առաջացել է անհաղթահարելի ուժի հետևանքով կամ զինծառայողի կամքից անկախ այլ հանգամանք,

այլ պատճառներ, որոնք հարգելի են համարվել համապատասխան իրավասու պետի (պաշտոնատար անձի) կողմից:

Որոշակի դեպքերում, ելնելով իրարությունից, հանցակազմի բացակայությունը հավաստող այդպիսի պատճառներ կարող են համարվել զինծառայողի մոտ երթևեկության համար անհրաժեշտ պայմանների բացակայությունը (օրինակ՝ տրանսպորտի երթուղու կարգացուցակի փոփոխությունները, զինծառայողին երթևեկության համար անհրաժեշտ գումարով չապահովելը), ինչպես նաև այլ հանգամանքները, որոնք անկախ զինծառայողի կամքից խոչընդոտել են ծառայության վայր ժամանակին ներկայանալուն<sup>4</sup>: Այս իսկ պատճառով զորամասերում զինծառայողին արձակուրդ տրամադրելիս միաժամանակ տրվում է սահմանված որոշակի գումար՝ ճանապարհածախսը հոգալու նպատակով, ինչը կարևոր է հատկապես սոցիալապես անապահով զինծառայողների համար:

Վերոնշյալ հանգամանքները կարելի է տարածել նաև զորակոչի ընթացքում զինվորական կոմիսարի կողմից ծանուցագրով զորակոչի համար զինկոմիսարիատ, ինչպես նաև վարժական հավաքների կանչված պահեստազորի քաղաքացիների ժամանակին չներկայանալու դեպքերի նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ ենք համարում ՀՀ քր. օր.-ի 361 հոդվածի 1-ին մասով ամրագրված ծառայությանը ժամանակին չներկայանալու հարգելի պատճառներն ընդհանրացնել և այն

խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Ձինծառայողի կողմից առանց հարգելի պատճառների զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև ծառայությանը ժամանակին չներկայանալը...»:

Մինևույն զորամասի սահմաններում մեկ ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում գնալը 361 հոդվածով նախատեսված հանցակազմը չէ: Սակայն եթե զորամասի ստորաբաժանումները տեղակայված են առանձին, այդ դեպքում ստորաբաժանման տարածքն ինքնակամ թողնելը պետք է համարել զորամասն ինքնակամ թողնել: Ձորամասի տեղակայման հետ չհամընկնող ծառայության վայր ասելով հասկացվում է ցանկացած այլ վայր, որը նախատեսված է զինծառայողի կողմից սահմանված ժամանակի ընթացքում զինվորական ծառայության պարտականությունների կատարման համար, կամ որտեղ նա պետք է գտնվի իրամանով կամ գործուղման դեպքում:

Ծառայության վայր են հանդիսանում, մասնավորապես, տնտեսական աշխատանքների, ուսումնական, մշակութային, դաստիարակչական միջոցառումների անցկացման վայրերը, խմբի տեղաշարժման մեջ գտնվելը (գնացք, էշելոն, գործուղման վայրը և այլն):

Ծառայության վայր պետք է համարել նաև բուժման վայրը՝ անկախ այն բանից, թե դա զինվորական հոսպիտալ է, թե քաղաքացիական հիվանդանոց, քանի որ բուժման մեջ գտնվելը համարվում է զինվորական ծառայության պարտականությունների կատարում:

Ձորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը տևող հանցագործություն է: Այս կապակցությամբ կարևոր նշանակություն ունի տվյալ զինվորական հանցագործության սկզբի և ավարտի որոշումը: Ձորակոչի հիման վրա զինվորական ծառայություն անցնող զինծառայողների համար զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու սկզբնական



պահ է համարվում զորամասը կամ ծառայության վայրն առանց համապատասխան թույլտվության թողնելու պահից երեք օրը լրանալը: Ներկա ժամանակում իրավակիրառ գործունեության մեջ ժամկետը հաշվարկվում է անմիջապես այն ժամանակից (ժամից), որից զինծառայողը ինքնական թողել է զորամասը կամ ծառայության վայրը: Համաձայն ՀՀ քր. օր.-ի 361 հոդվածի՝ զորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելու ժամկետը հաշվարկվում է օրերով: Այս դեպքում ընդհանուր կանոնի հանաձայն ժամկետի ընթացքը սկսվում է իրավաբանորեն կարևոր իրադարձությանը հաջորդող օրվա զրո ժամից: Ձրակոչի հիման վրա զինվորական ծառայություն անցնող զինծառայողի այդպիսի արարքի ուրակման համար նշանակություն չունի՝ ինքնական թողնելը կատարվել է որոշակի պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակ, թե օրվա կարգացուցակով սահմանված անհատական կամ հանգստյան ժամին:

Ձրամասն ինքնական թողնելու, ինչպես նաև ծառայությանը ժամանակին չներկայանալու ավարտ կարելի է համարել այն ժամը, երբ զինծառայողը այս կամ այն ձևով դադարեցրել է հանցագործությունը: Ընդ որում, չի պահանջվում, որ զինծառայողը վերադառնա ծառայողական պարտականությունների իրական կատարմանը: Բացի զինծառայողի՝ կամովին զորամաս կամ ծառայության վայր վերադառնելուց, այս հանցագործության ավարտ պետք է համարել նաև հրամանատարական կազմի կամ ոստիկանության մարմինների կողմից նրա ձերբակալումը, ինչպես նաև զորամասն ինքնական թողնելու մասին հայտարարությամբ զինկոմիսարիատ կամ զինվորական դատախազություն զինծառայողի ներկայանալը: Այն դեպքում, երբ զինծառայողը ծառայությունից դուրս ինքնական գտնվելու ընթացքում կալանավորվում է այլ արարքի համար և թաքցնում է զինծառայության մեջ գտնվելու փաստը, քննարկվող հանցագործությունը շարունակվում է կատարվել:

նակվում է կատարվել:

Գործնականում երբեմն հարց է առաջանում, թե արդյոք զինծառայողի կողմից իր գտնվելու վայրի մասին հրամանատարությանը տեղեկացնելը կարելի է համարել զորամասն ինքնական թողնելու կամ ծառայությանը ժամանակին չներկայանալու ավարտ:

Մասնագիտական գրականության մեջ այս հարցի կապակցությամբ տարբեր տեսակետներ են արտահայտվում: Ն. Ա. Պետուխովան և Ա. Կ. Ուկոլովը գտնում են, որ այդպիսի հայտարարությունը կարող է դիտվել քննարկվող հանցագործության ավարտի պահ միայն այն դեպքում, երբ հրամանատարության կողմից զինծառայողին հրամայվում է որոշակի հստակ ժամկետում ներկայանալ ծառայության վայր: Բացի դրանից, հայտարարությունը կարող է դիտվել հանցագործության ավարտի պահ այն դեպքում, երբ կհաստատվի զորամաս ներկայանալու ժամանակի ձգձգման հարգելի պատճառ: Տվյալ դեպքում տեղեկացնելու պահից զորամասից բացակայելը կորցնում է ինքնականության հատկանիշը, քանի որ զինծառայողը գործում է հրամանատարության կողմից իրեն տրված հրահանգներով: Եթե նա արհամարհում է դրանք, ապա տեղեկացնելու պահը չի կարելի համարել տվյալ հանցագործության ընդհատում, քանի որ ինքնականության հատկանիշը պահպանվում է: Անհրաժեշտ է նաև նշել, որ տվյալ հանցագործության ավարտ կարելի է համարել այն պետական մարմիններին զինծառայողի դիմելը, որոնք իրավունք ունեն խուսափումը դադարեցնելու և զինծառայողին զորամաս հասցնելու միջոցներ ձեռնարկելու: Ձրամասից ինքնական բացակայության կամ ծառայությանը ժամանակին չներկայանալու մասին զեկույցը, հայտարարությունը հասարակական կազմակերպություններին չեն կարող համարվել հանցագործության ավարտի պահ:

ՀՀ քր. օր.-ի 361 հոդվածում բացակայում է վերապահումն այն մասին, թե որ

### **Քրեական իրավունք**

դեպքերում կարող է կատարվել ծառայությանը ժամանակին չներկայանալը: Այս կապակցությամբ մասնագիտական գրականությունում գոյություն ունի կարծիք, որ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող զինծառայողները կարող են ծառայությանը ժամանակին չներկայանալ միայն 33 քր. օր.-ի 361 հոդվածի 1-ին մասում հստակ նշված հանգամանքների դեպքում: Այս հանցակազմի համար ՌԴ քրեական օրենսգրքում տարբերակված մոտեցում է դրսևորվում պայմանագրով և զորակոչի հիման վրա ծառայություն անցնող զինծառայողների համար<sup>6</sup>: Որոշ քրեագետներ դրա տրամաբանությունն ու հիմնավորումը տեսնում են այն բանում, որ պայմանագիր կնքողի համար զինվորական ծառայությունը յուրահատուկ աշխատանք է, որը նա ընտրում է կամովին՝ ի տարբերություն ժամկետային պարտադիր զինծառայողի, որի համար զինվորական ծառայության անցնելը հայրենիքի առաջ իր բարոյական պարտքն է և տվյալ պետության քաղաքացու սահմանադրական պարտականությունը:

Անհրաժեշտ է նշել, որ մասնագիտական գրականության մեջ երկար ժամանակ գերիշխում էր այն տեսակետը, որ սպայական և ենթասպայական կազմի զինծառայողների համար, ի տարբերություն պարտադիր ժամկետային զինծառայողների, զորամասն ինքնակամ թողնելը ոչ թե զորամասի գտնվելու տարածքը թողնելն է, այլ զորամասի տեղաբաշխման բնակավայրի, հիմնարկության կամ հաստատության (կայազորի) տարածքը թողնելը, իսկ ծառայությանը ժամանակին չներկայանալը՝ արձակումից, արձակուրդից, գործուղումից կամ բժշկական հաստատությունից սահմանված ժամկետում այդ բնակավայր չժամանելն է<sup>7</sup>: Զինվորական ծառայությունն անձը անցնում է ոչ թե բնակավայրում, այլ զորամասում, հիմնարկությունում կամ հաստա-

տությունում, որտեղ նա կատարում է ծառայողական հատուկ պարտականություններ: Քննարկվող հոդվածով որակվող զինվորական ծառայությունից խուսափումը կատարվում է կամ զորամասի կամ ծառայության տեղակայման վայրն ինքնակամ թողնելու կամ էլ զորամասը կամ ծառայության վայրը առանց հարգելի պատճառների ժամանակին չներկայանալու եղանակով:

Որպես ծառայության ժամանակին չներկայանալ կարելի է համարել այն դեպքերը, երբ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող զինծառայողը, որը ապրում է զորամասի տարածքի սահմաններից դուրս գտնվող բնակարանում, առանց հարգելի պատճառների ժամանակին չի ներկայանում ծառայության՝ ավելի քան երեք օր տևողությամբ խուսափելով զինվորական ծառայության պարտականությունների կրումից: Վերջիվերջո պայմանագրով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների համար զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելու սկզբնական պահ է համարվում զորամասից կամ ծառայության վայրից կանոնակարգով սահմանված ծառայության ժամի ընթացքում առանց համապատասխան թույլտվության հեռանալը: Այդ զինծառայողների համար ծառայությանը ինքնակամ չներկայանալու սկզբնական պահ է համարվում օրվա կարգացուցակով սահմանված ծառայության ժամին չներկայանալը:

Գործնականում պատահում են քրեական օրենքի նորմի չարաշահման դեպքեր, երբ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող զինծառայողները, փաստացի խուսափելով զինծառայությունից, երեք օրվա մեջ մեկ անգամ ոչ երկարատև ժամանակով հայտնվում են ծառայության և կրկին անհետանում: Նրանց արարքում բացակայում է հանցակազմը, սակայն զինվորական ծառայության պարտականությունները փաստացի չեն կատարվում: Նման իրավիճակը վերացնելու համար զինծառայողը պետք է իրականում անցնի

ինչ-որ ֆունկցիոնալ պարտականությունների կատարմանը: Ենթադրվում է, որ եթե զորամասից անօրինական դուրս գտնվող զինծառայողը ժամանակավոր հայտնվում է զորամաս կամ ծառայության վայր առանց զինվորական ծառայության պարտականությունների կատարման անցնելու մտադրության և փաստացի չի անցնում դրանց կատարմանը, ինքնակամ բացակայության ժամկետի ընթացքը չի դադարեցվում<sup>6</sup>:

Այն դեպքերում, երբ զինծառայողի՝ զորամասից (ծառայության վայրից) անօրինական դուրս գտնվելու ընթացքում իրավասու հրամանատարը (պետը) հրաման է արձակում այդպիսի անձին զորամասի անձնակազմի ցուցակներից հանելու մասին, ինքնակամ բացակայության ժամկետը չի ընդհատվում, քանի որ նման հրամանի արձակման համար օրինական հիմքեր չկան: Ցավոք տվյալ պարզաբանման սահմաններից դուրս է մնում նման անօրինական հրամանի արձակման հարցը: Ենթադրում ենք, որ բոլոր հանցանշանների առկայության դեպքում նման արարքը պետք է որակել ԶԳ քր. օր.-ի 308 հոդվածով՝ որպես պաշտոնեական լիազորությունների չարաշահում:

Ինչ վերաբերում է դասալքության օբյեկտիվ հատկանիշներին, ապա այն սահմանվում է որպես զինվորական ծառայության պարտականություններից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրը լքել, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալ: Դասալքությունը առավել վտանգավորություն ներկայացնող զինվորական հանցագործություն է՝ ուղղված զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ, քանի որ զինծառայողը ամբողջությամբ խուսափում է զինվորական ծառայության պարտականությունների կատարումից:

Օբյեկտիվ կողմից դասալքությունը կարող է կատարվել գործողությամբ (զորամասից կամ ծառայության վայրից ինքնակամ հեռանալը) կամ անգործությամբ (ծա-

ռայության չներկայանալը): Դասալքություն գործելով՝ զինծառայողն անօրինական հեռանում է իր ծառայողական հարաբերությունների ոլորտից առանց երբևէ զինվորական ծառայության պարտականությունների կատարմանը վերադառնալու մտադրության:

Դասալքության սկզբնական պահ պետք է համարել ծառայությունից խուսափելու նպատակով զորամասից կամ ծառայության վայրից ինքնակամ հեռանալու կամ ծառայության ներկայանալու ժամկետի ավարտի պահը: Դասալքության կատարումից կանոնի հրաժարվելը հնարավոր է միայն մինչ զորամասից ինքնակամ հեռանալը կամ ծառայության ներկայանալու ժամկետի ավարտի պահը: Եթե դասալքություն գործած զինծառայողը որոշակի ժամանակ անց փոխում է իր մտադրությունը և որոշում է վերադառնալ ծառայության, ապա արարքը դիտվում է զղջումով ներկայանալ, այլ ոչ թե դասալքություն գործելուց կանոնի հրաժարվել:

Դասալքությունը տևող հանցագործություն է, որը կատարվում է (տևում է) ծառայությունից անօրինական դուրս գտնվելու ամբողջ ընթացքում:

Դասալքության դադարի պահ պետք է համարել այն ժամանակը, երբ զինծառայողը իր կամքով կդադարեցնի ծառայությունից դուրս անօրինական գտնվելը (կվերադառնա զորամաս, մեղայականով կներկայանա իրավապահպան մարմիններին, իր մասին հայտարարություն կտա զինկոմիսարիատ, պետական իշխանության մարմիններին և այլն), կամ էլ այդ հանցանքը կկասեցվի զինվորական հրամանատարության կամ իշխանության մարմինների կողմից: Դասալքության ավարտ է համարվում նաև զորակոչային տարիքի լրանալու օրը, քանի որ «Ձինապարտության մասին» ԶԳ օրենքի 11 հոդվածի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները:

ԶԳ գործող քրեական օրենսգրքի 362

### **Քրեական իրավունք**

հողվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված է նաև այս հանցագործության ծանրացնող հանգամանքները:

Ի տարբերություն նախկին քրեական օրենսգրքի, գործող ՀՀ քր. օր.-ի 362 հողվածի 2-րդ մասում հատուկ քրեական պատասխանատվություն է նախատեսված զենքով դասալքություն գործելու համար: Անկասկած նման ծանրացնող հանգամանքի դեպքում դասալքությունը առանձնանում է հասարակական բարձր վտանգավորությամբ, որի համար նախատեսված է ավելի խիստ պատիժ: Այստեղ խոսքն այն զենքի մասին է, որին զինծառայողը տիրապետում է ծառայողական օրինական պարտականությունների ուժով: Այդպիսի զենքերի թվին դասվում են ատրճանակները, ավտոմատները, զնդացիրները, սառը զենքի տարբեր տեսակները (սվին-դանակները և այլն), այլ զենքերը, որոնք ընդգրկված են ՀՀ ՁՈՒ սպառազինությունում: Միաժամանակ նորագույն մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տեսակետներ, որ պայթուցիչ նյութերը, որպես կանոն, օգտագործվում են պայթուցիչ սարքավորումներում, որի հետևանքով չկա անհրաժեշտություն դրանք ներառելու քննարկվող հանցագործության առարկաների մեջ<sup>9</sup>: Սակայն հակված չենք նման մոտեցմանը: Պայթուցիչ նյութերը՝ որպես հանցագործության առարկա, պահպանում են իրենց յուրահատկությունը, քանի որ կարող են գոյություն ունենալ պայթուցիչ սարքավորումներից անջատ (օրինակ՝ տեղափոխման կամ պահպանման ժամանակ): Գտնում ենք, որ զինամթերքով, պայթուցիչ նյութերով, պայթուցիչ սարքավորումներով, ռազմական տեխնիկայով դասալքությունը պակաս վտանգավորություն չի ներկայացնում, քան զենքով դասալքությունը: Այս առումով առավել ամբողջական և նպատակահարմար կլինի ՀՀ քր. օր.-ի 362 հողվածի 2-րդ մասը շարադրել նոր

խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դասալքությունը, որը կատարվել է ծառայության համար վստահված զենքով, զինամթերքով, պայթուցիչ նյութերով և սարքավորումներով...»:

Դասալքությունը կհամարվի մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրա կատարմանը մասնակցել են երկու և ավելի անձինք, ովքեր նախապես համաձայնության են եկել հանցագործության համատեղ կատարման մասին: Այն դեպքում, երբ գործում չի հավաստվում, որ միաժամանակ դասալքություն կատարած անձինք գործել են նախնական համաձայնությամբ, ապա ՀՀ քր. օր.-ի 362 հողվածի 2-րդ մասով որակման հիմքեր չկան: Դասալքությունը համարվում է խմբի կողմից կատարված, եթե դրանում մասնակցել է դասալքության կատարման համար նախապես պայմանավորված անձանց խումբ:

Ծանրացնող հանգամանքներով դասալքության հանցակազմի հետազոտման ժամանակ հարցեր է առաջանում, թե հնարավոր է արդյոք զորամասը կամ ծառայության վայրը զենքով կամ մի խումբ անձանց կողմից կամ կազմակերպված խմբով ինքնական լքելը, և անհրաժեշտ է արդյոք ՀՀ քր. օր.-ի 361 հողվածում նման ծանրացնող հանգամանքներ նախատեսել: Մեր կարծիքով, զորամասը կամ ծառայության վայրը զենքով ինքնական թողնելը իրենից հասարակական մեծ վտանգավորություն է ներկայացնում: Այս կապակցությամբ անհրաժեշտ է ՀՀ քր. օր.-ի 361 հողվածը լրացնել ծանրացնող հանգամանքներ նախատեսող նոր մասով և այն խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Զինծառայողի կողմից զորամասը կամ ծառայության վայրը զենքով, զինամթերքով, պայթուցիչ նյութերով և սարքավորումներով ինքնական թողնելը, ինչպես նաև ժամանակին ծառայության չներկայանալը...»:

Ջորամասը կամ ծառայության վայրը ինքնական թողնելը մի խումբ անձանց

կողմից պրակտիկայում շատ հազվադեպ է պատահում: Որպես կանոն նման դեպքերը հիմնականում ոչ կանոնադրական հարաբերությունների հետևանք են: Այս իմաստով անհրաժեշտ է ամենօրյա հետևողական աշխատանք տանել անձնակազմի շրջանում կայուն բարոյահոգեբանական մթնոլորտ ստեղծելու ուղղությամբ: Քննարկվող հանցագործությունների նվազեցման համար հարկավոր է բացահայտել

դրանց դրդապատճառները և արդյունավետ միջոցառումներ իրականացնել դրանք կանխելու համար, ինչն անկասկած կհանգեցնի զինված ուժերի մարտունակության բարձրացմանը:

Կարծում ենք, որ մեր կողմից առաջարկված մոտեցումները նույնպես կարող են նպաստել այս հանցագործությունների կանխման և դրանց դեմ պայքարի արդյունավետությանը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ օրենքը զինվորական ծառայություն անցնելու մասին, հոդված 1, 3-րդ կետ (ՀՀ ԱԺ ընդունել է 2002 թ. հուլիսի 3-ին):

<sup>2</sup> ՀՀ ԱԺ ընդունել է 1996թ. դեկտեմբերի 3-ին (245-ից 251 հոդվածներ):

<sup>3</sup> Տե՛ս Постановление Пленума Верховного Суда РФ, N 3, от 3 апреля 2008 г. «О практике рассмотрения судами уголовных дел об уклонении от призыва на военную службу и от прохождения военной или альтернативной гражданской службы» // Справочно-правовая система, «Гарант», էջ 4:

<sup>4</sup> Տե՛ս Курс уголовного права. Особенная часть: Учебник / Под. ред. Г. Н. Борзенкова и В. В. Комиссарова. М., 2002, Т. 5. էջ 307; Комментарий к Уголовному кодексу РФ / Под. ред. В. М. Лебедева. М. 2004, էջ 831:

<sup>5</sup> Տե՛ս Преступления против военной службы: Научно-практический комментарий Уголовного кодекса РФ / Под. ред. А. А. Тер-Акопова. М., 1999, էջ 104:

<sup>6</sup> Տե՛ս Уголовный кодекс РФ, (Принят Государственной думой РФ 24 мая 1996 года) статья 337.

<sup>7</sup> Տե՛ս Чхиквадзе В. М., Советское уголовное право. М., 1948, էջ 299, Воинские преступления: Учебник М., 1963, էջ 134, Закон об уголовной ответственности за воинские преступления: Комментарий. М., 1969, էջ 75:

<sup>8</sup> Տե՛ս Кунев А. А. — Вопросы квалификации уклонений от военной службы военнослужащих проходящих военную службу по контракту // Право в вооруженных силах. 2007, էջ 123:

<sup>9</sup> Տե՛ս Шарапов С. П. Дезертирство с оружием: основания криминализации, вопросы квалификации и проблемы законодательной конструкции // Законы России: опыт, анализ, практика. 2006, N 11, էջ 43:

**ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ****THE CRIMINAL LAW FEATURES OF ABSENCE WITHOUT OFFICIAL LEAVE AND DESERTION****Karo BRUTYAN**

*PhD student in philosophy, sociology and law institute of NAS RA, officer at legal department of MoD RA, senior lieutenant*

---

In this article “absence without official leave from the unit or the place of service” and “desertion” corpus delictis’ of specialities are being explored. Modernity of the discussed subject is conditioned by the fact that mentioned corpus delictis are of high riskiness and of widespread nature in the range of military crimes. Legal shortages of the above discussed delictis were thoroughly studied and revealed by the author, relevant proposals on the changes in corresponding articles of the current criminal code of the RA were introduced.

Specifically, there is a suggestion to generalize and edit the respectable reasons for not reporting to service on time stated in the 1st section of the Article 361 of the Criminal Code of RA to the following content: “Absence without official leave from the unit or place of service, as well as not reporting to the service on time without respectable reasons by the serviceman...”.

The author also suggests to compose the 2nd section of Article 362 with the new edition by the following content: “Desertion which was done by weapons, ammunition, explosives and equipments entrusted for the service...”.

Viewpoints were expressed about detecting motivations of the criminal acts and exercising effective preventive measures which will bring to the development of Armed Forces combat readiness.

---

**ՄԵՂԱԴՐՅԱԼԻ՝ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՍ ԴԱՏԻՑ ԹԱՔՆՎԵԼՈՒ  
ԿԱՍ ԱՅԼ ՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ՆՐԱ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ՊԱՐԶՎԱԾ  
ՉԼԻՆԵԼՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ  
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՀԻՄՔ**

**Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

*ՀՀ ոստիկանության  
սկզբնախաղի ասպիրանտ*

**Օ**րինականության սկզբունքից բխող պահանջ է, որ քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կայացրած ցանկացած որոշում հիմնված լինի օրենքի վրա և բխի դրա պահանջներից: Ասվածը վերաբերվում է նաև քրեական գործի քննության կասեցմանը, քանի որ դա թույլատրվում է միայն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, որոնցից է նաև քննությունից կամ դատից մեղադրյալի թաքնվելու կամ այլ պատճառներով նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հանգամանքը (ՀՀ քր. դատ. օր.-ի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ):

Վ.Ս. Բիկովի դիպուկ բնորոշմամբ՝ «քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը նշված դատավարական ինստիտուտում զբաղեցնում են կենտրոնական տեղ և մեծապես կանխորոշում են դրա էությունը»<sup>1</sup>:

Հաշվի առնելով գործի քննության կասեցման հիմքերի բացառիկ նշանակությունը դատավարական այս ինստիտուտի համար՝ օրենսդիրը այն ենթարկել է մանրամասն իրավական կարգավորման (ՀՀ քր. դատ. օր.-ի 31 հոդված):

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» «հիմք» եզրույթը պարզաբանվում է որպես որևէ բանի սկզբնաղբյուր, ակունք, ելակետ<sup>2</sup>: Իսկ ինչ վերաբերվում է այդ հասկացության իրավաբանական բնութագրին, նշենք, որ իրավաբանական գրականության մեջ այն բնորոշվում է տարբեր կերպ: Այսպես, Ն.Ա. Վլասովան նախնական քննության կասեցման հիմքերը բնորոշում է որպես օրենքով սահմանված այն դեպքերը, երբ քրեական գործով վարույթը կարող է կասեցվել<sup>3</sup>: Կարծում ենք, որ կասեցման հիմքին տրված այս բնորոշմանը չի կարելի համաձայնել, քանի որ դրանից չի հետևում, թե օրենքով սահմանված այդ հանգամանքները ինչի հիման վրա պետք է հաստատվեն:

Ա.Ս.Շահինյանը նախնական քննության կասեցման հիմքերը բնորոշում է որպես քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հավաստի փաստական տվյալների (ապացույցների) ամբողջություն, որոնք պայմանավորում են քրեական դատավարությունում մեղադրյալի մասնակցության անհնարինությունը<sup>4</sup>: Նշված բնորոշման թերութունն էլ այն է, որ, համաձայն օրենքի, քրեական գործի քննությունը կարելի է կասեցնել ոչ միայն մեղադրյալի, այլ նաև որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի վերաբերյալ, այսինքն այն անձի, որը դեռևս չունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Ուստի կասեցման հիմքերին տրված բնորոշումը չի կարելի նեղացնել և տարածել միայն մեղադրյալի նկատմամբ:

Ա.Ս. Պոպովի կարծիքով, նախնական քննության կասեցման հիմքերը քրեադատավարական օրենսգրքում ամրագրված փաստական տվյալներ են, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են շարունակելու և ավարտելու նախնական քննությունը<sup>5</sup>:

Ա.Ս. Պոպովի կարծիքով, նախնական քննության կասեցման հիմքերը քրեադատավարական օրենսգրքում ամրագրված փաստական տվյալներ են, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են շարունակելու և ավարտելու նախնական քննությունը<sup>5</sup>:

Ա.Ս. Պոպովի կարծիքով, նախնական քննության կասեցման հիմքերը քրեադատավարական օրենսգրքում ամրագրված փաստական տվյալներ են, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են շարունակելու և ավարտելու նախնական քննությունը<sup>5</sup>:

Ա.Ս. Պոպովի կարծիքով, նախնական քննության կասեցման հիմքերը քրեադատավարական օրենսգրքում ամրագրված փաստական տվյալներ են, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են շարունակելու և ավարտելու նախնական քննությունը<sup>5</sup>:

Ա.Ս. Պոպովի կարծիքով, նախնական քննության կասեցման հիմքերը քրեադատավարական օրենսգրքում ամրագրված փաստական տվյալներ են, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են շարունակելու և ավարտելու նախնական քննությունը<sup>5</sup>:

Կասեցման հիմքերին ավելի ընդարձակ բնորոշում է տալիս Օ.Ն. Սկոմորոխովը: Նրա կարծիքով, նախնական քննության և դատական քննության կասեցման հիմքերը

---

### **ՔՐԵԱՎԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

քրեադատավարական օրենքում ամրագրված հավաստի, իրական փաստական հանգամանքներ են, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են շարունակելու և ավարտելու նախնական կամ դատական քննությունը:

Չնայած տեսության մեջ կասեցման հիմքերի սահմանման վերաբերյալ առկա տարբեր մոտեցումներին՝ բոլոր հեղինակները առանց բացառության նշում են, որ գործի քննության կասեցումը առաջին հերթին պայմանավորված է ինչ-որ հանգամանքի (փաստի) առաջացմամբ, որը պետք է հաստատված լինի գործի նյութերով և խոչընդոտի քննության հետագա շարժին:

Քրեական գործի քննության կասեցման հիմքերին տրված նշված սահմանումների հիման վրա՝ մենք առաջարկում ենք կասեցման հիմքերի հետևյալ բնորոշումը. **քրեական գործի քննության կասեցման հիմք են ապացուցման ընթացքում օրենքով սահմանված (ՀՀ քր. դատ. օր.-ի 104 հոդվածի 1-ին մաս) աղբյուրներից ստացված հավաստի, իրական փաստական տվյալները, որոնք հաստատում են տվյալ պահին քրեական գործի քննությունը շարունակելու անհնարինությունը:**

Ինչպես արդեն նշեցինք, քրեական գործի քննության կասեցման հիմք է նաև մեղադրյալի քննությունից կամ դատից թաքնվելու կամ այլ պատճառներով նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հանգամանքը:

Քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ կատարած անձինք դիմում են փախուստի հանցագործություն կատարելուց անմիջապես հետո՝ մինչև վարույթն իրականացնող մարմինների՝ քրեական գործ հարուցելու համար տեղեկություններ ստանալը: Պրակտիկայում առկա են նաև դեպքեր, երբ մեղադրյալը թաքնվում է

քննությունից մինչև նրա նկատմամբ կալանքի կամ խափանման այլ միջոցի ընտրումը կամ այն դեպքում, երբ դատարանը մերժում է թույլատրել վերջինիս նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը, կամ երբ դատարանը մեղադրյալի կամ նրա պաշտպանի բողոքի հիման վրա փոխում է կալանքը այլ խափանման միջոցով:

Կասեցված քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ նախնական քննության կասեցման հիմքերի շարքում այս հիմքով կասեցված քրեական գործերը մեծ թիվ են կազմում: Որպես ասվածի ապացույց ներկայացնենք վիճակագրական տվյալները: Այսպես, 2000թ. այդ թիվը կազմել է 929, 2001-ին՝ 781, 2002-ին՝ 1160, 2003-ին՝ 1502, 2004-ին՝ 1085, 2005-ին՝ 866, 2006-ին՝ 756, 2007-ին՝ 704, 2008-ին՝ 730, 2009-ին՝ 894: 2000թ.-ից մինչև 2009թ.-ը ընկած ժամանակահատվածը նշված հիմքով կասեցված քրեական գործերի թիվը ընդհանուր առմամբ կազմում է 9407: Հայաստանի Հանրապետության տարածքում 2000թ.-ից մինչև 2009թ. կասեցված քրեական գործերի քանակը ըստ կասեցման առանձին հիմքերի առավել մանրամասն ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

Չնայած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում մեղադրյալի քննությունից կամ դատից թաքնվելու կամ այլ պատճառներով նրա գտնվելու վայրը պարզված չլինելու հանգամանքը նախատեսված է որպես վարույթի կասեցման մեկ ընդհանուր հիմք, սակայն այն պարունակում է հարաբերականորեն ինքնուրույն երկու հիմքեր.

1) երբ մեղադրյալը թաքնվում է քննությունից կամ դատից,

2) երբ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ:

Քրեական գործի քննության կասեցման ինքնուրույն հանգամանք է *մեղադրյալի քննությունից կամ դատից թաքնվելը*: Կարծում ենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ում «թաքն-



Աղյուսակ 1

Տարի	Ըստ կասեցման բոլոր հիմքերի	Ըստ ՀՀ ՔԴՕ 31 հ. 1ձ. 1կ.	Ըստ ՀՀ ՔԴՕ 31 հ. 1ձ. 2կ.	Ըստ ՀՀ ՔԴՕ 31 հ. 1ձ. 3կ.	Ըստ ՀՀ ՔԴՕ 31 հ. 1ձ. 4կ.	Ըստ ՀՀ ՔԴՕ 31 հ. 1ձ. 5կ.	Ըստ ՀՀ ՔԴՕ 31 հ. 1ձ. 6կ.
2000	2349	1406	929	1	10	3	0
2001	2171	1382	781	0	9	0	0
2002	2551	1367	1160	0	18	6	0
2003	2824	1295	1502	0	21	6	0
2004	2162	1054	1085	0	21	2	0
2005	1930	1045	866	0	14	5	0
2006	2526	1747	756	0	13	10	0
2007	2424	1694	704	0	15	13	0
2008	2973	2225	730	0	11	7	0
2009	2779	1868	894	0	10	7	0

վել» եզրույթի օգտագործումը տեղին չէ, և այն արհեստականորեն նեղացնում է մեղադրյալի քննությանը չներկայանալու պատճառները: Պատահական չէ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը, ամրագրելով անձին քեակվան պատասխանատվությունից ազատելու հնարավորություն վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով, օգտագործում է, ոչ թե «թաքնվել», այլ «խուսափել» հասկացությունը: Այսպես, համաձայն նշված հոդվածի 4-րդ մասի՝ «վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը **խուսափում է քննությունից կամ դատից**»:

Է.Ֆ. Չակիրովան, քննարկելով «խուսափել» և «թաքնվել» հասկացությունների հարաբերակցությունը, նշում է, որ «խուսափել» հասկացությունը ավելի լայն է և ընդգրկում է նաև «թաքնվելը»: Թաքնվելը անհրաժեշտ է դիտել որպես խուսափելու ակտիվ ձև, որից էլ հետևում է այն հիմնավորումը, որ պետք է տարբերակել պասիվ խուսափելը, որպիսին է «քննիչին չներկայանալը»<sup>8</sup>:

Վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում պետք է օգտագործել ոչ թե «թաքնվել», այլ «խուսափել» եզրը:

Հարց է առաջանում, թե ինչպես պետք է մեկնաբանել «քննությունից կամ դատից խուսափելը»: Իրավաբանական գրականության մեջ հանդիպում ենք «քննությունից կամ դատից անձի խուսափելը» հաս-

կացության մի քանի բնորոշումների: Այսպես, Պ. Մ. Դավիդովի և Դ. Յու. Միրսկու կարծիքով, քննությունից կամ դատից խուսափող է համարվում այն անձը, որը ձերբակալումից հետո փախել է, խախտել է իր նկատմամբ որպես խափանման միջաց ընտրված չհեռանալու մասին ստորագրությունը, կամ իմանալով, որ կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, դիտավորությամբ փոխել է իր բնակության վայրը, անունը, ազգանունը և դրանով բարդացրել իրեն հայտնաբերելու գործը<sup>9</sup>:

Ա.Յու. Դուբինսկին, հստակեցնելով քննարկվող հասկացությունը, գտնում է, որ անձը քննությունից և դատից թաքնված է համարվում այն դեպքում, երբ նա գիտակցում է, որ կատարված հանցագործության համար ենթակա է քրեական պատասխանատվության, այսինքն՝ այդ կապակցությամբ քննություն է իրականացվում, և ձգտելով խուսափել քրեական պատասխանատվությունից՝ ձեռնարկում է ակտիվ միջոցներ (թաքնվել, բնակության վայրը փոխել, կեղծ փաստաթղթեր պատրաստել և այլն), որպեսզի չենթարկվի քննության<sup>10</sup>:

Ըստ Է.Ֆ. Չակիրովայի, նախնական քննության մարմնից թաքնվելու մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ կասկածյալը կամ մեղադրյալը գիտակցում է, որ ձեռնարկում է ակտիվ գործողություններ՝ ուղղված այն բանին, որ իրեն չգտնեն: Անձը պետք է գիտակցի, որ իրեն փնտրում

### **ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

են հանցագործություն կատարելու համար, բայց նա ցանկանում է խուսափել քրեական պատասխանատվությունից, ձեռնարկում է միջոցներ, որպեսզի իր գտնվելու վայրը չպարզվի: Եթե անձը կարծում է (ենթադրում է), որ իր մասնակցությունը հանցագործության կատարմանը չի պարզվել, և փոխում է իր բնակության վայրը, չի կարելի խոսել վերջինիս քննությունից թաքնվելու մասին“:

Վերոգրյալի հիման վրա կարելի է առանձնացնել այն հատկանիշները, որոնց առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է ստեղծված իրավիճակը գնահատի որպես մեղադրյալի՝ քննությունից խուսափել և կասեցնի քրեական գործի քննությունը.

1) վարույթն իրականացնող մարմնին պետք է հայտնի լինի քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձը,

2) գործով հավաքված ապացույցների բավարար համակցության հիման վրա որոշում է կայացվել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին,

3) անձը պետք է գիտակցի, որ իրեն փնտրում են քրեական օրենքով չթույլատրված արարք կատարելու համար, և իրականացնի դիտավորյալ գործողություններ կամ դրսևորում է անգործություն քրեական պատասխանատվությունից խուսափելու համար:

Այսպիսով, քննությունից կամ դատից մեղադրյալի թաքնվելու հիմքով քրեական գործի քննությունը թույլատրվում է կասեցնել, երբ կա հարուցված քրեական գործ, հայտնի է նաև քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած անձը, գործով հավաքված ապացույցների բավարար համակցության հիման վրա որոշում է կայացվել այդ անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն վերջինս թաքնվում է քննությունից, այսինքն չարամտորեն խուսափում է քննության ներ-

կայանալուց: Օրինակ՝ երբ վարույթն իրականացնող մարմնի կանչով չի ներկայանում առանց հարգելի պատճառների կամ գործի քննությանը մասնակցելուց խուսափելու նպատակով առանց վարույթն իրականացնող մարմնին տեղյակ պահելու փոխում է իր բնակության վայրը:

Ընդ որում, մեղադրյալի՝ քննությունից կամ դատից թաքնվելու հանգամանքը պետք է հաստատված լինի որոշակի փաստական տվյալներով: Որպես այդպիսին կարող են հանդիսանալ կատարված քննչական գործողությունների արձանագրությունները (օրինակ՝ մեղադրյալի հարազատների հարցաքննության արձանագրությունները, խուզարկության, առգրավման արձանագրությունները), հետաքննության մարմնի հաղորդումները, տեղեկանքները, այլ փաստաթղթերը և նյութերը: Պետք է բացառված լինեն նաև դժբախտ դեպքերը, մահը, կալանավորումը այլ քրեական գործով և այլ հանգամանքներ:

Միայն նշված հանգամանքները պարզելուց հետո վարույթն իրականացնող մարմինը, ստանալով հավաստի տեղեկություններ մեղադրյալի՝ քննությունից կամ դատից թաքնվելու վերաբերյալ, իրավունք ունի կասեցնելու քրեական գործի քննությունը և հայտարարելու հետախուզում:

Քրեական գործի քննությունը թույլատրվում է կասեցնել նաև այն դեպքում, երբ *այլ պատճառներով չի պարզվել մեղադրյալի գտնվելու վայրը*: Նախատեսելով նշված դեպքում գործի քննության կասեցման հնարավորություն՝ օրենսդիրը որևէ ձևով չի սահմանում, թե ինչ պետք է հասկանալ «այլ պատճառ» ասելով: Իրավաբանական գրականության մեջ այլ պատճառներ ասելով սովորաբար հասկացվում է այնպիսի հանգամանքներ, երբ մեղադրյալը, տեղյակ չլինելով, որ իր նկատմամբ հարուցվել է քրեական գործ, փոխում է իր բնակության վայրը, մեկնում է երկարատև գործուղման, այլ վայր՝ հանգստանալու և այլն: Նշված դեպքում մեղադրյալը թաքնվելու նպա-

տակ չի հետապնդում, չի իրականացնում դիտավորյալ գործողություններ՝ ուղղված քրեական գործի քննությանը խոչընդոտելուն<sup>12</sup>: Օրինակ՝ անձը, կատարելով հանցագործություն, համոզված է, որ ապագայում կամ ընդհանրապես քրեական հետապնդման մարմիններին իր հանցավոր գործունեության մասին ոչինչ հայտնի չի լինի, և նպատակ չհետապնդելով քննությունից թաքցնել՝ փոխում է իր բնակության վայրը, մեկնում է երկարատև գործունեության և այլն:

Քրեական գործի քննությունը մեղադրյալի գտնվելու վայրի այլ պատճառով պարզված չլինելու հիմքով թույլատրվում է կասեցնել, երբ կա հարուցված քրեական գործ, գործով հավաքված ապացույցների հիման վրա հնարավոր է դարձել պարզել քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարած անձին, և կայացվել է որոշում նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին, սակայն ինչ-ինչ պատճառներով հնարավոր չի եղել պարզել նրա գտնվելու վայրը:

Վերը նշված երկու իրավիճակների առանձնացումը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, քանի որ դրանցից յուրաքանչյուրի հիման վրա քրեական գործի քննության կասեցումը **կարող է առաջացնել քրեաիրավական և քրեադատավարական տարբեր հետևանքներ**<sup>13</sup>: Այսպես, երբ քրեական գործի քննությունը կասեցվում է այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալը թաքցնում է քննությունից կամ դատից, ապա այս դեպքում գործի քննությունը կասեցնելուց հետո միաժամանակ կասեցվում է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, քանի որ համաձայն քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի՝ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, երբ անձը խուսափում է քննությունից կամ դատից:

Իսկ գործի քննությունը մեղադրյալի գտնվելու վայրը այլ պատճառով պարզված չլինելու հիմքով կասեցնելու դեպքում

միաժամանակ չի կասեցվում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, քանի որ մեղադրյալի գտնվելու վայրի չպարզելը չի կարող մեկնաբանվել, թե մեղադրյալը թաքցնում է քննությունից, և հետևաբար չի կարող հիմք հանդիսանալ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը կասեցնելու համար:

Մեղադրյալի՝ քննությունից խուսափելու հանգամանքը ունի նաև կարևոր **քրեադատավարական նշանակություն**: Նախ՝ դա կարող է հիմք հանդիսանալ մեղադրյալի նկատմամբ ավելի խիստ խափանման միջոց կիրառելու համար, երկրորդ՝ գրավի ձևով խափանման միջոց կիրառված լինելու դեպքում այն կարող է վերածվել պետության եկամուտի:

Վերը նշված հիմնավորումից ելնելով՝ **առաջարկում ենք քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նախատեսված քրեական գործի քննության կասեցման հիմքը առանձնացնել երկու ինքնուրույն հիմքերի**:

Ի տարբերություն գործող ՀՀ քր. դատ. օր-ի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) նշված հիմքով քրեական գործի քննության կասեցման հնարավորություն է նախատեսում նաև կասկածյալի նկատմամբ: Համաձայն նախագծի 189 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը պատճառաբանված որոշմամբ կասեցնում է քրեական վարույթը, եթե կասկածյալը կամ մեղադրյալը թաքցնել է քննությունից, կամ նրա գտնվելու վայրն անհայտ է:

Կասկածյալի նկատմամբ գործի քննության կասեցման հնարավորություն նախատեսում է նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքը: Այսպես, 29.03.2002թ. «ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Դաշնային օրենքով թույլատրվեց 208 հոդվածի 1-ին մասի 2,3,4 կետերով նախատեսված

### **Քրեական դատավարություն**

հիմքերով վարույթը կասեցնել նաև կասկածյալի նկատմամբ:

Կասկածյալի նկատմամբ քրեական գործի քննության կասեցման հնարավորության նախատեսմանը դեմ են արտահայտվել մի շարք դատավարագետներ<sup>14</sup>: Այսպես, Վ.Ս. Բիկիովի և Ա.Ս. Պոպովի կարծիքով, չպետք է թույլատրվի քրեական գործով վարույթի կասեցման հնարավորություն կասկածյալի նկատմամբ, քանի որ կասկածյալը քրեական դատավարության ժամանակավոր մասնակից է:

Այս տեսակետը չի կիսում Ա.Ա. Նեչաևը: Այսպես, ըստ նրա՝ նախնական քննության կասեցումը նախատեսող նորմերի տարածումը կասկածյալի նկատմամբ տրամաբանական է: Օրենսդրի որոշումը, որ հնարավոր է քննության կասեցում կասկածյալի վերաբերյալ, պայմանավորված է այն հանգամանքով, որ վարույթի կասեցման ինստիտուտի գործողությունը տարածվում է նաև հետաքննության վարույթի նկատմամբ: Հետաքննության վարույթի ընթացքում մեղադրյալը, ինչպես հայտնի է, որպես դատավարության մասնակից հայտնվում է միայն դրա ավարտից հետո և հատկապես մեղադրական ակտի կայացման ժամանակ (ՌԴ քր. դատ. օր.-ի 225 հոդված): Ակնհայտ է, որ նշված դեպքում օրենսդրի որոշումը արդարացված է, քանի որ ներկայումս հնարավոր է հետաքննության վարույթի ընթացքում ՌԴ քր. դատ. օր.-ի 208 հոդվածի 1-ին մասի 2-4 կետերով նախատեսված հիմքերով գործի կասեցում կասկածյալի նկատմամբ<sup>15</sup>:

Մեր կարծիքով, նախագծի վերը նշված դրույթը վիճելի է, քանի որ կասկածյալը քրեական դատավարության ժամանակավոր մասնակից է: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի 62-րդ հոդվածի 1-ին մասի՝ կասկածյալ է այն անձը, որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով, և որի նկատմամբ մինչև մեղադ-

րանք առաջադրելը փախսանման միջոց ընտրելու մասին որոշում է կայացվել:

Քրեական հետապնդման մարմինը իրավունք չունի կասկածյալի վիճակում ձերբակալվածին պահել 72 ժամից ավելի, իսկ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս ոչ ավելի, քան 7 օր խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից (ՀՀ քր. դատ. օր.-ի 61 հոդվածի 2-րդ մաս):

Նշված ժամկետները լրանալիս քրեական հետապնդման մարմինը պարտավոր է կասկածյալին ազատել արգելանքից կամ վերացնել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցը կամ որոշում ընդունել նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Նշված դատավարական նորմերը վկայում են այն մասին, որ կասկածյալը քրեական դատավարության այն մասնակիցն է, որի դատավարական վիճակը բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով: Նախ, դատավարության այս սուբյեկտը հանդես է գալիս միայն քրեական դատավարության մեկ՝ նախնական քննության փուլում, երրկրորդ, ժամկետը, որի ընթացքում անձը կարող է գտնվել կասկածյալի վիճակում և պահվել անազատության մեջ, չի կարող գերազանց 72 ժամ, իսկ անազատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս ոչ ավելի քան 7 օր խափանման միջոց ընտրելու մասին որոշումը նրան հայտարարելու պահից, երրորդ, նշված ժամկետի ավարտից հետո անձը դադարում է կասկածյալ լինելուց, այսինքն քրեական դատավարությանը շարունակում է մասնակցել կամ վկայի, կամ մեղադրյալի կարգավիճակով, եթե որոշում է կայացվել նրան որպես մեղադրյալ ներգրավելու մասին<sup>16</sup>:

Վորոգրյալի հիման վրա էլ կարծում ենք, որ գործող քր. դատ. օր.-ի որդեգրած մոտեցումը ավելի ճիշտ է, և առաջարկում ենք նախագծի տեքստից հանել «կասկածյալ» բառը:

Այս հիմքով գործի քննությունը կարող է կասեցնել նաև դատարանը: Կասեցման որոշում դատարանը կարող կայացնել ինչպես դատական քննության նախապատրաստման, այնպես էլ դատական քննության ընթացքում: Այսպես, համաձայն քր. դատ. օր.-ի 310 հոդվածի 2-րդ մասի՝ «եթե ամբաստանյալը թաքնվել է ... դատարանն այդ ամբաստանյալի նկատմամբ կասեցնում է գործի վարույթը մինչև նրան հայտնաբերելը ... և քննությունը շարունակում է մնացած ամբաստանյալների նկատմամբ: Եթե անջատ քննությունը դժվարացնում է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, դատարանը կասեցնում է գործի ամբողջ վարույթը»: Իսկ նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ դատարանն իրավունք ունի թաքնվող ամբաստանյալի հետախուզում հայտարարել:

Քր. դատ. օր.-ը չի կարգավորել այն հարցը, թե քրեական գործի քննությունը կասեցնելուց հետո այն մնում է դատարանի վարույթում, թե դատարանը այն հանձնում է վարույթն իրականացնող մարմիններին անհրաժեշտ գործողություններ իրականացնելու՝ նպատակ ունենալով հայտնաբերելու դատից թաքնվող ամբաստանյալին (մեղադրյալին):

Մենք գտնում ենք, որ նպատակահարմար է օրենսդրորեն ամրագրել, որ *եթե դատարանը դատական քննության նախապատրաստության կամ դատական քննության ընթացքում պարզում է, որ ամբաստանյալը (մեղադրյալը) թաքնվում է դատից, ապա իր որոշմամբ քրեական գործը վերադարձնում է դատախազին՝ միաժամանակ կայացնելով որոշում վերջինիս նկատմամբ կալանքի ձևով խափանման միջոց ընտրելու մասին:*

Այսպիսով, արված վերլուծության հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. *քրեական գործի քննության կասեցման հիմք են ապացուցման ընթացքում օրենքով սահմանված (ՀՀ քր. դատ. օր.-ի 104 հոդվածի 1-ին մաս) աղբյուրներից ստացված հավաստի, իրական փաստական տվյալները, որոնք հաստատում են տվյալ պահին քրեական գործի քննությունը շարունակելու անհնարինությունը:*

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված են քրեական գործի քննության կասեցման հարաբերականորեն ինքնուրույն երկու հիմքեր՝ ա) երբ մեղադրյալը խուսափում է քննությունից կամ դատից, բ) երբ այլ պատճառներով չի պարզվել մեղադրյալի գտնվելու վայրը:

3. Նշված երկու հիմքերի առանձնացումը ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական կարևոր նշանակություն, քանի որ նշված երկու իրավիճակները առաջացնում են յուրահատուկ քրեաիրավական և քրեադատավարական հետևանքներ:

4. Նշված հիմքով քրեական գործի քննության կասեցում թույլատրել միայն մեղադրյալի նկատմամբ:

5. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել նորմ՝ հետևյալ բովանդակությամբ. *եթե դատարանը դատական քննության նախապատրաստության կամ դատական քննության ընթացքում պարզում է, որ ամբաստանյալը (մեղադրյալը) թաքնվում է դատից, ապա իր որոշմամբ քրեական գործը վերադարձնում է դատախազին՝ միաժամանակ կայացնելով որոշում վերջինիս նկատմամբ կալանքի ձևով խափանման միջոց ընտրելու մասին:*

<sup>1</sup> Ст'я Быков В.М. Основания приостановления предварительного следствия по УПК // Государство и право, 2004, N 5, էջ 106:

<sup>2</sup> Ст'я ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան. Երևան, 1974, հատոր

երրորդ, էջ 351:

<sup>3</sup> Ст'я Власова Н.А. Досудебное производство в уголовном процессе. Пособие. — М. ЮР-МИС, 2000, էջ 115:

**Քրեական դատաբանություն**

- <sup>4</sup> Տե՛ս Շագինյան А.С. Приостановление предварительного следствия: Дисс. ... канд. юрид. наук, Томск, 2001, էջ 77:
- <sup>5</sup> Տե՛ս Попов А.М. Проблемы совершенствования оснований и условий приостановления предвари-тельного следствия, Дисс... канд. юрид. наук, Саратов, 2004, էջ 55:
- <sup>6</sup> Տե՛ս Скоморохов О.Н. Проблемные аспекты приостановления уголовных дел // Черные дыры, 2007, N 5, էջ 271:
- <sup>7</sup> Վիճակագրական տվյալները վերցված են ՀՀ ստատիստիկայի ինֆորմացիոն կենտրոնից:
- <sup>8</sup> Տե՛ս Закирова Э.Ф. Приостановление предварительного следствия в случае, когда подозреваемый или обвиняемый скрылся от следствия либо место его нахождения не установлено по иным причинам, Автореф. дисс. канд. юрид. наук, Ижевск, 2004, էջ 18-19:
- <sup>9</sup> Տե՛ս Давыдов П.М., Мирский Д.Я. Прекращение уголовных дел в советский уголовном процессе, М., 1963, էջ 34:
- <sup>10</sup> Տե՛ս Дубинский А.Я. Основания к прекращению уголовного дела в стадии предварительного расследования, Киев, 1973, էջ 34:
- <sup>11</sup> Տե՛ս Закирова Э.Ф. Приостановление предварительного следствия в случае, когда подозреваемый или обвиняемый скрылся от следствия либо место его нахождения не установлено по иным причинам, Автореф. дисс. канд. юрид. наук, Ижевск, 2004, էջ 18-19:
- <sup>12</sup> Տե՛ս Уголовный процесс Российской Федерации, Учебник / отв. ред. А.П. Кругликов, М., Проспект, 2010, էջ 453-454:
- <sup>13</sup> Տե՛ս Комментарий к уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный) //отв. ред. И.Л. Петрухин, И.Б. Михайловская, 7-е изд., перераб. и доп., М., Проспект, 2010, էջ 418:
- <sup>14</sup> Տե՛ս Быков В.М. Основания приостановления предварительного следствия по УПК // Государство и право, 2004, N 5, էջ 106, Попов А.М. Проблемы совершенствования оснований и условий приостановления предварительного следствия, Дисс. канд. юрид. наук, Саратов, 2004, էջ 25, Черкасова Е.К. Правовое регулирование приостановления и возобновления предварительного расследования, Автореф. дисс. канд. юрид. наук, Омск, 2004, էջ 6:
- <sup>15</sup> Տե՛ս Нечаев А.А. Становление и развитие института приостановления предварительного расследования в российском уголовно-процессуальном законодательстве // Черные дыры, 2007, N 5, էջ 371:
- <sup>16</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատաբանություն: Ընդհանուր մաս, Գ.Ս.Ղազինյանի խմբագրությամբ, ԵՊՀ, Երևան, 2004, էջ 225:

---

## THE HIDING FACT OF THE ACCUSED FROM THE INVESTIGATION OR LITIGATION AS A BASIS TO SUSPEND THE CASE

**Arsen MARTIROSYAN**

*Post graduate of the RA Police Academy*

---

The circumstances under which the place of the accused, who escapes from the Court or criminal examination, is unknown can serve as a real basis for the cessation of a criminal case.

The article is devoted to the acceptance of the theoretical understanding of the concept about cessation of the criminal case in general and specifically to one of such cases established in the RA criminal legislation. This is the case when the place of the accused, who escapes from the court and criminal examination is unknown. There are various theoretical approaches to the cessation of the criminal case within the criminal law. The correct understanding of the following issue is not only of a theoretical but also of a practical importance. That is why we have analyzed the concepts for cessation and have given its description.

Within the RA criminal legislation of peculiar interest is the cessation of a criminal case because of the lack of information about the place of the accused. Analyzing the basics the author concludes that it includes in itself two separate basics: A) when the accused escapes from criminal examination and court litigation b) when for other reasons his/her destination is unknown. The separation of the 2 basics is not only of theoretical but also practical importance. As both of them make certain consequences both in criminal law and litigation.

Thus we have analyzed separately these two reasons for criminal case cessation and we have also separated two criteria that give us an opportunity to draw a line between the two basics.

To recapitulate the existing personal provisions about the basics of the cessation of the criminal case give us an opportunity to explore and understand the basics of the cessation hereon avoiding the mistakes

---

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐՐՈՐԴ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ****Արման ՍԱՐԳՍՅԱՆ**

*ԵՊՀ միջազգային և երրօրակյան  
իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

within the criminal practice.

**Մ**իջազգային իրավունքի սուբյեկտները արտաքին քաղաքականությունը իրականացնում են մի շարք ձևերով, որոնցից մեկն էլ միջազգային համաձայնագրերի կնքումն է: Լինելով արտաքին քաղաքականության իրականացման իրավական հաղորդակցության քաղաքակիրթ ձև և ունենալով լայն կիրառություն՝ այն կիրառվում է նաև Եվրոպական միությունում: Միջազգային համաձայնագրերի կնքման միջոցով արտաքին քաղաքականության իրականացումը Եվրոպական միության գործունեության հիմնական ուղղություններից մեկն է դեռևս Եվրոպական միության ստեղծման առաջին իսկ օրերից, այսինքն՝ դեռևս Եվրոպական ընկերակցությունների գոյության ժամանակ: 1951թ. ածխի և պողպատի Եվրոպական ընկերակցության ինտեգրացիոն կազմավորման և 1957թ. Եվրոպական տնտեսական ընկերակցության ու Եվրոպական ատոմային էներգիայի ընկերակցության ինտեգրացիոն կազմավորումները հիմնադրող համանուն պայմանագրերում գոյություն ունեին դրույթներ, որոնք իրավական հիմք էին ստեղծում միջազգային համաձայնագրեր կնքելու համար: Մասնավորապես, դրանց էին նվիրված Եվրոպական տնտեսական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 113-րդ և 238-րդ հոդվածները (ներկայումս՝ Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 207-րդ և 217-րդ հոդվածներ<sup>1</sup>), որոնք վերաբերում էին սակագնային ու առևտրային հա-

մաձայնագրերի կնքմանը<sup>2</sup>:

Եվրոպական միության կողմից միջազգային համաձայնագրերի կնքման միջոցով արտաքին քաղաքականության իրականացումը իր արդիականությունը չի կորցրել նաև այսօր և դրսևորվում է հատկապես երրորդ պետությունների հետ հարաբերություններում: Ավելին, այս միջոցով արտաքին քաղաքականության իրականացումը վերջին երկու տասնամյակի ընթացքում ձեռք է բերել ավելի լայն կիրառություն, որի մասին են վկայում Եվրոպական միության կողմից մի շարք պետությունների հետ կնքված բազմաթիվ միջազգային համաձայնագրերը: Այս հանգամանքը, թերևս, պայմանավորված է պետությունների՝ որպես միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտների մեծաքանակությամբ:

Երրորդ պետությունների հետ իր հարաբերությունները Եվրոպական միությունը կառուցում է տարբեր կատեգորիայի միջազգային համաձայնագրերի հիման վրա, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես կնքման նպատակով ու առաջարկվող համագործակցության ծավալով, այնպես էլ կնքման իրավական հիմքով և իրավական հետևանքներով: Համաձայնագրերը, ըստ դրանցով կարգավորվող հարաբերությունների հավակնոտության մակարդակի, կարող ենք ենթարկել որոշակի պայմանական դասակարգման և այն ներկայացնել հետևյալ հիերարխիկ հաջորդականությամբ՝

- ա) առևտրային համաձայնագրեր,
- բ) համագործակցության կամ զարգացման համագործակցության համաձայնագրեր (այսուհետ նաև՝ համագործակցության համաձայնագրեր),
- գ) փոխկապակցման համաձայնագ-



րեր,<sup>3</sup>

*դ) անդամակցության համաձայնագրեր:*

Սրանից յուրաքանչյուրը քաղաքական, տնտեսական և իրավական երկխոսության ինքնուրույն ձևաչափ է, որը Եվրոպական միությունն առաջարկում է գործընկեր պետությանը: Համաձայնագրերի մասին հնարավոր է ամբողջական պատկերացում կազմել միայն առանձին-առանձին դիտարկման և դրանցից յուրաքանչյուրին բնորոշ հատկանիշները վեր հանելու միջոցով:

Եվրոպական միության կողմից երրորդ պետություններին առաջարկվող միջազգային համաձայնագրերի առաջին խումբը *Առևտրային համաձայնագրերն են:* Դրանք երրորդ պետությունների հետ հարաբերություններում Եվրոպական միության կողմից առաջարկվող միջազգային համաձայնագրերի հիերարխիայում զբաղեցնում են ստորին տեղ: Դա արտահայտվում է համաձայնագրերի այս տեսակով կարգավորվող ոլորտների սահմանափակվածությամբ: Դրանք բացառապես ուղղված են երրորդ պետության հետ առևտրային ու տնտեսական հարաբերությունների կարգավորմանը: Ինտեգրացիոն գործընթացների սկզբնական շրջանում առևտրային համաձայնագրերը լայն կիրառություն ունեին: Գուցե այս պատճառով է, որ երբեմն դրանք անվանվում են առաջին սերնդի համաձայնագրեր<sup>4</sup>: Առևտրային համաձայնագրերի կնքման նյութական իրավական հիմք է ծառայում Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 207-րդ հոդվածը (նախկին Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 133-րդ հոդված), որը վերաբերում է ընդհանուր առևտրային քաղաքականությանը, իսկ ընթացակարգային հիմք՝ Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 218-րդ հոդվածը (նախկին Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 300-րդ հոդված)<sup>5</sup> պահպանելով 207-րդ հոդվածում սահմանված հատուկ կանոնները:

Առևտրային համաձայնագրերով նախատեսվում են Եվրոպական միություն ներկրվող ապրանքների առևտրային սահմանափակումների վերացում, երբեմն՝ ոչ փոխադարձության սկզբունքի հիման վրա՝ ի շահ երրորդ պետության: 1994թ. առևտրային համաձայնագրեր են կնքվել Մերձբալթյան երկրների՝ Էստոնիայի, Լատվիայի ու Լիտվայի հետ: Առևտրային համաձայնագիր կնքվել է նաև Եվրոպական տնտեսական ընկերակցության և ԽՍՀՄ-ի միջև<sup>6</sup>: Այն անվանվում էր Առևտրի և տնտեսական համագործակցության համաձայնագիր և միտված էր երկու սուբյեկտների միջև նորաստեղծ հարաբերությունների բարելավմանը, որի պատճառով կրում էր նվազ քաղաքական պայմանականություն (conditionality)<sup>6</sup>, քան ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջացած անկախ պետությունների հետ կնքված համաձայնագրերը: Այդուհանդերձ, համաձայն այդ համաձայնագրերի սահմանափակ կարգավորման առարկայից՝ դրանք ներկայումս շատ հազվադեպ են կնքվում:

Առևտրային համաձայնագրերի դրույթներին բնորոշ է ուղղակի գործողության սկզբունքը: Պարզապես դրանք, ինչպես և Եվրոպական միության կողմից առաջարկվող մյուս միջազգային համաձայնագրերը, պետք է բավարարեն միջազգային համաձայնագրերի ուղղակի գործողության չափանիշները:<sup>7</sup>

Համաձայնագրերի երկրորդ խումբը կազմում են *համագործակցության կամ զարգացման համագործակցության համաձայնագրերը*: Դրանք Եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվում են քաղաքական երկխոսության հաստատման, տնտեսական հարաբերությունների հեշտացման, ժողովրդավարական բարեփոխումների խթանման, մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի զերակայությունը երաշխավորող իրավակարգի հիմնադրման նպատակներով: Այդ իսկ պատճառով համագործակցության համաձայնագրերի նախաբանում

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ**

բացակայում են «Եվրոպական ինտեգրման գործընթացների» և «Եվրոպական միությանն անդամակցելու նպատակի» մասին հիշատակումներ<sup>8</sup>: Համագործակցության համաձայնագրերը պարունակում են նաև տնտեսական ու առևտրային հարցերում համագործակցությանը, ինչպես նաև առևտրի ազատականացմանն ուղղված միջոցառումներ: Այսինքն, համագործակցության և առևտրային համաձայնագրերի տարբերությունը այն է, որ համագործակցության համաձայնագրերը, առևտրային և դրան հարակից ոլորտներից բացի, կարող են շոշափել նաև այլ ոլորտներ (օրինակ՝ քաղաքական, մարդու իրավունքների պաշտպանության և այլն):

Ավելին, համագործակցության համաձայնագրերում երբեմն նախատեսվում են երրորդ պետության հետ երկխոսության մեխանիզմներ՝ ներառյալ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության և ոստիկանության ու դատական մարմինների համագործակցության հարցերում: Եվրոպական ընկերակցությունը 1994թ. համագործակցության համաձայնագրեր է կնքել Հայաստանի, Ադրբեյջանի<sup>9</sup>, Վրաստանի<sup>10</sup>, Ղազախստանի<sup>11</sup>, Ղրղրստանի<sup>12</sup>, Մոլդովայի<sup>13</sup>, Ռուսաստանի<sup>14</sup>, Ուկրաինայի<sup>15</sup>, Ուզբեկստանի<sup>16</sup> և այլ երկրների հետ:

Համագործակցության համաձայնագրերը, պայմանավորված դրանցով երրորդ պետություններին առաջարկվող համագործակցության ծավալով, կարող ենք ենթարկել որոշակի դասակարգման: Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի ու Մոլդովայի հետ 1994թ. կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը իրենց բովանդակությամբ ավելի հավակնոտ են, քան Հայաստանի Հանրապետության կամ Վրաստանի Հանրապետության հետ 1996թ. կնքված Գործընկերության և համա-

գործակցության համաձայնագրերը: Միայն Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի ու Մոլդովայի հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերում է, որ առկա է դրույթ ազատ առևտրային գոտի հիմնադրելու մասին<sup>17</sup>: Այս հատկանիշով նշված համաձայնագրերը տարբերվում են Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների հետ կնքած նույն կատեգորիայի համաձայնագրերից:

Բոլոր տեսակի համագործակցության համաձայնագրերի համար ընդհանուր պետք է համարել այն, որ դրանց դրույթների իրագործման համար ստեղծվում է համապատասխան ինստիտուցիոնալ համակարգ (Համագործակցության խորհուրդ, Համագործակցության կոմիտե և Համագործակցության խորհրդարան): Այս մարմինների ընդունած որոշումները պարտադիր չեն և կրում են զուտ խորհրդատվական բնույթ: Այս մասին է վկայում նրանց իրավական կարգավիճակը սահմանող համապատասխան Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի դրույթների վերլուծությունը<sup>18</sup>:

Համագործակցության համաձայնագրերը խառը համաձայնագրեր են, քանի որ դրանց մեջ ընդգրկված ոչ բոլոր ոլորտներն են ամբողջությամբ ընկնում Եվրոպական միության իրավասության ներքո: Այդ իսկ պատճառով համագործակցության համաձայնագրերի կնքմանը Եվրոպական միության հետ մասնակցում են նաև անդամ պետությունները, որոնցից յուրաքանչյուրը պետք է վավերացնի խնդրո առարկա համաձայնագիրը իր ներպետական օրենսդրական ընթացակարգին համապատասխան:

Համագործակցության համաձայնագրերի կնքման համար իրավական հիմք է ծառայում Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 212-րդ հոդվածը<sup>19</sup> (նախկին Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 181 (ա) հոդված)<sup>20</sup>: Սա համագործակցության համաձայնագրերի կնքման

խթանիչ կամ նյութական իրավական հիմքն է: Սակայն, քանի որ համագործակցության համաձայնագրերը շոշափում են զանազան ոլորտներ, դրանք կնքման համար որպես նյութական իրավական հիմք միաժամանակ կարող են հանդիսանալ Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի ամենատարբեր հոդվածներ (օրինակ՝ Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 207-րդ, 352-րդ, 50(2)-րդ, 53(1)-րդ, 64(2)-րդ, 91-րդ, 100-րդ<sup>21</sup> և մի շարք այլ հոդվածներ): Համագործակցության համաձայնագրերի կնքման համար որպես ընթացակարգային իրավական հիմք է կիրառվում Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 218-րդ հոդվածը:

Համագործակցության համաձայնագրերին հաջորդում են փոխկապակցման համաձայնագրերը: Դրանք կնքելու համար իրավական հիմք է ծառայում Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 217-րդ հոդվածը, համաձայն որի «Միությունը կարող է մեկ կամ ավելի երրորդ պետությունների կամ միջազգային կազմակերպությունների հետ կնքել փոխկապակցման վերաբերյալ համաձայնագրեր, որոնցով նախատեսվում են փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ, ընդհանուր գործողություն և հատուկ ընթացակարգ»: Փոխկապակցման համաձայնագրերի այս բնորոշումը չի բացահայտում դրանց էությունը, քանի որ ցանկացած միջազգային համաձայնագրով կարող են նախատեսվել փոխադարձ իրավունքներ ու պարտականություններ, ընդհանուր գործողություն և հատուկ ընթացակարգ: Համաձայնագրերի այս տեսակի էությունը բացահայտելու հարցում զգալի լույս է սփռում *Demirel*-ի գործը, որտեղ Եվրոպական միության դատարանը սահմանել է, որ «փոխկապակցման համաձայնագիրը հատուկ, արտոնյալ կապ է ստեղծում Եվրոպական միության և ոչ անդամ պետության միջև՝ հնարավորություն տալով վերջինիս գոնե որոշ առումով մաս-

*նակցություն ունենալ Եվրոպական միության համակարգում*<sup>22</sup>: Այս սահմանման մեջ «ոչ անդամ պետություն» բառակապակցությունը պետք է հասկանալ լայն իմաստով և Եվրոպական միության համակարգում մասնակցության իրավունք ունեցող սուբյեկտ դիտել ոչ միայն տվյալ պետությանը, այլ նաև նրա քաղաքացիներին: Համեմայն դեպս դա է հուշում *Demirel*-ի գործը, որը վերաբերում է Եվրոպական միությունում Թուրքիայի քաղաքացու ազատ տեղաշարժին:

Ավելին, փոխկապակցման համաձայնագրերի վերը բերված բնորոշումից ակնհայտ է դառնում, որ համաձայնագրերի այս տեսակի առանձնահատկությունը այն է, որ միտված է երրորդ պետությանը տրամադրելու Եվրոպական միության համակարգ ինտեգրվելու այնպիսի արտոնություններ, որոնք չեն տրամադրվում մյուս համաձայնագրերով: Իսկ որոնք են այդ արտոնությունները: Այս հարցին պատասխանելու համար պետք է վերլուծել տարբեր պետությունների հետ կնքված փոխկապակցման համաձայնագրերի բովանդակությունը:

Փոխկապակցման համաձայնագրերով սահմանվում են սերտ հարաբերություններ երրորդ պետության կամ պետությունների խմբի հետ: Բացի առևտրային ոլորտից, դրանք նախատեսում են համագործակցության իրականացում նաև այլ ոլորտներում և երբեմն ներառում են արձանագրություններ, որոնք նախատեսում են փոխկապակցված երկրին կամ երկրներին Եվրոպական միության կողմից ցուցադրվող աջակցության փաթեթի ու Եվրոպական ներդրումային բանկի կողմից վարկերի տրամադրում: Փոխկապակցման համաձայնագրերը կարող են նույնիսկ ուղղված լինել մաքսային միությունը (օրինակ՝ Թուրքիայի հետ կնքված փոխկապակցման համաձայնագիրը) կամ ներքին շուկան ընդարձակելուն (օրինակ՝ Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի հետ կնքված Եվրոպական տնտեսական գոտի հիմնադ-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րելու մասին փոխկապակցման համաձայնագիրը):

Համաձայն երրորդ պետությունների հետ Եվրոպական միության կողմից փոխկապակցման համաձայնագրերի կնքման պրակտիկայից՝ կարող ենք առանձնացնել փոխկապակցման համաձայնագրերի հետևյալ երեք տեսակները.

1. փոխկապակցման համաձայնագրեր, որոնք կնքվում են եվրոպական պետությունների նախկին գաղութ երկրների հետ հարաբերություններ հաստատելու նպատակով (օրինակ՝ Մարոկկոյի և Թունիսի հետ կնքված փոխկապակցման համաձայնագրերը<sup>23</sup>),

2. փոխկապակցման համաձայնագրեր, որոնք կնքվում են սոսկ երրորդ պետությունների հետ հավակնոտ հարաբերություններ հաստատելու նպատակով (օրինակ՝ 2002թ. Չիլիի հետ կնքված փոխկապակցման համաձայնագիրը<sup>24</sup>),

3. փոխկապակցման համաձայնագրեր, որոնք կնքվում են Եվրոպական միությանը երրորդ պետության անդամակցությունը նախապատրաստելու համար (օրինակ՝ 1961թ. Հունաստանի հետ կնքված փոխկապակցման համաձայնագիրը<sup>25</sup>):

Վերջին կատեգորիայի փոխկապակցման համաձայնագրերը կարող են ունենալ տարբեր անվանումներ: Դրանք կարող են անվանվել Եվրոպական համաձայնագրեր (ինչպիսիք կնքվել են Հունգարիայի<sup>26</sup>, Լեհաստանի<sup>27</sup>, 1994թ. Բուլղարիայի<sup>28</sup>, Չեխիայի հանրապետության<sup>29</sup>, Լատվիայի<sup>30</sup>, Լիտվայի<sup>31</sup>, Ռումինիայի<sup>32</sup>, Սլովակիայի<sup>33</sup>, Էստոնիայի<sup>34</sup>, Սլովենիայի<sup>35</sup> հետ), Եվրասիացիերկրածովյան համաձայնագրեր (կնքվել են 1996 թվականին Իսրայելի<sup>36</sup>, Հորդանանի<sup>37</sup>, Մարոկկոյի<sup>38</sup>, Պաղեստինի<sup>39</sup> և Թունիսի<sup>40</sup> հետ, 2001թ.՝ Եգիպտոսի<sup>41</sup>, 2002թ.՝ Ալժիրի<sup>42</sup>), Կոտոնու կոնվենցիա (կնքվել է մի շարք Աֆրիկյան, Կարիբյան ու Խաղաղօվկիանոսյան երկրների հետ)<sup>43</sup>:

Փոխկապակցման համաձայնագրերի՝ վերը քննարկված մյուս համաձայնագրերից տարբերակող հատկանիշ են դրանց դրույթների ուղղակի գործողությունը առավել հեշտությամբ Եվրոպական միության դատարանի կողմից ճանաչելու հնարավորությունը<sup>44</sup>, դրանց դրույթների իրագործումը ապահովելու համար ստեղծված մարմինների ընդունած որոշումների դրույթների ուղղակի գործողության հնարավորությունը,<sup>45</sup> առանձին դեպքերում՝ ազատ առևտրային գոտիների ստեղծմանը ուղղված լինելը: Հնարավոր է նաև, որ փոխկապակցման համաձայնագրերը դրույթներ պարունակեն անձանց ազատ տեղաշարժի, ապրանքների ազատ տեղաշարժի, կապիտալի ազատ տեղաշարժի և ծառայությունների մատուցման ազատության մասին: Այլ կերպ ասած՝ փոխկապակցման համաձայնագրերը կարող են հնարավորություն տալ երրորդ պետությունների քաղաքացիներին ներթափանցելու Եվրոպական միության ներքին շուկա և դառնալու դրա մասնակից (օրինակ՝ Իսլանդիայի, Լիխտենշտեյնի և Նորվեգիայի հետ կնքված Եվրոպական տնտեսական գոտի հիմնադրելու մասին փոխկապակցման համաձայնագիրը<sup>46</sup>): Դրանից բացի, փոխկապակցման համաձայնագրերի նախաբանները ուղղակիորեն հիշատակում են «Եվրոպական ինտեգրման գործընթացի» կամ «Եվրոպական միությանն անդամակցելու նպատակի» մասին (օրինակ՝ Հունգարիայի հետ կնքված փոխկապակցման համաձայնագիրը<sup>47</sup>):

Փոխկապակցման համաձայնագրերին բնորոշ հենց վերը թվարկված հատկանիշներով է պայմանավորված Եվրոպական միության հետ հարաբերությունները համաձայնագրի քննարկվող տեսակի հիման վրա կառուցելու տարբեր պետությունների նկրտումները: Որպես ասվածի վառ օրինակ կարող ենք վկայակոչել Ուկրաինային, որտեղ ինչպես բարձր քաղաքական, այնպես էլ տեսական մակարդակներում լավատեսական կանխատեսումներ են արվում, և

ցանկություններ են հնչում առ այն, որ Եվրոպական միության հետ հետագա փոխգործակցությունը զարգացնելու ուղղված համաձայնագիրը լինելու է փոխկապակցման համաձայնագիր<sup>46</sup>:

Եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային համաձայնագրերի հաջորդ տեսակը *Անդամակցության համաձայնագրերն* են: Դրանք կնքվում են այն պետությունների հետ, որոնք պետք է դառնան Եվրոպական միության անդամ պետություն: Եվրոպական միության իրավունքի մասնագիտական գրականության մեջ անդամակցության համաձայնագրերը չեն համարվում որպես երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային համաձայնագրերի ինքնուրույն տեսակ: Սակայն մեր խորին համոզմամբ դրանք պետք է առանձնացնել որպես Եվրոպական միության կողմից երրորդ պետություններին առաջարկվող միջազգային համաձայնագրերի ինքնուրույն կատեգորիա, քանի որ այդ համաձայնագրերի կողմ հանդիսացող պետություններին մինչև Եվրոպական միությանն անդամակցելը պետք է դիտել որպես երրորդ պետություն:

Անդամակցության համաձայնագրերի առանձնահատկությունը Եվրոպական միության կողմից առաջարկվող միջազգային համաձայնագրերի մյուս տեսակներից այն է, որ դրանք կնքվում են ոչ թե երրորդ պետության հետ հարաբերություններ հաստատելու կամ արդեն հաստատված հարաբերությունները խորացնելու նպատակով, այլ երրորդ պետությանը Եվրոպական միության անդամ դարձնելու նպատակով: Ուստի կարող ենք փաստել, որ անդամակցության համաձայնագրերը ունեն անցումային բնույթ, քանի որ ուժի մեջ մտնելուց և անդամակցության գործընթացը իր ավարտին հասցնելուց հետո դադարում են գոյություն ունենալուց: Սա չի նշանակում, որ դրանք դադարում են գոյություն ունենալ իրավաբանորեն, այլ դրանք ուժի մեջ մտնելով իրացնում են այն նպատակը, որի համար կնքվել են, ինչը ինքնին նշանա-

կում է դրանց գոյության փաստացի դադարում: Անդամակցության համաձայնագրերը ուժի մեջ մտնելու համար պետք է վավերացվեն ոչ միայն Եվրոպական միության համապատասխան ինստիտուտների (ԵՄ խորհուրդ և Եվրոպական խորհրդարան), այլ նաև անդամ պետությունների կողմից՝ նրանց ներպետական ընթացակարգերին համապատասխան:

Այսպիսով, Եվրոպական միությունը երրորդ պետությունների հետ իր հարաբերությունները կառուցում է առևտրային, համագործակցության կամ զարգացման համագործակցության և փոխկապակցման համաձայնագրերի հիման վրա: Վերջիններս միմյանցից տարբերվում են ինչպես կնքման նպատակով, այնպես էլ առաջարկվող համագործակցության ծավալով: Փոխկապակցման համաձայնագրերը, որպես կանոն, ավելի հավակնոտ են, քան առևտրային կամ համագործակցության համաձայնագրերը: Այդ հավակնոտությունը արտահայտվում է դրանց դրույթների ուղղակի գործողությունը առավել հեշտությամբ Եվրոպական միության դատարանի կողմից ճանաչելու հնարավորությունը, դրանց դրույթների իրագործումը ապահովելու համար ստեղծված մարմինների ընդունած որոշումների դրույթների ուղղակի գործողության հնարավորությունը, առանձին դեպքերում ազատ առևտրային գոտիների ստեղծմանն ու ներքին շուկայի մեջ երրորդ պետության ինտեգրմանը ուղղված լինելու և համագործակցության ավելի լայն ոլորտներ ընդգրկելու մեջ:

Եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ կնքվող միջազգային համաձայնագրերի ինքնուրույն խումբ պետք է դիտել նաև անդամակցության համաձայնագրերը, քանի որ դրա կողմ հանդիսացող երրորդ պետությունը նախքան Եվրոպական միությանն անդամակցելը համարվում է երրորդ պետություն: Այս համաձայնագրերի առանձնահատկությունը Եվրոպական միության կողմից առաջարկվող մյուս միջազգային համաձայնագրե-

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րից այն է, որ կյանքի է կոչվում ոչ թե համապատասխան երրորդ պետության հետ

համագործակցության այս կամ այն ոլորտում երկարաժամկետ հարաբերություններ կարգավորելու նպատակով, այլ եվրոպական միությանը տվյալ պետության անդամակցության գործընթացը իր ավարտին

<sup>1</sup> St'ü articles 207 and 217 of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1:

<sup>2</sup> St'ü articles 113 and 238 of the European Economic Community Treaty, [1957]:

<sup>3</sup> St'ü Karen E. Smith, European Union Foreign Policy in the Changing World: The EU's Foreign Policy instruments, The European Community pillar: Agreements with third countries, 2003, Great Britain, page 53:

<sup>4</sup> St'ü Marius Vahl, Swedish Institute for European Policy Studies (publisher), *International agreements in EU neighbourhood policy*, report No.10, 2006, page 43, available at [www.sieps.se](http://www.sieps.se):

<sup>5</sup> St'ü Agreement between the European Economic Community and the Union of Soviet Socialist Republics on trade and commercial and economic cooperation, OJ (1990), L 068/2:

<sup>6</sup> Քաղաքական պայմանականությունն ասելով հասկանում ենք, որ եվրոպական միության կողմից երրորդ պետությունների հետ հարաբերությունները զարգանում են իր պայմանների առաջադրմամբ, որոնք երրորդ պետությունը պարտավորվում է բավարարել կամ իրականացնել այդ հարաբերություններում որոշակի նպատակի հասնելու համար:

<sup>7</sup> St'ü case 104/81, *Hauptzollamt Mainz v C.A. Kupferberg & Cie KG a.A.*, (1982), ECR 3641, pars.24-27:

<sup>8</sup> St'ü the Preamble of the Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Georgia, of the other part, [1999] OJ L 205/3, the Preamble of the Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Kyrgyzstan, of the other part, [1999] OJ L 196/3 և այլն:

<sup>9</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their

Member States, of the one part, and the Republic of Azerbaijan, of the other part, [2005] OJ L 185/3:

<sup>10</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Georgia, of the other part, [1999] OJ L 205/3:

<sup>11</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Kazakhstan, of the other part, [1999] OJ L 196/3:

<sup>12</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Kyrgyzstan, of the other part, [1999] OJ L 196/3:

<sup>13</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Moldova, of the other part, [1998] OJ L 181/3:

<sup>14</sup> St'ü Agreement on partnership and cooperation establishing a partnership between the European Communities and their Member States, of one part, and the Russian Federation, of the other part, [1997] OJ L 327/3:

<sup>15</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Ukraine, of the other part, [1999] OJ L 49/3:

<sup>16</sup> St'ü Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Uzbekistan, of the other part, [1999] OJ L 229/3:

<sup>17</sup> St'ü article 3 of Partnership and Cooperation Agreement with Russia, [1997] OJ L 327/3, article 4 of Partnership and Cooperation Agreement with Ukraine [1999] OJ L 49/3 and article 4 of Partnership and Cooperation Agreement with Moldova, [1998] OJ L 181/3:

հասցնելու համար:

- <sup>18</sup> St'u Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Georgia, of the other part, Institutional, general and final provisions, [1999] OJ L 205/3, page 45:
- <sup>19</sup> St'u article 212 of the Consolidated version of the Treaty on the functioning of the European Union (Lisbon Treaty), [2008] OJ C 115/1:
- <sup>20</sup> St'u article 181a of the Consolidated version of the Treaty Establishing the European Community [2002] OJ C 325/33:
- <sup>21</sup> Նախկին Եվրոպական ընկերակցության հիմնադրման մասին պայմանագրի 133-րդ, 308-րդ, 44(2)-րդ, 47(2)-րդ, 57(2)-րդ, 71-րդ և 80-րդ հոդվածներ:
- <sup>22</sup> St'u case C-12/86 *Meryem Demirel v Stadt Schwäbisch Gmünd*, [1987] ECR 3719, par. 9:
- <sup>23</sup> St'u Euro-Mediterranean Agreement establishing an association between the European Economic Communities and their Member States, of the one part, and the Kingdom of Morocco, of the other part, OJ 2000, L 70/2 and Euro-Mediterranean Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Tunisia, of the other part, OJ 1998, L 97/2:
- <sup>24</sup> St'u Agreement establishing an association between the European Community and its Member States, of the one part, and the Republic of Chile, of the other part, OJ 2002, L 352/3:
- <sup>25</sup> St'u Agreement establishing an association between the European Economic Community and Greece (Athens Agreement) [1961] OJ English Special Edition, Second Series, I External Relations (1) p.3:
- <sup>26</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Hungary, of the other part OJ 1993, L 347/2:
- <sup>27</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Poland, of the other part OJ 1993, L 348/2:

- <sup>28</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Bulgaria, of the other part OJ 1994, L 358/3
- <sup>29</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Czech Republic, of the other part OJ 1994, L 360/2
- <sup>30</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Latvia, of the other part OJ 1994, L 26/3:
- <sup>31</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Lithuania, of the other part, OJ 1994, L 51/3:
- <sup>32</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and Romania, of the other part, OJ 1994, L 357/2
- <sup>33</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Slovak Republic, of the other part OJ 1994, L 359/2
- <sup>34</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Estonia, of the other part, OJ 1998, L 68/3:
- <sup>35</sup> St'u Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Slovenia, of the other part, OJ 1999, L 51/3:
- <sup>36</sup> St'u Euro-Mediterranean Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the State of Israel, of the other part, OJ 2000, L 147/3:
- <sup>37</sup> St'u Euro-Mediterranean Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Hashemite Kingdom of

Միջազգային իրավունք

Jordan, of the other part, OJ 2002, L 129/3:

<sup>38</sup> Տե՛ս Euro-Mediterranean Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Kingdom of Morocco, of the other part, OJ 2000, L 70/2:

<sup>39</sup> Տե՛ս Euro-Mediterranean Interim Association Agreement on Trade and Cooperation between the European Community, of the one part, and the Palestine Liberation Organisation (OLP), for the benefit of the Palestinian Authority of the West bank and the Gaza Strip, of the other part, OJ 1997, L 187/3:

<sup>40</sup> Տե՛ս Euro-Mediterranean Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Tunisia, of the other part, OJ 1998, L 97/2:

<sup>41</sup> Տե՛ս Euro-Mediterranean Agreement establishing an Association between the European Community and its Member States, of the one part, and the Arab Republic of Egypt, of the other part, OJ 2004, L 304/2:

<sup>42</sup> Տե՛ս Euro-Mediterranean Agreement establishing an Association between the European

Community and its Member States, of the one part, and the People's Democratic Republic of Algeria, of the other part, OJ 2005, L 265/2:

<sup>43</sup> Տե՛ս հղում 3:

<sup>44</sup> Տե՛ս case C-438/00, **Deutscher Handballbund e.V. v Maros Kolpak**, [2003] ECR I-4135, par. 30:

<sup>45</sup> Տե՛ս case C- 192/89, *S.Z. Sevince v Staatssecretaris van Justitie*, [1989], ECR I-3461, par. 26:

<sup>46</sup> Տե՛ս article 1(2) of the Agreement on the European Economic Area between the European Community and their Member States of the one part and European Free Trade Association Member States on the other, OJ 1994, L 1/3:

<sup>47</sup> Տե՛ս article 1 of the Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Hungary, of the other part OJ 1993, L 347/2:

<sup>48</sup> Տե՛ս Roman Petrov, «Legal Basis and Scope of the New EU-Ukraine Enhanced Agreement. Is there any room for further speculation», EUI Working Paper MWP, No.2008/17, 2008, էջ 2:



---

## THE TYPES OF INTERNATIONAL AGREEMENTS OFFERED BY THE EUROPEAN UNION TO THIRD COUNTRIES

**Arman SARGSYAN**

*PHD student, Chair of European and  
International Law, YSU, Faculty of Law*

---

This article is dedicated to the investigation of the main types of the international agreements on the basis of which European Union establishes contractual relations with third countries. The author distinguishes four main types of such international agreements (trade agreements, cooperation agreements, association agreements and

accession agreements). As each of the agreements constitute a separate format of cooperation, the author reveals the characteristic features of the above mentioned agreements and makes comparative analyses between them.

In the end the author comes to the conclusion that association agreements are more ambitious than trade or partnership agreements and that accession agreements form a separate type of international agreements which EU offers to third states.

---

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՐԶԵՑՈՒՄԸ (ՄՈՏԱՐԿՈՒՄԸ) ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԱՑՄԱՆ ԶԵՎ**

**Գոռ ԹՈՐՈՍՅԱԼ**

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

Դարերի ընթացքում պետության իրավական համակարգը զարգացել է սեփական օրենսդրությունը մշակելու միջոցով: Պետության՝ կոնկրետ ոլորտում քաղաքականություն մշակելն ու այդ ոլորտը կարգավորող օրենսդրական ակտեր նախագծելը բազմաշերտ և մի քանի փուլերից բաղկացած գործընթաց են, որի ընթացքում պետական իրավասու մարմինները հաճախ դիմում են այլ իրավական համակարգերից համապատասխան ոլորտը կարգավորող օրենսդրության որոշակի տարրերի ներմուծմանը ներպետական իրավական համակարգ:

Այս գործընթացն ավելի ամբողջական պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել այնպիսի փոխկապակցված հարցերի, ինչպիսիք են օրենսդրության մերձեցումն անհրաժեշտ դարձնող պայմանները, օրենսդրության մերձեցման արդյունքների կիրառման ոլորտները ժամանակակից օրենսդրության զարգացման ուղղությունները: Վերոնշյալ երևույթներն ուսումնասիրում են տարբեր իրավաբանական գիտություններ, սակայն փոխկապակցված են: Դրանց՝ ոչ թե մեկուսացված, այլ որոշակի տրամաբանության մեջ ուսումնասիրությունը կօգնի նաև ի հայտ բերելու որոշակի կանոններ, որոնք ցույց են տալիս ներպետական իրավական համակարգի (օրենսդրության) զարգացման կարևորագույն ձևերից մեկի՝ օրենսդրության մերձեցման գործընթացի ամբողջական պատկերը:

Թեմայի ընտրությունն ինքնանպատակ և պատահական չէ: Հայտնի է, որ օրենսդրության մերձեցումը սեփական համակարգը զարգացնելու բավականին արդյունավետ եղանակ է: Սակայն այդ գործընթացը միայն պետության միակողմանի ցանկության արդյունք չէ: Այն իրականացվում է՝ ելնելով որոշակի կարևոր պայմաններից, որոնք անհրաժեշտ են դարձնում օրենսդրությունների մոտարկման կամ ներդաշնակեցման ճանապարհով սեփական իրավական համակարգի զարգացումն ու կատարելագործումը:

Պետության իրավական համակարգի զարգացումը օրենսդրության մերձեցման եղանակով պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Դրանից սույն աշխատանքում կքննարկենք երկու կարևորները՝ 1. բազմաթիվ հասարակական հարաբերություններ զարգացման որոշակի փուլում զգում են իրավական կարգավորման անհրաժեշտություն: Որոշ երկրներում, որոնք արդեն անցել են զարգացման այդ էտապները, առկա է թե՛ այդ հարաբերությունների իրավական կարգավորման, թե՛ դրա կիրառման հարուստ փորձ: Այլ իրավական համակարգի տարրերի ներմուծումը նպատակ է հետապնդում զարգացնելու սեփական իրավական համակարգը այլ երկրների դրական փորձի հիման վրա՝ բացառելով այդ երկրներում թույլ տրված սխալները: 2. Սեփական իրավական համակարգն այլ իրավական համակարգերում գործող նորմերին համապատասխան զարգացնելը պայմանավորված է պետությունների տնտեսական և քաղաքական համագործակցության խորացմամբ: Պետությունների ինտեգրացիոն գործընթացները պահանջում են վերացնել ներպետական ի-

րավական համակարգերի խոչընդոտները, ներդաշնակեցնել տնտեսական ոլորտի օրենսդրությունը, քանի որ առանց դրա տնտեսական հարաբերությունների զարգացման իրական արդյունքները շոշափելի չեն լինի:

Այս ամենը ցույց է տալիս, որ օրենսդրության մերձեցումը առաջին հերթին պայմանավորված է գլոբալիզացիայով: Գլոբալիզացիայի ներկայիս փուլի պայմաններում ներպետական իրավական համակարգի զարգացումն անհնար է պատկերացնել առանց այլ իրավական համակարգերին ներպետական օրենսդրության մերձեցման, քանի որ ֆինանսատնտեսական հարաբերություններն աստիճանաբար ձեռք են բերում միջազգային բնույթ, և որոշակի փոփոխության են ենթարկվում նաև հասարակական կյանքի տարբեր ոլորտներ, այդ թվում՝ սոցիալական և իրավական ոլորտները: Դա ուղղակիորեն ազդում է նաև պետության իրավական համակարգի վրա: Գլոբալիզացիան և ինտեգրացիոն գործընթացները դրսևորվում են նաև տնտեսական հարաբերությունների բազմաթիվ ոլորտներում պետության լիազորությունների պատվիրակմամբ: Այդ պատճառով շատ հարցեր կարգավորվում են վերազգային մարմինների կողմից: Այս դեպքում պետության իրավական համակարգը կազմվում է առավելապես այդ մարմինների ընդունած բոլոր պետությունների համար ընդհանուր օրենքներից<sup>1</sup>: Դրա վառ դրսևորումը Եվրոպական միությունն է:

Փոխկապակցված լինելով հասարակական կյանքի այլ տնտեսական, սոցիալական ոլորտների հետ՝ իրավական ոլորտում գլոբալիզացիան առավելապես դրսևորվում է իրավական համակարգերի միջազգայնացմամբ, որը ենթադրում է **պետությունների իրավական համակարգերի մոտեցում, փոխազդեցության և փոխհամագործակցության խորացում**:

Օրենսդրությունը զարգացնելու ժամանակ գլոբալիզացիան անհրաժեշտ է հաշվի առնել այն պատճառով, որ այդ գործընթա-

ցը հնարավոր չէ դադարեցնել կամ կանգնեցնել, քանի որ դրա հիմքում ընկած են տեխնոլոգիական և տնտեսական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններ<sup>2</sup>: Յետևաբար, օրենսդրության մերձեցումը, միջազգային չափանիշներին դրա համապատասխանեցումը այս գործընթացի տրամաբանական, օրինաչափ և անհրաժեշտ շարունակությունն են: Պետությունների համագործակցության խորացումը պահանջում է իրավական համակարգում համապատասխան փոփոխությունների իրականացում: Այս տեսանկյունից միջազգային և ներպետական իրավական համակարգերի փոխներգործության խորացումը հանգեցնում է այսպես կոչված ներպետական համակարգերի միջազգայնացման կամ համամարդկայնացման, որը 21-րդ դարի իրավական համակարգի զարգացման հիմնական ուղղությունն է<sup>3</sup>: Այս գործընթացը պահանջում է ներպետական օրենսդրությունների և իրավունքի սկզբունքների մոտեցում, տարբեր իրավական համակարգերի փոխազդեցության խորացում<sup>4</sup>: Բազմաթիվ միջազգային միջկառավարական կազմակերպությունների շրջանակներում մշակվում են տարբեր նորմեր, որոնք վերաբերում են հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներին և սահմանում ընդհանուր չափանիշներ, որոնց պետք է համապատասխանի ներպետական օրենսդրությունը:

Վերոնշյալ հանգամանքն այսօր բազմաթիվ հեղինակների քննարկման առարկա է դարձել և դիտվում է որպես իրավական համակարգի զարգացման կարևորագույն տեսական հիմնախնդիրներից մեկը<sup>5</sup>:

Մոտարկման գործընթացն սկսվում է քարեր մակարդակներով օրենսդրության համեմատական ուսումնասիրությամբ, սակայն դրանով չի սահմանափակվում: Ուսումնասիրության արդյունքներն անհրաժեշտ է օգտագործել ներպետական օրենսդրությունը ձևավորելու գործընթացում:

Օրենսդրության մոտարկման կանոններ

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րը, դրա արդյունքները պետք է օգտագործվեն առաջին հերթին իրավաստեղծ գործունեության ժամանակ: Այդ պատճառով մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է, որ իրավաստեղծ գործունեության արդյունքում որակյալ իրավական ակտեր ընդունելու համար իրավաստեղծ մարմինը պետք է առաջնորդվի հստակ ամրագրված չափանիշներով և հաշվի առնի գործընթացի վրա ազդող այնպիսի բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են սոցիալական իրողությունները, որոնք պայմանավորում են տվյալ նորմատիվ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, տարբեր սոցիալական խմբերի շահերը, տվյալ երկրում և այլ երկրներում գործող իրավական կարգավորման միջև համեմատական վերլուծությունը, ինչպես նաև ընդունվող իրավական ակտի համեմատությունը հասարակական հարաբերությունների այլ կարգավորիչների հետ<sup>6</sup>:

Այս առումով համեմատական ուսումնասիրությունների արդյունքների օգտագործման առաջին ոլորտն *օրենսդրական գործընթացն* է, որի արդյունավետությունը, տեխնիկական որակն ու բովանդակությունը երաշխավորելու նպատակով հաճախ անհրաժեշտություն է առաջանում դիմել միջազգային փորձի ուսումնասիրությանը: Օրենսդրական գործունեության ժամանակ այլ իրավական համակարգերում նման հարաբերությունների կարգավորման օգտագործումը պետք է իր հիմքում ունենա դրա վերաբերյալ բազմակողմանի, ամբողջական տեղեկատվություն, հակառակ պարագայում արդյունքը լիարժեք չի լինի: Կարևոր նշանակություն ունի այդ արդյունքների օգտագործումն օրենսդրական գործունեության սկզբնական փուլում:

*Իրավակիրառական պրակտիկայում* առավել հաճախ է անհրաժեշտություն առաջանում օգտագործել այս արդյունքները: Դա կարելի է բացատրել նրանով, որ իրա-

վակիրառական պրակտիկան տեսականորեն կարող է առնչվել այնպիսի կոնկրետ իրավիճակների հետ, որոնք օրենսդրությունը հստակ չի կարգավորում: Ի հայտ եկած խնդիրը կարող է լուծվել երկու ձևով՝ ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ փոփոխություն կատարելով կամ դատական նախադեպի ու ենթաօրենսդրական ակտերի միջոցով իրավակիրառ պրակտիկան կատարելագործելով: Երկու դեպքում էլ անհրաժեշտություն է առաջանում դիմել այլ՝ առավել զարգացած և նշված ոլորտում զգալի հաջողություններ արձանագրած պետությունների իրավական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությանն ու օգտագործմանն ինչպես հայեցակարգերի, ճանապարհային քարտեզների, ռազմավարական ծրագրերի, նորմատիվ իրավական ակտերի, այնպես էլ դրանց մեկնաբանության ու կիրառման մեխանիզմների մակարդակով: Իրավական նորմերի մեկնաբանության ժամանակ ուսումնասիրության արդյունքները կարող են ավելի ազատ օգտագործվել: Այս դեպքում իրավունքի նորմը մեկնաբանողը ուսումնասիրում է այլ իրավական համակարգում նմանատիպ հարաբերությունների կարգավորման պայմաններում դրա մեկնաբանության վերաբերյալ առկա նյութերը, որոնք կարող են լինել պաշտոնական կամ ոչ պաշտոնական: Դատարանների, իրավապահ այլ մարմինների և վարչական մարմինների գործունեությունը դրա վառ օրինակներից է: Բովանդակային առումով այն նման է իրավունքի անալոգիային, բայց տարբերությունն այն է, որ այս դեպքում անալոգիա կատարող սուբյեկտը դուրս է գալիս սեփական իրավական համակարգի շրջանակներից և օգտագործում իր համար ոչ պարտադիր իրավական նորմեր:

Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ իրավական գիտությունն իր բնույթով վերազգային է<sup>7</sup>, և ժամանակակից իրավունքը բնորոշող հիմնարար արժեքները համընդհանուր են<sup>8</sup>: Օրենսդրությունն ազգային բնույթ է կրում: Համեմատությ-

յունն այս առումով բավականին արդյունավետ մեթոդ է սեփական իրավական համակարգը զարգացնելու համար, քանի որ այն թույլ է տալիս իրավակիրառ մարմիններին, մասնավորապես դատարաններին ազդել օրենսդրության զարգացման վրա՝ առանց օրենսդրի միջամտության: Իրավական կարգավորման այս ճկուն մեխանիզմը հատուկ է առավելապես անգլոսաքսոնական իրավական ընտանիքի համակարգերին, սակայն բավականին հաջող օգտագործվում է նաև ԵՄ իրավական համակարգում, որտեղ զուգակցվում են կոդիֆիկացված օրենսդրությունն ու դատական նախադեպի ինստիտուտը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիների ընթացքում գործուն քայլեր են կատարվել դատական նախադեպի ինստիտուտի ներմուծման ուղղությամբ, խնդիրների այս եղանակով լուծումը կարելի է համարել լիովին իրատեսական: Այդ դեպքում դատարանը, ուսումնասիրելով այլ երկրներում մասն հարաբերությունների կարգավորման մեխանիզմները, այնտեղ գործող նորմերը, սեփական իրավաստեղծ գործունեության միջոցով կարող է օրենսդրությունը մեկնաբանել հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ինչի միջոցով կարելի է խուսափել օրենսդրական հաճախակի փոփոխություններից և լրացումներից:

Այնուամենայնիվ, հարկ է նկատի ունենալ, որ օրենսդրության մոտարկման կամ մերդաշնակեցման արդյունքները հաճախ կարող են նկատելի չլինել կամ ուղղակիորեն չարտացոլվել փաստաթղթային ձևով: Դրանք ավելի շատ նախապատրաստական փուլում են ունենում իրենց ազդեցությունը և նպաստում իրավական համակարգի զարգացմանը:

Օրենսդրության զարգացումը այլ իրավական համակարգերի հետ մերձեցման ճանապարհով էական փոփոխությունների է ենթարկում պետության իրավական համակարգը և ազդում **օրենսդրական գործու-**

**նեության** վրա: Դա դրսևորվում է տարբեր որակներով և տարբեր ուղորտներում: Միաժամանակ այն մատնանշում է ժամանակակից օրենսդրության զարգացման ուղղությունները:

Հարկ է առաջին հերթին նշել, որ իրավական համակարգերի փոխներգործությունը ազդում է պետության իրավական համակարգի վրա **ամբողջությամբ**: Դրա շնորհիվ փոփոխության է ենթարկվում տվյալ պետության օրենսդրությունն ամբողջությամբ, նրա գրեթե բոլոր ճյուղերը:

Առաջին հերթին այն փոփոխության է ենթարկում **իրավունքի աղբյուրների՝ գոյություն ունեցող համակարգը**: Այդ գործընթացը բնորոշ է և երկու հիմնական՝ ընդհանուր իրավունքի և ռոմանագերմանական իրավական համակարգերին<sup>40</sup>, և այն երկրներին, որոնց իրավական համակարգերը գտնվում են անցումային փուլում: Նախկին սոցիալիստական համակարգի երկրները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, այսօր փոխառնում են ոչ միայն այլ երկրների նորմատիվ իրավական ակտերը, այլև փոփոխության են ենթարկում իրավունքի աղբյուրների համակարգերը: Դրա արդյունքն այսօր ակտիվ օրենսդրական գործունեությունն է, օրենքի՝ որպես հասարակական հարաբերությունների առաջնային կարգավորիչի դերի բարձրացումը, որի հետ միաժամանակ դատական նախադեպը շարունակում է ամրապնդվել որպես օրենսդրության մեկնաբանության, կիրառման և զարգացման կարևորագույն միջոց: Արդյունքում իրավական համակարգում իրավունքի աղբյուրների համակարգն ունենում է հետևյալ պատկերը: Իրավունքի առաջնային աղբյուրն օրենքն է: Վերջինս Սահմանադրության հետ միասին օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով: Մյուս բոլոր ակտերը պետք է համապատասխանեն դրանց: Դատական նախադեպը պետք է բխի օրենքից և հիմնականում սահմանափակվի օրենսդրության մեկնաբանությամբ՝ ապահովելով դրա միասնական կիրառումը և հասարակական հարա-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ**

բերություններին համահունչ զարգացումը: Այն միաժամանակ օրենսդրական գործունեության վրա լուրջ ազդեցություն պետք է ունենա<sup>11</sup>: Իրավունքի աղբյուրների փոփոխության առումով ժամանակակից իրավական համակարգում մեծանում է նաև միջազգային դատական մարմինների նախադեպերի դերն ու նշանակությունը: Դրավառ օրինակներից մեկը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի կիրառումն է ներպետական մարմինների կողմից:

Ներպետական օրենսդրության մերձեցումը հանգեցնում է **հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման խորացման և ընդլայնման**: Ինչպես նշում են որոշ հեղինակներ, իրավական կարգավորման խորացումը ժամանակակից օրենսդրության զարգացման առանցքային ուղղությունն է<sup>12</sup>:

Այսօր պետությունների համագործակցությունն ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ: Դրանք ոչ միայն ներառում են իրավական կարգավորման ավանդական ոլորտները, այլև բազմաթիվ հարաբերություններ, որոնք ձեռք են բերում առանձնակի կարևորություն: Դա պայմանավորում է նաև այդ հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Իրավական կարգավորման ընդլայնումը պայմանավորված է տնտեսական հարաբերությունների խորացմամբ, իրավական կարգավորման ոլորտում տնտեսության դերի բարձրացմամբ և այն կարևոր հանգամանքով, որ ժամանակակից պետությունների իրավունքը իրավական նորմերի համակարգում անպայման պետք է հաշվի առնի գիտատեխնիկական առաջընթացի ուղղակի ազդեցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտների՝ նյութական բարիքների արտադրության, սոցիալական, քաղաքական հարաբերությունների, հոգևոր ոլորտի վրա<sup>13</sup>:

Այդ հանգամանքի ազդեցության արդյունքը պետության օրենսդրության մեջ մի կողմից գոյություն ունեցող ճյուղերի և ինստիտուտների փոփոխությունն է՝ զարգացումը, մյուս կողմից նոր ճյուղերի և ինստիտուտների ձևավորումը: Պետության օրենսդրական գործունեության շնորհիվ ձևավորվում են օրենսդրության նոր, մինչ այդ անհայտ ճյուղեր, օրենսդրության ճյուղերի շատ ինստիտուտներ զարգանալով վերածում են ինքնուրույն ճյուղերի: Արդյունքում օրենսդրությունը սկսում է կարգավորել այնպիսի հասարակական հարաբերություններ, ինչպիսիք են տեղեկատվական հարաբերությունները, էներգետիկ ոլորտը, բնական ռեսուրսների օգտագործումը, գիտության և տեխնիկայի հետ կապված բազմաթիվ հարցեր, շրջակա միջավայրի պահպանությունը, գյուղատնտեսությունը, առողջապահությունը, կրթությունը և այլն: Եթե դրանցից որոշ հարաբերություններ արդեն իսկ կարգավորված են ներպետական օրենսդրությամբ, ապա դրանց իրավական կարգավորումը ձեռք է բերում առավել մանրակրկիտ, բազմակողմանի բնույթ:

Իրավական համակարգերի մերձեցումը օրենսդրության կարգավորման առարկաների մեջ ներառում է ևս մեկ ասպեկտ: Ներպետական օրենսդրությունից պահանջվում է կարգավորել ոչ միայն զուտ ներպետական բնույթի հարցեր, այլև հարցեր, որոնք վերաբերում են պետությունների միջազգային իրավական համագործակցությանը: Դա կարող է ներառել էկոլոգիական իրավունքի, հանցավորության դեմ պայքարի և բազմաթիվ այլ հարցերի շրջանակներում միջազգային համագործակցության հետ կապված խնդիրների լուծման ներպետական մեխանիզմներ:

Վերոնշյալ վերլուծությունները ցույց են տալիս, որ այսօր գիտատեխնիկական առաջընթացը, բնական ռեսուրսների անկանոն օգտագործումը լուրջ խնդիրներ են առաջացրել շրջակա միջավայրի, երկրագնդի էկոլոգիական անվտանգությանը վերա-

բերող հարցերում: Իր բնույթով այն ոչ այնքան ներպետական, որքան միջպետական է, քանի որ էկոլոգիական խնդիրները տարածքային սահմաններ չեն ճանաչում: Հետևաբար, պետություններն այս ոլորտում փորձում են համադրել և նպատակաուղղել իրենց ջանքերը: Դրա դրսևորումներից մեկը օրենսդրական կարգավորման ժամանակ այս հանգամանքը հաշվի առնելն է: Ուստի ժամանակակից օրենսդրության զարգացման եղանակներից մեկը **դրա էկոլոգիական ուղղվածությունն է կամ այսպես կոչված իրավունքի էկոլոգիզացիան**: Այս հանգամանքը պահանջում է ոչ միայն առանձին էկոլոգիական օրենսդրության ձևավորում, այլև օրենսդրության մյուս ճյուղերի էկոլոգիական ուղղվածության մեծացում: Հատկապես բնական պաշարների օգտագործումը կարգավորող օրենսգրքերը և օրենքները պետք է դրույթներ պարունակեն նաև դրանց էկոլոգիական անվտանգության վերաբերյալ:

Հասարակական հարաբերությունների կարգավորման ընդլայնումը հանգեցնում է այն բանին, որ **հանրային իրավական կարգավորման ազդեցությունը գնալով մեծանում է օրենսդրության մեջ**: Այս գործընթացին նախորդեց մի իրավիճակ, երբ շուկայական հարաբերություններին անցման փուլում օրենսդրության բազմաթիվ ճյուղերում մասնավոր իրավական գործունե գնալով մեծացավ: Դա բնորոշ էր շուկայական տնտեսությանն անցում կատարող գրեթե բոլոր պետություններին: Սակայն այս գործընթացին զուգահեռ օրենսդրական զարգացումը պահանջեց շատ հարցերի իրավական իմպերատիվ կարգավորում: Արդյունքում իրավունքի շատ ճյուղերում, որոնք իրենց բնույթով մասնավոր են, մեծացավ հանրային իրավական տարրը: Շատ հեղինակներ նշում են, որ այն դրսևորվում է, օրինակ, պայմանագրային իրավունքի փոփոխություններով և նույնիսկ քաղաքացիաիրավական պայմանագրի բնույթի փոփոխությամբ<sup>14</sup>: Այդ գործընթացը հանգեցնում է պայմանագրային

իրավունքի դասական սկզբունքներից նահանջի՝ պայմանագրի ազատության, կողմերի հավասարության սահմանափակումներով, դրա բովանդակության կանոնակարգմամբ<sup>15</sup>: Հետևաբար այդ հարաբերությունների կարգավորման ժամանակ պետք է հաշվի առնվեն ոչ միայն մասնավոր իրավունքի օրենսգրքերը, այլև այդ հարաբերությունները կարգավորող բազմաթիվ այլ իրավական ակտեր<sup>16</sup>, որոնց առկայությունը պահանջում են ներկայիս օրենսդրության զարգացումները:

Ժամանակակից իրավունքին և օրենսդրությանը բնորոշ է **ակտիվ սոցիալական ուղղվածությունը**: Օրենսդրական զարգացման պայմաններում իրավունքը պետք է ոչ միայն կոչված լինի ապահովելու քաղաքացիների իրավական, ձևական հավասարությունը, այլև որոշակի մեխանիզմներ ստեղծի նրանց փաստական և նյութական հավասարությունն ապահովելու համար: Դրանով պայմանավորած՝ օրենսդրության մեջ աստիճանաբար զարգանում է սոցիալական օրենսդրությունը: Օրենսդրության զարգացման այս ուղղությունը չպետք է ընկալել միայն սոցիալական, նյութական առումով: Հանրային իրավունքի ներխուժումը մասնավոր իրավական ոլորտ, իրավահարաբերության առավել թույլ կողմերի իրավական պաշտպանությունը նույնպես այս զարգացումների արդյունքն են: Դա բնորոշ է բազմաթիվ երկրների օրենսդրություններին, ուստի ժամանակակից իրավունքի զարգացման բնութագրիչներից մեկը իրավունքի սոցիալիզացիան է:

Ժամանակակից պետության օրենսդրությունը զարգանում է ևս մեկ ուղղությամբ: Դա պայմանավորված է և՛ երկու հիմնական՝ ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերի փոխներգործությամբ և՛ միջազգային իրավական նորմերի ազդեցությամբ: Այդ գործընթացն անվանում են **իրավական կարգավորման մեջ ընթացակարգերի և ընթացակարգային նորմերի դերի մեծացում**:

Հայտնի է, որ նախադեպային իրավուն-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ**

քում դատական իրավունքի գերակայության, պառլամենտի պասիվ օրենսդրական գործունեության պայմաններում դատարանները շատ դեպքերում իրենց գործունեության ընթացքում ստիպված էին ձևավորել ոչ միայն նյութական, այլև ընթացակարգային բնույթի նորմեր<sup>17</sup>: Ընդ որում, դրանք իրենց կարևորությամբ չէին զիջում նյութական նորմերին: Այսօր ընդհանուր իրավունքի այդ հատկանիշը մեծ դեր է ստանում նաև ռոմանագերմանական իրավական համակարգում: Մյուս կողմից օրենսդրության զարգացման այս միտումը պայմանավորված է միջազգային դատական ատյանների ձևավորած սկզբունքներով, որոնք պահանջում են մարդու իրավունքների ապահովման համար սահմանել ոչ միայն նյութական, այլև ընթացակարգային երաշխիքներ: Հետևաբար ժամանակակից պետության օրենսդրության մեջ պետք է մեծանան ընթացակարգային նորմերը, որի արդյունքը ընթացակարգերի բարդացումը և միաժամանակ ընթացակարգային ձևերի կատարելագործումն է<sup>18</sup>: Այս գործընթացն սկսվում է դատական համակարգի բարեփոխումներից, դատարանների դերի բարձրացումից, դատավարական նորմերի կատարելագործումից: Դրա արդյունքում ոչ միայն արմատական փոփոխությունների են ենթարկվում քրեական և քաղաքացիական դատավարությունները, այլև առանձին և մանրամասն օրենսդրական կարգավորում է ստանում վարչական դատավարությունը: Բացի այդ, օրենսդրության տարբեր ճյուղերում դրանց առանձնահատկությունների հաշվառմամբ պայմանավորված՝ կարող են սահմանվել դատավարական առանձնահատուկ նորմեր: Այս առումով առանձնակի կարևորվում են նաև սահմանադրական արդարադատությունը, դրա կատարելագործումը:

Հարկ է նշել, որ ընթացակարգային օրենսդրության զարգացումն ուղղված է

նաև վարչական իրավահարաբերությունների ոլորտին: Օրենսդրությունը պետք է մանրամասն կարգավորի վարչական վարույթի ընթացքը, դրանով նույնպես պետք է ապահովվեն մարդու ընթացակարգային իրավունքները, ստեղծվեն լուրջ երաշխիքներ: Արդյունքում օրենսդրության շատ ընթացակարգային ենթաճյուղեր կարող են ձեռք բերել իրավունքի առանձին ճյուղի կարգավիճակ: Բացի այդ, ընթացակարգային նորմերի դերի բարձրացումը պետք է հանգեցնի այնպիսի վիճակի, որ ոչ միայն դատարանները, այլև վարչական մարմինները վարույթն իրականացնեն օրենսդրության բոլոր պահանջներին համապատասխան, իսկ դրանից ցանկացած շեղում պետք է հանգեցնի դրա արդյունքում ընդունված ակտի, գործողության կամ անգործության անվավերության կամ բեկանման: Արդյունքում վարչական ընթացակարգային նորմերը ձեռք կբերեն նոր բովանդակություն՝ նպատակամղվելով իրական իրավական մեխանիզմների և ընթացակարգերի ձևավորմանը, որը կապահովի անձի, նրանց միավորումների իրավունքների և օրինական շահերի իրականացումը և վարչական մարմինների օրինական գործունեությունը<sup>19</sup>:

Պետությունների իրավական համագործակցությունը չի սահմանափակվում միայն օրենսդրական գործունեությամբ և վերոնշյալ ուղղություններով օրենսդրության (մեղ առումով) զարգացմամբ: Արդեն նշվեց, որ համեմատական ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտագործվել նաև իրավակիրառ ոլորտում: Ուստի օրենսդրությունների մերձեցման գործընթացն ազդում է նաև **իրավակիրառ գործունեության վրա**: Դա պայմանավորված է նաև իրավունքի աղբյուրներում ոչ միայն օրենքների, այլև դատական իրավաստեղծագործության մեծացմամբ: Իրական համագործակցության պայմաններում այս գործընթացի էությունը հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումից (նորմերից) բացի նաև



դրա կիրառական պրակտիկայի մերձեցումն է:

Տարբեր երկրների օրենսդրական մերձեցման շնորհիվ պետությունների օրենսդրություններն ընդհանուր շատ գծեր են ձեռք բերում: Սակայն օրենսդրական բազայի ձևավորումից հետո սկսվում է այն կիրառելու գործընթացը: Դատաիրավական բարեփոխումները, դատավարական ընթացակարգերի կատարելագործումը, դատական նախադեպի տարրերի ներդրումը նպատակն են հետապնդում ապահովելու իրավակիրառ պրակտիկայի կազմակերպչական մեխանիզմների համապատասխանեցումը քաղաքակիրթ երկրներում գործող մեխանիզմներին: Դրա հետ մեկտեղ օրենսդրության մեկնաբանությունը, կիրառական պրակտիկան նույնպես պետք հիմնվեն միջազգային չափանիշների կամ այլ երկրների պրակտիկայի վրա՝ հաշվի առնելով տվյալ երկրի առանձնահատկությունները:

Այս առումով այսօր պետությունների իրավակիրառական պրակտիկայում գնալով տարածում է ստանում վեճերի լուծումը՝ հիմք ընդունելով միջազգային դատական կամ այլ մարմինների պրակտիկան: Այն ընդհանուր չափանիշներ է սահմանում բոլոր պետությունների համար, ուստի դրա հիման վրա ներպետական իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը նույնպես պետությունների իրավական համագործակցության ձևերից է: Դա առավել վառ դրսևորվում է մարդու իրավունքների ոլորտում: Այսօր հատկապես պետությունների սահմանադրական դատարանների գործունեության ընթացքում հաճախ է հանդիպում սահմանադրության նորմերի մեկնաբանության ժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերին հղում կատարելու պրակտիկան: Այն դրսևորվում է նաև բարձրագույն դատական աստիճանների կողմից օրենսդրությունը մեկնաբանելիս: Այլ ոլորտներում համագործակցության ժամանակ, երբ ներպետական օրենսդրությունը ձևավորվում է

այլ իրավական համակարգերի օրենսդրությունների հիման վրա, այդ երկրների պրակտիկայի ուսումնասիրությունը նույնպես կարող է օգտակար լինել օրենսդրության մերձեցման հարցում: Դա բացատրվում է նաև նրանով, որ ժամանակակից պետությունների իրավական համակարգերում նորմերի բովանդակությունն ամբողջական ըմբռնելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենսդրական նորմերի, այլև դրա կիրառական պրակտիկայի և դրանց դատական մեկնաբանությունների ուսումնասիրությունը: Իրավական համակարգի զարգացման այս ուղղությունը դեռևս լուրջ կիրառում չունի, սակայն կարևոր գործոն է պետությունների օրենսդրության մերձեցման գործընթացում:

Ի վերջո, օրենսդրության մերձեցումը, իրավական արժեքների, գաղափարների մոտեցումն ազդում են **հասարակության իրավագիտակցության վրա**: Այս դեպքում օրենսդրական ակտերի առկայությունը, դրանց հետևողական կիրառումը հասարակության անդամների մոտ ձևավորում են համապատասխան վերաբերմունք գործող իրավունքի նկատմամբ: Ժամանակակից իրավունքի համար ընդհանուր արժեքները, տնտեսական և գիտատեխնոլոգիական առաջընթացների վերաբերյալ իրավական մոտեցումները աստիճանաբար ներխուժում են ներպետական մակարդակ և դառնում ցանկացած պետության իրավական համակարգի զարգացման կարևորագույն գործոն՝ հաշվի առնելով տվյալ հասարակության զարգացման պատմական, աշխարհագրական և մշակութային գործոնները<sup>20</sup>:

Այսպիսով, կարող ենք նշել, որ իրավական համակարգը զարգացնելու ժամանակակից առավել արդյունավետ եղանակներից մեկը օրենսդրության մերձեցումն է: Մինչ վերջնական արդյունքին հասնելը դրան նախորդում են համեմատական ուսումնասիրության լուրջ աշխատանքներ: Դրա արդյունքը օրենսդրությունն այլ երկրների օրենսդրությանը մոտեցնելն է: Ընդ ո-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

րում, վերոնշյալ ուսումնասիրությունները թույլ են տալիս արդեն միանշանակ հիմնավորված համարելու այն դիրքորոշումը, որ այս դեպքում օրենսդրության մերձեցում ասելով պետք է հասկանանք օրենսդրությունը լայն առումով՝ դրա մեջ ընդգրկելով ոչ միայն օրենքները, այլև բոլոր նորմատիվ իրավական ակտերը: Այդ դեպքում ակնհայտ է դառնում, որ օրենսդրության մերձեցումը պետք է լինի ողջ պետական ապարատի գործունեության ուշադրության կենտրոնում:

Օրենսդրության մերձեցման եղանակով սեփական իրավական համակարգը զարգացնելիս, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնվեն մի շարք հանգամանքներ: **Այս գործընթացը նպատակամղված է ոչ միայն սեփական իրավական համակարգը զարգացնելուն, այլև միջազգային ստանդարտներին ձևականորեն համապատասխանեցնելուն:** Ուստի դա պետք է հետողական բնույթ կրի: Պետության իրավական համակարգը այլ պետությունների իրավական համակարգերին մոտեցնելու ժամանակ պետք է հաշվի առնվեն այն պատճառները, որոնք անհրաժեշտ են դարձնում այդ գործընթացը: Այս տեսանկյունից առաջնային կարևորություն է ձեռք բերում պետական շահը: Օրենսդրության մերձեցումը չպետք է կրի մշտապես միակողմանի, սեփական շահերից չբխող գործողությունների բնույթ: Եթե պետության համար օրենսդրության մերձեցումը առաջնային է դառնում տնտեսական համագործակցության նկատառումներով, ապա պետք է հաշվի առնվեն այն երկրները, տնտեսական համակարգերը, որոնց հետ համագործակցությունը պետական քաղաքականության առանցքային ուղղություններից է, և որոնց հետ պետությունը որոշել է համագործակցել: Ուստի պետության իրավական քաղաքականությունը պետք է ոչ միայն հետևի առաջարկվող փոփոխություններին, այլև լի-

նի բավականաչափ հիմնավորված ներպետական շահի տեսանկյունից: Օրենսդրության մերձեցման ժամանակ անհրաժեշտ է ելնել Սահմանադրության դրույթներից, դրանում ամրագրված իրավական արժեքներից, քանի որ ժամանակակից պետության իրավական համակարգում Սահմանադրությունը յուրօրինակ դեր և նշանակություն ունի<sup>21</sup>, իսկ ժամանակակից պետությանը բնորոշ է նաև դրա արտաքին քաղաքականության սահմանադրականացումը<sup>22</sup>:

\*\*\*

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի, օրենսդրության, իրավունքի աղբյուրների ուսումնասիրությունը հիմք է տալիս հետևություն անելու, որ ՀՀ օրենսդրությունն այլ երկրների օրենսդրությանը, այլ իրավական համակարգերին մոտարկելու գործընթացը պետք է ներառի իրավունքի աղբյուրներն ամբողջությամբ: Այլ կերպ ասած՝ պետք է մոտարկվեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում թվարկված բոլոր իրավական ակտերը՝ օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, դատական ակտերը:

Սակայն մոտարկման ժամանակ չի կարելի միևնույն մոտեցումը ցուցաբերել: Անհրաժեշտ է առաջին հերթին առանձնացնել օրենքների մոտարկման կարևորությունը: Մյուս իրավական ակտերի միջոցով մերձեցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել դրանց առանձնահատկությունները:

Եվրոպական միության օրենսդրության հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մերձեցումը (մոտարկումը) բխում է ոչ միայն ՀՀ-ԵՄ տնտեսական համագործակցությունից: Այսօր Հայաստանի Հանրապետությունը լուրջ տնտեսական շահեր ունի նաև ԱՊՀ երկրներում, հատկապես Ռուսաստանի Դաշնությունում: Գրականության մեջ ընդգծվում է, որ նույն ՌԴ օրենսդրության զարգացման հետագա ուղղությունը վերջինիս օրենսդրության ներդաշնակեցումն է եվրոպական երկրների և

ԱՊՀ երկրների օրենսդրությունների<sup>23</sup>: Այդ նպատակին հասնելու համար առավել արդյունավետ է համարվում կողմնորոշու- մը դեպի Եվրոպական ընկերակցության ի- րավական ստանդարտները<sup>24</sup>: Դա պայմա- նավորված է նաև Ռուսաստան-Եվրոպա հարաբերությունների զարգացմամբ<sup>25</sup>: Ուս- տի ՀՀ օրենսդրության մերձեցումը ԵՄ օ- րենսդրությանն անուղղակիորեն կնպաս- տի նաև ՌԴ և ԱՊՀ երկրների հետ ՀՀ օ- րենսդրության մերձեցմանը:

Այնուամենայնիվ, օրենսդրության մեր-

ձեցումը չպետք է հանգեցնի օրենսդրու- լյան միասնականության, իրավական ակ- տերի ստորադասության խաթարման և հա- կասությունների: Մերձեցման ժամանակ պետք է հաշվի առնվեն օրենսդրության համեմատության բովանդակային չափա- նիշները, քանի որ օրենսդրության զարգա- ցումը պետք է ապահովի դրա հստակու- լունը, անհակասականությունը և հասարա- կական հարաբերություններին համահունչ լինելը:

<sup>1</sup> Տե՛ս С. В. Поленна, О. А. Гаврилов, Н. П. Колдева, Е. Г. Лукьянова, Е. В. Скурко. Воз- действие глобализации на правовую систе- му России. Государство и право, 2004. No 3, с. 5-6.  
<sup>2</sup> Տե՛ս С. В. Поленна, О. А. Гаврилов, Н. П. Колдева, Е. Г. Лукьянова, Е. В. Скурко. Воз- действие глобализации на правовую систе- му России. Государство и право, 2004, No 3, с. 8.  
<sup>3</sup> Տե՛ս И. И. Лукашук. Бзаимодействи между- народного и внутригосударственного права в условиях глобализации. Журнал российс- кого права, 2002, No 3, с. 115.  
<sup>4</sup> Տե՛ս Е. Г. Лукьянова. Основные тенденции развития российского права в условиях глобализации. Государство и право, 2004, No 7, с. 84.  
<sup>5</sup> Տե՛ս Ф. М. Раянов, А. И. Бобылев, Р. Г. Миннихметов и др. Актуальные теоре- тические проблемы правовой системы общества. Государство и право, 2004, No 7, с. 109.  
<sup>6</sup> Տե՛ս М. Н. Марченко. Теория государства и права, Москва, 2007, с. 549.  
<sup>7</sup> Տե՛ս Р. Давид, К. Жофре Спинози. Основные правовые системы современ- ности. Москва, 1998, с. 5.  
<sup>8</sup> Տե՛ս William Twining. Globalization and Comparative Law. Comparative Law. Ed. By Esin Orucu and David Nelken, Oxford and Portland, Oregon, 2007, p. 76.  
<sup>9</sup> Տե՛ս Sjef Van Erp. Comparative Private Law in

Practice: The Process of Law Reform. Comparative Law. Ed. By Esin Orucu and David Nelken, Oxford and Portland, Oregon, 2007, p. 408.

<sup>10</sup> Տե՛ս К. Цвайгерт, Х. Кетц. Введение в сравнительное правведение в сфере частного права. в 2 томах. Том 1, Москва, Межд. Отн., 1998, с. 139.  
<sup>11</sup> Տե՛ս С. В. Бошно. Влияние судебной практики на законодательство. Государст- во и право, 2004, No 8, с. 14-22.  
<sup>12</sup> Տե՛ս Систематизация законодательства в РФ, под ред. А. С. Погोलкина, СПб, 2003, с. 20.  
<sup>13</sup> Տե՛ս Е. Г. Лукьянова. Основные тенденции развития российского права в условиях глобализации. Государство и право, 2004, No 7, с. 85.  
<sup>14</sup> Տե՛ս В. В. Иванов. К Вопросу об общей тео- рии договора. Государство и право, 2000, No 12, с. 77.  
<sup>15</sup> Տե՛ս Е. Г. Лукьянова. Основные тенденции развития российского права в условиях глобализации. Государство и право, 2004, No 7, с. 87.  
<sup>16</sup> Տե՛ս օրինակ՝ Б. Н. Топорнин. Правовая сис- тема России в условиях глобализации и ре- гиональной интеграции. Обзор материалов. Государство и право, 2004, No 11, с. 102.  
<sup>17</sup> Տե՛ս M. Glendon, M. Gordon, Ch. Osakwe. Comparative Legal Traditions, St. Paul, 1994, p. 221.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

<sup>18</sup> Տե՛ս օրհնակ՝ Ս. Վ. Поленна, О. А. Гаврилов, Н. П. Колдева, Е. Г. Лукьянова, Е. В. Скурко. Воздействие глобализации на правовую систему России. Государство и право, 2004, No 3, с. 12.

<sup>19</sup> Տե՛ս Ս. Д. Князев. Административное право: предмет, система, реформирование. Правоведение, 2002, No 5, с. 53.

<sup>20</sup> Տե՛ս Ս. Վ. Поленна, О. А. Гаврилов, Н. П. Колдева, Е. Г. Лукьянова, Е. В. Скурко. Воздействие глобализации на правовую систему России// Государство и право, 2004, No 3, с. 14.

<sup>21</sup> Տե՛ս Актуальные теоретические проблемы правовой системы общества// Государство и право, 2004, No 7, с. 108.

<sup>22</sup> Տե՛ս И. И. Лукашук. Взаимодействие международного и внутригосударственного права в условиях глобализации// Журнал российского права, 2002, No 3, с. 115.

<sup>23</sup> Տե՛ս Е. Г. Лукьянова. Основные тенденции развития российского права в условиях глобализации// Государство и право, 2004, No 7, с. 85.

<sup>24</sup> Տե՛ս А. Захаров, О. Кутафин. Концепция единого правового пространства Европы, ЕВРАЗЭС и СНГ// Право и экономика, 2003, No 3, с. 11.

<sup>25</sup> Տե՛ս М. С. Савин, Н. В. Кроткова и др. За развитие Российского-Европейского диалога// Государство и право, 2004, No 11, с. 110-112.

---

## APPROXIMATION OF THE LEGISLATION AS A FORM OF DEVELOPMENT OF LEGAL SYSTEMS

**Gor TOROSYAN**

*PhD student of chair of European and International law of Erevan State University*

---

The article discusses such an actual topic, as the approximation of law, which is one of the most important ways of development of modern legal system.

The author tries to present the important preconditions, which make indispensable the development of legal system by the way of approximation of law. According to the author these preconditions are the present tendencies of the development of social-economic relations, where law and national legal system become global entity.

Underlining that comparative analysis are the first stage of approximation process, the article also discusses particularly the spheres, where the results of comparative

analyses must be inset . They are first of all law-making and law-applying activities.

As a result the author presents the qualitative characteristics and ways of development of modern legislation, which are direct and indirect results of approximation and are also typical to the Armenian legislation and legal system development. They start with the changing of sources of law, include the recession of legal regulation of social relations, ecologization and socialization of law, improvement of procedural norms.

The article is an effort to show and prove, that the approximation of law will significantly promote the development of Armenian legal system. In this contest the approximation of Armenian legislation to that of the EU is very important, which will simultaneously promote the approximation of legislation of the Republic of Armenia to CIS countries.

---

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ****ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԱՐԿՄԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ****ԱՃՆԱ ՀԱՎՈՐՅԱՆ**

*ԵՊՀ Եվրոպական և միջազգային  
իրավունքի ամբիոնի դասախոս*

**Ներածություն.** Վերջին տարիներին առավել հաճախ ենք բախվում իրավական մոտարկում կամ մերժեցում, իրավական ներդաշնակեցում (հարմոնիզացիա) տերմիններին, որոնք հատկապես արդիական են Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև հարաբերությունների սերտացման համատեքստում: Դեռևս 1999 թվականից Հայաստանի Հանրապետությունը, Եվրոպական ընկերակցության ու անդամ պետությունների հետ ստորագրելով Գործընկերության ու համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ ԳՀՀ), պատրաստականություն է հայտնել իր օրենսդրությունը մերժեցնել Եվրոպական Միության օրենսդրության չափանիշներին: Այդ մասին է վկայում ԳՀՀ 43-րդ հոդվածը, որը սահմանում է.

*«1. Կողմերն ընդունում են, որ Հայաստանի Հանրապետության և Ընկերակցության միջև տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարևոր պայման է այն, որ Հայաստանի Հանրապետությունը գործող, ինչպես նաև ապագա օրենսդրությունը մերժեցվի Համայնքի օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը կձգտի անել այնպես, որ իր օրենսդրությունն աստիճանաբար դառնա համատեղելի Ընկերակցության օրենսդրությանը: .....»<sup>1</sup>:*

Սակայն ծագում են մի շարք հարցեր, որոնք պարզաբանման կարիք ունեն, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այդ պարզաբանումները և դրանց աղբյուրները միշտ չէ, որ հասանելի կամ մատչելի են հատկապես հայ ընթերցողին: Այդպիսի չպարզաբանված մի շարք խնդիրներից, որոնց անդրադարձ կկա-

տարվի սույն աշխատանքում, կարելի է առանձնացնել հետևանքները՝ մոտարկել ինչին, իսկ ավելի կոնկրետ՝ ի՞նչ է իրենից ներկայացնում «Ընկերակցության/Միության օրենսդրությունը»<sup>2</sup>, ինչո՞վ են պայմանավորված մոտարկվող օրենսդրության ծավալը և մոտարկման աստիճանը, որքանո՞վ է այս մոտարկման գործընթացը պարտադիր, և ինչպիսի՞ն են Եվրոպական Միության արտաքին հարաբերություններում մոտարկման այլ փորձերը:

**Օրենսդրական ներդաշնակեցումը Եվրոպական միությունում**

ԵՄ անդամ պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցումը մեծապես նպաստել է Եվրոպական միության ներսում ընդհանուր շուկայի (ապրանքների, անձանց, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժի) գործունեությանը: Եվրոպական Միությունը իր ներքին շուկայի ձևավորման գործընթացում հիմնվել է ինտեգրման երկու հիմնական եղանակների վրա՝ պոզիտիվ և նեգատիվ<sup>3</sup>: Մեզ համար հատկապես հետաքրքրական է պոզիտիվ ինտեգրումը, որը ենթադրում է ԵՄ-ում ներդաշնակեցնող օրենսդրության ընդունումը ներքին շուկայի գործունեությունը ու կայացումը ապահովելու նպատակով: Մինչդեռ նեգատիվ ինտեգրման դեպքում ներքին շուկայի գործունեությունը ապահովվում է հիմնադիր պայմանագրի դրույթներով կամ Եվրոպական դատարանի նախադեպերով անդամ պետությունների վրա նեգատիվ պարտավորության սահմանմամբ, այսինքն՝ որոշակի գործողության կատարումից ձեռնպահ մնալու պարտավորությամբ (օր՝ ազատությունը սահմանափակող ակտի ընդունում): Ինչ վերաբերում է պոզիտիվ ինտեգրմանը, ապա այն տեղի է ունեցել վերազգային մակարդակում ներդաշնակեցնող օրենսդրության ընդունմամբ, ո-

րին էլ ԵՄ անդամ պետությունները պարտավոր են ներդաշնակեցնել իրենց ազգային օրենսդրությունը: Այսպիսով, ներքին շուկայի գործունեությունը երաշխավորող միջոցներից մեկը հենց օրենսդրական ներդաշնակեցումն է, որի մանրամասն ընթացակարգը սահմանված է Լիսաբոնի պայմանագրի 114 հոդվածում (նախկինում՝ Չռոմի պայմանագրի 95 հոդված): Օրենսդրական ներդաշնակեցումը պարտադիր է եղել Եվրոպական Միության անդամ պետությունների միջև խոր և համապարփակ տնտեսական ինտեգրման գործառնությունը ապահովելու առումով, հակառակ դեպքում Միությունը չէր կարող իր անդամ պետություններում առկա բազմազան կարգավորումների պայմաններում ապահովել խտրական վերաբերմունքի արգելքը որպես ընդհանուր շուկայի կայացման հիմք<sup>4</sup>:

**Իրավական մոտարկումը ԵՄ արտաքին հարաբերություններում**

Իրավական մոտարկումը կամավոր բնույթ է կրում և կարող է բնորոշվել որպես մի գործընթաց, «որում երրորդ պետությունը հարմարեցնում է իր ազգային օրենսդրությունը Միության իրավունքի կանոններին, որոնք այդ պետության համար պարտադիր բնույթ չեն կրում, և դրանց ձևավորման գործընթացում այդ պետությունը ոչ մի իրական մասնակցություն չի ունեցել»<sup>5</sup>: Եվրոպական Միությունը, արտաքին հարաբերություններում սահմանելով ոչ անդամ պետությունների օրենսդրությունը ԵՄ չափանիշներին մոտարկելու պայմաններ, տրամաբանորեն չի որդեգրում (և նույնիսկ ցանկության դեպքում չէր էլ կարող) այն միևնույն մոդելը, ինչ ներքին շուկայի գործառնությունը ապահովող ներդաշնակեցնող օրենսդրության դեպքում: Իրավական մոտարկումը ԵՄ արտաքին հարաբերություններում էականորեն տարբերվում է ԵՄ ներքին օրենսդրության ներդաշնակեցման գործընթացից, այդ իսկ պատճառով հարկավոր է չչփոթել և համեմատականներ չտանել այս երկու գործընթացների միջև: Այդուհանդերձ, հավանաբար հենց ներքին շուկայի գործառնության մեջ ունեցած հաջողությամբ է պայմանավորված այն փաս-

տը, որ իր արտաքին հարաբերություններում ևս օրենսդրական համակարգերի մերձեցումը (սակայն ոչ ներդաշնակեցումը) դիտվում է որպես ԵՄ ներքին շուկայում մասնակցության նախապայման: Այլ կերպ ասած՝ իրավական մոտարկումը միակողմանի գործունեություն է, որով երրորդ պետությունը ինչպես նաև տալիս է արտաքին իրավական համակարգի կանոնները, ինչը առավելապես տեխնիկական գործընթաց է: Իրականում խոսելով իրավական մոտարկման «պարտավորության» մասին՝ հարկավոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ իրավական մոտարկումը միջազգային իրավական առումով երրորդ պետության կողմից ստանձնած պարտավորությունն չէ: Թեկուզ իրավական մոտարկումը սահմանված է Եվրոպական միության և երրորդ պետության միջև կնքված միջազգային համաձայնագրում<sup>6</sup>, այդուհանդերձ այդ դրույթների մեկնաբանությունից հետևում է, որ դրանք լավագույն ջանքերի գործադրման պատրաստակամություն են սահմանում և հստակ պարտավորություն այդ պետության համար չեն նախատեսում<sup>7</sup>: Ուստի իրավական մոտարկման անարդյունավետության կամ երրորդ պետության կողմից մոտարկման պատրաստակամության բացակայության դեպքում միջազգային համաձայնագրի խախտում չի դառնա:

Իրավական մոտարկում տերմինը գրականության մեջ հաճախ փոխարինվում է «եվրոպականացում»-ով տերմինով: Այսպես, եվրոպականացումը բնորոշվում է որպես պետությունների կողմից Եվրոպական միության կանոնների ադապտացիան տարբեր աստիճաններով<sup>8</sup>: Այդ պետությունները, որոնք ադապտացնում են «Եվրոպական միության կանոնները» «բախվում են այն իրականությանը, որ իրենք պարտավորված են ադապտացնել այնպիսի կանոններ, որոնց ծավալը և բովանդակությունը հստակորեն սահմանված չեն:

Այսպիսով, ի՞նչ են իրենցից ներկայացնում այն իրավական կանոնները, որոնց ԵՄ-ի հետ հարաբերությունները սերտացնելու նպատակով նրա անդամ չհանդիսա-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷ**

ցող պետությունները մոտարկում են իրենց օրենսդրությունը:

Եվրոպական միության իրավական կանոնները իրենց բնորոշում են ստացել «*acquis communautaire*» հասկացության ներքո, որը հաճախակի կիրառվում է թե՛ Եվրամիության վերաբերյալ գրականությունում և թե՛ ուղղորտի պաշտոնյաների բառապաշարում: Իրականում այս տերմինը ներառում է ավելին քան ԵՄ-ի իրավական կանոնները: «*Acquis communautaire*»-ը ֆրանսիական տերմին է, որը բնորոշվում է որպես Եվրոպական ընկերակցության ժառանգությունը (կամ ձեռքբերումները), այն է՝ կանոնների, սկզբունքների, հռչակագրերի, բանաձևերի, դիրքորոշումների, կարծիքների, նպատակների և պրակտիկայի ամբողջությունը, որոնք վերաբերում են Եվրոպական ընկերակցություններին [ներքևում բերվող բնորոշումներում՝ Եվրամիությանը և ոչ բացառապես ընկերակցություններին], կրում են պարտադիր կամ ոչ պարտադիր բնույթ, որոնք զարգացել են իրենց հիմնադրման իսկ պահից և ընդունվել են Ընկերակցության [Միության] և անդամ պետությունների կողմից որպես իրենց գործողությունները ղեկավարող ակտեր<sup>9</sup>: Եվրոպական միության ապագայի մասին Լեյքենի դեկլարացիան ճանաչում է «*acquis communautaire*»-ի կարևորությունը անդամ պետությունների և Եվրոպական միության միջև իրավասության սահմանների անցկացման առումով: Եվրոպական հանձնաժողովը հստակորեն ընդգծել է, որ «*acquis communautaire*»-ի միասնական ընկալումը պարտադիր է ԵՄ ապագա օրենսդրության դյուրացման և կողիֆիկացիայի համար<sup>10</sup>:

«*Acquis communautaire*»-ն անկասկած եղել է Եվրոպական ինտեգրման հիմնարար հասկացություններից մեկը հատկապես Եվրոպական Միության դեպի արևելք ընդլայնման շրջանում, սակայն այս հասկացության բովանդակությունը ոչ միշտ է միասնականորեն ընկալվել և մեկնաբան-

վել՝ հավանաբար այն պատճառով, որ *acquis communautaire*-ի բովանդակությունն ու ծավալը ֆիքսված չեն, և դրանց կիրառությունը Եվրոպական Միության թե՛ ներսում և թե՛ դրանից դուրս միանման չէ: Այդ իսկ պատճառով հաճախ վիճարկվում է, որ *acquis communautaire*-ն իր բովանդակությամբ և ծավալով կախված է իր իսկ կիրառման նպատակից: Այս առումով տարանջատվում է *acquis communautaire*-ի կիրառությունը ներկայիս անդամ պետությունների կողմից: Անհրաժեշտ է առանձնացնել, որ անդամ պետությունները պարտավորված են ընդունել *acquis communautaire*-ը Եվրոպական միությունը հիմնադրող Մասստրիխտի համաձայնագրի հոդված 2-ի ուժով: Ինչ վերաբերում է *acquis communautaire*-ի դրսևորվումանը արտաքին հարաբերություններում, ապա այն պայմանավորված է Եվրոպական միության և անդամ չհանդիսացող պետության միջև կնքված միջազգային համաձայնագրով: Ուստի *acquis communautaire*-ի բովանդակությունը և ծավալը իր ներքին և արտաքին դրսևորումներում միատեսակ չեն, քանի որ կախված են կոնկրետ կիրառման նպատակներից ու խնդիրներից: Պարզաբանելու նպատակով նշենք, որ *acquis communautaire*-ի ներքին դրսևորման նպատակը Եվրոպական միության/ընկերակցության ձեռքբերումների միասնական զարգացման և գործառնության ապահովումն է: Ինչ վերաբերում է *acquis communautaire*-ի արտաքին հարաբերություններում կիրառման նպատակին, ապա այն դրսևորվում է երկու առումով՝ 1) նախ երրորդ պետության հետ հարաբերություններում հասնել ԵՄ արտաքին քաղաքականության կոնկրետ նպատակին (հիմնականում՝ միջազգային համաձայնագրի միջոցով); 2) խթանել ԵՄ-ի հետ հարաբերությունները սերտացնելուն ուղղված երրորդ պետությունում իրականացվող տնտեսական, քաղաքական և իրավական բարեփոխումների գործընթացները<sup>11</sup>:

Սույն թեմայի առարկայի առումով առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում *acquis communautaire*-ի արտաքին դրսևոր-



րումը, որին և անդրադարձ կկատարվի ստորև: Ինչ վերաբերում է դրա ներքին դրսևորմանը, ապա այս պարագայում բավարար ենք համարում անդրադառնալ դրա բովանդակությանը, որը ներառում է Ընկերակցության հենասյան շրջանակներում ընդունված օրենսդրությանը, ներառյալ միջազգային համաձայնագրերին, ինչպես նաև երկրորդ և երրորդ հենասյան շրջանակներում ընդունված օրենսդրությունը: Առաջին հայացքից շփոթության տեղիք է տալիս այս հասկացության բովանդակությունը, քանի որ տերմինն ինքնին հուշում է, որ բովանդակությունը ներառելու է առաջին հենասյան շրջանակներում ընդունված պարտադիր օրենսդրությունը<sup>12</sup>, սակայն այս տերմինի մեկնաբանությունը և դրա կիրառությունը վկայում են այն մասին, որ դա ամենևին այդպես չէ, և այն ներառում է Եվրոպական միության ողջ իրավական ակտերի համալիրը: Ընդօժենք այն հանգամանքը, որ չնայած *acquis communautaire*-ի հասկացությանը մենք հանդիպում ենք Մասստրիխտի համաձայնագրում, սակայն այն բացակայում է Եվրոպական Միության մասին և Եվրոպական Միության գործունեության մասին Լիսաբոնի համաձայնագրում<sup>13</sup>:

Եվրոպական միության արտաքին հարաբերություններում իրավական մոտարկումը հատկապես տարածված էր նախաանդամակցական գործընթացում: Այդ իսկ պատճառով *acquis communautaire*-ը իր ամենախորը և լայնածավալ կիրառություն է ստանում հատկապես ԵՄ ընդլայնման գործընթացում: Այս կոնտեքստում այն ստանում է «*accession acquis*» անվանումը, այսինքն՝ անդամակցություն *acquis*: «*Accession acquis*»-ն Կոպենհագենի չափանիշների ամենաբնորոշիչ տարրն է և, ի թիվս այլոց, ներառում է «անդամակցության պարտավորությունները կրելու ունակությունը, ներառյալ քաղաքական, տնտեսական և արժույթային միության նպատակներին միանալը»<sup>14</sup>: «*Accession acquis*»-ն ընդգրկում է ոչ միայն Միության *acquis*-ն, այլ այն ամենը, ինչ ձեռք է բերվել Միության երեք հենասյունների շրջանակնե-

րում, ներառյալ հիմնադիր պայմանագրերի քաղաքական նպատակները: Այսպիսով, «*accession acquis*»-ն նոր պետության անդամակցության պահին առկա իրավիճակն է, որը ներառում է կիրառման համար պարտադիր օրենսդրության, դատական նախադեպերի և ԵՄ արտաքին քաղաքականության նպատակների ամբողջությունը, որը պետք է ընդունվի նոր անդամ պետության կողմից: Դրանից զատ, թեկնածու պետությունները պարտավորվում են երաշխավորել «*accession acquis*»-ի արդյունավետ կիրառությունը համապատասխան վարչական և դատական երաշխիքների միջոցով<sup>15</sup>, ինչը ենթադրում է տվյալ պետության վարչական պրակտիկայի կատարելագործում և վարչական համակարգի լայնածավալ բարեփոխումներ:

Թեկնածու պետությունների կողմից իրականացվող իրավական մոտարկման որակը և արդյունավետությունը հաճախ ենթարկվում են խիստ քննադատության: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նույնիսկ անդամակցությունից հետո շատ պետություններ դեռևս շարունակում են մոտարկման գործընթացը: Այդուհանդերձ, այս պետությունների համար օրենսդրական և վարչական պրակտիկայի մոտարկման համար նպատակ է եղել անդամակցությունը Եվրոպական Միությանը, որը և խթանել է օրենսդրական բարեփոխումների իրականացման ընթացքը և արդյունավետությունը: Այսպիսով, նկատի ունենալով 2004 և 2007թթ. Միությանը անդամակցած 12 պետություններում իրականացված ամբողջական ներդաշնակեցման գործընթացը, կարելի է եզրակացնել, որ գործնականում իրավական մոտարկման նպատակը ինքնին չի կանխորոշում իրավական մոտարկման որակը և արդյունավետությունը:

Հիրավի, ԵՄ-ի հետ հարաբերություններ հաստատող ոչ բոլոր պետություններն են ցանկանցում անդամակցել այդ կառույցին, հետևաբար ԵՄ-ի ոչ բոլոր միջազգային պայմանագրերն են, որ անդամակցությունը նախատեսում են որպես վերջնական նպատակ: Այնուամենայնիվ, իրավական

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

մոտարկման վերաբերյալ դրույթներ պարունակում են նաև այն համաձայնագրերը, որոնցում ԵՄ-ի հետ հարաբերությունների խորը մերձեցում չի նախատեսվում: Այդպիսի դրույթներից որոշ մասը արդեն վերլուծվել է սույն աշխատանքի շրջանակներում, և նշվել է, որ դրանք «լավագույն ջանքի դրսևորման վերաբերյալ պատրաստակամություն սահմանող» դրույթներ են: Այսինքն, ի տարբերություն նախաանդամակցական գործընթացում թեկնածու պետության կողմից «*accession acquis*»-ին իր օրենսդրությունը պարտադիր մոտարկելու պարտականությանը, միջազգային համաձայնագրերում սահմանված մոտարկման դրույթները արտացոլում են կամավոր մոտարկման վերաբերյալ երրորդ պետության պատրաստակամությունը, թեկուզ համապատասխան միջազգային համաձայնագրերի մոտարկման վերաբերյալ դրույթները գրեթե նույնական շարադրությամբ են ամրագրված<sup>16</sup>: Կամավոր մոտարկման և ընհանրապես ԵՄ արտաքին հարաբերություններում իրավական մոտարկման գործընթացը իր ամենաարդյունավետ դրսևորումն ունեցել է Եվրոպայի առավել զարգացած պետությունների կողմից իրենց օրենսդրությունը ԵՄ օրենսդրությանը մոտարկելու շրջանակներում: Այդպիսիք են Նորվեգիայի, Լիցտենշտեյնի, Իսլանդիայի /Եվրոպական տնտեսական տարածքի պետություններ/ և Շվեյցարիայի ազգային օրենսդրության մոտարկումը ԵՄ չափանիշներին: Հատկանշական է հատկապես Շվեյցարիայի օրինակը, որի Դաշնային խորհուրդը 1988թ.-ին որոշում է ընդունել իր միջազգային հարաբերություններին առնչվող օրենսդրությունը դարձնել համահունչ Եվրոմիության չափանիշներին: Այդ պահից ի վեր Շվեյցարիան ավտոմոն ադապտացնում է իր օրենսդրությունը Եվրամիության չափանիշներին առանց որևէ պայմանագրային պարտավորության: Հետագայում Շվեյցարիայի և ԵՄ-ի միջև կնքվեցին սեկտորալ համաձայնագ-

րեր, որոնք նախատեսում են այդպիսի պարտավորություն, սակայն հետագայում օրենսդրության մոտարկումը շարունակվեց՝ ընդգրկելով նույնիսկ այդ սեկտորալ համաձայնագրերից զատ այլ ոլորտներ<sup>17</sup>:

Միջազգային համաձայնագրով նախատեսված իրավական մոտարկման դեպքում *acquis*-ի բովանդակությունը կախված է կոնկրետ համաձայնագրի նպատակից և կոնտեքստից: Սա նշանակում է, որ *acquis communautaire*-ի բովանդակությունը միջազգային համաձայնագրերում պայմանավորված է լինում ԵՄ-ի և երրորդ պետության միջև հարաբերությունների բովանդակությամբ և խորության աստիճանով: Այսինքն, *acquis communautaire*-ի բովանդակությունը տարբերվում է Լոմեի և Կոտոնուի կոնվենցիաների, Եվրոպական տնտեսական տարածքի համաձայնագրի *acquis communautaire*-ից, վերջիններս էլ իրենց հերթին տարբերվում են ԱՊՀ պետությունների հետ կնքված Գործընկերության և համագործակցության համաձայնագրերի *acquis communautaire*-ից: Այլ կերպ ասած՝ *acquis communautaire*-ի ծավալը ասոցիացման, համագործակցության, առևտրային և զարգացման վերաբերյալ համաձայնագրերում չի համընկնում ԵՄ/ԵԸ *acquis*-ի ծավալին, այլ մեծապես բխում է յուրաքանչյուր կոնկրետ համաձայնագրի նպատակներից: Գրականության մեջ նշվում է, որ ԵՄ յուրաքանչյուր կոնկրետ միջազգային համաձայնագրի *acquis*-ն ներառում է այդ համաձայնագրով սահմանված համատեղ ինստիտուտների կողմից (համագործակցության կամ ասոցիացման խորհուրդների, համագործակցության կամ ասոցիացման կոմիտեների) ընդունված բոլոր ակտերը: Դրանից զատ, այն ներառում է *acquis*-ի կոնկրետ ոլորտը իր ներքին դրսևորմամբ, որը համապատասխանում է ԵՄ միջազգային համաձայնագրի կոնկրետ նպատակին (մաքսային միություն, ոլորտային համագործակցություն, փոխկապակցում), ինչպես նաև միջազգային իրավունքի *acquis*-ին (կոնվենցիաները, պայմանագրերը, միջազգային կազմակերպությունների որոշումները)<sup>18</sup>: Այսպես օրինակ, մաքսային

միության հաստատման նպատակը ենթադրում էր Ընկերակցության արտաքին առևտրին առնչվող *acquis*-ի լայն իմպլեմենտացիա Թուրքիայի իրավական համակարգում: ԵՄ-Թուրքիա ասոցիացման համաձայնագրի (այսպես կոչված՝ «Անկարայի պայմանագրի»)՝<sup>19</sup> հիմնական նպատակը մաքսային միության ստեղծումն է, որը նվաճվել է մի շարք պարտադիր բնույթի որոշումների միջոցով, որոնք ընդունվել են ԵՄ-Թուրքիա ասոցիացման խորհրդի կողմից<sup>20</sup>: Այս որոշումները հաջողությամբ լրացնում են այն բացը, որը առկա է Անկարայի համաձայնագրում և կից արձանագրություններում՝ կանխորոշելով Թուրքիայի կողմից ԵՄ-ի հետ մաքսային միության հաստատմանն ուղղված համապատասխան ծավալի և բովանդակության *acquis communautaire*-ի իմպլեմենտացիան:

Իսկ ինչ վերաբերում է իրավական մոտարկմանը ԵՄ և ԱՊՀ պետությունների միջև հարաբերություններում, ապա, ինչպես արդեն նշվեց, դրանց իրավական հիմքը կազմում են Գործընկերության և համագործակցության համաձայնագրերը, որոնք, ի տարբերություն ասոցիացման համաձայնագրերի, չեն նախատեսում այդ ծավալի և խորության *acquis communautaire*-ի իմպլեմենտացիա: Այս համաձայնագրերի նպատակը հիմնականում ուղղված է ԱՊՀ երկրներին ինտեգրմանը համաշխարհային շուկային, այս պետությունների տնտեսական բարեփոխումների իրականացմանը և շուկայական տնտեսության հաստատմանն ուղղված ջանքերին աջակցելուն: Յետևաբար, ԳՀՀ-ները չեն նախատեսում Ընկերակցության *acquis*-ի կիրառությունը այդ պետությունների իրավական համակարգերում և հիմնականում նախատեսում են ազատ առևտրի, փոխադարձության և արդար մրցակցության հաստատմանն ուղղված հիմքերը: ԳՀՀ երկրներին խրախուսվում է մոտարկել իրենց օրենսդրությունը ԵՄ չափանիշներին հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մրցակցության և մտավոր սեփականության պաշտպանությունը:

Իրավական մոտարկումը ԵՄ և ԱՊՀ երկրների միջև ևս մեկ անգամ ընդգծվեց Եվրոպական հարևանության քաղաքականության համատեքստում<sup>21</sup>, և այդ մասին դրույթներ նախատեսվեցին ԵՀՔ Գործողությունների ծրագրում:

Ինչպես հայտնի է, ԵՀՔ երկրների հետ հարաբերությունների կառուցման համար որպես մոդել ընտրված է Եվրոպական տնտեսական տարածքի շրջանակներում առկա համագործակցությունը, և անդամակցությունը որպես հարաբերությունների թեկուզ հեռահար նպատակ չի դիտարկվում<sup>22</sup>: Սակայն Եվրոպայի հարևանության քաղաքականության մեջ ընդգրկված պետությունները դեռևս երկար ուղի պետք է անցնեն, որպեսզի հասնեն Եվրոպական տնտեսական տարածքի պետությունների մակարդակին, և որպեսզի նրանց հաջողվի ապահովել ԵՄ օրենսդրության որակյալ և իրական կիրառությունը իրենց իրավական համակարգերում: Անդամակցության խթանի բացակայության պայմաններում բոլոր ԵՀՔ պետությունները չէ, որ պարտաստական կլինեն այդքան խորացնել իրենց հարաբերությունները ԵՄ-ի հետ և կրել այդքան լայն ծավալի պարտավորություններ, թեկուզ և հաճախ փաստարկվում է, որ ԵՀՔ հեռահար նպատակը մասնակցությունն է ԵՄ ներքին շուկայի բոլոր չորս ազատություններում, կարող է այդպիսի խթան ծառայել: Այս առումով իրենցից մեծ հետաքրքրություն կներկայացնեն իրավական մոտարկման վերաբերյալ նախատեսվող ապագա համաձայնագրերի, այն է՝ ասոցիացման համաձայնագրերի<sup>23</sup>, դրույթները, ինչպես նաև այդ համաձայնագրերի պոտենցիալը Արևելյան գործընկերության երկրների և Եվրամիության միջև հարաբերությունները սերտացնելու առումով, ներառյալ տնտեսական մերձեցումը և իրավական մոտարկումը:

#### **Իրավական մոտարկման ինստիտուցիոնալ և մեթոդաբանական որոշ ասպեկտները**

Իրավական մոտարկման գործընթացում ընտրվում են կարգավորման ոլորտներ, որոնց նախապատվություն է տրվում: Այդ ոլորտների ընտրությունը հիմնակա-

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԷՔ**

նում տեղի է ունենում Եվրամիության և ոչ անդամ պետության միջև բանակցությունների արդյունքում<sup>24</sup>: Նպատակահարմար ենք գտնում, որ ոլորտների ընտրության դեպքում առաջնայնություն տրվի դատական համակարգի և իրավապահ մարմինների գործունեությանն ուղղված բարեփոխումներին: Հակառակ դեպքում մնացյալ ոլորտներում իրականացվող օրենսդրական մոտարկման արդյունքները ապարդյուն կլինեն դրանք չիրագործելու կամ կիրառության ընթացքում թերացումներ ցուցաբերելու դեպքում:

Կարծում ենք, որ իրավական մոտարկման գործընթացի արդյունավետությունը մեծապես կարող է կախված լինել նաև ժամանակակից օրինաստեղծ տեխնիկայի և մեթոդների կիրառության հանգամանքից: Այս առումով օրինաստեղծ մեթոդներից կարելի է առանձնացնել կանոնակարգման ազդեցության գնահատումը: Ազդեցության գնահատումը իրենից ներկայացնում է տնտեսագիտական բարդ վերլուծություն, որն ուղղված է վեր հանելու առաջարկվող կանոնակարգման, այսինքն՝ օրենսդրական նախագծի ազդեցությունը տնտեսական, սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ ոլորտների վրա: Այդ վերլուծության շնորհիվ համեմատական է տարվում առաջարկվող կարգավորման արդյունքի և առկա իրավիճակի միջև, ինչպես նաև առկա տարբեր օրենսդրական նախագծերի ազդեցությունների միջև, և ընտրվում է դրանցից առավել արդյունավետը<sup>25</sup>: Կանոնակարգման ազդեցության գնահատումը զարգացած արևմտյան պետություններում իրավական ակտի մշակման գործընթացի պարտադիր բաղադրատարր է: Այս մեթոդը հատկապես տարածում է գտել վերջին տասը տարիների ընթացքում: Այս փոփոխությունը բխում է այն անհրաժեշտությունից, որ երկրները կարիք ունեն բարձրացնելու իրենց մրցունակությունը տնտեսական դաշտում, ինչը միաժամանակ ենթադրում է կարգավոր-

ման բարենպաստ համակարգ ունենալու անհրաժեշտություն<sup>26</sup>: Մեկ այլ խթան են, օրինակ, Եվրոպական ինտեգրման գործընթացները: Ազդեցության գնահատումը, ճիշտ է, ֆորմալ պարտավորություն չէ ԵՄ անդամ պետությունների համար, սակայն Եվրոպական ինստիտուտները առաջարկում և խրախուսում են այս գործընթացի կիրառումը ինչպես անդամ պետություններում, այնպես էլ թեկնածու պետություններում<sup>27</sup>:

Իրավական մոտարկման գործընթացում կարևորում ենք նաև դատական համակարգի ակտիվ ներգրավվածությունը: Այսինքն, Եվրոպական չափանիշներին համապատասխանող օրենսդրության առկայությունը լիարժեք մոտարկման դեպքում ենթադրում է նաև այդ օրենսդրության մեկնաբանությունը և կիրառությունը դատարանների կողմից՝ հաշվի առնելով այն մեկնաբանությունները, որոնք տրվում են Եվրոպական դատարանի կողմից այդ մոտարկված օրենսդրության կիրառման վերաբերյալ: Այստեղ պետք է առանձնացնել, որ մեկնաբանության ընթացքում ազգային դատարանները պետք է նաև ելնեն համագործակցության արդի նպատակներից, որոնք սահմանված են հարաբերությունները կարգավորող միջազգային համաձայնագրում: Հակառակ դեպքում ապարդյուն կլինեն մոտարկման հսկայական և ծախսատար ջանքերը, եթե մոտարկված օրենսդրությունը պետք է բացառապես մնա թղթի վրա, և դրա կիրառությունն ու մեկնաբանությունը չհամապատասխանեն դրանց բուն նպատակին: Ուստի, առանձնակի միջոցներ պետք է ձեռնարկվեն ազգային դատարաններում դատավորների և փորձագետների համապատասխան մասնագիտական հմտությունները զարգացնելու և Եվրոպական դատարանի մեկնաբանությունները հասանելի դարձնելու ուղղությամբ:

Մեթոդաբանական առումով իրավական մոտարկումը ցանկացած իրավաստեղծ գործընթաց է, որը ենթադրում է նոր իրավանորմների սահմանում առկա բացերը լրացնելու նպատակով կամ առկա կարգավոր-

ման բարեփոխում մեկ այլ իրավական համակարգի տրանսպլանտացիայի միջոցով: Այսինքն՝ իրավական մոտարկումը իրավունքի տեսության առումով պատկանում է համեմատական իրավագիտության դաշտին: Ներկայումս արևմտյան համեմատական իրավագիտության ոլորտի որոշ մասնագետներ այս գործընթացը անվանում են իրավական տրանսպլանտացիա, իսկ այն օրենսդրությունը, որը ներմուծվում է իրավական համակարգ, իրավական տրանսպլանտ<sup>28</sup>: Սակայն հարկ ենք համարում առանձնացնել, որ իրավական մոտարկումը ԵՄ օրենսդրությանը պայմանավորված է այսպիսի առանձնահատկությամբ. տրանսպլանտացվող օրենսդրությունը վերազգային մակարդակի իրավական համակարգի բաղկացուցիչ մաս է և այդպիսով ենթադրում է մասնագիտական տիրապետում այդ իրավական համակարգին<sup>29</sup>: Ուստի արդյունավետ իրավական մոտարկում Եվրամիության օրենսդրությունը, իսկ ավելի կոնկրետ իրավական մոտարկման մեթոդաբանության<sup>30</sup> մշակումը կարող է իրականացվել համեմատական իրավունքի մասնագետների և Եվրոպական իրավունքի մասնագետների համատեղ ջանքերով:

**Ամփոփում.** Ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ ԵՄ արտաքին հարաբերություններում իրավական մոտարկման գործընթացը լիովին տարբերվում է Եվրամիությունում օրենսդրական ներդաշնակեցման գործընթացից: Իրավական մոտարկումը արտաքին հարաբերություններում դրսևորվում է անդամ չհանդիսացող պետության կողմից Եվրոպական միության ժառանգությունը՝ *acquis communautaire*-ը, ադապտացնելու միջոցով: Այդ ադապտացման ծավալը և խորությունը մեծապես

կախված են Եվրամիության և երրորդ պետության միջև հարաբերությունների նպատակից, որն արտացոլված է լինում նրանց միջև կնքված համաձայնագրում: Այսպիսով, ասոցիացման, առևտրի և զարգացման համաձայնագրերի դեպքում ադապտացիայի ենթակա *acquis*-ի ծավալը լիովին տարբերվում է: Ամենախորը և լայնածավալ իրավական մոտարկումը կատարվում է ԵՄ-ին անդամակցող պետությունների կողմից, մինչդեռ ամենաորակյալ և արդյունավետ իրավական մոտարկման մոդելը հանդիպում է ԵՄ անդամ չհանդիսացող Եվրամիության ամենազարգացած հարևանների մոտ, որոնք մասնակցում են Եվրամիության բոլոր չորս ազատություններին, սակայն չեն անդամակցում այդ կառույցին:

Հոդվածում քննարկվել է, որ իրավական մոտարկման արդյունավետությամբ կարող է մեծապես նպաստել ժամանակակից օրենսդրական մեթոդների կիրառումը այդ գործընթացում, որոնցից առանձնացվում է կարգավորման ազդեցության գնահատումը: Ինչ վերաբերում է մոտարկված օրենսդրության արդյունավետ կիրառությանը, ապա վերջինս կարող է ապահովվել դատական համակարգի ներգրավվածությամբ: Հարկավոր է, որ դատարանները մոտարկված օրենսդրությունը կիրառելիս հաշվի առնեն Եվրոպական դատարանի համապատասխան նախադեպերը, ինչպես նաև ելնեն Եվրամիության և երրորդ պետության միջև հարաբերությունների նպատակներից: ԵՄ իրավական մոտարկման մեթոդաբանության մշակումը ենթադրում է համեմատական իրավունքի և Եվրամիության իրավունքի համապատասխան գիտելիքի ու կարողության համատեղում:

<sup>1</sup> Article 43, Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Armenia of the other part, OJ L 239, 09.09.1999.

<sup>2</sup> Միության իրավունք և Ընկերակցության իրավունք տերմինները մենք օգտագործում ենք միմյանց փոխարեն, սակայն առավելապես

կիրառվում է Միության իրավունք տերմինը՝ հաշվի առնելով այն, որ Լիսաբոնի պայմանագրի ուժի մեջ մտնելուն զուգահեռ, վերացել է Միության եռասյուն համակարգը: Որոշ դեպքերում օգտագործել ենք Ընկերակցության իրավունք՝ Ընկերակցության իրավասությունն ընդգծելու նպատակով:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

- <sup>3</sup> Սույն աշխատանքը ամենևին չի հավակնում պարզաբանելու այդ գործընթացները, սակայն որոշ անդրադարձ հարկավոր է կատարել՝ արտաքին հարաբերություններում ԵՄ օրենսդրության մոտարկման տրամաբանությունը արտահայտելու համար:
- <sup>4</sup> Առավել մանրամասն Եվրոպական միության ներսում օրենսդրական ներդաշնակեցման վերաբերյալ տես S.R. Weatherill, 'Why Harmonise?' in P. Tridimas and P. Nebbia (eds), *European Union Law for the Twenty-First Century: Rethinking the New Legal Order*, Volume 2, (Hart 2004).
- <sup>5</sup> A. Evans, *Voluntary Harmonisation in Integration between the European Community and Eastern Europe*, ELRev 22 (1997) 201.
- <sup>6</sup> Տե՛ս օրինակ՝ Article 43, Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Armenia of the other part, OJ L 239, 09.09.1999, or Article 68 of Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Poland, of the other part OJ L 348, 31.12.1993.
- <sup>7</sup> Տե՛ս Ch. Hillion, *Approximation of laws in the context of EU-NIS partnership* in Lajos, Kellermann and Nikodem (eds.), *Perspectives of the Legal Approximation Process in Central and Eastern Europe*, Academy of European Law, Budapest, 2001 .
- <sup>8</sup> Տե՛ս F.Schimmelfennig, U.Sedelmeier, *Europeanization of Eastern Europe: Evaluating the Conditionality Model*.
- <sup>9</sup> Տե՛ս The Oxford Encyclopedia of European Community Law, Volume I, A.G. Toth, 1991., p. 9.
- <sup>10</sup> Տե՛ս Commission Communication 'Updating and simplifying the Community acquis' (COM (2003) 71 final).
- <sup>11</sup> Տե՛ս P. Petrov, *The External Dimension of the Acquis Communautaire.*, EUI Working Papers, MWP 2007/2.
- <sup>12</sup> Հարկ ենք համարում նշել, որ 9-րդ հղման բեք բերված Օքսֆորդի հանրագիտարանի բնորոշումը առանձնացնում է միայն Ընկարակցության իրավունքը *acquis communautaire*-ի բնորոշման մեջ:
- <sup>13</sup> Լիսաբոնի համաձայնագրում կիրառվում է *acquis* տերմինը առանձին դեպքերում /օր՝ *Schengen acquis* /, սակայն առանց *communautaire*-ի, որը հավանաբար բխում է եռասյուն համակարգի վերացման մտադրությունից, նաև վկայում հեղինակների այն մտադրությունը՝ վերացնել այդ վերնագրի և բովանդակության միջև առկա անհամապատասխանությունը:
- <sup>14</sup> «Towards the Enlarged Union» Strategy Paper and Report of the European Commission on the progress towards accession by each of the candidate countries (COM (2002) 700 final).
- <sup>15</sup> Եվրոպական հանձնաժողովի Ընդլայնման գլխավոր դիրեկտորատը պարզաբանում է, որ «*acquis* –ն մշտապես ընդլայնվում է և ներառում Միության հիմնադիր պայմանագրերի բովանդակությունը, սկզբունքները և քաղաքական նպատակները, այդ պայմանագրերի հիման վրա ընդունված օրենսդրությունը և որոշումները, Եվրոպական դատարանի որոշումները, իրավաբանորեն պարտադիր կամ ոչ պարտադիր այլ ակտեր: Ընդհանուր առմամբ, այս ամբողջության արդյունավետ կիրառությունը պահանջում է, որ թեկնածու պետությունը *acquis* –ին համապատասխանող բոլոր ոլորտներում մոտարկի ԵՄ ինստիտուտների, կառավարման ներուժի և վարչական ու դատական համակարգերի մակարդակին: Այս ամենը իրականացնելու համար անհամակցող պետությանը հարկավոր է գործող և կայուն հանրային կառավարման համակարգ, որը կառուցված է արդյունավետ և անաչառ քաղաքացիական ծառայության համակարգի վրա, ինչպես նաև՝ անկախ և արդյունավետ դատական համակարգ: *acquis* –ի յուրաքանչյուր կոնկրետ ոլորտի վերաբերյալ մանրամասն չափորոշիչները սահմանված են հիմնական վարչական ստորաբաժանումների համար նախատեսված ուղեցույցում: Տես՝ [http://ec.europa.eu/enlargement/enlargement\\_process/accesion\\_process/how\\_does\\_a\\_country\\_join\\_the\\_eu/negotiations\\_croatia\\_turkey/index\\_en.htm#acquis](http://ec.europa.eu/enlargement/enlargement_process/accesion_process/how_does_a_country_join_the_eu/negotiations_croatia_turkey/index_en.htm#acquis)

- <sup>16</sup> Տե՛ս օրինակ՝ Article 43, Partnership and Cooperation Agreement between the European Communities and their Member States, of the one part, and Armenia of the other part, OJ L 239, 09.09.1999, or Article 68 of Europe Agreement establishing an association between the European Communities and their Member States, of the one part, and the Republic of Poland, of the other part OJ L 348, 31.12.1993.
- <sup>17</sup> Տե՛ս S. Breitenmoser, Sectoral Agreements between the EC and Switzerland: Contents and Context; Common Market Law Review 40: 1137-1186, 2003.
- <sup>18</sup> Տե՛ս P. Petrov, The External Dimension of the *Acquis Communautaire*., EUI Working Papers, MWP 2007/2.
- <sup>19</sup> EC-Turkey Association Agreement, OJ 173 C 113/2.
- <sup>20</sup> Տե՛ս E.g. Decision 1/95 of the EC-Turkey Association Council on the implementation of the final phase of the Customs Union between Turkey and the European Economic Community, O.J. 1973 C 113/2; Decision 1/96 of the EC-Turkey Customs Cooperation Committee laying down detailed rules for the application of Decision 1/95, O.J. 1996 L 200/14. , Decision 2/97 of the EC-Turkey Association Council establishing the list of Community instruments relating to the removal of technical barriers to trade and the conditions and arrangements governing their implementation by Turkey, O.J. 1997 L 191/1.
- <sup>21</sup> Այս քաղաքականության մասնակից պետություններն են Ուկրաինան, Սոլդովան, Բելառուսը, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը և հարավ-միջերկրյա ծովյան տարածաշրջանի պետությունները:
- <sup>22</sup> Commission Communication, ENP Strategy Paper, Brussels, 12.5.2004 COM(2004) 373 final.
- <sup>23</sup> 2008թ.-ին Եվրամիությունը նախաձեռնեց Արևելյան գործընկերության քաղաքականությունը, որում հստակորեն նշվեց, որ Եվրամիության արևելյան հարևանների հետ հարաբերությունների ապագա իրավական կարգավորումը դառնալու է ասոցիացման համաձայնագրերը: Տե՛ս European Commission, Communication from the Commission to the European Parliament and the Council on the Eastern Partnership (COM(2008)823), Brussels, 3.12.2008.
- <sup>24</sup> Այսպիսին էր նաև Եվրամիության և Եվրոպայի հարևանության քաղաքականության երկրների միջև քննարկվող գործողությունների ծրագրում նախապատվությունների նախատեսումը:
- <sup>25</sup> *A Comparative Analysis of Regulatory Impact Assessment in Ten EU Countries*, A Report Prepared for the EU Directors of Better Regulation Group, DUBLIN, May 2004.
- <sup>26</sup> Այս անհրաժեշտությունը հաճախ ընդգծվում է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից (OECD). e.g. *OECD Guiding Principles for Regulatory Quality and Performance*.
- <sup>27</sup> Ազդեցության գնահատման կիրառումը հատկապես արդիական էր և շարունակում է արդիական մնալ արևելյան Եվրոպայի երկրների համար, քանի որ այն կարևոր միջոց է մոտարկման ենթակա հսկայական ծավալի օրենսդրությունը միացող երկրի համակարգում մեխանիկորեն ներառելը կանխելու համար:
- <sup>28</sup> Տե՛ս Nelken (Ed.), J. Feest (Ed.), *Adapting Legal Cultures* (Onati International Series in Law and Society)
- <sup>29</sup> Որոշ հեղինակներ կասկածի տակ են դնում վերազգային օրենսդրության տրանսպլանտացիայի գործառնությունը ազգային համակարգում:
- <sup>30</sup> Յուրաքանչյուր երկիր, որը նախատեսում է մոտարկել իր օրենսդրությունը Եվրամիության չափանիշներին, նախ հաստատում է իրավական մոտարկման մեթոդաբանություն:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ****CERTAIN ASPECTS OF LEGAL APPROXIMATION IN  
THE EUROPEAN UNION'S EXTERNAL RELATIONS****Anna HAKOBYAN***Lecturer, Chair of European and International  
Law, Yerevan State University*

---

The article discusses issues of legal approximation in the European Union external relations, as one of the most relevant topics in the context of the EU's relations with its Neighbors, including the Republic of Armenia.

The paper starts by shedding some light on the confusion in terminology describing the process of approximation and contrasts legal harmonization process in the EU and its Member States with the legal approximation to the EU by non member States. The

discussion mainly focuses on certain aspects of Europeanization and voluntary rule adoption targeting such processes in European Economic Area, the accession process and the European Neighborhood Policy. The notion of *acquis communautaire* and its expression in external relations is also covered. The paper argues that the level of the approximation is dependent on the main objective of relations between the EU and the third country as well as the type of the agreement governing the relations. Measures to raise the effectiveness of legal approximation are also presented, such as application of regulatory impact assessment as a legislative mechanism and involvement of the judiciary in the process.





ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

---



**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

---